Զնայած 1927 թ.-ին Ազգերի լիգան ամբողջովին դադարեցրեց իր աջակցությունը, այնուհանդերձ փրկարար աշխատանքները շարունակվեցին ընդհուպ մինչև 1930 թ.-ը¹⁰³, և Դր. Լեփսիուսի Արևելյան առաքելությունը միայնակ ստանձնեց այդ վերջին երեք տարիների բոլոր «փրկագինների» վճարումը: 1930 թ. վերջին, երբ նոր փախստականներ այլևս ի հայտ չէին գալիս, և ազատագրված վերջին հայուհին ինքնուրույն կյանք մտավ, աշխատանքն իսպառ դադարեց:

Կ. Յեպեի մոտ տասնամյա հայափրկիչ գործունեության ընթացքում գերությունից ազատագրվեցին և տնական խնամքից ու ուսումնառությունից հետո հայ ազգային-հավաքական կյանքում իրենց տեղը գրավեցին ընդհանուր թվով 2.050 հայեր, որոնցից 705-ը Լեփսիուսի նշված կազմակերպության նյութական

¹⁰⁰ Der Geburtstag, „Orient im Bild“, 1929, S. 46. Ավստրիացի, ազգությամբ լեհ Լ. Գազչուկը 1921-1922 թթ. գործել էր Խարպություն, իսկ 1923 թ.-ից աշխատանքի անցավ Հալեպում օրիորդ Կ. Յեպեի մոտ՝ որպես քարտուղարը և օգնական: Անդ:

¹⁰¹ Karen Jeppes Arbeit, „Der Orient“, 1926, S. 5-6.

¹⁰² Անդ, էջ 5:

¹⁰³ Անդ, էջ 33:

միջոցներով¹⁰⁴, իսկ 150-ի ազատագրման ծախսերը տրամադրել էին նրանց ազգականները:

Փրկարար աշխատանքներից զատ անգերագանատելի նշանակություն ունենա նաև դրանց, ինչպես նաև ազատագրված հայերին վերաբերող՝ Կարեն Յեպեի կողմից պարբերաբար կատարված հանգամանալից պարզաբանումները: Դրանք բովանդակում են ցեղասպանությանը և դրա զոհերի ճակատագրերին վերաբերող չափազանց արժեքավոր տեղեկություններ, որոնք ունեն ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական կարևոր նշանակություն:

АШОТ АЙРУНИ (АРМЕНИЯ)

КАРЕН ЕППЕ И ОСВОБОЖДЕНИЕ ЗАХВАЧЕННЫХ ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА АРМЯНСКИХ ЖЕНЩИН И ДЕТЕЙ

В декабре 1920 г. Лига Наций создала состоящую из трёх членов комиссию, которой было поручено предпринять эмансипацию армян, похищенных и насильно задержанных в домах мусульман во время великого геноцида армян. За выполнение этой сложной работы из членов комиссии взялась только датчанка Карен Еппе, благодаря усилиям которой в течение всего периода спасательных работ 1922-1930 гг были освобождены и возвращены в лоно своего народа в общем счёте 2050 армянских женщин и детей. Кроме освобождения заботились также об их образовании, воспитании и о подготовке к самостоятельной жизни, что тоже являлось продуктивным. Эту героическую работу Еппе не смогла бы осуществить теми скудными средствами, выделенными Лигой Наций. Ей также содействовали и другие организации и индивидуумы, в ряду которых важнейший вклад имела Восточная миссия Лепсиуса. Важное значение имеют подробные разъяснения Еппе о спасательных работах и осво-

¹⁰⁴ Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, ական էջ 21:

бодившихся армянах. Они содержат многочисленную информацию относительно геноцида.

ASHOT HAYRUNI (ARMENIA)

KAREN YEPPE AND LIBERATION OF ARMENIAN WOMEN AND CHILDREN KIDNAPPED DURING THE ARMENIAN GENOCIDE

In December of 1920 the League of Nations established a Commission comprised of three persons which was tasked to deal with liberation of Armenians kidnapped during the the Armenian Genocide and forcibly kept in Muslim houses. Only one of the members to the Commission, Danish Karen Yeppe, undertook this difficult task, thanks to whose efforts a total amount of 2050 Armenian women and children were freed and returned back to their nation in the years of 1922-1930, the entire period of the rescue works. Besides liberation, education, upbringing and preparing for independent life was also taken care of, which was arranged extremely effectively. Yeppe could not carry out that heroic task by little financial means provided by the League of Nations only. She was supported by a number of organizations and individuals, among which the greatest input was ensured by Dr. Lepsius's Orient Mission. Also of great importance are the comprehensive clarifications provided by Yeppe on the rescue works and liberated Armenians, that incorporate a lot of valuable information on the Armenian Genocide.

ANAHIT KHOSROEVA (ARMENIA)

THE GENOCIDE OF THE ARMENIANS AND ASSYRIANS IN THE OTTOMAN EMPIRE (COMPARATIVE REVIEW)

During my current presentation I would like to focus primarily on the history one of the internationally “forgotten” and not recognized as genocide mass killings and atrocities of the Assyrian population (also

known as Nestorians, Chaldeans or Syriacs) of the Ottoman Empire which occurred in the same circumstances as the Armenian genocide. It was part of the same process, taking place in the same locations, at the same time, and perpetrated by the same perpetrator as the Armenian genocide. I'll compare the Armenian and Assyrian genocides, describe the genocidal policy of the Young Turks to exterminate these people, and try to emphasize some of the significant commonalities and differences between the Armenian and Assyrian genocides.

The First World War was the darkest chapter in the history of the Assyrian nation which completely reshaped the destiny of its people. They have been repeatedly victimized by genocidal assaults over the past century, subjected to violence and forcible conversion. The infamy of executing this century's first full scale ethnic cleansing belongs to the Young Turks' government.

The Ottoman Empire's widespread persecution of Assyrian civilians during WWI constituted a form of genocide, the present-day term for an attempt to destroy a national, ethnic, or religious group, in whole or in part. Ottoman soldiers and their Kurdish and Iranian militia partners subjected hundreds of thousands of Assyrians to a deliberate and systematic campaign of massacre, slaughter, ethnic cleansing, torture, abduction, deportation, impoverishment, and cultural and ethnic destruction. Established principles of international law outlawed this war of extermination against Ottoman Christian civilians before it was embarked upon, and ample evidence of genocidal intent has surfaced in the form of admissions by Ottoman officials.

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈՆԵՎԱ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)**

XX դարի սկիզբը և, մասնավորապես, Առաջին համաշխարհային պատերազմն ասորի ժողովրդի պատմության ամենամուրեք էջերից է, որը հիմնավորապես փոխեց այդ ժողովրդի հետագա ճակատագիրը:

Տվյալ գեկուցման շրջանակներում հայերեն և օտարալեզու փաստաթղթերի, ինչպես նաև տարբեր արխիվային աղբյուրների հիման վրա, փորձ է արվում լուսաբանել միջազգայնորեն «մոռացված» և որպես ցեղասպանություն չճանաչված ասորի ժողովրդի զանգվածային կոտորածներն ու բռնությունները, որոնք Օսմանյան կայսրության պարագլուխների կողմից իրականացվել են նույն հանգամանքներում, նույն միջավայրում (Արևմտյան Հայաստանի տարբեր վիլայեթներում), նույն ժամանակահատվածում և նույն ոճրագործի կողմից, ինչ՝ Հայոց ցեղասպանությունը: Ասորիների զանգվածային «էթնիկ մաքրման» այդ հանցագործության մեղքն ամբողջովին ընկնում է երիտթուրքերի կառավարության վրա:

Համեմատելով կայսրության այս երկու քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանությունները՝ մենք կրկնենք դրանց ընդհանուր կողմերն ու որոշակի տարբերությունները և ցույց կտանք առանձնահատկությունները:

АНАИТ ХОСРОЕВА (АРМЕНИЯ)

ГЕНОЦИД АРМЯН И АССИРИЙЦЕВ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (СРАВНИТЕЛЬНЫЙ ОБЗОР)

Начало 20-го века, в частности годы Первой мировой войны являются одной из самых темных страниц в истории ассирийского народа. Именно в этот период времени был совершен геноцид ассирийцев в Османской империи, который коренным образом изменил будущее этого народа. Массовые резни и погромы ассирийцев, происходившие в тех же обстоятельствах, на той же территории (в вилайетах Западной Армении) и тем же преступником, что и геноцид армян, сегодня квалифицируются как «геноцид», который является современным термином для определения характеристики действий, совершаемых с намерением уничтожить какую-либо национальную, этническую, расовую или религиозную группу полностью или частично.

В течение доклада мы сравним эти два геноцида христианских народов Османской империи, опишем государственную политику запланированного геноцида младотуркского правительства и постараемся подчеркнуть самые важные общие черты и различия между геноцидом армян и геноцидом ассирийцев.

JASMINE DUM-TRAGUT (AUSTRIA)

**«... ՁԵՐ ՈՐԴՈՒ ՀԱՄԱՐ ԿՍԵ՛Ք, ԼԱՅԵՑԷ՛Ք»
RECORDS OF ARMENIAN PRISONERS OF WAR, 1915, IN
THE PHONOGRAM ARCHIVES OF THE AUSTRIAN
ACADEMY OF SCIENCES**

The Austrian Academy of Sciences owns a remarkable phonogram archive, which does not only host sound material of the early Habsburg-Austrian research in the field of ethnology, anthropology and linguistics, about cultural properties of various ethnic groups living in Habsburgian Austria but also important historical records of eyewitnesses. The latter includes an extensive collection of records of Austrian prisoners of war from World War I.

This collection also contains six records of Armenian prisoners of war. They were recorded and documented by Professor Rudolf Poech with the help of a translator named Semyon Sobotnikov on September 14th -15th, 1915 in the Russian prisoner of war camp in Reichenberg, Bohemia.

The recent and final editing of recordings of songs and poems of young men from the governorates of Eriwan and Elizavetpol analyzes these unique documents under linguistics, cultural studies and social aspects.

In the paper, not just a few examples will be played and some of the original document will be shown, but also some questions will be raised about the Austrian researcher, his ethnographic research and the identities of the young Armenian prisoner of wars.

ЗАПИСИ АРМЯНСКИХ ВОЕНОПЛЕННЫХ 1915 Г. В ФОНОГРАММНОМ АРХИВЕ АВСТРИЙСКОЙ АКАДЕМИИ НАУК

Австрийская академия наук располагает значительным фонограммным архивом, который содержит не только звуковые материалы ранних австро-габсбургских исследований по этнологии, антропологии, лингвистики и культурных наследий различных этнических групп, проживавших в габсбургской Австрии, но также и важные исторические записи современников. Последнее включает крупную коллекцию записей австрийских военнопленных времени Первой мировой войны. В ней содержится шесть записей армянских военнопленных, записанных и документированных проф. Рудольфом Пехом (ассистент-переводчик Семен Сobotников) 14-15 сентября 1915 г. в русском военном лагере, расположенном в Райхенберге в Богемии.

Последняя и окончательная редакция записей песен и нескольких поэм молодыми людьми из губерний Еревана и Елизаветполя, являются уникальными источниками с точки зрения изучения лингвистических, культурных и социальных аспектов.

Статья не ограничивается демонстрацией нескольких подлинных документов, но также поднимает вопросы, связанные с самим австрийским исследователем, его этнографическим исследованием, а также идентичностью молодых армянских военнопленных.

**1915 թ. ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ
ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՎԱՏՐԻԱՅԻ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ
ՁԱՅՆԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՐԽԻՎԻՑ**

Ավստրիայի գիտությունների ակադեմիան ունի բավականին մեծ ֆոնդադամային արխիվ, որը պարունակում է ոչ միայն ավստրո-հաբսբուրգյան շրջանի Ավստրիայում բնակվող տարբեր էթնիկ խմբերի ազգագրական, մարդաբանական և մշակութային հետազոտությունների ձայնային նյութերը, այլ նաև ժամանակակիցների կարևոր պատմական ձայնագրությունները: Վերջինս ներառում է Առաջին աշխարհամարտի ավստրիական ռազմագերիների ձայնագրությունների մի մեծ հավաքածու: Այդ հավաքածուում կան նաև հայ ռազմագերիների վեց ձայնագրություններ: Դրանք ձայնագրվել են պրոֆ. Ռուդոլֆ Պյոխի կողմից, որին աշխատանքի ընթացքում աջակցում էր թարգմանիչ Մեմյոն Մորտոնիկովը: Ձայնագրությունը կատարվել է 1915 թ. Մեպտեմբերի 14-15-ը, Բոհեմիայի Ռայխենբերգ ռուսական ռազմաճամբարում:

Վերջնական խմբագրությունը ներառում է մի քանի ձայնագրություններ և պոեմներ, կարդացած Երևանի և Եդիսաբեթպոլի հայ երիտասարդների կողմից: Այս նյութերը հանդիսանում են շատ կարևոր աղբյուրներ՝ լեզվաբանական, մշակութային և սոցիալական հարցերի տեսանկյուններից:

Հոդվածը չի սահմանափակվում մի քանի փաստաթղթերի ներկայացմամբ, այլ բարձրացնում է նաև որոշ հարցեր՝ կապված ավստրիացի հետազոտողի, ինչպես նաև նրա ազգագրական հետազոտության հետ: Նրանում տեղ են գտել հայ երիտասարդ ռազմագերիների ինքնագիտակցության հետ կապված դիտարկումներ:

**«ԱՅՍՕՐ Ո՞Վ Է ԽՈՍՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԲՆԱԶՆՁՄԱՆ
ՄԱՍԻՆ.» ՀԻՏԼԵՐԻ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՀԱՐՅԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏ**

Հիտլերի վերոնշյալ հռետորական հարցը պարունակող փաստաթուղթը ի հայտ եկավ նյուրենբերգյան դատավարության ընթացքում: Գերմանական դատապաշտպանները համառորեն ժխտեցին փաստաթղթի վավերականությունը և տեխնիկական-ձևական պատճառաբանություններ առաջ քաշելով հասան այն բանին որ փաստաթուղթը հանվեց Նյուրենբերգի պաշտոնական արձանագրություններից: Երեք տասնամյակ անց, ներքին, ոչ-հրապարակային փաստերի ու պարագաների մանրագնին քննությամբ Գ. Բարդակչյանը իր «Հիտլերը և հայերի ցեղասպանությունը» գրքույկով (1986) ապացուցեց փաստաթղթի վավերական լինելը: Սակայն շահագրգիռ ժխտողների կասկածները բոլորովին չփարատվեցին՝ բացակայում էր հարցին ծնունդ տվող քաղաքական-հասարակական մթնոլորտը: Չկար, մինչ այդ չէին եղել նման հետազոտական աշխատանքներ: Բայց ահա վերջերս հրատարակված մի քանի ուսումնասիրություններ խոսուն փաստերով լուսաբանում են հիտլերյան Գերմանիայում, Առաջին Աշխարհամարտում Գերմանիայի նվաստացուցիչ ծվատումից հաղթական Գերմանիա կառուցելու ձգտումը՝ հիացած և ոգեշնչված Օսմանյան կայսրության փլատակներից նոր Թուրքիա կերտող Մուստաֆա Քեմալի գործելակերպով և կերպարով: Այս զեկուցումը կլուսաբանի վրիժառու մտայնության այդ դաժան մթնոլորտը՝ որպես կոնտեքստ և սնող աղբյուր Հիտլերի հռետորական հարցի:

KEVORK BARDAKJIAN (USA)

**THE HISTORICAL CONTEXT OF HITLER'S
RHETORICAL QUESTION: "WHO, TODAY, STILL
SPEAKS OF THE ANNIHILATION OF THE
ARMENIANS?"**

The document containing this rhetorical question circulated for the first time at the Nuremberg Trials. The German defence team successfully objected to its inclusion in the process as an inauthentic document. Some three decades later, K. Bardakjian in his booklet *Hitler and the Armenian Genocide* (1986), established its origin and authenticity, but doubts persisted in certain quarters: the historical-political context out of which the question would have grown was missing. A few studies have lately thrown some light on Nazi mentality and social-political realities between the two World Wars as well as Nazi German images of Mustafa Kemal as a hero and creator of the Republic of Turkey from the rubbles of the Ottoman Empire. This paper will look at the fate of the Armenians as viewed by certain German ruling circles and the inspiration Hitler and his clique derived primarily from the aggressive ways whether military, political or diplomatic, in which Kemal and his associates managed to establish the Republic of Turkey.

ГЕВОРК БАРДАКЧЯН (США)

**ИСТОРИЧЕСКИЙ КОНТЕКСТ РИТОРИЧЕСКОГО
ВОПРОСА ГИТЛЕРА "КТО ГОВОРИТ СЕГОДНЯ ОБ
ИСТРЕБЛЕНИИ АРМЯН?"**

Документ, содержащий риторический вопрос главы фашистской Германии был обнаружен во время Нюрнбергского процесса. Немецкие адвокаты упорно отвергали достоверность этого документа и, приводя некие формально-технические доводы, добились его изъятия из официальных протоколов процесса. Спустя три десятилетия

тилетиа, Г. Бардакчян в своей книге “Гитлер и Геноцид армян” (1986) на основании досконального изучения непубличных фактов и обстоятельств показал существование упомянутого документа. Однако подозрения заинтересованных опровергателей оногo отнюдь не были опровергнуты, ибо в тот момент отсутствовала соответствующая политико-общественная обстановка, поддерживающая актуальность этого вопроса. К тому же, до выхода этой книжки не существовали другие подобные исследования. Но вот, наконец, в ряде опубликованных в последнее время работ появились убедительные факты, доказывающие стремление руководителей Германии, потерпевшей поражение в Первой мировой войне, создать новый непобедимый рейх по образу и подобию Мустафы Кемаля, который на обломках Османской империи практически воплотил мечту о новой Турции.

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅԵՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ՆՊԱՏԱԿ, ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

Ցեղասպանությունների տեսության մշակման անհրաժեշտ պայմաններից է նրանց համեմատական-տիպաբանական ուսումնասիրությունը: Այդ առումով իմացական մեծ նշանակություն ունի 1894-1896 և 1915-1918 թթ. հայերի ցեղասպանությունների համեմատական վերլուծությունը: Թեև երկու ցեղասպանություններն էլ տեղի ունեցան ընդամենը 20 տարվա ընդմիջումով նույն երկրում՝ Օսմանյան կայսրությունում և իրականացվեցին նույն թուրքական իշխանությունների կողմից, դրանք, այնուամենայնիվ, իրենց որոշ հիմնական բնութագրերով տարբեր էին:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք Օսմանյան կայսրության մաս կազմող Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում ապրող հայերի շարժումն իրենց քաղաքացիական տարրական իրավունքների համար ու նրանց օրեցօր աճող ձգտումը հասնել ինքնուրույն քաղաքական գոյության, իշխանությունները դիտեցին որպես ևս մեկ լուրջ վտանգ կայսրության պահպանման հա-

մար: Որպես խնդրի լուծում թուրքական իշխանությունները դիմեցին աննախադեպ դաժան բռնաճնշումների քաղաքականությանը, որն էլ այսօր որակվում է որպես ցեղասպանություն: 1894-1896 թթ. ցեղասպանության գլխավոր նպատակն էր ճնշել հայերի ազգային-ազատագրական շարժումը, դարձնել նրանց հնազանդ մի զանգված և դրանով իսկ՝ դուրս մղել Հայկական հարցը եվրոպական դիվանագիտության օրակարգից: Դա, իր հերթին, պայմանավորեց ցեղասպանության իրականացման եղանակներն ու ձևերը: Զանգվածային սպանություններն իրականացվում էին որոշակի վայրերում, մինչ այդ իշխանությունների ստեղծած «համիդիե» անկանոն հեծելազորների, թուրք և քուրդ խուժանի, բայց նաև, անհրաժեշտության դեպքում, թուրքական զորամասերի և ոստիկանության միջոցով: 1894-1896 թթ. սպանվեց այս կամ այլ բնակավայրի հայ բնակչության որոշակի՝ հիմնականում մեծ մասը, իսկ տարատեսակ այլ բռնությունների, կողոպուտի ևն գոհն էին դառնում բոլորը: Դրա հետ մեկտեղ այդ տարիներին իշխանությունները չդիմեցին հայերի բռնի տեղահանումների, ավելին՝ չնայած տարբեր խոչընդոտների և սահմանափակումների, հնարավոր էր նրանց արտագաղթը, ավելի ստույգ՝ փախուստը երկրից: 1894-1896 թթ. ցեղասպանության արդյունքում օսմանյան Թուրքիայի հայ բնակչության շուրջ 300 հազ. սպանվեց, տասնյակ հազարավորները մահմեդականացվեցին, արտագաղթեցին երկրից: Հարկ է, սակայն, հատուկ շեշտել, որ չնայած մարդկային և նյութական մեծ կորուստների, կայսրության հայությունը շարունակեց իր կենսագործունեությունը ինչպես հայրենի տարածքներում՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, այնպես էլ երկրի այլ շրջաններում:

Շետազա տարիներին հայերը շարունակեցին պայքարն իրենց քաղաքացիական և ազգային իրավունքների համար, ինչին իշխանությունները պատասխանեցին մի նոր ցեղասպանությամբ, որը սկիզբ առավ 1915 թ.: Այս ցեղասպանության նպատակը լրիվ այլ էր՝ ոչ թե պատժել և հնազանդեցնել հայերին, այլ արդեն ընդհանրապես ոչնչացնել նրանց, վերջ տալ նրանց՝ որպես ժողովրդի, գոյությանը երկրի ողջ տարածքում և այդպիսով վերջնականապես փակել Հայկական հարցը: Իշխող երիտթուր-

քական կառավարությունը ոչ միայն ընդունեց համապատասխան որոշումներ, այլև հետևողականորեն և խստորեն վերահսկեց դրանց իրականացումը, մասնավորապես, այդ նույն նպատակով արգելելով հայերի արտագաղթը երկրից: Մպանություններից և մահմեդականացումից զատ, այս անգամ իշխանությունները կիրառեցին ցեղասպանության մի նոր ձև՝ հայերի բռնի և մահաբեր գաղթեցումը համակենտրոնացման ճամբարներ կայսրության հեռավոր շրջաններում՝ այս անգամ գոհերի թիվը հասցնելով 1,5 միլիոնի: Հայ ժողովրդի համար 1915 թ. սկիզբ առած ցեղասպանության հետևանքները եղան անդառնալի. առաջին անգամ էր, որ ա) հայկական ազգային տարածքների հիմնական հատվածում՝ Արեւմտյան Հայաստանում և Կիլիկիայում, հայ բնակչությունը գրեթե ամբողջովին վերացավ, բ) ինչպես վերապրած բռնագաղթածները, այնպես էլ նրանց հետևորդները, գրկվեցին հայրենիք՝ Արևմտյան Հայաստան և Կիլիկիա վերադառնալու հնարավորությունից: Աշխարհի տարբեր երկրներում ապաստանած հայ վտարանդիները ձևավորեցին որակապես նոր գաղթաշխարհ՝ Միջուրք:

ЭДУАРД МЕЛКОНЯН (АРМЕНИЯ)

ДВА РАЗНЫХ ГЕНОЦИДА АРМЯН: ЦЕЛИ, ОСУЩЕСТВЛЕНИЕ, ПОСЛЕДСТВИЯ

Одним из необходимых условий разработки теории геноцида является сравнительно-типологическое изучение различных фактов геноцида. Особый интерес представляет сравнительный анализ двух геноцидов армян в Османской империи: в 1894-1896 и в 1915-1918 гг., позволяющий выявить существенные различия в их целях, способах осуществления и последствиях.

TWO DIFFERENT GENOCIDES OF ARMENIANS: PURPOSES, IMPLEMENTATION, CONSEQUENCES

One of the necessary conditions for the development of the theory of genocide is the comparative and typological study of various facts of genocide. The comparative analysis of the two genocides of Armenians in the Ottoman Empire (in 1894-1896 and 1915-1918) that enables to reveal essential distinctions in their purposes, ways of implementation and consequences, is of particular interest.

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՀԱՅՍՍՍՍԱՆ)

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԵՎ ԹՈՒՐԲ-ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (1918 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ-1920 Թ. ԱՊՐԻԼ)

XIX դարի ամբողջ երկրորդ հիսնամյակը և XX դարի առաջին երկու տասնամյակները հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության ամենաողբերգական ժամանակաշրջանն են եղել: Այդ ընթացքում մշակվեց և իրագործվեց արևմտահայերի ցեղասպանությունը: Երիտթուրքական «Իթթիհատ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցության հայաջինջ քաղաքականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին չսահմանափակվեց միայն արևմտահայերի 1915-1916 թթ. Ջանգվաձային կոտորածներով ու տեղահանությամբ: Այդ քաղաքականությունը շարունակվեց իրականացվել նաև արևելահայերի նկատմամբ 1918-1920 թթ.: Արևելահայերի ցեղասպանության տարիներին կոտորածի ու տեղահանության ենթարկվեց նաև Բաքվի նահանգի տեղաբնակ հայությունը:

Օսմանյան բանակը 1918 թ. գարնանը ներխուժեց Այսրկովկաս և շարունակեց իր հայաջինջ քաղաքականությունը: Թուր-

քական գործիւներին՝ 1918 թ. մայիսին Սարդարապատի, Բաշ-Ապարանի մարտերում ունեցած անհաջողություններից և Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր) գրավումից հետո նրա հիմնական խմբավորումը արշավեց Բաքու: Այդ արշավանքով Օսմանյան կայսրությունը ձգտում էր տիրանալ Բաքվի նավթին, ապա անցնել Հյուսիսային Կովկաս և, ի վերջո, Միջին Ասիա և ստեղծել թուրքական մեծ պետություն, որով պետք է իրագործվէր համաթուրքականության (պանթուրքիզմ) ծրագիրը¹⁰⁵: Բաքվի դեմ արշավանքով փորձ էր արվում իրականացնել նաև համաթուրքականության ծրագրով նախատեսված Օդուզական պետության ստեղծումը, որով Սև ծովից մինչև Կասպից ծով (Բաթումից մինչև Բաքու) ընկած տարածքում Օսմանյան կայսրության խնամակալության ներքո նախատեսվում էր ստեղծել «Մեծ Ադրբեջան» նոր պետությունը՝ կամրջելով թուրքական պետությունը Կովկասի և Միջին Ասիայի թրքախոս ժողովուրդների հետ¹⁰⁶: Այդ ծրագիրը պետք է իրականացվէր արևելահայության կոտորածների, բռնի մահմեդականացման ու տեղահանության ճանապարհով:

Երիտթուրքերի հենարանը Այսրկովկասում Մուսավաթ կուսակցությունն էր, որը ջանք չէր խնայում թուրքերի առաջխաղացումն արագացնելու: Հայկական գորամիավորումների քառամսյա հերոսամարտերից հետո մեծաթիվ թուրք-թաթարական զորամասերը սեպտեմբերի 15-ին գրավեցին Բաքուն և թուրք սպաների ղեկավարությամբ ու արհեստածին «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության»¹⁰⁷ մուսավաթա-

¹⁰⁵ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 276, ց. 1, գ. 37, թ. 48:

¹⁰⁶ St u Зареванд, Турция и пантуранизм, Париж, 1930, с. 92, տե՛ս նաև «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 30, N 222:

¹⁰⁷ Արևելյան Այսրկովկասում երբևէ գոյություն չի ունեցել «Ադրբեջան» անվամբ որևէ աշխարհագրական վայր կամ պետություն: Արտ. Աբեղյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Ատրբեջան եւ ատրբեջանցի անունով երկիր ու ժողովուրդ գոյութիւն չունէին պատերազմից (իմա՝ Առաջին աշխարհամարտից - Գ. Ս.) առաջ: Ռուսական հին վիճակագրութիւնը գիտէր միայն «Արեւելեան Անդրկովկաս», «Բազուի նահանգ» և այլն, փոխարինելով նույնանուն խանութիւններին՝ պարսկական տիրապետութեան տակ» (Աբեղեան Արտ., Մենք եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», Պոսթրն,

կան կառավարության անմիջական օժանդակությամբ երեք օր շարունակ (15-ից-17-ը) կոտորեցին հազարավոր հայերի՝ կոդուպտելով նրանց ունեցվածքը: Ցեղասպանության այդ հրեշավոր քաղաքականությունը գոհ գնաց ավելի քան 30.000 հայ¹⁰⁸:

Բաքվի նահանգում հայահալած քաղաքականությունը շարունակվեց Ադրբեջանական Հանրապետության գոյության ամբողջ ընթացքում (1918 թ. մայիսի 28-1920 թ. ապրիլի 28): Արևելահայերին բնաջնջելու երիտթուրքերի քաղաքականությունը որպես «ժառանգություն» փոխանցվեց մուսավաթականներին: Հայերի ֆիզիկական բնաջնջումը համարելով համաթուրքականության հիմնական խնդիրներից մեկը՝ պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից և թուրքական զորքերի Այսրկովկասից հեռանալուց հետո մուսավաթականները շարունակեցին հայահալած քաղաքականությունը: Ընդհանուր առմամբ, 1918 թ. մարտից 1919 թ. հունիս ընկած ժամանակահատվածում Բաքվում և գավառներում (Գյոքչա, Շամախի, Ղուբա, Ջավաթ,

1928, Զ տարի, մայիս, N 7, էջ 135): 1918 թ. մայիսի 26-ին՝ Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո, երբ կովկասյան թաթարների «ազգային» խորհուրդը (նախագահ՝ Մամեդ Էմին Ռասուլզադե) երիտթուրքերի թելադրանքով մայիսի 28-ին Թիֆլիսում հռչակեց արհեստածին նոր «պետության» ստեղծումը, նպատակ ունենալով նույն անվան միջոցով հավակնել Իրանի հյուսիսարևմտյան պատմական Ատրպատական-Ազարբայջան երկրամասին, հակառակ Իրանի բողոքների այն հորջորջվեց «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն» (հետագայում՝ Ադրբեջանական ԽՍՀ, ներկայումս՝ Ադրբեջանական Հանրապետություն): Մանրամասն տե՛ս Бартольд В., Место прикаспийских областей в истории мусульманского мира, Сочинение, т. II, ч. I, Москва, 1963, с. 703; Էնսեթոլլահ Ռեզա, Ազարբայջան եւ Առան (Կովկասեան Ալբանիա), Երևան, 1994, էջ 151-152; Swietochowski T., Russian Azerbaijan. 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community. Cambridge, Cambridge University Press, 1985, p. 129; Ասատրյան Գ., Գևորգյան Ն., Ադրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, 1990; Galichian R., The Invention of History. Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination (Second, revised and expanded edition), London/Yerevan, 2010, p. 35.

¹⁰⁸ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 96-99, տե՛ս նաև Геноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, док. N 245, с. 524, տե՛ս Ստեփանյան Գ., Բաբուր քաղաքի հայության պատմությունը (պատմա ժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 418:

Լենքորան) հայ գոհերի թիվը, ոչ լրիվ տվյալներով անցնում էր 50.000-ից¹⁰⁹:

Հարկ է նշել, որ մուսավաթական իշխանությունների հայա-հալած քաղաքականությանը նպաստեց նախկին երիտթուրք Մուստաֆա Քեմալ փաշայի գլխավորությամբ 1919 թ. գարնանից սկսված ազգայնական (միլլի) հորջորջված շարժումը: Քեմալական շարժումը ժառանգեց երիտթուրքերի հայասպան քաղաքականության գաղափարական ծրագիրը¹¹⁰: Նպատակ ունենալով Բաքուն հենակետ դարձնել Կովկասում լայնածավալ գործունեության համար՝ քեմալականները գործնականորեն սկսեցին համագործակցել մուսավաթականների հետ: Բաքվում սկսեց ծավալվել քեմալականությունը պաշտպանող լայն շարժում, որն առաջին հերթին ուղղված էր Հայաստանի և հայ ժողովրդի դեմ: Հայ բնակչության կոտորածները նոր թափով սկսվեցին 1920 թ. սկզբներից: Մուսավաթական իշխանության գործադրած բարբառոսական քաղաքականության հետևանքով Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում զգալիորեն փոխվեց էթնոժողովրդագրական պատկերը՝ ի վնաս հայերի: Ընդհանուր առմամբ Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառների 50.000-ից ավել հայերից կոտորածի ենթարկվեց շուրջ 40.000-ը¹¹¹: Ջարդերից հետո կտրուկ նվազեց նաև Բաքվի նահանգի հայերի թիվը: 1921 թ. մարդահամարի տվյալներով միայն Գյոքչայի, Շամախու, Ղուբայի, Բաքվի, Լենքորանի և Ջավաթի գավառներում հայ բնակչության թիվը կազմում էր 50.212¹¹²: Այդ թիվը համադրելով հայ բնակչության՝ նախքան կոտորածներն

¹⁰⁹ Տե՛ս Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., ՊԲՀ, Երևան, 2008, N 3, էջ 46:

¹¹⁰ Տե՛ս Ամատունի Յ., Թուրք Միլլիի շարժումը, «Հայրենիք», Պոսթըն, 1941, ԺԹ տարի, փետրվար, N 4, էջ 107-111:

¹¹¹ Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ., «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», հ. 5, Երևան, 2005, էջ 23-28:

¹¹² Տե՛ս Закавказье. Советские республики (Статистикоэкономический сборник), Тифлис, 1925, с. 152-153.

արձանագրված թվի (127.318)¹¹³ հետ, պարզորոշ երևում են փաստացի կորուստների այն մեծ չափերը, որ պատճառել էին երիտթուրքերն ու մուսավաթականները: Ըստ այդմ՝ կոտորածներին զոհ էր գնացել շուրջ 77.106 մարդ, որից միայն 49.927-ը՝ Բաքու քաղաքում (նախքան կոտորածները Բաքվում հայ բնակչության թիվը 88.673¹¹⁴ էր, ապա 1921 թ. տվյալներով կազմում էր 38.746)¹¹⁵: Ավերվեցին ու ոչնչացվեցին դարերի ընթացքում ստեղծված հուշարձանները՝ խաչքարերը, վանքերն ու եկեղեցիները: Ինչպես ակներև է ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված սահմանումից, այն ամենը, ինչ տեղի է ունեցել Կուրի ձախափնյակի հայության հետ 1918-1920 թթ., անառարկելիորեն փաստում են, որ կատարվածը ցեղասպանություն էր: Հատկանշական է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում: Ուստի, թուրք-մուսավաթականների կիրառած քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչև Բաքու) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր:

Այսպիսով՝ անկախ վարչակարգից, Բաքվի նահանգի հայության ցեղասպանության պատասխանատուները ներկայիս թուրքական և ադրբեջանական պետություններն են: Հայտնի է, որ միջազգային իրավահաջորդությունը որևէ պետության իրավունքների և պարտականությունների փոխանցումն է մեկ այլ պետության: Ուստի, Թուրքիայի Հանրապետությունը համարվե-

¹¹³ Տե՛ս ՆԱՍ, ֆ. 149, ց. 1, գ. 46, թ. 2-8, տե՛ս նաև գ. 133, թ. 19, տե՛ս նաև ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 1-2, տե՛ս նաև ֆ. 409, ց. 1, գ. 2634, թ. 1-2, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., էջ 31-48:

¹¹⁴ Տե՛ս Իշխանեան Բ., Բազուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920, էջ 17:

¹¹⁵ Տե՛ս Закавказье. Советские республики (Статистикоэкономический сборник), с. 152-153:

լով Օսմանյան կայսրության իրավահաջորդը, իսկ ներկայիս Ադրբեջանական Հանրապետությունը 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանական Հանրապետության ժառանգորդը՝ լիիրավ պատասխանատվություն են կրում իրենց նախորդների կատարած հանցագործությունների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության համար:

ГЕВОРГ СТЕПАНЯН (АРМЕНИЯ)

**ПОГРОМЫ АРМЯН В БАКИНСКОЙ ГУБЕРНИИ И
ОТВЕСТСТВЕННОСТЬ
ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ВЛАСТЕЙ
(1918 Г. СЕНТЯБРЬ-1920 Г. АПРЕЛ)**

В годы Первой мировой войны, во время нашествия на г. Баку Османская империя поставило целью создание “Огузского государства”. Первым шагом являлось основание нового государства “Большой Азербайджан”, на территории, расположенной между Черным и Каспийской морями. Резня армян была частью этой программы.

Преступная политика физического уничтожения или насильственного выселения армян в Бакинской губернии продолжалась на протяжении всего периода существования мусаватистского Азербайджана (1918-1920 гг.). Политика Турции и Азербайджана должна рассматриваться как продолжение геноцида западных армян 1915-1916 гг., ибо геноцид армян как политический вопрос с его географическим охватом (от Киликии до г. Баку) и историческим смыслом является следствием плана пантюркизма.

**POGROMS OF THE ARMENIANS OF BAKU PROVINCE
AND RESPONSIBILITY OF THE TURKISH-AZERBAIJANI
AUTHORITIES (1918 SEPTEMBER-1920 APRIL)**

In the years of World War I, during the invasion of Baku Ottoman empire intended to create a beforehand planned country called “Oguzi”. The first step was the creation of a new country “Big Azerbaijan” in the territory between the Black and the Caspian Sea. The mentioned program had to be realized through the massacre of the Armenians.

The criminal politics of physical abolishment or the forcible expulsion of Armenians continued during the whole period of Musavat Azerbaijan’s existence (1918 -1920), that resulted in thousands of Armenian victims. The policy of Turkey and Azerbaijan in the province of Baku in 1918-1920 must be viewed as the continuation of Western Armenians’ Genocide in 1915-1916, because Armenian Genocide as a political question, both geographically (from Kilikia to Baku) and in the historical sense is the result of panTurkic entire plan.

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ԱՄՆ-Ի ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՊԱՍՏԸ
ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ**

1. Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Կովկասում, ապա Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին՝ ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի զորամիավորումների հետ կողք-կողքի քաջաբար մարտնչելով գերմանական ուժերի և երիտթուրքական ու քեմալական բռնությունների դեմ:

2. Արդեն 1914 թ. աշնանը Կովկասում կամավորական շարժում կազմակերպելու նպատակով Ազգային բյուրոյի կոչերից ոգևորված կարճ ժամանակում ոչ միայն Կովկասից և Ռուսաստանի մյուս շրջաններից, այլ նաև Եվրոպայից և աշխարհի տարբեր կողմերից (Բուլղարիա, Ռումինիա, Եգիպտոս, Պարսկաստան և այլն) ու հատկապես՝ հեռավոր ԱՄՆ-ից, մեծ խանդավառությամբ խումբ-խումբ Կովկաս են շտապել վրեժով ու ատելությամբ, բայց և ազատատենչ ոգով տոգորված հարյուրավոր հայազգի անձնուրաց երիտասարդ կամավորներ՝ համալրելու նոր կազմվող գնդերը: ԱՄՆ-ից և եվրոպական երկրներից տարբեր ճանապարհներով հայրենիքի ազատագրմանը մասնակցելու նպատակով եկել է շուրջ 3.000 հայ:

1914 թ. սեպտեմբերի 10-ից մինչև 1916 թ. օգոստոսի 25-ը Կովկասում ծավալված հայ կամավորական շարժումն իր ուրույն տեղն ունի հայ ռազմարվեստի պատմության մեջ, որպես նորագույն ժամանակաշրջանում բնօրրանում և արտերկրում ցրված հայության երկու հատվածների կազմակերպված ինքնապաշտպանական շարժման դրսևորման անդրանիկ փայլուն օրինակ, ինչպես նաև ռուս, կազակ, արևելահայ, արևմտահայ զինակցության հիշարժան դրվագ:

3. Կովկասում կամավորական շարժման լուծարումով արևմտահայության շրջանում չի մարել հայրենի տարածքներն ազատագրելու և հայ ժողովրդի ապրելու բնական իրավունքը պաշտպանելու սրբազան զգացումը և նա ձեռնամուխ է եղել սեփական ուժերով կամավորական նոր շարժում կազմակերպելուն: Այդ նպատակով արտասահմանի, մասնավորապես, ԱՄՆ-ի հայությունը կարևոր բացատրական աշխատանք է իրականացրել դաշնակից տերությունների շրջանում՝ նրանցից ակնկալելով ինչպես քաղաքական ու դիվանագիտական, այնպես էլ նյութական ու ռազմական աջակցություն:

Ֆրանսիական հրամանատարության ներքո Կիլիկիայում արևմտահայության ծավալած կամավորական շարժումը կազմակերպելու և կանոնավորելու, ինչպես նաև հայանպաստ այլ ձեռնարկներ իրականացնելու և վերահսկելու հատուկ նպատակով 1917 թ. մարտին Բոստոնում կազմակերպվել է Ամերիկայի

հայ ազգային միությունը: Այն բաղկացած էր քաղաքական չորս կուսակցությունների (ՄԴՀԿ, Վերակազմյալ հնչակյան, ՀՅԴ, ՀՄՌ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից: Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել է միության 187 մասնաճյուղ: Ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից այն ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում:

4. Ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով ընդամենը վեց ամսում՝ 1917 թ. հունիսի 9 - նոյեմբերի 3, արձանագրվել է 5.000 ամերիկահայ, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն է ընձեռվել ընդամենը 1.172-ին, իսկ մնացյալը հետագայում զինվորագրվել է ԱՄՆ-ի բանակին՝ կռվելով Գերմանիայի դեմ արևմտյան ճակատներում:

Թեև Կիլիկիայի ազատագրման համար գործադրված ջանքերը վերջին հաշվով ձախողվեցին, այդուհանդերձ, անուրանալի է նաև ամերիկահայ կամավոր երիտասարդության մասնակցության նշանակությունը «Արևելյան լեգեոնի» («Հայկական լեգեոն») ձեռք բերած մարտական հաջողությունների գործում:

3. Այսպիսով, հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Առաջին աշխարհամարտին և հաջորդող տարիներին ամերիկահայերը, համախմբելով իրենց ներգաղութային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական և այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր միջոցներով սատարել են հայրենի բնօրրանի և ժողովրդի պաշտպանության, ազատագրության ու վերականգնման նվիրական գործին:

КНАРИК АВАКЯН (АРМЕНИЯ)

**УЧАСТЬЕ И ПОМОЩЬ АРМЯН США
ДОБРОВОЛЬЧЕСКИМ ДВИЖЕНИЯМ
НА КАВКАЗЕ И В КИЛИКИИ**

В ставшими роковыми для армян годы Первой мировой войны (1914-1918 гг.), армянская община США объединила весь свой умственный, финансовый, социальный и политический потенциал в целях оказания дипломатической, военной, людской и прочей всевозможной помощи родной стране и народу.

Армяне США приняли участие также в добровольческих движениях на Кавказе и в Киликии, бок о бок сражаясь с русскими и французскими войсковыми соединениями против немецкого и турецкого насилия.

Американские армяне осуществили также активную лоббистскую деятельность в защиту Армянского Вопросы в политических кругах Европы и США.

KNARIK AVAKIAN (ARMENIA)

**THE PARTICIPATION AND AID OF THE ARMENIANS OF
THE US TO THE CAUCASIAN AND CILICIAN
VOLUNTARY MOVEMENTS**

During the years of the First World War (1914-1918), which were disastrous for the Armenian people, the Armenian community of the US, assembling its entire intra-communal intellectual, financial, public and political resources, have assisted the Motherland and its people by all the possible diplomatic, military and human means.

They have taken part in the Caucasian and Cilician voluntary movements, shoulder to shoulder fighting with Russian and French military formations against German and Turkish forces.

The Armenian-Americans have carried out also active lobbying activities on behalf of the Armenian Case among political circles of Europe and the USA.

**ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅԵՐԸ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ. ԿԱՊԵՐ ԵՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

Սույն հոդվածը հիմնված է դեռևս չուսումնասիրված արխիվային նոր նյութերի վրա, որոնք բացահայտվել են միայն վերջերս: Այստեղ ներկայացված են երկու համաշխարհային պատերազմների ընթացքում Հունգարիայի հայերի մասին կարևոր տեղեկություններ:

Երկու համաշխարհային պատերազմների ընթացքում հունգարահայերի մասին վերլուծությունները ասիրաժեշտ է սկսել երեք ելակետային դրույթներից.

- Կարպատյան ավազանում՝ հատկապես Տրանսիլվանիայում, հայերը ապրել են դեռևս տասնյոթերորդ դարից: Նրանք չեն խոսում հայերեն, սակայն հպարտանում են իրենց հայկական արմատներով և ավանդույթներով: Տասնիններորդ դարում նրանք հաստատվել են Հունգարիայի այլ տարածքներում, ինչպես օրինակ՝ Բուդապեշտում:

- Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Հունգարիան կորցրեց իր տարածքների մի մասը, Տրանսիլվանիայի հայերը հաստատվեցին Հունգարիայում՝ հատկապես Բուդապեշտում:

- Հայոց ցեղասպանությունից հետո հայերի մի խումբ հաստատվել է Կարպատյան ավազանում՝ Տրանսիլվանիայում, ինչպես նաև Բուդապեշտում:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հունգարիայում գոյություն ունեին հայերի տարբեր խմբավորումներ: Այդ է պատճառը, որ նրանք փորձել են ստեղծել կառույցներ, որոնք կմիավորեին այդ տարբեր խմբավորումները: Այդ առումով ստեղծվել են հետևյալ կառույցները (ժամանակագրական հերթականությամբ).

- «Մասիս» կազմակերպությունը (1919 թ.) և Լեփսիուսի բարեգործական ընկերությունը

- Հայկական-հունգարական առևտրական բաժնետիրական ընկերություն

- Հունգարիայի հայերի ասոցիացիան (1920թ.)

- Բուդապեշտի Հայ կաթողիկե եկեղեցին:

«Մասիս» կազմակերպությունը (1919 թ.) և Լեփսիուսի բարեգործական ընկերությունը

Նշված կառույցներից առաջին երկուսը ծավալում էին փոքր գործունեություն. «Նոր դար» ամսագրի տպագրություն, որը հրատարակվել է ընդամենը մի քանի համարով: Դեռևս այդ ժամանակ մենք կարող ենք տեսնել լարվածությունը երկու խմբերի միջև: Այդ են վկայում նաև պաշտոնական փաստաթղթերը: Որպես օրինակ կարող է լինել «Մասիս» կազմակերպության ստեղծման փաստաթուղթը, որում որպես կազմակերպության նպատակ նշված է. «Մեզ ընդունեք ոչ որպես օտարների, այլ որպես Ձեր եղբայրների: Մենք ակնկալում ենք Ձեր աջակցությունը, և մենք գիտենք, որ չեք հուսահատեցնի մեզ»:

Հայկական-հունգարական առևտրական բաժնետիրական ընկերություն

Կառույցի նպատակը հայկական սփյուռքի մեջ ցանցեր ստեղծելն էր: Ինչպես նաև ձեռնարկատիրությունների ձևավորումը, որոնց միջոցով սփյուռքահայերը կարող են օգնել Հունգարիայի միջազգային առևտրին:

Հունգարիայի հայերի ասոցիացիան (1920թ.)

Այս կառույցը հիմնադրվել է 1920 թվականին, ունեցել է 409 անդամներ և գոյությունը շարունակել է մինչև 1950 թվականը: Ուսումնասիրելով կազմակերպության պատմությունը՝ պարզ է դառնում, որ նոր անդամների գրանցումը ունեցել է ակտիվ և պասիվ շրջաններ: Ամենաակտիվ շրջանը 1921 թվականի մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսներն են: Հետաքրքրական է այն, որ ամիսների և համապատասխան օրերի մեջ ևս կան տարբերություններ: Հատկանշանական է, որ 1921 թվականի ապրիլի 24-ին ամենաշատ են ասոցիացիայի անդամակցության հայտ են ներկայացրել:

Հիպոթեզ

1920 թվականների սկզբներին Բուդապեշտի հայկական համայնքը հենց այդ օրը՝ ապրիլի 24-ին ոգեկոչել է հայոց ցեղասպանությունը: Օրվա ընտրության պատճառների բացահայտման հետ կապված դժվար է գտնել մեկ այլ ռացիոնալ բացատրություն, քան հայոց ցեղասպանության ոգեկոչումը:

Ուսումնասիրելով ասոցիացիայի արձանագրությունները՝ պարզում ենք, որ հենց այդ օրը ասոցիացիայի տնօրենը՝ Ֆելիքս Ավեդիքը, ունեցել է երկար և հայրենասիրական ելույթ, որի ընթացքում նա խոսել է պատմության տարբեր ժամանակներում հայերի տառապանքների մասին՝ շեշտադրելով միասնականության կարևորությունը:

Ստորև ներկայացված են ասոցիացիայի բոլոր անդամների վերաբերյալ մի շարք կարևոր առանձնահատկություններ:

Ծննդավայր: Եթե ուսումնասիրենք ասոցիացիայի անդամների ծննդավայրերը, ապա կարող ենք բացահայտել ևս հետաքրքիր տեղեկատվություն՝ Տրանսիլվանիա – 68 %, Հունգարիա (բացի Տրանսիլվանիա) – 13 %, Օսմանյան կայսրություն – 13 %, Կովկաս – 2%, Ղրիմ – 3%, Ավստրիա – 1%:

Կրթություն: Ասոցիացիայի անդամների կեսից ավելին ունեցել են բարձրագույն կրթություն, ինչպես նաև մեծ թիվ են կազմել գիտական աստիճան ունեցողները:

Զբաղվածությունը ևս բազմակատեգորիալ է, սակայն մեծ խումբ են կազմում առևտրականները, ադմինիստրատիվ աշխատակիցները, բժիշկները:

Բնակավայրի առումով գերակշռում է Բուդապեշտը՝ 75%, իսկ մնացյալ 25% ապրել են Հունգարիայի այլ տարածաշրջաններում:

Չնայած ասոցիացիայի անդամների գերակշռող մասն ապրում է Բուդապեշտում և հատկապես կենտրոնական հատվածներում, սակայն հասցեների վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացությանը, որ Բուդապեշտի հայ համայնքային կյանքը չի զարգացել էնկլավային ձևով:

Կրթություն և ծննդավայր կապը

Երբ համակցում ենք անդամների կրթական մակարդակը և ծննդավայրը, ապա ստանում ենք, որ Հունգարիայում ապրող հայերի մեծ մասն ունեցել են բարձրագույն կրթություն կամ ունեցել են գիտական աստիճան: Նրանք, ովքեր հաստատվել են Հունգարիայում Տրանսիլվանիայից, ունեն խառը պատկեր: Իսկ Օսմանյան կայսրությունից եկածներն ունեցել են ամբողջությամբ հակառակը պատկերը. միայն մեկ հոգի է եղել բարձրագույն կրթությամբ, Առաքելական եկեղեցու մի հովիվ է եղել, սակայն մեծամասամբ նրանք չեն ունեցել կրթություն, որը նշանակում է, որ ցեղասպանությունից փրկված հայերի մեծ մասը առևտրականներ էին, հատկապես գորգավաճառներ:

Հիպոթեզ

Մուսա լեռան օրինակով կարելի է պնդել, որ հենց մտավորականությունն է եղել պաշտպանության կամ դիմադրության հիմնական կազմակերպիչը:

Մտավորակությունը կարևոր նշանակություն է ունեցել համայնքի համար: Սա կարող է նշանակել, որ Օսմանյան կայսրությունը հայ մտավորականությանը դիտարկում էր որպես գլխավոր թշնամի, և հենց այդ է պատճառը, որ ցեղասպանությունից փրկվածների գերակշռող մասը հիմնականում ոչ մտավորականներ էին:

Հունգարիայի հայեր (ծննդավայրը Հունգարիա, ինչպես նաև Տրանսիլվանիայից Հունգարիա տեղափոխված հայեր)	Օսմանյան կայսրությունից եկած հայեր
Պետական աշխատողներ	Առևտրականներ
Բժիշկներ	Գորգագործներ
Իրավաբաններ	Կոշկարարներ
Առևտրականներ	

Աղյուսակ 1. Զբաղվածությունն ըստ ծննդավայրի

Բուդապեշտի հայ կաթողիկե եկեղեցի

Եկեղեցին համայնքային ամենամեծ կառույց է եղել, ունեցել է 698 անդամներ: Կառույցի նպատակը նույն է ինչպես որ ոչ կրոնական կազմակերպությունների դեպքում:

Կազմակերպության անդամների սեռային բաշխվածությունը՝ 69% արական, իսկ 31%՝ իգական:

Եթե համեմատենք այս ցուցանիշները այլ կազմակերպության՝ Հունգարիայի հայկական ասոցիացիայի տվյալների հետ, ապա կտեսնենք էական տարբերություններ. 90% արական, իսկ 10%՝ իգական:

Այս ամենի արդյունքում մենք կարող ենք ձևավորել հետևյալ հիպոթեզը.

Հիպոթեզ

Ի տարբերություն կրոնական կառույցի, որտեղ անդամների սեռային բաշխումը այս կամ այն չափով համաչափ կարելի է դիտարկել, Հունգարիայի հայկական ասոցիացիան ավելի պատրիարխալ է, երբ հաշվի ենք առնում էթնիկ բաղադրիչը, քանի որ ավանդական ընտանիքներում տան գլխավորը տղամարդն է:

Երբ դիտարկում ենք երկու կազմակերպությունների կապերը, ապա կարևոր է ընդգծել, որ ինչպես համայնքների անդամների, այնպես էլ ղեկավարների շրջանում հանդիպում են կրկնություններ. միաժամանակյա անդամակցություն երկու կառույցներին: Սակայն երկու կազմակերպությունները բացի իրենց հիմնական առաքելություններից իրականացրել են նաև այլ կարևոր գործառույթներ՝ օրինակի համար Հունգարիայի հայերի ասոցիացիան գործում էր որպես քվադի հյուպատոսարան: Նրանք օգնում էին Հունգարիա ժամանած նոր հայերին հատկապես փաստաթղթերի ձևակերպման և այլ աղմինիստրատիվ առումներով: Նրանք կապեր էին հաստատում սփյուռքահայերի հետ, ինչպես նաև արտասահմանյան այն կառույցների հետ, որոնք զբաղվում էին հայերի հարցերով՝ Յոհաննես Լեփսիուսի կազմակերպությունը: Եկեղեցու պարագայում երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նրանք հայերին տրամադրել են պաշտոնական փաստաթղթեր, որով հավաստիացրել են, որ նրանք հայեր են և արիա քրիստոնյաներ:

BALINT KOVAC (HUNGARY)

THE HUNGARIAN ARMENIANS BETWEEN THE TWO WORLD WARS: CONNECTIONS AND STRUCTURE

This paper is based on some new archival materials which have been discovered quite recently. They include important information on the Armenians living in Hungary during the two World Wars.

БАЛИНТ КОВАЧ (ВЕНГРИЯ)

ВЕНГЕРСКИЕ АРМЯНЕ МЕЖДУ ДВУМЯ МИРОВЫМИ ВОЙНАМИ: СВЯЗИ И СТРУКТУРА

Данная статья имеет своей основой неизученные архивные материалы, обнаруженные совсем недавно. В работе представлены важные сведения об армянах, проживавших в Венгрии во время двух мировых войн.

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՍԲԱՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ 1914-1923 ԹԹ.

1. Այսօր, երբ բոլորել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցը, աշխարհի մեծ մասը (բացառությամբ որոշ երկրների կառավարությունների, պետական և հասարակական կազմակերպությունների) դեռևս անհաղորդ է 20-րդ դարի այդ մեծագույն ողբերգություններից մեկին: Ողբերգություն, որի պատճառով հայ ժողովուրդն արմատախիլ արվեց և զրկվեց հայրենիքից:

Նշանակում է, որ Ցեղասպանության ճանաչման, դատապարտման՝ արդեն թափ առած գործընթացը դեռևս վաղ է ընկալել իբրև արդարության հաղթանակ . առջևում ճանաչմանն ու դատապարտմանը հաջորդող ամենակարևոր փուլն է՝ փոխհատուցումը: Ասել է թե՛ արդար դատի լուծմանը հասնելու համար անհրաժեշտ է ի մի բերել գիտական, իրավական ու ֆինանսական հսկայական ռեսուրսներ:

Այդ բազմազանության մեջ իրավական դաշտի, միջազգային իրավունքի կռվանների հետ մեկտեղ՝ ծանրակշիռ է համաշխարհային հանրության գործոնը: Վերջինիս տեղեկացվածության, գիտակցության վրա ազդելու և դիրքորոշում ձևավորելու հարցում չափազանց կարևոր է զանգվածային լրատվամիջոցների գրագետ ու համակարգված աշխատանքը:

2. Դեռևս 19-րդ դարի վերջին եվրոպական և ամերիկյան պարբերական մամուլը լուսաբանել էր արևմտահայության կյանքի ծանր պայմաններն ու ողբերգական էջերը: 20-րդ դարի սկզբին և Առաջին աշխարհամարտի նախօրյակին ամերիկյան մամուլը շարունակում էր լուսաբանել Արևմտյան Հայստանի իրադարձությունները: 1913 թ. ամռանը «Դը Լիթըրըրի Դայջեսթ-ում» (“The Literary Digest”) տեղ գտած հոդվածը, անդրադառնալով Արևմտյան Հայստանում տիրող իրավիճակին, ներկայացնում էր ամերիկյան ընթերցողին Հայկական հարցի էությունը և ընդգծում, որ սույլթան Արդուլ Համիդի անօրինություններն ու դաժանությունները շարունակվում էին երիտթուրքերի կողմից էլ՝ ավելի կատաղի ձևերով¹¹⁶: Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Թուրքիայի ներգրավումից անմիջապես հետո, 1914 թ., նոյեմբերի 12-ին, «Դը Նյու Յորք Թայմզ» պարբերականը (The New York Times) գրում էր, որ քրիստոնյաները վտանգի մեջ էին, հիմնական թիրախ էին ընտրված հատկապես ս հայերը: Նոյեմբերի 14-ին պարբերականը տեղեկացնում էր, որ հայերը սհաբեկվում էին ռուսներին համակրելու համար, ձերբակալվում և սպանվում՝ առանց դատ ու դատաստանի, իսկ նոյեմբերի 29-ի համարում հաղորդում է, որ սրբազան պատերազմի կոչերի ներքո թուրք խուժանն ավերում ու քանդում էր Էրզրումի հայկական ակումբները, եկեղեցիներն ու դպրոցները: Դեկտեմբերի 14-ի կարճ հաղորդագրությունը փաստում էր Էրզրումի փողոցներում կախադան հանված բազմաթիվ հայերի մասին:

«Դը Լիթըրըրի Դայջեսթ», «Դը Նյու Յորք Թայմզ», «Դը Աուլուք» (The Outlook), «Դը Ինդեպենդենթ» (The Independent), «Միշընըրի Ռեվյու» (Missionary Review), «Դը Սըրվեյ» (The Survey), «Ամերիքըն Ռևյու Օֆ Ռևյուս» (American Review of Reviews),

¹¹⁶ “ Young Turks’ Misrule in Armenia”, The Literary Digest, July 5, 1913:

«Սեթըրդի Իվնինգ Փոստ» (Saturday Evening Post), «Դը Լիվինգ Էյջ» (The Living Age), «Դը Աթլանտիկ Մանթլի» (The Atlantic Monthly), «Քարընթ Հիսթորի» (Current History), «Դը Նյու Ռեպուբլիք» (The New Republic), «Դը Վըրլդս Ուորք» (The Worlds' Work) և այլ պարբերականները բազմազան հոդվածներում ներկայացնում էին թե՛ Մեծ եղեռնի մանրամասները (1915 թ.), թե՛ հաջորդող տարիներին (1916-1922 թթ.) Օսմանյան կայսրության պարագլուխների և նրաց ժառանգորդների չարագործությունները: Ամերիկյան մամուլում հրատարակված հոդվածները փաստացի վկայում են Հայոց ցեղասպանության ծրագրավորված լինելու¹¹⁷ և հայությանն իսպառ ոչնչացնելու մասին¹¹⁸:

Մամուլում փաստացի արտացոլվել էր ԱՄՆ թե՛ պետական դիրքորոշումը և թե՛ ոչ պաշտոնական դիրքորոշումն արևմտահայության ողբերգության վերաբերյալ, ինչպես նաև քաղաքական և հասարակական գործիչների տեսակետներն ու գնահատականները: Անհրաժեշտ է նշել, որ հոդվածները պարունակում էին նաև տեղեկություններ Հայոց եղեռնի վերաբերյալ այլ պետությունների դիրքորոշման մասին, տարբեր երկրների միջպետական հարաբերությունների և Օսմանյան կայսրության հանդեպ նրանց վերաբերմունքի և քաղաքականության մասին և այլն:

3. Պարբերական մամուլը լրատվական և տեղեկատվական անսպառ աղբյուր լինելուց զատ՝ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր ունի ոչ միայն հետազոտական և գիտական, այլև բարոյահոգեբանական և դաստիարակչական նշանակություն: Ուստիև, Հայոց ցեղասպանության պատշաճ ճանաչման և գնահատման համար մեծ նշանակություն կունենա Ցեղասպանության տարելիցի օրերին ամերիկյան թերթերում և ամսագրերում Հայոց մեծ եղեռնի մասին տեղ գտած նյութերի վերահրատարակումը ոչ միայն տարբեր լեզուներով առանձին ժողովածուների տեսքով, այլև աշխարհի տարբեր երկրների մամուլի էջերում: Լինելով հարուստ փաստական աղբյուր՝ այդ տեղեկություններն իրենց անաչառությամբ թերևս կարող են ազդել համաշխարհային հանրության ընթերցող շրջանակների վրա ավելի, քան պաշտոնական

¹¹⁷ “The Armenians in Asia Minor”, The Outlook, August 18, 1915

¹¹⁸ “Christians in Great Peril”, The New York Times, January 13, 1915:

հաղորդագրությունները կամ հայության կողմից աշխարհով մեկ տարածվող, հանրամատչելի ու մարդկային կյանքի հետաքրքիր պատմություններ պարունակող, սակայն օտարներին կանխակալ թվացող հրապարակումները:

АРМЕНИИ ГАМБАРЯН (АРМЕНИЯ)

**СВИДЕТЕЛЬСТВА О ГЕНОЦИДЕ АРМЯН
НА СТРАНИЦАХ АМЕРИКАНСКОЙ ПРЕССЫ
(1914-1923)**

В данном сообщении освещаются статьи, посвященные трагической судьбе армянского народа, опубликованные во многих журналах и газетах США в период Большой резни (Мец Егерн), осуществленной младотурецкими лидерами в 1915 и последующих годах Первой мировой войны, а также их наследниками в течении нескольких послевоенных лет. Объективное, непредвзятое, последовательное освещение событий, являясь богатым источником фактического материала о Геноциде армян и представляя истинную и полную картину отмеченного периода, имеет не только информационное, но и большое научно-исследовательское, морально-нравственное и воспитательное значение.

ARMENUHI GHAMBARYAN (ARMENIA)

**U.S. MEDIA TESTIMONIES ON THE ARMENIAN
GENOCIDE (1914-1923)**

The presented report elucidates the articles, published on the pages of the American newspapers and journals, dedicated to the tragic fortune of the Armenian people in the period of Great massacre (Mets Eghern) committed by the Young Turks in 1915 and subsequent years of WW I. The atrocities of new rulers of the Turkish Republic during the first postwar years also are introduced. The objective and successively elucidated events of the Armenian Genocide present the real, true and full picture of that period. It is a rich source of the actual materials and has

not only scientific-research value but also a great moral and educational importance.

ՀԱՄԱՐԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՀՈԳԵՎՈՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Օսմանյան կայսրությունը սկզբից ևեթ հաստատեց այնպիսի սոցիալական համակարգ, որը լի էր կրոնական և քաղաքական հակամարտությամբ: Սրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ չնայած Օսմանյան կայսրությունում 20-րդ դարի առաջին քառորդում, երբ ձևավորվում էր թուրքական ազգային գիտակցությունը, կրոնը փոխարինվեց ազգայնականությամբ, այնուամենայնիվ, երիտթուրքական կառավարությունը քաղաքական նպատակներով հավատարիմ մնաց գերակայող դասակարգի սկզբունքին և իսլամին ու պանիսլամիզմի գաղափարախոսությանը:

Օսմանյան կայսրության հասարակական և քաղաքական համակարգում իսլամի դերով էր պայմանավորված նաև այն, որ ջիհադի գործոնը լավագույնս կարողացավ օգտագործել երիտթուրքական կառավարությունը՝ հրահրելով հասարակության տարբեր սոցիալական խմբերին մասնակցելու ցեղասպանությանը: Արևելագետ Հովհաննես Ինճիկյանը կրոնի դերի վերաբերյալ գրում է. «...հենվելով զանգվածային կոտորածների բազմամյա փորձի, Ղուրանի և շարիաթի դոգմաների վրա՝ երիտթուրքերը նախապատրաստել են երկրի մուսուլման զանգվածների հասարակական հոգեբանությունը և, օգտագործելով համաշխարհային պատերազմի պայմանները, հասել իրենց ազգայնական նպատակներին»¹¹⁹:

1914 թ. նոյեմբերի 2-ին Օսմանյան կայսրությունը ներգրավվեց պատերազմի մեջ որպես Գերմանիայի դաշնակից: Մի քանի օր անց կառավարությունը համոզում է սուլթանին՝ խալիֆի իշ-

¹¹⁹ Ինճիկյան Հ., Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը, Երևան, 1995, էջ 5:

խանութիւնն օգտագործելով ջիհադ հայտարարել Անտանտին: Միաժամանակ գործող շէյխ-ուլ-իսլամը՝ Հայրի էֆենդին, և բարձրաստիճան հինգ հոգևորականները ստորագրում են ֆեթվա: Այն եղել է երեք լեզուներով՝ օսմաներեն, արաբերեն, ռուսերեն, և ուղղված էր ամբողջ աշխարհի մուսուլմաններին: Անտանտին հայտարարված ջիհադն արտաքին քաղաքականության մեջ ձախողվեց, սակայն նպաստեց երկրի ներսում գործադրվող բռնություններին, քանի որ միտում ուներ նաև ժողովրդական զանգվածներին գրգռելու և վատթարացնելու միջէթնիկական փոխհարաբերությունները¹²⁰: Վանում գերմանական օգնության միության կայանի ղեկավար քարոզիչ Շայրըրը հաղորդում է. «...Կ.Պոլիսը սրբազան պատերազմ է հայտարարել և դրանով իսկ սանձազերծել մահմեդականների կատաղությունը քրիստոնյաների հանդէպ: Այս տրամադրությունը կար դեռ ամիսներ առաջ, թեպետ սանձերը ձգված էին: Դրանք ավելի բացահայտվեցին, երբ տարածվեցին Վանի շրջանում տեղի ունեցող արյունահեղությունների մասին լուրերը»¹²¹: Խնդրի վերաբերյալ օսմանյան բանակի վենետուելացի սպա Ռաֆայել դե Նոգալեսը գրում է, որ երիտթուրքերը կարողացան ողջ ժողովրդին հավատացնել սրբազան պատերազմի անհրաժեշտությունը¹²²:

Ջիհադի կոչն ամբողջությամբ ներծծված էր այն նույն կրոնական մոլեռանդությամբ ու ցեղամոլությամբ, որով լի էին համիդյան ջարդերի ու Ադանայի կոտորածների ժամանակ մուլլաների կողմից արված կրոնական բնույթի ագրեսիվ կոչերը: Նման ավանդությանին հիմքով կրոնը դառնում է ուժեղ ազդակ, որով հնարավոր է համախմբել հասարակությանը: Կրոնական անհանդուրժողությունն ու մոլեռանդությունը վերածվում է բռնության նրանց նկատմամբ, ում համարում է «թշնամի»:

Հայոց ցեղասպանության ընթացքում (ինչպես և դրան նա-

¹²⁰ Միմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 329-338:

¹²¹ Զումմեր Է., Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, Երևան, 2002, էջ 18-20:

¹²² De Nogales R., Four Years Beneath the Crescent, New York and London, 1926, p. 20.

խորդող 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տեղ գտած զանգվածային կոտորածների ժամանակ) կրոնական մոլեռանդությունը դրսևորվում էր հետևյալ կերպ՝ 1. կրոնական բովանդակությամբ ագրեսիվ տեքստերի՝ կոչերի, աղոթքների, օրհնությունների, մատուցումը մուսուլման հավատացյալներին, 2. Մուսուլմանների կրոնական մոլեռանդ ատելությունը եկեղեցիների և հոգևորականության նկատմամբ, 3. քրիստոնեական խորհրդանիշերի կիրառումը բռնության գործողություններում, 4. հայերի սպանություններին ուղեկցող կրոնական բնույթի արտահայտություններ:

Օսմանյան կայսրությունում մուսուլմանների կրոնական մոլեռանդությունը պայմանավորված էր դարերով ամրապնդված իսլամական և հատկապես ջիհադի ինստիտուտով: Այդ ավանդույթով էր պայմանավորված այն հանգամանքը, որ ինչպես դարերով ամրագրված զավթողական արշավանքները, կոտորածներն ու կողոպուտը համարվում էին Ալլահին հաճո գործ և սրբազան պարտք, այնպես էլ Հայոց ցեղասպանությունն ընկալվեց «որպես սրբազան պատերազմ» և ներգրավեց մուսուլման հասարակությանը:

HASMIK GRIGORYAN (ARMENIA)

THE FACTOR OF RELIGIOUS IDEOLOGY IN THE CONTEXT OF THE ARMENIAN GENOCIDE

It is well known that the social relations in society are regulated by “cultural models”, which in turn model the behavioral peculiarities in the culture of violence. One of such “models” is religious system.

The adoption of Islam in the Ottoman Empire became an excellent means for the nomadic people to explain their expansionist policy on religious principles. By calling the war against the “unbelievers” as the will of Allah, precept of Muhammad they glorified each person who was killed in that war as a “hero”, a “person who deserves the heaven”. Islam is based on the rules of Quran and Shariat accepting only “the equality of all Muslims”. Besides that in the Ottoman Empire public, social-political,

legal, and military institutions were based on Islam. The religious intolerance based on such traditions changed into terror towards those who were perceived as “enemies”. In particular, religious xenophobia based on religion brought about religious sadism.

Both during the massacres of Abdul Hamid (1894-96) and those in Adana province in 1909 (known as the Adana massacre), and during the Genocide of 1915 the religious sadism in the Ottoman Empire had the same fanatic manifestations: 1. recitation of aggressive appeals with religious content, as well as prayers in mosques, 2. sadistic attitude towards churches and the clergy, 3. religious slogans read while killing, 4. religious symbols as “models” in the methods of violence.

АСМИК ГРИГОРЯН (АРМЕНИЯ)

ФАКТОР РЕЛИГИОЗНОЙ ИДЕОЛОГИИ В ГЕНОЦИДЕ АРМЯН

Известно, что социальные отношения в обществе регулируются "культурными моделями", которые, в свою очередь диктуют также поведенческие особенности в культуре насилия. Один из таких "моделей" является религиозная система.

Принятие ислама в Османской империи стал отличным средством для кочевого народа, чтобы объяснить их экспансионистскую политику на религиозных принципах. Представляя войну против “неверных”, как волю Аллаха, славили каждого человека, который был убит в той войне как “героя”, “человека, который заслуживает рай”. Ислам основан на правилах Корана и Шариата, принимая только “равенство всех мусульман”. Кроме того, в обществе Османской империи, социально-политические, правовые и военные учреждения основаны на исламе. Религиозная нетолерантность на основе таких традиций превратилась в террор над теми, кто были восприняты как «враги». В частности, религиозная ксенофобия на основе религии привела к религиозному садизму.

И во время резни Абдул Хамид (1894-96гг) и в провинции

Адана в 1909 году (известный как резня в Адане), и во время геноцида 1915 года религиозный садизм в Османской империи имел тот же фанатичные проявления: 1. чтение агрессивно отношение к церкви и духовенству, 3. религиозные лозунги, которые читали во время убийств, 4. религиозные символы как “модели” в методах насилия.

ՔՐԻՍՏԻՆԵ ՆԱԶԱՐԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ.
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ**

Հոդվածում քննության է առնվում հանրակրթական դպրոցներում Հայոց ցեղասպանության թեմայի դասավանդման հիմնախնդիրը: Ցույց է տրվում հայ իրականության մեջ Մեծ եղեռնի թեմայի ներկայացման հիմնական մեխանիզմները, որոնք կիրառվել են վերջին տասնամյակների ընթացքում: Հիմնական եզրահանգումն այն է, որ Հայոց ցեղասպանությունը պետք է դասավանդվի դպրոցներում որպես առանձին առարկա: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ցեղասպանության մասին կրթությունը կարևորվում է ցեղասպանության ենթարկված ժողովրդի, ապա նաև ամբողջ մարդկության հավաքական հիշողության պահպանման և փոխանցման ու դրանից բխող՝ նոր ցեղասպանությունների կանխարգելիչ գործառույթների տեսանկյունից:

КРИСТИНЕ НАДЖАРЯН (АРМЕНИЯ)

**ОСВЕДОМЛЕНИЕ О ГЕНОЦИДЕ АРМЯН:
ПРОБЛЕМЫ И ВЫЗОВЫ**

В статье рассматривается вопрос преподавания истории Геноцида армян в общеобразовательных школах. Показываются основные методы представления темы Геноцида армян в армянской действительности, которые использовались на протяжении послед-

них десятилетий. Основной вывод заключается в том, что Геноцид армян следует преподавать в школах в качестве отдельного предмета, так как, преподавание истории Геноцида армян связано с сохранением коллективной памяти подвергнутого геноциду народа, и всего человечества, а также с предотвращением последующих геноцидов.

KRISTINE NAJARYAN (ARMENIA)

ARMENIAN GENOCIDE AWARENESS: PROBLEMS AND CHALLENGES

The issue of teaching the theme of Armenian Genocide in the public schools is considered in this article. The main mechanisms of the representation of the Armenian Genocide theme are shown in the article, which have been applied during the last decades. The main conclusion is that Armenian Genocide should be taught in the schools as a separate subject. It depends on the circumstance, that the education is important in the context of saving and passing the collective memory of Armenian Genocide, as well as the prevention of new genocides.

ROLF HOSFELD (GERMANY)

GERMANY AND THE ARMENIAN GENOCIDE

The debate about the involvement of the German Empire in the Armenian Genocide dates back to World War I accusations of the Entente as well as rumors spread by Young Turks in their own country from 1915 on. We have discussed this question in its broader context at an international conference organized by the Lepsiushaus and the German Historical Museum in Berlin this March.

In his seminal 1968 book *Germany and the Ottoman Empire*, Ulrich Trumppener pointed out that, overall, the German Imperial Government neither supported nor welcomed the persecution of the Armenians

during World War I. Yet it culpably displayed an extreme moral indifference and thoroughly failed to take any kind of action against the crimes of its ally, even within the confines of political opportunity.¹²³ Moreover, the Germans had learned to accept, excuse, and rationalize extreme violence against civilians as a legitimate method of domestic politics, already at the time of the Hamidian massacres 1894-96. Many followed this path in the years after 1915.

But is there any evidence supporting an extended notion of German involvement in the Armenian Genocide of 1915/16 from the beginning, as Vahakn N. Dadrian, invoking “German Responsibility” or “Complicity”, claimed twenty years ago?¹²⁴ The argument usually offered in support of this thesis relies on characterizing the Ottoman Empire’s power structure as akin to a German semi-colony. But in fact, the influence of the Germans on the Ottoman Empire was fairly limited; and in 1915 it was not the result of long-standing plans, even though the imperial pipe-dream of a Turkish “German Egypt” was actually debated before and during the war.

A principal motive of the Young Turks for entering the war was to shake off any foreign influence once and for all, and they were determined not to become subject to new German domination.

Secondly: When the war began, the political system in Istanbul was that of an ideologically driven one-party rule. The Germans had no experience with a political system like this, and they did not even understand it.

Armenian persecutions had a long history in the context of Ottoman domestic policies. And the Ottomans entered the war already with an ethos of population policies. The Armenian Genocide was an exclusively Young Turk – domestic – project, based on, as Johannes Lepsius already put it in 1919, “phantasies of population statistics”¹²⁵

In any case, the Germans understood, as Wangenheim cabled to Bethmann-Hollweg already on July 7, 1915, that it was beyond doubt

¹²³ Ulrich Trampener: Germany and the Ottoman Empire, p. 204

¹²⁴ Vahakn N. Dadrian: German Responsibility in the Armenian Genocide. Watertown 1996; Vahakn N. Dadrian: The History of the Armenian Genocide, pp. 248-300

¹²⁵ Johannes Lepsius, Mein Besuch in Konstantinopel. Der Orient, 1/3 (1919), p. 7

“the government does indeed pursue the aim of exterminating the Armenian race in the Turkish Empire”.¹²⁶ Since then, he - and the German government with him - exactly knew what was happening. Extermination of a race means genocide.

“We can handle our internal enemies”, the Ottoman War Minister Ismail Enver said to Johannes Lepsius on August 10, 1915: “You in Germany cannot. In this we are stronger than you.”¹²⁷ For the time being, thoughts like this were foreign to German politics, the mentality of which was almost still deeply rooted in traditional 19th century values. Yet, not much later, they were the reason why Adolf Hitler admired Enver as an example to follow, whom he referenced in his trial before the Munich People’s Court in 1924. According to Hitler, Enver managed to build up a whole new nation, successfully detoxifying the multicultural Gomorrah that was Constantinople.¹²⁸

To accept, excuse, and rationalize extreme violence against civilians was part of Germany’s military culture. As Isabel Hull observed in a recent study on the military culture of Wilhelminism, Germany applied the standards of a military struggle for existence in an extreme manner to all theatres of World War I. It is this mentality that entailed tolerating the Armenian Genocide.¹²⁹

Although there was no “complicity” in the form of active support, all options were put on the table of “Realpolitik”. And the way it was done came close to borderline. Better knowledge notwithstanding, official Germany supported denialism and by this the crime of its war ally from the very beginning for egocentric reasons. After the war, as Stefan Ihrig has shown in a recent study, there was an important public debate about genocide in Germany, following the publication of Johannes Lepsius’ foreign office documents *Deutschland und Armenien* (“Germany and Armenia”) in 1919 and the assassination of Talaat Pasha as well as the trial against Soghomon Tehlirian in 1921. Yet after this denialist voices became stronger and they even more and more changed

¹²⁶ Wangenheim to Bethmann-Hollweg, 7 July, 1915. PA-AA R 14086

¹²⁷ Johannes Lepsius, *Mein Besuch in Konstantinopel*, p. 8

¹²⁸ Harold J. Gordon (Ed.): *The Hitler Trial before the People’s Court in Munich*. Vol. 1. Arlington 1976, p. 180

¹²⁹ Isabel Hull: *Absolute Destruction*, p. 290

to justificationalism. This backlash made Hitler's statement about Enver at the Munich People's Court in 1924 possible and helped to prepare the ground for Nazi mentality.¹³⁰

ՌՈՒՏ ՀՈՍՏԵԼԴ (ԳԵՐՄԱՆԻԱ)

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փոքրաթիվ գիտնականներ հաճախ դիտարկել են Գերմանիայի մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը որպես «մեղսակցություն»: Սա, կարծես, ի ցույց էր դնում կապը նացիստների կողմից հրեաների նկատմամբ իրականացված ճնշումների հետ: Այդ կապը ինչ-որ տեղ ավելի բարդ է: Հայոց ցեղասպանությունը բացառապես երիտթուրքական ծրագիր էր, որի արմատները գալիս էին հայերի նկատմամբ բռնություն գործադրելու վաղուց ձևավորված օսմանյան ավանդույթից: Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական կառավարությունը գիտեր գրեթե ամեն ինչ, սակայն չմիջամտեց եսակենտրոն պատճառներով: Սա էլ հանգեցրեց «Ժխտողականության» քաղաքականության, իսկ պատերազմի ավարտից հետո՝ «արդարանալու»: Վերջինս նշանակում է հակաէթնիկական մտածողություն «վերջնական լուծումների» հայեցակարգում, որը նացիզմի համար մտավոր հող նախապատրաստեց:

ՐՕԼՓ ՊՕՏՓԵԼԸ (ԳԵՐՄԱՆԻԱ)

ГЕРМАНИЯ И ГЕНОЦИД АРМЯН

Некоторые исследователи часто рассматривали участие Германии в Геноциде армян как “соучастие”. Это, казалось, было подтверждением связи с преследованиями евреев нацистами. Но это связь отчасти более сложная. Геноцид армян – это исключительно

¹³⁰ Stefan Ihrig: Justifying Genocide. Germany and the Armenians from Bismarck to Hitler. Cambridge, Mass./ London, UK: Harvard University Press, 2016

проект младотурков, котрый своими корнями идет глубоко в османскую традицию насилия над армянами. В годы Первой мировой войны немецкое правительство знало почти все, но не вмешивалось из-за эгоцентричных побуждений. Это привело к политике “отрицания”, а после войны - “оправдывания”. Последнее означает антиэтическое мышление в концепции “заключительных решений”, которое стало интеллектуальной почвой для нацизма.

ՎԵՐԱ ՄԱՀԱԿՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
(ԹԵՇՔԻԼԱԹ-Ը ՄԱԽՍՈՒՍԱ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

Օսմանյան Կայսրությունում պաշտոնապես գործունեություն ծավալած *«Թեշքիլաթ-ը Մախսուսա»* կիսազինվորական կառույցը կազմավորվել է «Մեծ Թուրան» ստեղծելու ճանապարհին: Այս կազմակերպության անմիջական մասնակցությամբ է իրագործվել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց մեծ եղեռնը:

«Թեշքիլաթ-ը Մախսուսայի» կազմակերպման շարժառիթների, ստեղծման թվականի, անդամների թվի մասին ուսումնասիրողների հետևությունները հաճախ հակասական են: Պատճառն այն է, որ այն գործել է բանավոր հրամաններով, իսկ եղած գրավոր փաստաթղթերը ոչնչացվել են *«Թեշքիլաթ-ը Մախսուսայի»* կազմի մեջ եղած բարձրաստիճան պաշտոնյաների կողմից:

Հայտնի է, սակայն, որ 1910 և 1911-ին՝ Մալոնիկ քաղաքում տեղի ունեցած Իթթիհադականների համաժողովների՝ գաղտնի ցեղասպանական որոշումների ընդունման ժամանակ խորհրդակցության անդամների փոխհամաձայնությունից հետո ընդունվում է համապատասխան որոշում, որի համաձայն հայ ժողովրդին հիմնովին ոչնչացնելու ծրագիրը պետք է իրականացվեր ոճրագործներից կազմված հրոսակախմբի *«Թեշքիլաթ-ը Մախսուսայի»* կազմակերպության կողմից:

սուսայի» մասնակցությամբ: Այս կառույցը ֆինանսավորվել է ի հաշիվ Պատերազմական նախարարության կողմից հատկացված և հայերից հավաքված հարստությունների, որը համապատասխան գրություններում ներկայացվում էր իբրև անհայտ, գաղտնի աղբյուր:

Կիսազինվորական այս կառույցի նախնական խմբերը կազմավորվել են Բալկաններում: Մինչ չեթեական կազմակերպությունները սկսում են իրենց գործունեությունը զինվորականների հրամանատարության ներքո, աստիճանաբար նրանց շարքերը համալրում են քրեական հանցագործները, որոնք ջարդերին մասնակից դարձնելու նպատակով ազատ էին արձակվում բանտերից:

Սույն զեկուցման շրջանակներում քննության ենթ ենթարկել Օսմանյան կայսրությունում *«Թեշքիլաթ-ը Մախսուսայի»* ձևավորման նախադրյալները և Հայոց ցեղասպանության մեջ նրա ունեցած դերակատարությունը:

ВЕРА СААКЯН (АРМЕНИЯ)

ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ОРГАНИЗАЦИИ ТЕШКИЛАТ-Ы МАХСУСА

В Османской империи "Тешкилат-и-Махсуса" официально запустила свою деятельность как особая полувоенная организация, которая сформировалась вместе с созданием Большого Турана.

При её непосредственной помощи и участии в начале 20-ого века и организовывался Великий армянский геноцид.

Исследователи выражают противоречивые мнения о деятельности "Тешкилат-и-Махсуса", в частности о целях и времени ее создания и о деятельности членов этой организации.

Причина заключается в том, что они действовали по устным приказам, а все главные письменные документы уничтожались со стороны высокопоставленных чиновников организации "Тешкилат-и-Махсуса".

Однако известно, что в 1910-1911 гг. в городе Салоник совместно с иттихадистами на собрании, после согласия участников собрания, было принято тайное соответствующее решение, согласно которому уничтожение армянского народа должно было осуществляться с участием организации "Тешкилат-и-Махсуса", составленной из преступной разбойничьей банды.

Эта организация финансировалась за счет военного министерства и за счет богатства, отобранного у армянского народа. Источником этих сведений является соответствующая тайная письменность.

Предварительные шайки этой банды организовались в Балканах.

До того как чэтеистская организация начала свою деятельность под эгидой военного ведомства, постепенно их ряды заполнялись уголовными преступниками, которых специально выпускали из тюрем, чтобы они участвовали в погромах.

В рамках настоящего доклада мы рассмотрели следующие вопросы: предпосылки формирования преступной организации "Тешкилат-и-Махсуса" в Османской империи и их главная роль в участии Армянского геноцида.

VERA SAHAKYAN (ARMENIA)

THE PREREQUISITES AND BASES OF THE FORMATION OF SPECIAL ORGANIZATION (THE TEŞKILÂT-I MAHSUSA)

The Teşkilât-ı Mahsusa semi-military organization, which formally acted during the Ottoman Empire, was organized on the way of creating Great Turan. The first Genocide of 20st century was committed with the help of this organization.

The results of the study of motivations, date and members of The Teşkilât-ı Mahsusa organization are contradicting. The main reason is that it acted with oral commands and the existing documents were

eliminated by the officials of The Teşkilât-ı Mahsusa. It is known that during the Ittihadists Convention in Thessaloniki, in 1910 and 1911 when the members of the Convention were discussing the secret Genocidal plans, they came up with a conclusion that the annihilation of Armenians had to be done by the criminal organization Teşkilât-ı Mahsusa. This organization was financed by the Ministry of War and by Armenians' confiscated wealth which is presented as an unknown, secret source in corresponding documents.

The former groups of this semi-military organization were formed in the Balkans Firstly, Chete organizations were commended by militaries. However, gradually criminals were released from jails and recruited in order to commit the massacres.

The following report discusses the prerequisites of the formation of The Teşkilât-ı Mahsusa in the Ottoman Empire and its role in the commitment of the Armenian Genocide.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ.
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՏՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1896Թ.**

Գերմանա-թուրքական արտաքին քաղաքականության մեջ 1895թ. վերջերից սկսած և ողջ 1896թ. ընթացքում կարևոր տեղ է զբաղեցրել Հայկական հարցը: Կողմերը մանրամասնորեն քննարկել են հայաբնակ վայրերում բարենորոգումների անցկացման և Սասունում տեղի ունեցած իրադարձությունների հարցը: Վերջինիս վերաբերյալ ակտիվ քննարկումներ էին ընթանում գերմանական և թուրքական ղեկավար շրջանների միջև, որոնք, միմյանց հետ համագործակցելով, ցանկանում էին եվրոպական պետությունների ներկայացուցիչներին ապացուցել, որ Սասունում հայերի կողմից տեղի է ունեցել ապստամբություն: Մինչդեռ, այս հարցին նվիրված գերմանական արխիվային փաստաթղթերը ոչ միայն բացահայտում են թուրքական իշխանությունների ռճրագործությունները, այլև լույս են սփռում գերմանական կողմի դավադիր գործունեության վրա և բացահայտում արևմտահայության կոտորածների հարցում Գերմանիայի մասնակցությունը, ինչպես նաև թուրքական կառավարությանն այդ հարցում օժանդակելու քաղաքականությունը:

«Եվրոպական կառավարությունների մեծ քաղաքականությունը 1871-1914 թթ.» 40 հատորից բաղկացած արխիվային փաստաթղթերի ժողովածուն, որտեղ ներկայացված է գերմանական արտաքին քաղաքականությանը վերաբերող շուրջ 16.000 փաստաթուղթ ու գեկուցագիր, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի և Հայկական հարցի վերաբերյալ ունի մի քանի հատորներում

ներկայացված բաժիններ¹³¹: 12-րդ հատորի առաջին մասում ներկայացված է դիվանագիտական փաստաթղթերի մի ամբողջ փաթեթ «Հայկական հարցը և տերությունները 1896 թվականին» խորագրով, որոնք հիմնականում վերաբերում են Մասունում տեղի ունեցած իրադարձություններին և այդ դեպքերը քննելու համար կազմված հանձնաժողովի գործունեությանը, որը բաղկացած էր եվրոպական երկրների և թուրքական կողմի պատվիրակներից:

Թուրքական կառավարությունն իր վրա բարդած մեղադրանքը թեթևացնելու միտումով հաճախ ձգտել է հերքել կառավարական գորքերի մասնակցությունը Մասունի կոտորածին: Այդ պատճառով Քյամիլ փաշան, որն այս դեպքերի ակտիվ մասնակիցներից էր, իր հուշերում նշում է, որ ջարդը տեղի է ունեցել Աբդուլ Համիդի անմիջական հրամանով: Այն իրագործել է Բիթլիսի 4-րդ բանակի հրամանատար Ջեքի փաշան¹³²:

Մեր կողմից կատարված սույն ուսումնասիրության շրջանակներում կներկայացնենք միայն Մասունի դեպքերին վերաբերող փաստաթղթերը¹³³ և դրանց վերլուծությունը: Աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ դեպքերը տազնապ են առաջացրել ոչ միայն օսմանյան ղեկավարների շրջանում այլև գերմանական որոշ ղեկավար գործիչների մոտ: Թուրքական ղեկավարները ամեն ինչ անում էին ապացուցելու համար, իբր թե Մասունում ապստամբություն է տեղի ունեցել, և իրենք ստիպված են եղել կանխել պետության դեմ բռնկված ապստամբությունը: Այդ պատճառով նրանք ցանկանում էին ճնշում գործադրել այն հանձնաժողովի գործունեության վրա, որը կազմվել էր եվրոպական երկրների միջամտությամբ Մասունում կատարված դեպքերը քննելու համար: Այս կապակցությամբ օսմանյան

¹³¹ «Die Grosse Politik Europäische Kabinete 1871-1914. Sammlung «der diplomatischen Akten des auswärtigen Amtes», Bildung 2,6,9,10,12(1,2),14(1,2),30, 34, 38, Berlin 1922-1930.

¹³² Փափազյան Ա., Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Ե. 2001, էջ 21:

¹³³ «Die Grosse Politik Europäische Kabinete 1871-1914. Sammlung «der diplomatischen Akten des auswärtigen Amtes», Bildung, 12 (1, Berlin 1924, S. 13-43.

պետական գործիչ Քյամիլ փաշան¹³⁴ հետևյալ խորհուրդն է տվել Աբդուլ Համիդին. «Մասունի դեպքերը, ավելի ճիշտ այնտեղի ապստամբության ճնշումը հայերի կողմից այնպես է ուռճացվել և անզլիական մամուլում այն աստիճան դաժանությամբ է նկարագրվել, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցություն չգործել ոչ միայն Անզլիայում, այլև նույնիսկ այստեղ՝ Օսմանյան Կայսրության տարբեր հպատակների վրա:...Եվ եթե այժմ որևիցե հրատապ բան կա անելու, դա այն է, որ հետաքննող հանձնաժողովի զեկույցը շտապ կերպով հրատարակվի Անզլիայում, որպեսզի հանդարտեցվի ընդհանուր տրամադրությունը: Եվ այդ հանդարտեցման նպատակին հասնելու համար, բավական է, որ նշված զեկույցը հրատարակվի օտար պաշտոնյաների ստորագրությամբ»¹³⁵:

Վերոհիշյալի կապակցությամբ հստակ փաստեր կան նաև մեր կողմից ուսումնասիրված փաստաթղթերում, որտեղ նաև ցույց է տրվում, որ այս կոտորածը կազմակերպվել է օսմանյան կառավարող շրջանների կողմից: Այս կապակցությամբ Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան բարոն Ֆոն Զաուրման կայսրընտիր իշխան Ֆոն Հոհենլոհեին 1896թ. օգոստոսի 30-ին գրում է. «Արդարացումը չհաջողվեց: Մասնավորապես, որ նա մշտապես արդարանում է այն հիմնական կետի վերաբերյալ, որն առնչվում է թուրք ժողովրդի կողմից համակարգված, կազմակերպված սպանդին՝ անընդհատ գայրույթով մատնանշելով հայերի սադրանքները, որոնց զենքի ուժով լռեցնելը թուրքական կառավարական գործերի կողմից տեղին է և նույնիսկ իրենց պարտականությունն է:

Թուրքական ոճրի կատարումից ի վեր մեր դեսպանների քննարկումներում գայրույթ է առաջանում տեղի կառավարության նկատմամբ, որն այնտեղ սպառնում է գերսրել իրավիճակը: Ես ձգտում եմ մեր գործընկերներին խորհուրդ տալ հնարավորինս օբյեկտիվություն և զսպվածություն դրսևորել, միշտ հաշվի

¹³⁴ Մեմեդ Քյամիլ փաշան սուլթան Աբդուլ Համիդի Երկրորդի կառավարման տարիներին՝ 1884-1912 թթ., չորս անգամ վարել է Օսմանյան կայսրության մեծ վեզիրի պաշտոնը: Տե՛ս Փափագյան Ա., նշվ. աշխ., էջ 19:

¹³⁵ Նույն տեղում, էջ 23:

առնելով մեր համախմբվածությունը, որպեսզի ձևականորեն անարդարության դեմ չպայքարենք»¹³⁶:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում այս փաստաթղթերում առկա հավելվածը¹³⁷, որը մեկ անգամ ևս փաստում է Հայկական հարցում գերմանա-թուրքական դիրքորոշման մասին: Այստեղ թուրքական պատվիրակության անդամ մարշալ Քամփհյովեները (Kamphövenner) հատուկ նամակով դիմում է Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան ֆոն Ջաուրմային և տեղեկացնում, որ իր և սուլթանի երկրորդ քարտուղար Իզգետ բեյի միջև լուրջ կոնֆլիկտ է առաջացել, որի պատճառով ստիպված դուրս է գալիս նշված հանձնաժողովի կազմից: Այս փաստաթղթի ուսումնասիրությունը պարզում է, թե ինչպես էին քննարկվում Հայկական հարցի հետ կապված իրադարձությունները և ինչ չափով էին միմյանց հետ համագործակցում գերմանական և թուրքական պետական գործիչները:

ТИГРАН ХАЧАТРЯН (АРМЕНИЯ)

АРМЯНСКИЙ ВОПРОС В КОНТЕКСТЕ НЕМЕЦКО-ТУРЕЦКОЙ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ В 1896 Г.

В рамках исследования мы представим только события, касающиеся Сасуна, по вопросу которого под давлением европейских стран был создан специальный комитет. По этим вопросам и, особенно, по Армянскому вопросу Германия в своей внешней политике придерживалась позиции “невмешательства”, пытаясь доказать, что Германия не хочет вмешиваться во внутренние дела Турции. Но исследование опубликованных немецких архивных документов, затрагивающих эти вопросы, и некоторой литературы о данном периоде показало, что немецкие государственные деятели активно участвовали в работах данного комитета и пытались направить деятель-

¹³⁶ «Die Grosse Politik Europäische Kabinete 1871-1914. Sammlung«der diplomatischen Akten des auswärtigen Amtes», Bildung, 12(1, Berlin 1924, S.

¹³⁷ Նույն տեղում, էջ 30-37:

ность комитета по тому пути, который был наиболее желателен для османских провителей.

TIGRAN KHACHATRYAN (ARMENIA)

THE ARMENIAN QUESTION IN THE CONTEX OF THE GERMAN-TURKISH FOREIGN POLICY (1896)

As a result of our study we shall present only the events referring to the cases in Sasun, concerning which a special examining committee was created under the influence of the European countries. In these cases, and generally in those relating to the Armenian question, Germany outlined «it doesn't refer to us» position, trying to show that it didn't want to interfere into the internal affairs of Turkey. However the study of some professional literature and the published German documents of this period show that the German politicians participated in the work of the committee actively and tried to carry out its work in favour of the Osman rulers.

ВААГН КРБЕКЯН (АРМЕНИЯ)

АРМЯНСКИЙ ВОПРОС В 1878 ГОДУ

В 2015 году армянский народ и мировое сообщество отмечают 100-летнюю годовщину геноцида армян в Османской империи – первого геноцида XX столетия. Осуществляя это чудовищное преступление турецкие власти, наряду с другими, ставили перед собой и задачу “решения” Армянского вопроса. Его история уже не одно десятилетие является предметом тщательного и всестороннего изучения специалистов. Он и в наши дни продолжает занимать центральное место в исследованиях, посвященных политической истории армянского народа.

Вместе с тем сравнительно меньше внимания уделяется внутренним и внешним обстоятельствам, сопутствующим возникновению Армянского вопроса, преданию ему международного статуса,

его предыстории. А между тем как его дальнейшая история, так и политическое будущее западных армян во многом были predeterminedены теми важнейшими договорами и соглашениями, которые были заключены в 1878 г. Именно тогда, он из внутреннего вопроса Османской империи стал субъектом международного права, и был зафиксирован в ст. XVI Сан-Стефанского договора и в ст. LXI Берлинского трактата, к нему относились § VII, X и XI англо-русского соглашения от 30 мая 1878 г. и ст. I Кипрской конвенции от 4 июня 1878 г.

Под Армянским вопросом современная историческая наука подразумевает комплекс вопросов политической истории армянского народа, связанных с его стремлением к восстановлению утраченной государственности, национальной консолидации на территории своей исторической родины. В качестве объекта международных отношений и дипломатии Армянский вопрос сформировался во второй половине XIX века, став составной частью Восточного вопроса – сложного узла международных противоречий, продолжительное время находящегося в центре внимания европейской дипломатии. В данном аспекте Армянский вопрос – это прежде всего вопрос о положении и судьбе западных армян, которые, находясь под властью Османской империи подвергались беспощадному социальному и политическому гнету, жесточайшим преследованиям на национальной и религиозной почве. Армянский вопрос является ключевым при изучении новейшей истории армянского народа. Именно с его положительным решением армянский народ на протяжении более чем сорока лет (1877-1923) связывал свое будущее.

Русско-турецкая война 1877-1878 гг. завершилась сокрушительным поражением Османской империи, а победоносный меч России в кровавой схватке добыл долгожданную свободу балканским народам. Успех их национально-освободительной борьбы воодушевил армян и явился мощным катализатором их свободолюбивых устремлений. Военные действия на Малоазиатском театре войны непосредственно затрагивали интересы армянского народа, и он проявил исключительную активность на всех этапах войны. Это и руководство крупными армейскими соединениями, когда прослав-

ленные офицеры свято исполняли свой долг перед государем и отечеством, это и добровольческое движение, в котором участвовали жители Восточной Армении, это и та деятельная поддержка, которую оказали западные армяне наступающей русской армии, за что впоследствии понесли невосполнимые человеческие и материальные потери.

Сразу по окончанию войны Константинопольское армянское патриаршество направило в русскую дипломатическую миссию свое представительство, которое обратилось с просьбой внести в наметаемый договор отдельную статью, посвященную армянам. Примечательно, что турецкая сторона не только не противодействовала армянским инициативам, но, наоборот, даже поддержала их, намереваясь использовать Армянский вопрос в качестве противовеса Балканскому¹³⁸. В итоге в Сан-Стефанский прелиминарный договор вошла XVI статья, благодаря которой Армянский вопрос стал субъектом международного права и объектом русско-турецких отношений.

Армянский вопрос с момента своего возникновения стал также предметом дипломатических спекуляций великих держав, совершенно не озабоченных его разрешением, а лишь стремящихся к его использованию для достижения своих военно-политических и социально-экономических целей на Востоке. Ведущий малоазиатский игрок – Великобритания, озабоченная усилением влияния России в Азиатской Турции и ее территориальными приобретениями, проявив удивительную сноровку и упорство, смогла, посредством дипломатического шантажа по отношению к Турции и военного шантажа по отношению к России, внести ряд статей, относящихся к Армянскому вопросу, сначала в англо-русское соглашение, а затем и в Кипрскую конвенцию. В результате блестяще проведенной дипломатической операции, Англия в течении 35 дней, согласно соглашению, сначала получила право участия, наряду с

¹³⁸ Մարտիկան Հայկական հարցը և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910) Թիֆլիս, 1912. Ն. I. էջ 131; «Անահիտ», Փարիզ, 1907 № 6, էջ. 143; Լեո «Թուրքիայի հեղափոխության գաղափարախոսությունը» Երևան, 1992. Ն. I. էջ. 72:

Россией, в вопросах проведения реформ в Западной Армении, а потом, согласно Кипрской конвенции, добилась установления своего единоличного протектората над Малой Азией и без единого выстрела приобрела Кипр.

Вполне естественно, что армянские национальные лидеры не имели ни малейшего представления об этих закулисных переговорах и подписанных договорах, тем более, что на тот момент даже европейская дипломатия находилась в неведении. Узнав, что для обсуждения итогов русско-турецкой войны, намечается организация общеевропейского конгресса, Армянское патриаршество Константинополя направило своих представителей в Европу и Россию с целью обеспечения максимально возможной поддержки великих держав, находящихся в состоянии конкурентного противостояния друг с другом, в Армянском вопросе. И вполне естественно, что из этой затеи ничего не вышло. Предшествовавший и последующий ход событий привели к появлению печально известной LXI статьи Берлинского конгресса, одним из результатов которой стала та общечеловеческая трагедия, столетнюю годовщину которой мы отмечаем в наши дни.

Подводя итог вышесказанному, следует отметить, что Армянский вопрос являлся прямым следствием того тяжелейшего социально-политического и национально-религиозного гнета, которому подвергалось армянское население Западной Армении. Он был инициирован западноармянскими национальными лидерами, воодушевленными результатами национально-освободительной борьбы Балканских народов, которые стремились по итогам русско-турецкой войны 1877-1878 гг. добиться максимально возможных на тот момент реформ для Западной Армении, вплоть до ее автономии, и даже включения в состав Российской империи. Несмотря на то, что эта инициатива западных армян была для русской дипломатии неожиданной¹³⁹, она решила ею воспользоваться и включить в Сан-Стефанский прелиминарный договор отдельную статью о проведении

¹³⁹ **Игнатъев И.П.** Записки о Сан-Стефано//Исторический вестник СПб., 1915. Т. 140. С. 52-53.

реформ в «областях, населенных армянами»¹⁴⁰. Однако, спустя всего четыре месяца, под давлением великих держав этот договор был пересмотрен, и согласно LXI статье Берлинского трактата Европа отобрала у России право единоличного решения Армянского вопроса и приняла на себя коллективное обязательство по проведению реформ в Западной Армении. А что «было делом всех, – по справедливой оценке герцога Д. Аргайльского, – переставало быть делом кого-нибудь в частности»¹⁴¹. В «Истории дипломатии» говорится, что «Берлинский трактат оставил значительную часть армянского народа под игом турок. История показала, что это решение капиталистических держав было роковым для турецких армян: оно обрекло их на физическое истребление»¹⁴².

Весь последующий ход исторических событий, завершившихся Геноцидом Армян в Османской империи, показал, что политическая инициатива западноармянских лидеров была сколь оправданной с точки зрения существовавшего положения дел в Западной Армении, столь наивной и ошибочной с точки зрения международной дипломатии и реальной политики. Эти обстоятельства, а именно существующие между великими державами противоречия (англо-русское соперничество («Большая игра»), противоречия между Антантой и Тройственным союзом, породившие Первую мировую войну, противостояние Большевицкой России и Запада), позволили турецким властям не только нейтрализовать коллективные и согласованные действия великих держав в Армянском вопросе, но и попытаться похоронить сам вопрос, путем физического истребления западного армянства. Другим обстоятельством, имевшим не менее трагические последствия, явилось то, что после международного признания Армянского вопроса, армянские национальные деятели, объединившиеся затем в политические партии, на протяжении почти сорока лет (1878-1914) проводили линию, с одной стороны,

¹⁴⁰ АВПРИ Ф. 149. Оп. 502 а. 1877-1878. Д. 1762. Л. 9-об; Сборник договоров России с другими государствами (1856-1917)/ Под ред. Е.А. Адамова. М., 1952. С. 168-169.

¹⁴¹ **Аргайльский Д.** Ответственность Англии в Восточном вопросе. СПб., 1908. С. 75.

¹⁴² История дипломатии. Т. II/ Автор тома В.М. Хвостов. М., 1963. С. 334.

постоянных и совершенно бесполезных апелляций к внешнему миру, с другой, перманентной и абсолютно неравной вооруженной борьбы внутри империи. Эти два направления и определили весь дальнейший ход армянского национально-освободительного движения и последующей истории Армянского вопроса.

ՎԱՀՄԱԳՆ ԿՐԲԵԿՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ 1878 Թ.

Հայկական հարցը հանդիսացել է Մեծ Եղեռնի հիմնապատճառներից մեկը, որի “լուծումը” եղել է հայերի բնաջնջման գործընթացի կազմակերպիչների կարևորագույն խնդիրը: Ուստի պատմագիտական տեսանկյունից այդ հարցի հիմնապատճառների ուսումնասիրումն և վերծանումն ունի առաջնային նշանակություն:

VAHAGN KRBEKYAN (ARMENIA)

THE ARMENIAN QUESTION IN 1878

The Armenian Question and its “solution” has been one of the basic reasons and the main concerning task for the organizers of the Armenian Genocide. Hence, from the historiography point of view is essential studying and analyzing the issue.

ЛЁВА МУСАЕЛЯН (РОССИЯ)

О ГЕОПОЛИТИЧЕСКИХ ФАКТОРАХ «РЕШЕНИЯ» АРМЯНСКОГО ВОПРОСА

Опыт истории свидетельствует, что на справедливое решение национального вопроса сильное влияние оказывают геополитические факторы. Ниже остановимся на одном аспекте этой проблемы.

В полемической работе «О праве наций на самоопределение» (1914) В.И. Ленин выделяет в европейском национальном движении две эпохи. Первая связана с пробуждением национальных движений и возникновением буржуазных национальных государств. Здесь актуален лозунг права наций на самоопределение. Вторая – эпоха зрелого капитализма, где указанное право уже реализовано. Первая эпоха свидетельствует о крахе феодализма, вторая – капитализма. Вторая является кануном мировой социалистической революции. Поскольку интенсивное развитие капитализма приближает пролетарскую революцию, то и задача революционера содействовать этому. Отсюда и отстаивание большевиками права народов на самоопределение и создания чисто национальных государств, которые способствуют быстрому развитию капитализма.

Идеи В.И. Ленина и его соратников могли быть безболезненно реализованы в странах, где существовали обособленные, гомогенные по этническому и конфессиональному составу территории. Но это было редкостью даже в феодальных империях, ибо для интеграции и эффективного управления захваченными территориями они заселялись представителями титульной нации государства. По вполне понятным причинам с возникновением капитализма возможность существования таких территорий становится ещё меньше. И не удивительно, что политика, основанная на подобном понимании права народов на самоопределение, обернулась кровавыми этническими чистками в XX веке в Турции, Азербайджане, Грузии, Боснии, Хорватии и т.д.

Отметим, что в 1915 году большевики осудили акты геноцида армян, а придя к власти вскоре приняли Декрет «О турецкой Армении», признав право армян на самоопределение вплоть до полной независимости. Этот документ свидетельствовал о приверженности руководителей советской России принципу равноправия народов и близости их подхода к решению армянского вопроса с позицией стран Антанты. Но, похоже, геополитические цели взяли верх над декларируемыми принципами. Чтобы выиграть войну с империализмом, большевики считали необходимым революционизировать тыл противника – неполноправные нации и колонии с их ресурсами,

громадным человеческим потенциалом¹⁴³. Поэтому вождь мирового пролетариата не мог отказать в помощи «пламенному борцу» с империализмом М. Кемалю. Заметим, что обращение нового лидера турецких националистов к В.И. Ленину последовало через четыре дня после того как представители Англии, Италии, Франции, США, Японии, реагируя на продолжающуюся массовую резню армян, приняли решение о создании на территории контролируемой Турцией самостоятельного армянского государства. Для поддержки «революционной энергии» анатолийских мусульман из России в течение двух лет в нарастающих объёмах шла помощь золотом, оружием, боеприпасами. В это же время в самой России миллионы людей умирали от голода и болезней. Руководители большевиков не могли не знать, как использовалась посылаемая ими помощь. Уже первая партия оружия поступила в распоряжение генерала Карабекира, командующего Восточной армией, воевавшего против армянских ополченцев. Срочная помощь М. Кемалю, отвергающего саму возможность существования армянского государства, свидетельствовала о позиции России в решении армянского вопроса. Фанатичная вера в грядущую мировую революцию порождала политическую и нравственную беспринципность лидеров советской власти в подборе союзника. Революционная целесообразность определила труднообъяснимые геополитические уступки, на которые пошла Россия Турции. Потерпевшая поражение Турция благодаря помощи северного соседа не только сохранила свою целостность, но и существенно расширила свои границы на северо-востоке за счёт России и Армении.

Кроме того, советское руководство уступило требованиям Турции и пересмотрело уже согласованные границы между тремя закавказскими республиками без учёта этнического состава, истории передаваемых Азербайджану и Турции территорий. Тем самым были созданы тлеющие очаги межнациональных конфликтов, которые в конце XX века кровавым заревом высветили последствия исторической несправедливости при подписании договора о дружбе

¹⁴³ См.: **Сталин И.** К постановке национального вопроса // И. Сталин. Соч. М., 1952. Т. 5. С. 52-59.

и братстве с Турцией.

В начале Первой мировой войны целью Англии, России, Франции был разгром Германии и лишение её военно-политического доминирования, пересмотр европейских границ в пользу победителей. После нападения Турции на Россию стратегические планы союзников распространились и на территорию Турции. Россия хотела приобрести контроль над проливами и Константинополем, присоединить значительные территории Турции и освободить «проживающих там христиан от турецкого гнёта». В планы союзников входило расчленение разваливающейся Османской империи и получения контроля над её территориями. Впрочем, такие же цели они ставили и в отношении самой России (см. «Четырнадцать пунктов» В. Вильсона). Справедливое решение армянского вопроса для стран Антанты являлось резонансным политическим проектом, но далеко не определяющим мотивом в их стратегических целях. Поэтому ни плану В. Вильсона, предложившего создание на территории исторической Армении независимого армянского государства, ни Севрскому договору, отвергнутому кемалистами, не было суждено реализоваться.

После подписания Московского и Карского договора о дружбе и братстве геополитическая ситуация в регионе изменилась. Интерес западных стран в решении сложного армянского вопроса угас. Отстаивать права турецких армян на самоопределение при фактическом отсутствии самого субъекта права не имело смысла. Опустошённая и разорённая Западная и Восточная Армения уже не пробуждала экономический интерес США и Франции к этим территориям. К тому же наметившееся сближение Москвы и Анкары вызывало опасения у Запада. Для блокирования возникновения нового альянса западные страны сочли целесообразным признать де-факто сложившуюся политическую реальность и заключить в 1923 году мир с Турцией как предпосылку последующего сближения с ней.

Принято считать, что если виновники геноцида армян понесли бы заслуженное наказание, то не было бы Холокоста и других актов геноцида XX века. Сегодня всеобщее признание и осуждение геноцида армян является условием торжества исторической справед-

ливости. Важное значение в этом играет позиция ведущих держав мира. Позиция современной России к событиям столетней давности изменилась радикально. Также изменилась оценка США событий тех лет. Для американского руководства сохранение дружественных отношений с военно-политическим союзником считается более предпочтительным нежели признание исторической правды, диктуемой нравственным императивом. Отсюда различные семантические уловки, к которым прибегают всякий раз президенты США, чтобы избежать правовое понятие «геноцид» при характеристике трагедии армян. В современном американизированном мире точка зрения президента мировой империи определяет политику многих государств по обсуждаемому вопросу. Поэтому позиция США и их союзников в настоящее время является деструктивным геополитическим фактором, препятствующим торжеству исторической справедливости.

ԼՅՈՎԱ ՄՈՒՍԱԵԼՅԱՆ (ՌՈՒՍՍՍՍԱ)

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ «ԼՈՒԾՄԱՆ»
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՄԱՍԻՆ**

Ձեկույցում բացահայտվում է աշխարհաքաղաքական գործոնի էական ազդեցությունը թուրք ազգայնականների չարաքաստիկ ծրագրի իրականացման հարցում, որը պայմանավորված է պատերազմող պետությունների ռազմավարական ծրագրերով: Հիմնավորվում է, որ այժմ էլ մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերը բացասական ազդեցություն ունեն պատմական արդարության հաղթանակի վրա:

LYOVA MUSAE LYAN (RUSSIA)

**ON THE GEOPOLITICAL FACTORS OF SETTLEMENT
OF THE ARMENIAN QUESTION**

The author reveals a significant impact of the geopolitical factor, which is determined by the strategic plans of the warring states, on the implementation of a sinister plan of the Turkish nationalists. And now

geopolitical interests of the great powers continue to have a negative impact on the triumph of historical justice.

ԺԻՐԱՅԸ ՔՈՉԱՐԵԱՆ (ԳԵՐՄԱՆԻԱ)

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԵՒ ՄԻԻՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
ԱԶԳԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԿԱՏԱՄԲ՝
ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ**

Գերմանական լրատվական միջոցների մշակութային, գիտական և մարդու իրաւունքների բազմաթիւ միջոցառումների արձագանքը ցեղասպանութեան 100-րդ տարելիցին գերազանցեց Գերմանիայում ապրող հայերի սպասելիքները: Խորհրդարանական բանավեճում բոլոր խմբակցութիւնների ներկայացուցիչները ապրիլի 24-ին (2015) ներկայացրին յուզիչ ճառեր: Յատկապէս տպատրիչ էր Բունդեսթագի նախագահի՝ Փրոֆ. Լամետթի (քրիստ-դեմոկրատական-միաւորում, CDU) բացման ելոյթը, որը պարզ ու յստակ «1915 թ.-ի դէպքերը» ցեղասպանութիւն որակեց և դատապարտեց:

Իմ կարծիքով այս որակական և քաղաքական ազդու դիրքորոշման մէջ խիստ կարևոր էին հետևեալ չորս գործոնները՝ ա) Կաթոլիկական եկեղեցու գլուխ՝ Պապ Ֆրանցիսքոսի 2015 թ. ապրիլ 12-ի պատարագի ընթացքում արտահայտած օրինակելի և յստակ խօսքը, բ) գերմանական խորհրդարանական ընդդիմականների հաշուեյարդարը CSU-CDU իշխանութեան հետ, գ) գերմանական հասարակութեան մէջ պատմութեան գիտակցութեան զարգացումը և դ) Էրդոգանի Նեո-Օսմանական քաղաքականութեան ժխտումը:

Իմ գեկոյցում փորձելու եմ վերլուծել ցեղասպանութեան «ճանաչումը» իր պատմական շրջանակներում: Բունդեսթագը 15 տարի է, ինչ առնչում է հայոց ցեղասպանութեան խնդրին, այսինքն ստիպված է տալ սահմանուած գնահատական՝ համաձայն ՄԱԿ-ի ցեղասպանութեան պայմանագրի: Անդրանիկ նախաձեռ-

նութիւնը սկսել է գերմանական, հայկական և թրքական հասարակական քաղաքացիական շրջանակներից, որոնց ներկայացուցիչները 2000 թ. ապրիլին խնդրագիր ներկայացրին Բուդապեշտին: Խնդրագիրը մերժեցին՝ մատնանշելով 2001 թ. հայ-թրքական հաշտեցման յանձնախումբը (Turkish Armenian Reconciliation Commission): 2005 թ. Բունդեսթագը թեպետև միաձայն ընդունեց բանաձև, որտեղ իւրայատիւկ յստակ ընդունում էր իր պատասխանատուութիւնը, սակայն 1915 թ. ոճրագործութիւնները ներկայացում էր որպէս «արտաքսում» և «կոտորած»՝ խուսափելով իրաւաբանական գնահատականից:

Այդ բանաձևի բարելամանն էին սպասում (2015-ի 24 ապրիլին) ոչ միայն Գերմանիայում ապրող հայերը, այլ նաև ցեղասպանագետները և մարդու իրաւունքների հարցերով զբաղող անձիք: Սակայն արտգործնախարարութեան, քանցլերի գրասենեակի, ինչպէս նաև իշխող մեծ խմբակցութիւնների ներկայացուցիչների պահանջով այս տարուայ սկզբին որոշուած նախագիծ-բանաձևից «ցեղասպանութիւն» եզրոյթը հանուեց: Ընդդիմական ձախերը և կանաչները ի պատասխան դրան ներկայացրին սեփական բանաձևը: Հասարակութեան կարծիքի ճնշման ներքոյ և գուցէ նաև նկատի առնելով Գերմանիայի վարկը արտերկրում ապրիլի 24-ից առաջ մեծ կոալիցիայի առաջարկի մէջ դարձեալ կարճաժամկետ ներառուեց «ցեղասպանութիւն» եզրոյթը, թեպէտև վերին աստիճանի խճճուած նախադասութեամբ՝ «Հայերի ճակատագիրը վառ օրինակ է, երբ խօսքը գնում է զանգուածային բնաջնջման, էթնիկ մաքրագործման, տեղահանութեան, անգամ ցեղասպանութեան պատմութեան մասին, որոցով 20-րդ դարը սարսափելի եղանակով նշանաւորուած է»:

Գործադիր մարմնի ազդեցութիւնը օրէնսդիրի վրայ, որը անյարիր է ժողորդավարական հիմունքներին, ցաւօք տխուր աւանդոյթ ունի Գերմանիայի հայ-թրքական քաղաքականութիւնում:

Արդէն 1915թ. քանցլերը, վկայակոչելով գերմանա-օսմանական զինուորական դաշնակցութիւնը՝ արգելեց Թուրքիայի հայաջինջ քաղաքականութեան նկատմամբ որևէ քննադատական կեցուածք: Թեպէտև Գերմանիայի քաղաքական պատասխանա-

տուները, ունենալով դիւանագիտական լայն ցանց, Օսմանեան կայսրութիւնում շատ ատելի իրազեկ էին բնաջնջման ընթացքին, քան միւս պետութիւնները, գերմանական հասարակութիւնը իրատունք չունէր այդ ոճրագործութիւնների մասին տեղեակ լինել: Մինչ պատերազմի աւարտը գործում էր ռազմական խիստ գրաքննութիւն՝ հայոց դէմ գործադրող ոճրագործութիւնների վերաբերեալ:

Գերմանական մեղքի մասնաբաժնին վերաբերվող որևէ ընդարձակ, գիտական և ճշգրիտ աշխատութիւն առ այսօր պակասում է Գերմանիայում: Ո՛չ մի պատմաբան, ո՛չ մի համալսարան չեն անցկացրել ուսումնասիրական որևէ ծրագիր: Այս թեման երկար ժամանակ թողնուել էր լրագրողներին: Շարունակ աճող մի հասարակութիւնում, որտեղ հանցագործների իսլամ ժառանգորդները թուրքերը և մերձաւոր-արևելեան քրիստոնէայ գոհերի սերունդները միասին են ապրում, գիտական և յիշողութեան անգործունէութեան քաղաքականութիւնը հանգեցնելու է ողբերգութեան:

GERAYER KOUTCHARIAN (GERMANY)

THE POSITION OF THE GERMAN FEDERAL FOREIGN OFFICE ON THE GENOCIDE AGAINST THE ARMENIANS AND OTHER CHRISTIAN ETHNIC GROUPS: PAST AND PRESENT

The response of German media (TV, radio) and the cultural, academic and human rights events at the occasion of centenary were extremely numerous and went above and beyond everything that Armenians in Germany were used to so far. In a parliamentary debate on 24 April 2015 representatives of all fractions made impressive speeches, in particular the President of the Bundestag Prof. Lammert, who clearly qualified and condemned the "events of 1915" as genocide.

Four factors seem to be instrumental for this qualitatively and quantitatively intensive statements: 1) the exemplary and significant speech by Pope Francis during a memorial service on April 12, 2015 2)

the antipathy of parliamentary German opposition against the ruling conservatives, 3) an enhanced sense of history in the German majority society, and 4) the distancing from Erdoğan's Neo-Ottoman policy.

In my contribution, I analyze the 'recognition' of the genocide of Armenians in Germany in its historical dimension. The Bundestag is facing 15 years in a bid to recognize the genocide of the Armenians, i.e. to make a legally qualified vote in the spirit of the UN Genocide Convention. Whilst in 2005 the Bundestag unanimously adopted a resolution that admitted German co-responsibility, the German lawmakers avoided, at the same time, an own position whether the "expulsion" and "massacres" of 1915 qualify as a genocide.

The influence of the executive on the legislature, incompatible with the democratic principle of separation of powers, has an unfortunate tradition in Germany's policy towards Turkey and Armenia: In 1915, Prime Minister Bethmann Hollweg prevented a critical distancing of his country from the Ottoman extermination policy, citing the priority of German-Ottoman military alliance. Although German political decision makers were better informed than other governments about destruction of Christian co-religionists in the allied Ottoman Empire, the German public was not allowed to know anything about these crimes. Until the end of World War I strict military censorship prevented any objective press reporting over Armenia and Turkey.

As a result of a century of silence, until this day there exists no comprehensive scientific review of precise German debt proportion in Germany. No German historian, no university has ever conducted research on this topic. The subject was entirely left to journalists and non-historians. In the increasingly pluralistic society of Germany, in which the descendants of the Muslim perpetrators and the oriental Christian victims live together now, scientific and political inaction bear negative results.

ПОЗИЦИЯ МИД ГЕРМАНИИ ОТНОСИТЕЛЬНО ГЕНОЦИДА АРМЯН И ДРУГИХ ХРИСТИАНСКИХ НАРОДОВ. ПРОШЛОЕ И НАСТОЯЩЕЕ

Многочисленные культурные, научные и правозащитнические мероприятия немецких масс-медиа, посвященные 100-летию Геноцида армян, по своему размаху превзошли ожидания живущих в Германии представителей армянской диаспоры. Депутаты всех фракций парламента Германии 24-го апреля 2015 г. произнесли трогательные речи. Особенно впечатлила вступительная речь президента Бундестага проф. Ламерта (CDU), в которой он откровенно назвал события 1915 г. Геноцидом.

По моему мнению, такая четкая политическая позиция немецкого правительства явилась результатом нескольких факторов: а). Речь Папы римского Франциска от 12-го апреля 2015 г.; б). Меморандум CSU и CDU в немецком парламенте; в). развитие исторического сознания в немецком обществе; д). отрицание Эрдоганом нео-османской политики.

В моем докладе будет сделана попытка проанализировать «признание» Геноцида в его исторических пределах. Бундестаг вот уже 15 лет возвращается к вопросу армянского геноцида, в частности, пытается дать соответствующую оценку в рамках резолюции ООН по геноцидам. Первые инициативы в данном направлении были предприняты немецкими, армянскими и турецкими общественными и политическими кругами, представители которых в апреле 2000 г. представили прошение в Бундестаг. Простение не было поддержано со ссылкой на армяно-турецкую комиссию 2001 г. В 2005 г. Бундестаг характеризовывал события 1915 г. как «депортация» и «погромы», избегая при этом каких либо юридических формулировок и оценок.

Позитивного изменения этой формулы к 24-му апреля 2015 г. ожидали не только проживающие в Германии армяне, но и геноцидоведы, а также правозащитники. Однако, по требованию МИД,

правительственной канцелярии, а также представителей правящих фракций, в начале года определение <<геноцид>> было снято. В ответ на это, находящиеся в оппозиции <<левые>> и <<зеленые>> представили собственную формулу. Под давлением общественного мнения, а также учитывая репутацию Германии в мире, к 24-му апреля в предложении коалиции снова появилось определение <<геноцид>>.

Уже в 1915 г. канцлер Германии, говоря о германо-османском военном сотрудничестве, запретила давать какое либо критичное определение анти-армянской политике Турции. Несмотря на то, что немецкие политические деятели, имея большую агентурную сеть были намного лучше осведомлены об уничтожении армян в Османской империи нежели представители других государств, немецкое общество не должно было быть в курсе происходящего. До конца войны активно действовала военная цензура.

До сих пор в Германии не существует более менее полноценного и исчерпывающего научного труда, освещающего долю немецкого участия в геноциде армян. Ни один историк, и даже университет не проводили исследования такого уровня.

Однако, стоит заметить, что в постоянно растущем обществе, где потомки преступников и несколько поколений жертв былых погромов живут бок о бок, политика научного бездействия однажды может привести к трагедии.

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ (ՀԱՅՍՍՏԱՆ)

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶԱՄԱՆ
ԽՆԴԻՐԸ 1960-ԱԿԱՆ ԹԹ.**

1960-ական թվականների սկզբին՝ մեծ եղեռնի 50-րդ տարելիցի նախօրեին, սփյուռքահայությունը եռանդուն պայքար սկսեց Հայկական հարցը լուծելու և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Այդ ժամանակահատվածում նկատելիորեն մեծացել էր համաշխարհային հասարակայնության հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ. սկսվել էին

քննարկումներ միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտական և հասարակական համաժողովներում ու խորհրդածո-ղովներում:

1960-ական թվականներից Հայկական հարցը դարձել էր ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխման ենթահանձնաժողովի քննարկման առարկա: Հայկական կոտորածների մասին առաջին անգամ հիշատակել են 1961 թ.¹⁴⁴: Այնուհետև՝ 1964-1965 թթ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի նիստերում Կիպրոսի հարցի շուրջ ընթացող քննարկումների ընթացքում ներկաները ժամանակ առ ժամանակ խոսել են նաև Հայոց ցեղասպանության մասին: Բացի այդ, 1965 թվականից օտարերկրյա խորհրդարաններում սկիզբ է դրվել Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերի ընդունմանը. փետրվարի 1-ին Ուրուգվայի խորհրդարանը ապրիլի 24-ը հայտարարեց պաշտոնական սզի օր, ապրիլի 20-ին Կիպրոսի խորհրդարանը միաձայն վավերացրեց ցեղասպանությունը դատապարտող փաստաթուղթ: 1965 թ. ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Օրենսդիր ժողովն ընդունեց Ասամբլեայի թիվ 274 բանաձևը, որում ասվում էր. «...50 տարի առաջ 1915-ի ապրիլի 24-ին Թուրքական կայսրության կառավարությունը, իբրև Կենտրոնական դաշինքի երկրների դաշնակից, սկսել է հայ ազգի բնաջնջման սիստեմատիկ ծրագիրը: ...1915-1918 թթ. ... հոլոքոստի ընթացքում ողջ հայության կեսն իր բնակավայրերից քշվել է դեպի Սիրիայի անապատները և սպանվել կամ աննկարագրելի սարսափներ է կրել: ...Մարդկության պատմության մեջ չի եղել ոչ մի իրադարձություն, որն այսքան հիմնովին գրավի աշխարհի ժողովուրդների սրտակցությունը, սակայն որն այսքան շուտ մոռացվի, ինչպես հայերի թուրքական ցեղասպանությունը»¹⁴⁵: Նույն թվականի հուլիսի 15-ին Հելսինկիում գումարված «Խաղաղության, ազգային անկախության և զինաթափման համաշխար-

¹⁴⁴ Ազգակ, 4.05.1965:

¹⁴⁵ State of California. The Legislature. Assembly Resolution 274. 1965. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 41, փաստաթուղթ 1:

հային կոնգրեսը», որին մասնակցում էր 98 երկրների 1470 պատգամավոր, դատապարտեց բռնությունը, գաղութատիրությունն ու ցեղասպանությունը, և Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև ընդունեց: Փաստաթղթում ասվում էր. «Այս տարի 50-ամյակն է Օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծելու նպատակով: Այս ցեղասպանությունը իսկեց կյանքն ավելի քան մեկ ու կես միլիոն ազատասեր հայերի, այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի»¹⁴⁶:

Այսպիսով, 1960-ական թթ. դարձան Հայկական հարցի պատմության շրջադարձային էջը. ազգի մեծագույն ողբերգությունը վերջապես դադարեց լինել արգելված հարց: Համաշխարհային հանրության կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչելու սփյուռքահայության պայքարն առավել գործուն դարձավ, որն էլ ավելի լայն թափ ստացավ հետագա տասնամյակներում:

КРИСТИНЕ МЕЛКОНЯН (АРМЕНИЯ)

ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В 1960-Х ГГ.

Широкое движение армян Диаспоры во имя признания мировым сообществом Геноцида армян особенно активизировалось с середины 1960-х, в канун 50-летия Геноцида армян. В результате значительно усилился интерес мирового сообщества к Армянскому вопросу, он стал обсуждаться в различных международных организациях. Проблема Геноцида армян стала предметом рассмотрения в ООН приняв более широкие масштабы после 1965 года. Парламентами ряда стран (Уругвай, Кипр) были приняты документы по этому вопросу.

¹⁴⁶ Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողով Հելսինկի.-Էջմիածին, 1965, Ը-Թ, էջ 70:

THE ISSUE OF RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN 1960S

From mid-1960s, on the eve of the 50th anniversary of the Armenian Genocide, the struggle of the Armenians in the Diaspora, aiming at gaining the recognition of the Armenian Genocide by the international community, became more active. As a result of the interest of the international community to the Armenian Question became more intensified and was discussed in international organizations. The problem of the Armenian Genocide was the subject of consideration in the United Nations adopted a more widespread after 1965. The parliaments of several countries (Uruguay, Cyprus) were adopted documents that contribute to the issue.

ՌՈՐԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

«ԹՎԵՐԻ ՈՃԻՐԸ». ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՈՐՈՇ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի հարցը յուրահատուկ տեղ է գրավում ժխտողական ուղղությանը պատկանող պատմաբանների Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության նենգափոխումների շարքում: Թուրքիայի արտգործնախարարության կայք այցելելու դեպքում, այնտեղ կարող ենք գտնել «Ցեղասպանության մասին հայկական պնդումները, խնդիրը և փաստերը» գրությունը, որտեղ որպես փաստ №1 նշվում է հետևյալը. «Ժողովրդագրական ուսումնասիրությունները վկայում են, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրությունում բնակվում էր 1.5 միլիոնից

պակաս հայ. այսպիսով անդումներն առ այն, որ Արևելյան Անատոլիայի ավելի քան 1.5 միլիոն հայ է մահացել, կեղծ են»¹⁴⁷:

Այս «փաստի» գիտական հիմնավորման բնագավառում աչքի են ընկել բազմաթիվ ուսումնասիրողներ, որոնցից կարելի է նշել Էսաթ Ուրասին¹⁴⁸, Մթենֆորդ Շոուին¹⁴⁹, Քյամուրան Գյուրունին¹⁵⁰, Քեմալ Կարպատին¹⁵¹, Ջասթին Մաքֆարթիին¹⁵² և այլոց: Ժխտողական ուղղությանը պատկանող ուսումնասիրողներին հատուկ են արևմտահայության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. օսմանյան կառավարության վիճակագրական տվյալների (հենց դրանք են հաղորդում «1.5 միլիոնից պակաս» թիվը) ոչ քննադատաբար օգտագործումը և այդ տվյալներին հակասող, հիմնականում հայկական աղբյուրներից ծագող վիճակագրության մերժումը (համաձայն Կ. Պուլսի Հայոց պատրիարքարանի 1914 թ. տվյալների՝ Օսմանյան Թուրքիայում հայ բնակչության թիվը շուրջ 2 -2,1 միլիոն էր¹⁵³):

Դրա հետ մեկտեղ, վերջին շրջանում որոշ թուրք ուսումնասիրողներ առերևույթ ավելի տարբերակված, անկողմնակալ և հավասարակշռված մոտեցում են որդեգրել խնդրո առարկա

¹⁴⁷ <http://www.mfa.gov.tr/the-armenian-allegation-of-genocide-the-issue-and-the-facts.en.mfa>

¹⁴⁸ Uras Esat, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara: Yeni Matbaa, 1950, անգլերեն թարգմանությունը՝ Uras Esat, The Armenians in History and the Armenian Question, Ankara, Documentary Publications, 1988

¹⁴⁹ Shaw Stanford J. and Shaw Ezel Kural, History of the Ottoman Empire and Modern Turkey, vol.2, N.Y., Cambridge University Press, 1977; Shaw Stanford J., The Ottoman Census System and Population, 1831-1914, IJMES, 1978, № 9, էջ 325-338.

¹⁵⁰ Gürin Kamuran, The Armenian File: The Myth of Innocence Exposed, Nicosia and London: K. Rustem and Brother and Weidenfeld and Nicolson, 1985.

¹⁵¹ Karpat Kemal H., Ottoman population 1830-1914: Demographic and Social Characteristics, Wisconsin, The University of Wisconsin Press, 1985.

¹⁵² McCarthy Justin, Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire, N.Y. University Press, 1983.

¹⁵³ Հաւ 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսին Հայկական միացյալ պատվիրակության կողմից ներկայացված հուշագրի տվյալների՝ 1914 թ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր 2,026,000 հայ, որից Թուրքահայաստանում (Տրապիզոնը և Կիլիկիան ներառյալ)՝ 1,403,000, Ասիական Թուրքիայի այլ մասերում՝ 440,000, Պուլսում և Եվրոպական Թուրքիայում՝ 183,000 (տե՛ս Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ, Երևան, 1919, էջ 32):

հարցի նկատմամբ: Նրանք չեն ժխտում Հայոց ցեղասպանության իրողությունը, քննադատում են օսմանյան մարդահամարների տվյալները, սակայն դրա հետ մեկտեղ, Հայոց ցեղասպանության նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակը և Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թիվը որոշելու հարցում ըստ էության հենվում են նույն օսմանյան պաշտոնական տվյալների վրա՝ ոչ նշանակալի կերպով սրբագրելով դրանք: Նման ուսումնասիրողների թվին է պատկանում, մասնավորապես, Ֆուաթ Դյունդարն իր «Թվերի ոճիրը. վիճակագրության դերը Հայկական հարցում (1878-1918)» մենագրությամբ, որը լույս է տեսել 2010-ին անգլերեն լեզվով:¹⁵⁴

Ձեկուցման մեջ ներկայացվում և վերլուծության են ենթարկվում Առաջին աշխարհամարտի նախօրյակին արևմտահայության թվաքանակը և Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թիվը որոշելու նպատակով Ֆուաթ Դյունդարի հաշվարկները, որոնց թուրք ուսումնասիրողն իր մենագրության մի առանձին գլուխ է նվիրել:¹⁵⁵ Մասնավորապես, անդրադարձ է կատարվելու Դյունդարի հաշվարկների հիմքում դրված Հայոց ցեղասպանության առանցքային կազմակերպիչներից մեկի Թալեաթի վերջերս հայտնաբերված և հրատարակված նոթատետրում առկա վիճակագրական տվյալներին: Հեղինակը, օգտագործելով Թալեաթի տվյալները, հանգել է այն եզրակացության, որ Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը շուրջ 1,5 միլիոն էր՝ թիվ, որը էապես ցածր է իրականից:

Այնուհետև Դյունդարը Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության՝ իր որոշած 1,5 միլիոն թվից հանելով 1918 թ. հայ վերապրողների՝ իր հաշվարկած թիվը (836,000 շունչ), հանգում է այն եզրակացության, որ Մեծ եղեռնին զոհ է գնացել մոտ 664,000 հայ՝ թիվ, որը ևս չի համապատասխանում իրականությանը և իրենից թերհաշվառում է ներկայացնում:

¹⁵⁴ Sê u Dündar Fuat, Crime of Numbers. The Role of Statistics in the Armenian Question, The State University of New Jersey-Rutgers, Transactions Publishers, 2010:

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 141-157:

«ПРЕСТУПЛЕНИЕ ЧИСЕЛ»: О НЕКОТОРЫХ НОВЫХ ТЕНДЕНЦИЯХ ПО ПРЕУМЕНЬШЕНИЮ ЧИСЛЕННОСТИ ЖЕРТВ ГЕНОЦИДА АРМЯН

В докладе на примере монографии турецкого исследователя Фуада Дюндара «Преступление чисел: роль статистики в Армянском вопросе» (опубликована на английском языке в 2010 г.), представлены и проанализированы некоторые новые тенденции в турецкой историографии по преуменьшению численности жертв Геноцида армян в Османской империи.

В своей книге Дюндар среди прочих тем затрагивает вопросы численности армянского населения Османской империи накануне Геноцида армян, а также численности жертв этого страшного преступления, посвящая данным вычислениям отдельную главу. В своих вычислениях Дюндар основывается на недавно опубликованных статистических данных из записной книжки Талаата-паши – одного из главных организаторов Геноцида армян – приходя к выводу, что накануне 1915 года в Османской империи проживало около 1,5 миллиона армян – число, которое существенно ниже действительного.

Затем Дюндар отнимает из определенного им числа армянского населения Османской империи накануне геноцида в 1,5 млн число выживших в 1918 году армян, которое он определяет в 836,000 чел., приходя к выводу, что в результате Геноцида армян погибло около 664,000 чел. – число, которое также существенно ниже реальной картины.

"THE CRIME OF NUMBERS": ABOUT SOME NEW TENDENCIES AIMED AT LESSENING OF THE NUMBER OF THE ARMENIAN GENOCIDE VICTIMS

The report presents and analyzes some of the new tendencies in Turkish historiography aimed at lessening of the number of victims of the Armenian Genocide in the Ottoman Empire on the example of the monograph of the Turkish historian Fuat Dündar "Crime of Numbers: The Role of Statistics in the Armenian Question" (published in English in 2010).

In his book Dündar among other topics touches upon the issues of Armenian population of the Ottoman Empire on the eve of the Armenian Genocide and the number of victims of this terrible crime, devoting a separate chapter to its estimates. Dündar bases his calculations on the statistical figures found in recently published notebook of Talaat Pasha, the one of the main organizers of the Armenian Genocide, and comes to the conclusion that on the eve of 1915 about 1.5 million Armenians lived in the Ottoman Empire. This number is an underestimate and significantly below of the actual number.

Then Dündar deducts from the number of the Armenian population of the Ottoman Empire on the eve of the genocide, estimated by him as of 1.5 million, the number of survived Armenians in 1918, which he defines as 836.000, coming to the conclusion that as a result of the Armenian Genocide about 664.000 were killed – the number, which also doesn't correspond to reality.

ՄԱՐԻ ՌՈԶ ԱԲՈՒՄԷՖՅԱՆ (ԱՄՆ)

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Հարյուր տարի շարունակ Գերմանիայի մասնակցությունը Հայոց Ցեղասպանության մեջ զգուշորեն, միայն հայության մեջ խուսված, բայց երբեք միջազգայնորեն քննարկված հարց չի եղել: Հայերն այնքան են տարված թուրքերի կատարած ոճիրները

հաստատելով, որ վախենում են ամենափոքր շեղումը նրանք օգտագործեն պատասխանատվությունից խուսափելու համար: Գերմանական արխիվների թեկուզ ոչ ամբողջական բացահայտումը Գերմանիային պարտավորեցնում է իր հանցանքը ընդունելու, որպես կատարված Ցեղասպանության ականատեսի, մասնակցի և այն քողարկողի:

Այդ բացահայտված-հրատարակված փաստաթղթերը ոչ թե հիշողություններ են՝ գրված պատահական անձերի, հայերի, կամ միսիոներների կողմից, այլ փաստացի տեղեկատվություններ են օրով, ժամով գրված, ուղղակի և անուղղակի իրենց մասնակցությունը բերած գերմանացի ականատես քաղաքական գործիչների, բարձրաստիճան զինվորականների, դիվանագետների, հյուպատոսների կողմից: Գերմանացի պատմաբան, գրող, ժուռնալիստ, Վոլֆգանգ Գուստը 2005 թ. գերմաներենով հրատարակել է մի ժողովածու՝ հիմնված 240 գերմանական հիմնական աղբյուր փաստաթղթերի վրա, անմիջական Գերմանիայի Պետական արխիվից վերցված: Գրքի անգլերեն թարգմանությունը, որը կրում է «Հայոց Ցեղասպանությունը՝ վկայությամբ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվի (1915-1916 թթ.)» վերնագիրը, լույս է տեսել 2014 թ. Ջորջյան ինստիտուտի կողմից: Ըստ այդ արխիվների՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ Գերմանիան Թուրքիայում ունեցել է իր հաղորդակցության կենտրոնը, որտեղից միայն գերմանացի դիվանագետները, բարձրաստիճան զինվորականներն ամենօրյա ծածկագիր-տեղեկագրեր են հեռագրել Բեռլին՝ Արտաքին գործերի նախարարություն՝ առանց թուրքերի գրաքննության: Այս առավելությունը գերմանացիներին հնարավորություն է ընձեռնել ժամ առ ժամ մանրակրկիտ տեղեկություն փոխանցել Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին, որի շնորհիվ էլ այսօր հսկայական մանրամասն փաստագրություններ են պահպանված:

Այդ փաստաթղթերը հաստատում են, որ մի շարք գերմանացի սպաներ ոչ միայն համաձայնվել են հայերին ոչնչացնելու թուրքերի ծրագրին, այլ նաև ստորագրել են թուրքերի այդ հրամանագրերի տակ իրենց հավելումներով, ինչպես կարդում ենք ենթասպա Բոթրիխի հրամանագրում՝ «օգտագործել ոչնչաց-

ման ծայրահեղ միջոցներ»։ Հայտնի քաղաքական գրող Փոլ Ռոբ-բախը, հիմնվելով այդ փաստաթղթերի վրա, գրել է՝ «Երբ այս փաստաթղթերը բացահայտվեն գերմանացի ժողովուրդն ամոթով է կանգնելու ամբողջ աշխարհի առջև»։ Այս ուսումնասիրությունը քննում է Հայոց ցեղասպանության պատճառները եւ փաստագրական հերթականությամբ պարզում Գերմանիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանությունում։ Այն փլուզում է հարյուր տարի խնամքով թաքցված Գերմանիայի պատասխանատվութիւնը Հայոց Ցեղասպանության մեջ եւ անժխտելիորեն հիմնավորում է հայությանը բնաջնջելու ծրագրված թուրքական քաղաքականությունը։

MARIE ROSE ABOUSEFIAN (USA)

GERMANY'S RESPONSIBILITY IN THE ARMENIAN GENOCIDE

With mutual political and economic desires, which evolved over decades, imperial Turkey and imperial Germany became close military and political allies long before the First World War. They collaborated in their respective - distinct but linked - paths for colonization and Pan Turkism. This included collaborating to resolve the Armenian Question by eradication of the Armenians, to create an “Armenia without Armenians”. For 100 years, ignorance and denial of this collaboration in genocide has perpetuated the myth that Armenians were exterminated because they were Christians and that Germany, Turkey’s now century-long ally, knew little. These fictions fade into the dustbin of history on examination of facts in primary sources in archives of the Germany Foreign Office and elsewhere. This paper examines causes for the Armenian Genocide and sets out a chronology of documentary evidence of complicity in genocide by Germany. It takes readers through decisions and communications from 1914, into 1915 and after, by German leaders, diplomats, ambassadors, consuls and high ranking military personnel. The paper draws on and interprets the seminal work of scholars such as Vahakn Dadrian since the 1990s and earlier, and most recently by Wolfgang Gust in his book titled *“The Armenian Genocide: Evidence*

from the German Foreign Office Archives, 1915-1916” (also available in English, German and Turkish at the website www.armenocide.de) The paper deconstructs the century-long cover-up of Germany’s responsibility and lays the basis for the Armenian demand against Turkey to the legal rights of the Armenian state and descendants of the victims and survivors of the genocide to confiscated territories, properties, history and heritage.

МАРИ РОЗ АБУСЕФЯН (США)

ОТВЕТСТВЕННОСТЬ ГЕРМАНИИ ЗА ГЕНОЦИД АРМЯН

На фоне обоюдных политических и экономических стремлений, развившихся на протяжении нескольких десятилетий, Турция и империалистическая Германия еще задолго до Первой мировой войны превратились в сплоченных военно-политических союзников. Они сотрудничали по нескольким направлениям – различным по сути, но связанным идеологически – новые просторы для колонизации и пантюркизм. Все это подразумевало сотрудничество по Армянскому вопросу, одним из решений которого было уничтожение армян и создание “Армении без армян”.

На протяжении ста лет игнорирование и отказ от участия в Геноциде породили миф о том, что армяне были истреблены из-за их христианской веры, и что Германия, как давний союзник Турции, была плохо осведомлена о случившемся. Эти фиктивные сообщения, однако, не выдерживают критики при рассмотрении исторических фактов, проистекающих из архивных источников МИД Германии. Данная работа призвана рассмотреть причины армянского геноцида и выдвинуть хронологию документированных свидетельств об участии Германии в Геноциде. Это позволит ознакомить читателей с корреспонденцией немецкого руководства, дипломатов, послов, консулов и высокопоставленных военных чинов для периода 1914-1915 гг. и позже. В то же время, данная статья дает оценку успешной работе ряда специалистов, таких как Ваагн Дадрян (начиная с 1990-

ых гг.), Вольфганга Густа и его труду “*Армянский геноцид: Сведения архивов МИД Германии, 1915-1916 гг.*” (также доступен на английском, немецком и турецком языках на сайте www.armenocide.de). Наконец, эта работа приподнимает завесу, скрывавшую ответственность Германии в вопросе Геноцида армян, требований последних к Турции относительно юридических прав армянского государства и армян-потомков по конфискованным территориям, собственности, истории и наследию.

*ИГОРЬ КРЮЧКОВ,
НАТАЛЬЯ КРЮЧКОВА (РОССИЯ)*

ГЕРМАНСКИЙ ОККУПАЦИОННЫЙ РЕЖИМ НА СТАВРОПОЛЬЕ И ПРОБЛЕМА ОСТАРБАЙТЕРОВ В 1942-1943 ГГ.

Летом 1942 г., после неудачного наступления Красной армии под Харьковом войска Вермахта начинают быстро продвигаться к Сталинграду и Ростову на Дону. Форсировав Дон немецкие части смогли в течении августа 1942 г. захватить большую часть территории Ставропольского края.

Дон и Северный Кавказ обладали значительными трудовыми ресурсами, которые можно было задействовать в Германии и на оккупированных территориях. Трудовые ресурсы региона имели свои плюсы и минусы. К плюсам, безусловно, относились низкий процент городского населения и доминирование сельских жителей, которые воспринимались Германией как менее подверженные «коммунистической пропаганде». Кроме этого в годы гражданской войны и последовавшей коллективизации сильно пострадало казачество и крестьянство региона, что собирались использовать в своих целях оккупационные власти при вербовки населения для работ в Третьем Рейхе. Представители народов Северного Кавказа традиционно воспринимались, как слабое звено в советской системе, которое можно было легко переориентировать на сотрудничество с оккупантами.

Заняв Ставропольский край, оккупационные власти начинают заниматься учетом трудовых ресурсов региона, опираясь при этом на поддержку местных коллаборационистов, старост и бургомистров. Они опираясь на свои представления о настроениях жителей региона, первоначально сделали ставку на добровольное привлечение местных жителей на работу в Германию. Поэтому через местные средства информации, распространение листовок, выступления специальных агитаторов и даже с привлечением кино на жителей Северного Кавказа буквально свалился вал информации о том, как к ним несправедливо относилась Советская власть.

Следует подчеркнуть, что создаваемый у местного населения «образ Германии» и будущих условий работы и жизни остарбайтеров выглядели очень привлекательно. Подчеркивалась цивилизованность Германии и высокий уровень развития ее экономики, чем смогут воспользоваться остарбайтеры. «Получая хорошую заработную плату, германский рабочий имеет возможность жить в комфортабельной квартире со всеми удобствами, о которых в Советском Союзе никто и не мог помышлять, прекрасно одеваться и хорошо питаться. Каждый рабочий и каждый член семьи обычно имеют велосипед; некоторые рабочие семьи имеют собственные автомобили. Рабочий день в Германии продолжается 8 часов... При каждом заводе прекрасная столовая...», - так выглядела жизнь в Германии в одной из пропагандистских статей¹⁵⁶. Однако с формированием необходимого количества остарбайтеров на принципах добровольности возникли большие проблемы. Все планы срывались в городах и селах Ставропольского края.

С конца 1942 г. на Северном Кавказе начинает проводиться насильственная отправка местных жителей от 17 до 40 лет в Германию. Не раз оккупанты запугивали людей тем, что если они поедут в Германию добровольно, то они не получают обещанные льготы. В случае отказа это будет сделано в принудительном порядке, и тогда уже остарбайтеры не смогут претендовать на хорошие условия работы и содержания. Об этом в частности говорил офицер немецкой армии Ратц главному врачу г. Пятигорска Алецкому. После этих

¹⁵⁶ Пятигорское эхо. 1942. 28 ноября.

запугиваний оккупанты смогли завербовать 40 врачей Пятигорска для выезда в Германию¹⁵⁷. По приказу бургомистра г. Пятигорска Орлова все горожане подходившие для вывоза в Германию были зарегистрированы¹⁵⁸.

Быстрое отступление германской армии с Северного Кавказа в январе – феврале 1943 г. сорвало планы Берлина по дальнейшему вывозу с территории региона рабочей силу. По данным устоявшимся в современной российской историографии за август 1942 - январь 1943 гг. с Дона и Северного Кавказа было вывезено в качестве оstarбайтеров более 93 тыс. чел., в том числе из Краснодарского края 48464 чел., Ростовской области 40910 чел., Ставропольского края 1985 чел. и Северо-Осетинской АССР 1659 чел.¹⁵⁹

Проведенный анализ списков оstarбайтеров показывает, что основную часть вынужденных рабочих составляли женщины, но в этом правиле были и свои исключения. Так из 12 оstarбайтеров, вывезенных из Шпаковского района все оказались мужчинами, такая же ситуация наблюдается в Горячеводском районе, где все 10 оstarбайтеров также были мужчины и т.д. Основную массу оstarбайтеров составляли лица 1924-1927 годов рождения. В тоже время это не исключало попадание в категорию оstarбайтеров граждан, относившихся к среднему поколению и старше. В Шпаковском районе возраст некоторых оstarбайтеров в 1942 г. составлял 50, 55, 57 лет. Такая же ситуация наблюдается в Ставрополе и в других районах региона. Примерно половина оstarбайтеров уезжало в Третий Рейх целыми семьями. В Ставрополе средний размер, вывезенной семьи составлял 3 чел. В сельских районах этот показатель был еще больше. Из Лысогорского и Крымгиреевского сельских советов уезжали семьи по 4-6 чел., то есть уезжали родители вместе со своими детьми¹⁶⁰. Все оstarбайтеры из Наурского района являлись жителя-

¹⁵⁷ Государственный архив Ставропольского края (далее – ГАСК). Ф.1368. Оп.1. Ед.хр. 142. Л.174.

¹⁵⁸ ГАСК. Ф.1368. Оп.1. Ед.хр. 142. Л.173.

¹⁵⁹ Полян П.М. Жертвы двух диктатур. Оstarбайтеры и военнопленные в Третьем Рейхе и их репатриация. М., 1996. С.368.

¹⁶⁰ ГАСК. Ф.1368. Оп.1. Ед.хр. 8. Л.21-22.

ми станицы Ищерская (305 чел.), практически все они выехали в составе семей от 2 до 8 чел.

Судьбы оstarбайтеров в Германии и Австрии сложились по-разному. Практически все работавшие на промышленных предприятиях отмечают плохие условия их содержания. В то время, большинство оstarбайтеров прошедших через бауэрские хозяйства отмечали, что к ним относились нормально или очень хорошо. Некоторые подчеркивали, что они питались вместе с семьей бауэра, установив с ними доверительные отношения.

В процессе работы над темой автору представленного материала удалось обнаружить документ, датированный 3 января 1949 г. Это было донесение исполняющего обязанности начальника Переселенческого отдела Исполкома при Ставропольском Краевом Совете Р.Макунина начальнику Переселенческого Управления при Совете министров РСФСР Л.Дмитриеву. В нем указывалось, что всего из Ставропольского края было угнано оккупантами в качестве оstarбайтеров 2546 чел., в том числе 880 мужчин, 1666 женщин. Из всего числа оstarбайтеров 357 чел. составляли дети в возрасте до 16 лет¹⁶¹. В сведениях переданных из Ставрополя заместителю начальника Переселенческого Управления при Совете министров РСФСР от 3 марта 1949 г. вновь называется эта цифра, но уже с некоторыми подробностями. Из 880 мужчин оstarбайтеров из Ставропольского края на родину вернулось 742 чел., из них 577 чел. относилось к числу трудоспособных. Из 1666 чел. женщин оstarбайтеров на родину возвращается 1166 чел., к числу трудоспособных принадлежало 974 чел. Таким образом, из 2546 оstarбайтеров Ставрополя в СССР вернулось 1908 чел., осталась неизвестной судьба 638 чел.¹⁶² К апрелю 1949 г. было возвращено еще 47 чел. и число «невозвращенцев» сократилось до 591 чел., или около 21% оstarбайтеров, угнанных с территории Ставропольского края в границах 1945 г.¹⁶³ Судьбы остальных сложились по-разному, незначительная их часть вернулось в СССР позже, а остальные погибли в Германии или

¹⁶¹ ГАСК. Ф.1852. Оп.12. Ед.хр. 129. Л.1-2.

¹⁶² Там же. Л.18.

¹⁶³ Там же.

оказались среди тех, кто под любыми поводами отказался возвращаться в СССР.

Очень сложным оказалось возвращение оstarбайтеров в СССР. Процедура прохождения через фильтрационные пункты и лагеря становилось для многих оstarбайтеров мучительным испытанием. Вернувшись на родину, они зачастую сталкивались с отторжением со стороны местных жителей и властей. Практически все оstarбайтеры испытали материальные трудности.

*ԻԳՈՐ ԿՐՅՈՒԶԿՈՎ
ՆԱՏԱԼԻԱ ԿՐՅՈՒԶԿՈՎԱ (ՌՈՒՍԱՍՍՆ)*

**ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ
ՍՏԱՎՐՈՊՈՒԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՎ 1942-1943 ԹԹ.
ՕՍԹԱՐԲԱՅԹՐՆԵՐԻ ՀԱՐՑԸ**

1942 թ. նոյեմբերից մինչև 1943 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում Ստավրոպոլի մարզից՝ մասնավորապես Կարաչանո-Չերքեզիա հանրապետությունից և Չեչենական հանրապետության Նաուրի մարզից արտաքսվեցին մոտավորապես 2546 օսթարբայթերներ: Նրանցից տուն վերադարձան միայն 1961 հոգի: Օսթարբայթերների մեծ մասը սլավոններ էին (ռուսներ, ուկրաինացիներ): Կարմիր բանակի արագ հարվածները թույլ չտվեցին տեղի օկուպացիոն իշխանություններին կազմակերպելու օսթարբայթերների տեղափոխումը Հյուսիսային Կովկասից:

Օսթարբայթերների մի մասը միացել էր Երրորդ ռայխին կամավոր հիմունքներով, սակայն կային նաև մարդիկ, ովքեր հարկադրված համաձայնեցին համագործակցել թշնամու հետ: Նրանց մի զգալի մասը հանդիպեց խնդիրների՝ առաջին հերթին կապված աշխատանքային պայմանների հետ: Այն օսթարբայթերները, որոնք գյուղական միջավայրում էին, գտնվում էին համեմատաբար ավելի լավ պայմաններում: Օսթարբայթերների հայրենիք վերադառնալու գործընթացը բավականին դժվար էր:

*IGOR KRIUCHKOV,
NATALIA KRIUCHKOVA (RUSSIA)*

GERMAN OCCUPATION REGIME IN STAVROPOL REGION AND ISSUE OF OSTARBEITERS IN 1942-1943

2546 Ostarbeiters had been sent away from the territory of modern Stavropol region, the Karachay-Cherkess Republic and Naur region of the Chechen Republic (having been parts of Stavropol region) from November 1942 – to January 1943, 1961 of Ostarbeiters returned in motherland according to our counts. The most of Ostarbeiters were Slavs (Russians, Ukrainians). Due to the rapid attack of the Red Army occupation authorities didn't manage to realize all their plans to export Ostarbeiters from the territory of the North-Caucasus. It should be recognized that part of Ostarbeiters went to the Third Reich voluntarily but primarily they were sent to Germany under threat of punishment. The main part of Ostarbeiters faced difficult working conditions and they were practically deprived of their civil rights. Ostarbeiters located in the countryside were in a better position. The process of returning of Ostarbeiters in their motherland turned out to be hard, many of them went through special camps and they had material and other problems on the road. The process of their integration into civilian life also turned out to be hard.

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ
ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ՀԱՅԿՈՒՀԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՄՇԱԿՈՒՅԹ ՏԵՐՄԻՆԻ «ՉԵԶՈՔԱՑՈՒՄԸ»
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ**

Սույն զեկուցման նպատակն է ներկայացնել մշակույթ հասկացության ընկալման տարբերակները 1948 թ. Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայում (այսուհետ՝ ցեղասպանության կոնվենցիա) և վերջինիս նախագծերում, ցույց տալ, թե մշակույթը ինչպես է «չեզոքանում» ցեղասպանության կոնվենցիայի վերջնական տարբերակում: Սույն նպատակը առաջ է քաշել մի շարք խնդիրների քննարկման անհրաժեշտությունը՝

- Ցեղասպանությունը որպես կոնցեպտ՝ անցյալում և ներկայում,

- Ցեղասպանության ընկալումները միջազգային իրավական փաստաթղթերում,

- Մշակույթ հասկացության քննությունը ցեղասպանության կոնվենցիայում և վերջինիս նախագծերում,

- Մշակույթի «գոլորշացումը» ցեղասպանության կոնվենցիայի վերջնական տարբերակում

Սույն ուսումնասիրությունը հիմնված է տեսական գրականության ուսումնասիրության, փաստաթղթային աղբյուրների վերլուծության հիման վրա:

Ցեղասպանությունը անկասկած համարվում է ամենադաժան հանցագործությունը և միջազգային օրենքով պատժելի է: 1948 թ. սկսած միջազգային քրեական օրենքը սկսեց սահմանել ցեղասպանությունը որպես միջազգային մակարդակի հանցագործություն:

1998 թ. Հռոմի Միջազգային քրեական դատարանի Կանոնադրության համաձայն (այսուհետ՝ Կանոնդրություն) ցեղասպանությունը դասվում է այնպիսի հանցագործությունների շարքին, ինչպիսիք են մարդկության հանդեպ իրականացվող ծանրագույն հանցագործությունները, պատերազմական հանցագործություններ և այլն¹⁶⁴: Կանոնադրության 6-րդ հոդվածով ցեղասպանությունը նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ¹⁶⁵.

- այդ խմբի անդամների սպանությունը,
- այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս
- պատճառելը,
- որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
- այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների
- իրականացումը,
- երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

Ցեղասպանության կոնցեպտի նման ընկալումը տառացիորեն կրկնում է դեռևս 1948 թ. ցեղասպանության կոնվենցիայի երկրորդ հոդվածում ներկայացված սահմանումը:

Ինչպես հետազոտող Կլավերոն է նշում իր «Ցեղասպանությունը և բնիկները միջազգային օրենքում» հոդվածում, պարտադիր չէ, որ ցեղասպանության արդյունքը լինի որևէ խմբի ֆիզիկական ոչնչացումը¹⁶⁶: Ցեղասպանության կոնցեպտը լայն է, այն չի ներառում միայն մասսայական սպանություններ կամ սերիական մարդասպանություններ: Դրանք տարբեր հասկա-

¹⁶⁴ Rome Statute of the international Criminal Court/http://www.icc-cpi.int/nr/rdonlyres/ea9aef77-5752-4f84-be94-0a655eb30e16/0/rome_statute_english.pdf 16.03.2015

¹⁶⁵ Նույն տեղում:

¹⁶⁶ Clavero B., Genocide and Indigenous Peoples in International Law/<http://hrcolumbia.org/indigenous/genocide-br-en-Clavero.pdf> 15.01.2015

ցություններ են: Ցեղասպանությունը դիտարկվում է որպես հանցագործություն, որը կարող է իրականացվել առանց անգամ մեկ գոհի առկայության: Խոսքը վերաբերվում է մշակութային ցեղասպանության կոնցեպտին: Ցեղասպանությունը նշանակում է որևէ խմբի ֆիզիկական, կրոնական կամ մշակութային ոչնչացումը:

Ցեղասպանության կոնցեպտը առավել մանրամասն ներկայացված է ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի նախագծերում: Առաջին նախագիծը կազմվել է 1947 թ. ՄԱԿ-ի քարտուղարության կողմից: Այստեղ ցեղասպանությունը դիտարկվում է ֆիզիկական, կենսաբանական և մշակութային ասպեկտներով¹⁶⁷:

Այս գեկույցում մեզ հսկապես հետաքրքրում է մշակութային ասպեկտը, որը կոնվենցիայի վերջնական օրինակում կարծես «չեզոքանում է»՝ վերածվելով վերացական հասկացության:

Այսպիսով, ցեղասպանության կոնվենցիան ունի երկու նախագիծ: Կոնվենցիայի նախնական տարբերակներին կարելի է ծանոթանալ Վ. Շաբասի «Ցեղասպանությունը միջազգային օրենքում. հանցագործությունների հանցագործությունը» աշխատության մեջ¹⁶⁸: Առաջին նախագծում ցեղասպանությունը դիտարկվում է որպես հանցագործություն, որը միտված է որևէ խմբի ֆիզիկական, կենսաբանական կամ մշակութային ոչնչացմանը: Մշակութային ոչնչացումը ներառում էր¹⁶⁹՝

- երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսը,
- մշակութային ոլորտը ներայացնող մարդկանց հարկադրված և համակարգված արտորը,
- ազգային լեզվի օգագործման արգելումը նույնիսկ մասնավոր ոլորտում,

¹⁶⁷ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide(hereinafter: Genocide Convention), the Secretariat and Ad Hoc Committee Drafts// <http://www.preventgenocide.org/law/convention/drafts/09.03.2015>

¹⁶⁸ William A. Schabas, Genocide in International Law: The Crime of Crimes, New York, Cambridge University Press, 2000.

¹⁶⁹ Genocide Convention, draft 1, p.1.

• ազգային լեզվով տպված գրքերի կամ կրոնական բնույթ ստեղծագործությունների ոչնչացումը, նոր հրատարակությունների արգելումը,

• պատմական կամ կրոնական բնույթի հուշարձանների համակարգված ոչնչացումը կամ դրանց դիվերսիոն օգտագործումը, պատմական, կրոնական կամ մշակութային բնույթի փաստաթղթերի և առարկաների ոչնչացումը:

Փաստրեն, ցեղասպանության կոնվենցիայի առաջին նախագծում մշակույթը ներկայացվում է լայն առումով՝ ներառելով մտավորականության հանդեպ տարվող բացասական քաղաքականությունը, ազգային լեզվի, կրոնի օգտագործման արգելումը, գրքերի հուշարձանների և պատմական, կրոնական, մշակութային արժեք ունեցող իրերի ոչնչացումը: Ցեղասպանության կոնվենցիայի երկրորդ նախագգիծը կազմվել է 1948թ. ապրիլ-մայիս ամիսներին, որտեղ խմբավորվել են առաջին նախագծում ներկայացված կետերը: Այստեղ ցեղասպանությունը կրկին ներկայացվում է ֆիզիկական, կենսաբանական և մշակութային ասպեկտներով: Ի տարբերություն առաջին օրնակի՝ ֆիզիկական և կենսաբանական ասպեկտները այստեղ համադրված են և ընդհանրացված են, վերաբերում են որևէ խմբի ֆիզիկական ոչնչացմանը, ծնելության նվազմանը և այն: Մշակութային ասպեկտը ներկայացված է երկու կետով¹⁷⁰՝

• ազգային լեզվի օգտագործման արգելում առօրյա կյանքում և դպրոցներում, այդ լեզվով հրատարակությունների և տպագրությունների արգելում,

• որևէ խմբի գրադարանների, դպրոցների, պատմական հուշարձանների և այլ մշակութային հաստատությունների ոչնչացում:

Այստեղ տեսնում ենք, որ մշակույթը, ի տարբերություն առաջին նախագծի, ներկայացված է ավելի նեղ առումով՝ ներառելով հիմնականում նյութական մշակույթի ոչնչացումը, իսկ հոգևոր կամ ոչ նյութական մշակույթը ներկայացված է միայն լեզվի օգտագործման արգելմամբ:

¹⁷⁰ Genocide Convention, Draft 2// <http://www.preventgenocide.org/law/convention/drafts/ p.3>.

HAYKUHI MURADYAN (ARMENIA)

NEUTRALIZATION OF THE CONCEPT OF CULTURE IN INTERNATIONAL LEGAL DOCUMENTS ON GENOCIDE

Genocide is the most serious crime that can be committed under international law. It was in 1948 that criminal law truly began to emerge on an international level, and law governing the crime of genocide has been developing ever since. The definition of genocide in the Convention and the Statute derives from a draft instrument that described the concept in even more detail. In 1947, an already official draft of the United Nations defined genocide with its physical, biological and cultural aspects. In this article we are interested especially in cultural component of the convention. Cultural aspect of the genocide is represented by different ways: exile of individuals representing the culture of a group, the prohibition of the national language, the destruction of books or the prohibition of new publications that form the group's religious works, the systematic destruction of historical or religious monuments or their diversion to alien uses, destruction or dispersion of documents and objects of historical, artistic, or religious value.

So, between the official draft and the final Convention, the description of genocide was summarized and some elements have been deleted. The most important from the outset being is the removal of cultural aspect of genocide. Maybe this is the reason why talking about the Genocide concept most of the people, media state bodies understand only mass killing.

АЙКУИ МУРАДЯН (АРМЕНИЯ)

НЕЙТРАЛИЗАЦИЯ КОНЦЕПЦИИ КУЛЬТУРЫ В МЕЖДУНАРОДНЫХ ПРАВОВЫХ ДОКУМЕНТАХ О ГЕНОЦИДЕ

Геноцид является самым серьезным преступлением, которое может быть совершено в рамках международного права. В 1948 году уголовное право на международном уровне начало регулировать

преступления геноцида. Определение геноцида в Конвенции и Устава вытекает из проекта документа, описывающего эту концепцию более подробно. В 1947 году официальный проект Организации Объединенных Наций определяет геноцид физическими, биологическими и культурными аспектами. В этой статье мы заинтересованы особенно в культурной составляющей конвенции. Культурный аспект геноцида представлена различными способами: изгнание лиц, представляющих культуру группы, запрещение использования национального языка, уничтожение книг или запрета новых публикаций, которые формируют религиозные произведения группы, систематическое уничтожение исторических или религиозных памятников, уничтожение или дисперсии документов и объектов исторической, художественной или религиозной ценности.

Так, между официальным проектом и окончательной Конвенцией, описание геноцида было обобщено, и некоторые элементы были удалены. Наиболее важным удалением мы считаем культурные аспекты. Может быть, именно поэтому, когда речь идет о концепции геноцида, то большинство людей, государственные органы, средства массовой информации понимают только массовое убийство.

GARABET MOUMDJIAN (USA)

**IN SEARCH OF THE “SMOKING GUN” IN THE CASE OF
A LEGAL PROOF FOR THE ARMENIAN GENOCIDE:
“EMVAL-I METRUK”: OTTOMAN AND TURKISH
REPUBLICAN LAWS PERTAINING TO ARMENIAN
CONFISCATED (MOVABLE AND IMMOVABLE)
PROPERTIES, 1915-1928**

The case for the recognition of the Armenian Genocide has thus far been anchored on the human aspect of the calamity befalling Armenian during WWI. Thus, there is now a huge library of academic and journalistic treatises which deal with that subject.

Regardless, the multitude of historical studies that were conducted with regard to the genocide were always questioned by the “other side” from the point of view of the absence of a “smoking gun” that would clearly underline intent by the perpetrator(s). Even the “Andonian documents,”¹⁷¹ which the Armenian and non Armenian side used had been a matter of debate for a long time. One caveat here is the issue of the persona of Naim Bey, the Turkish official who supplied the documents to Andonian’s per the latter’s account. For a long time, the authenticity of Naim Bey was under question. It was only some years ago, that Dr. Hilmar Kiser was able to bring Naim Bey to the limelight. In an interview I conducted with Kaiser, he was able to pinpoint to an ottoman document published by the ATASE (Turkish General Staff Military Historical Archives).¹⁷²

The question that asserts itself here is: what if the paradigm constructed to show intent or the “smoking gun” is placed somewhere else, in plain sight, and no one has calculated it to be what it really is until now?

Article II of the United Nation’s Genocide Convention reads as follows:

In the present Convention, genocide means any of the following acts committed with intent to destroy, in whole or in part, a national, ethnical, racial or religious group, as such:

¹⁷¹ The reference is to Aram Andonian and the documents he had procured from a certain Naim Bey. The Turkish side has led a big campaign in terms of disqualifying these documents as forgeries and also bringing under question the very existence of Naim Bey. Although much can be said about the content of the documents under question, the issue of Naim bey was settled by this author and Hilmar Kaiser years ago, when they found the person in question in a printed volume of Ottoman Archives. See http://en.wikipedia.org/wiki/The_Memoirs_of_Naim_Bey

¹⁷² <http://asbarez.com/56524/is-a-long-overdue-controversy-finally-settled-aram-andonians-infamous-naim-beys-real-identity-is-now-considered-revealed/>. Naim Bey was the source of the telegrams that presented proof of the intentional genocidal policies of the Young Turk government and especially that of Talaat Pasha, then Minister of Interior of the Ottoman Empire. Andonian, a journalist and himself a survivor of the Armenian Genocide, published his famous “Naim Bey’s Memoirs” in 1920. Since the 1980’s The Turkish side has devoted much time and effort to undermine the authenticity of Naim Bey’s telegrams. Moreover, Turkish scholars have gone as far as to proclaim that Naim Bey himself is nothing more than a fictitious character and perhaps a figment of Andonian’s imagination.

- Killing members of the group;
- Causing serious bodily or mental harm to members of the group;
- Deliberately inflicting on the group conditions of life calculated to bring about its physical destruction in whole or in part;
- Imposing measures intended to prevent births within the group;
- Forcibly transferring children of the group to another group.¹⁷³

Although all five points indicate intent and do apply to the Armenian case, I want to draw the readers' interest on point (c) that is of particular interest and is at the crux of this study.

A totally different aspect of the Armenian ordeal that has not yet been fully researched and disseminated is characterized by the en masse confiscation of Armenian movable and an immovable property, ironically designated as "Abandoned" merely weeks of the latter's deportation outside of their ancestral lands.¹⁷⁴ The question that asserts itself is how

Կային մէկէ աւելի պատճառներ հրեական այս քաղաքականութեան համար: Հրեական կողմը չուզեց ֆինանսական երկխօսութեան կապել ցեղասպանութեան դառն իրողութենէն բխող բարոյական խնդիրները, որոնք ի վերջոյ պիտի դառնային միջազգային իրաւունքի խնդիրներ: Կային նաև քաղաքական նկատումներ: Գերմանիոյ կողմէ առաջարկուած հատուցման գործընթացը ուղիղ հետևանքն էր ԱՄՆ-ի այն քաղաքականութեան, որ մով ան կը ջանար Արեւմտեան Եւրոպան Սովետական ազդեցութենէն ամէն գնով զերծ պահել և Դաշնային Գերմանիան Արեւմտեան արժէքներու և տնտեսական զարգացման տիպարի վերածել: Հարկ էր նաեւ նորաստեղծ Արևմտեան Գերմանիոյ պետութիւնը միջազգային քաղաքական համայնքին ընդունելի դարձնել:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Ի տարբերութիւն Հրեական նախընթացին, ուր հատուցումը անջատ պահուեցաւ դատին միւս երեսներէն և ներկայացաւ որպէս բոլորովին առանձին գործընթաց, վերջին քսանամեակին, միջազգային հանրութիւնը փորձեց աւելի ամբողջական պա-

¹⁸⁹ Marilyn Henry, « Confronting the Perpatrators, A History of the Claims Conference », Valentine Mitchell, London, 2007, pp. 9-10.

¹⁹⁰ Marilyn Henry, op. cit., p. 214.

տասխան տալ մարդկության դեմ գործուած ոճիրներու (և առհասարակ պատերազմական ոճիրներու) հատուցման խնդիրներուն:

Այսպէս, 1997-ին, ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց յանձնաժողովին ներկայացուցած իր զե¹⁹¹կոյցով (4), ֆրանսացի փորձագէտ Լուի ժուանէ, զոհերու համար երեք հիմնական իրաւունքներ կը սահմանէր անպատժելիութեան դէմ պայքարի բովին մէջ – իրաւունք իրազեկութեան, իրաւունք արդարութեան և իրաւունք հատուցման:

Միջազգային օրէնսդրութեան զանազան փաստաթուղթերը այսօր կը հաստատեն անհատ և հաւաքական զոհերու հանդէպ պետութիւններու հատուցման և դարմանումի (reparation) պարտաւորութիւնը: Նշենք Մարդկային Իրաւանց Տիեզերական հռչակագրի, Քաղաքացիական և Քաղաքական Իրաւունքներու, Տնտեսական, Ընկերային և Մշակութային Իրաւունքներու, Ցեղային

Խտրականութեան Բոլոր Ձեւերու Վերացման, Խոշտանգումներու եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերմունքի կամ պատժի դէմ, Երեխաներու Իրաւունքներու Համաձայնագրերը :

ԹՈՒՐՔԻՈՅ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԱՅՈՅՆՆԵՐՈՒ ՀՈՒՈՎՈՅԹԸ

Սկզբունքով, միջազգային իրաւական համակարգը հատուցման հնարաւորութիւն կ'ընծայէ Հայութեան և սակայն ան տակաւին հեռու է փորձուած ըլլալէ: Նաև հարց է, թէ ի՞նչ չափով այսօր Եւրոմիութիւնն ու անոր անդամ երկիրները կրնան սատարել նման գործընթացի մը իրագործման նկատի առած քաղաքական հարթակի բարդութիւնները:

Կարելիութիւնները կախեալ են շարք մը անյայտներէ, որոնք դեռ կը կարօտին խորքային քննարկման: Առաջին հերթին, հարց է, թէ ի՞նչ չափով հայկական պետութիւնը այսօր ի վիճակի է կամ պատրաստ պաշտօնապէս պահանջատէր կողմ հանդիսանալու յանուն հայութեան միջազգային ատեաններուն առջև:

¹⁹¹ Nations Unies, Conseil Economique et social E/CN.4/Sub.2/ 1997/20 26 juin 1997.

Թուրքիոյ ռազմաքաղաքական կարեւորութիւնը Արևմուտքի համար և Միջին Արեւելքի մէջ ռազմավարական գործընկերոջ անոր հանգամանքը թոյլ չեն տար պատկերացնել, որ Եւրոմիութիւնը և անոր անդամ պետութիւնները այսօր ճանաչում են աւելի լայն ուշադրութիւն յատկացնեն Հայոց Ցեղասպանութեան խնդրին և «բարոյական» ոլորտէն շօշափելի քաղաքական ոլորտ փոխադրեն զայն:

Կարելի է պատկերացնել, որ յառաջիկային տարածաշրջանային յարաբերութիւններու վերադասաւորման բովին մէջ նոր կարելիութիւններ ստեղծուին մեր դատին համար: Պարզ խօսքով, այդպիսի կարելիութիւնները կապուած են աշխարհակարգի և յատկապէս Արևմուտքի ռազմավարական շահերու յարացոյցի (paradigme) փոփոխութեան հետ: Եւ սակայն այս պարագան կենսագործելը եւս ուժերու մեծ կեդրոնացում և պետական քաղաքականութեան բիրեղացում կը պահանջէ:

HILTA CHOBOIAN (FRANCE)

EUROPEAN POLICY AND PROSECUTION: FROM THE ACCEPTANCE OF THE ARMENIAN GENOCIDE TO THE COMPENSATION DEMANDS

A study of the European policy regarding the issue of transitioning from the international recognition phase of the Armenian Genocide to reparations by the government of Turkey shall require an adequate appreciation of the recent history of recognition processes in Europe by governments, parliaments, international organisations and the European public opinion in connection with the geostrategic choices such recognition would entail.

Secondly, we have to consider the precedent of the German reparations program with regard to the Jewish case. We need to note that, as of the outset, the Jewish side voluntarily chose to limit the negotiations to financial compensations only and deliberately excluded from the negotiations the moral aspects of the reparations.

Most recent tools of International Law regarding reparations also need to be considered. The fact that new rules are now fixed guiding reparations for the purpose of combatting impunity in cases of gross human rights violations as genocides leading to the Right to Truth, Justice and Reparations. The latter may comprise Restitution, Compensation, Rehabilitation, Satisfaction and guarantees of non-repetition. Lastly, we must look into the conflicting aspects of geopolitical interests affecting the relations between Europe and Turkey.

ХИЛЬДА ЧОБОЯН (ФРАНЦИЯ)

ЕВРОПЕЙСКАЯ ПОЛИТИКА И СУДЕБНОЕ ПРЕСЛЕДОВАНИЕ: ОТ ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА ДО ТРЕБОВАНИЙ КОМПЕНСАЦИЙ

Для изучения европейской политики касательно вопросов как международного признания армянского геноцида, так и предоставления правительством Турции репараций, нужна адекватная оценка аналогичных исторических процессов в современной Европе правительствами, парламентами, международными организациями и европейским общественным мнением.

Второе, нам следует учитывать опыт Германских репараций по отношению к Еврейскому вопросу. Следует заметить, что еврейская сторона добровольно согласилась свести переговорный процесс к обсуждению денежных компенсаций и сознательно отказалась убрать из переговорного процесса моральные аспекты репараций.

Следует также учитывать недавнишние инструменты Международного права, касающиеся репараций. Важен факт, что новые правила, определяющие репарации для борьбы с безнаказанностью в случаях грубых нарушений прав человека, правомерны также для геноцидов. Эти положения ведут к справедливости и репарациям, где последнее может включать возмещение убытков, компенсацию, реабилитацию и гарантии неповторения подобного.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԴԱՆԵԼԻ
ՔԱՐՏ ԲԼԱՆՇԸ**

Հայոց ցեղասպանության (արմենոցիդ) խորքային պատճառների համակողմանի ուսումնասիրությունը դեռևս մնում է օրախնդիր, քանզի արդարահատույցը՝ ցեղասպանության հետևանքների հաղթահարումը ենթադրում է XX դարի Մեծ Ոճիրի գենեզիսի տարբեր շերտերի լիարժեք բացահայտում, որոնց թվում է արմենոցիդի գեոստրատեգիական ենթաշերտը: Այս ոլորտում անհրաժեշտ է կատարել որոշ ճշգրտումներ ճիշտ հետևությունների հանգելու նպատակով:

Խոսքը տվյալ պարագայում վերաբերում է Սան Ստեֆանոյի (1878 թ., մարտի 3) պայմանագրի և այնուհետև Բեռլինի (1878 թ., հուլիսի 13) տրակտատի դերակատարությանը:

Այդ իմաստով անհրաժեշտ է նկատել, որ Սան Ստեֆանոյի պայմանագիրը սուկ պրելիմինար պայմանագիր է, որի արժեքը որպես այդպիսին գրոյական է: Նրանով Հայաստանի իրական մտադրությունները 16-րդ հոդվածի կտրվածքով բացահայտելու միտումը կասկածահարույց է: Տվյալ պայմանագրի իրական դերակատարությունը այլ է. Ռուս-թուրքական երկկողմ պայմանագիրը դարձավ այն իրավաքաղաքական ցատկահարթակը, որով հայկական հարցը տեղավորվեց Բեռլինի տրակտատի «բազմակազմ» կառուցվածք, «Եվրոպական համանվագի» շրջանակներում:

Այսուհետև Հայոց հարցը խճճվեց 1) թուրքական մաքիավելյան խարդավանքների, 2) Արևելյան հարցի հակասությունների, 3) ուժերի եվրոպական հավասարակշռության տարբեր կոմբինացիաներում:

Որպես արդյունք՝ Օսմանյան կայսրությունը մինչև Առաջին աշխարհամարտ, Հայկական հարցի լուծման ուղղությամբ «բավարարվում էր» անշեղորեն աճող, սակայն «տեղական» նշանակության կոտորածներով. «գործընթացը» համահունչ էր ուժերի հավասարակշռության Եվրոպական համանվագի շրջանակներում:

րում անդամ երկրների փոխհարաբերությունների ելևէջներին: Սա ԱՐՄԵՆՈՑԻԴի առաջին փուլի առանձնահատկությունն էր:

Նոր, լայնամասշտաբ և զանգվածային աղետն ուղենշվեց Դարդանեղի գործողության բեմականացումով. երբ «տկար, դողահար Օսմանյան կայսրությունը» (Հյուսեյն Ջահիդ) ըմբռնեց, որ Անտանտի գլխավոր երկրներից ո՛չ Ֆրանսիան, ո՛չ էլ Անգլիան մտադիր չեն հանուն Ռուսաստանի նեղուցներում հաղթել թուրքերին և «Ցարգրադը» իր բնական միջավայրով նվիրել դաշնակից Ռուսաստանին: «Անգլո-ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի Ալեքսանդրիայում (Եգիպտոս) ... ընթանում էր բաց և դանդաղ, ինչը թույլ տվեց հակառակորդին կռահել գործողության մտահղացումը...»¹⁹²:

1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալվեց արևմտահայ էլիտան:

1915 թ. ապրիլի 25-ին դաշնակից զորամիավորումը սկսեց դարդանեղյան ավիանումը անգլիացի զեներալ Յա. Համիլտոնի և ֆրանսիացի զեներալ Ա. դ' Ամադոյի հրամանատարությամբ:

ЛЕВОН ШИРИНЯН (АРМЕНИЯ)

ДАРДАНЕЛЬСКИЙ КАРТ-БЛАНШ ГЕНОЦИДА АРМЯН

Комплексное изучение основных причин Геноцида армян (арменоцид) остается актуальной проблемой, поскольку справедливое возмещение, то есть преодоление последствий геноцида предполагает полное раскрытие различных слоев генезиса Большой резни XX века, в числе которых выделяется геостратегический субслой арменоцида. В связи с этим необходимо внести некоторые коррективы, с целью достижения правильных выводов.

В этом смысле, необходимо отметить, что Сан-Стефанский договор носит только прелиминарный характер, который как таковой имеет нулевое значение.

¹⁹² «Большая российская энциклопедия», том 8, М., 2008, с.332.

Армянский вопрос запутался в различных комбинациях: 1) макиавелских интриг турецкой власти, 2) противоречий Западного вопроса, 3) уравниваний европейских сил.

LEVON SHIRINYAN (ARMENIA)

DARDANELLES CARTE BLANCHE OF ARMENIAN GENOCIDE

The complex study of the main reasons of Armenian Genocide (Armenocide) remains an actual issue because a fair compensation, that is overcoming of consequences of genocide assumes a full disclosure of various layers of Big massacre genesis of XX century among which the geostrategic sublayer of Armenocide is allocated. In this regard it is necessary to introduce some corrections for achievement of correct conclusions.

In this sense, it should be noted that the Treaty of San Stefano has only preliminary character which has zero value.

The Armenian question got confused in various combinations of: 1) machiavellian intrigues of Turkish authorities, 2) contradictions of the Western question, 3) equilibrations of European forces.

ԷՄԻԼ ՕԴՂՈՒԽԱՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՕՍՄԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան կայսրության շրջանում թուրքերի վարած քաղաքականությունը մեծապես դրսևորվեց իր հակաքաղաքակրթական և հակամշակութային երանգներով: Դա մի շրջան էր, որը, միանշանակ, կարելի է որակել որպես հումանիզմի, քաղաքակրթության և մարդկային համընդհանուր արժեքների դեմ իրականացվող ցեղապաշտական քաղաքականություն, որից

տուժեցին ոչ միայն առանձին ազգեր և մեծապես՝ հայերը, այլև առաջադեմ քաղաքակրթությունը և մշակույթը:

Ըստ էության, Համիդի օրոք օսմանյան Թուրքիայում իրավակարգը հիմնվում էր կրոնական՝ իսլամական սուրբ օրենքի վրա, որի դեպքում կրոնական, հասարակական և քաղաքական ոլորտների միջև սահմանները վերանում էին, քանի որ իսլամը դարձել էր նաև կենսակերպ: Իսկ թուրքերը, կրոնական հիմքերից ելնելով, իրենց մյուս ազգերից բարձր էին դասում և իրենց համարում էին առանձնահատուկ: Դա բնականաբար ենթադրում էր, որ մյուս ազգերը հպատակ էին և չէին կարող թուրքերի հետ միասին ունենալ միևնույն հասարակական կարգավիճակը: Սակայն նույնիսկ Համիդից հետո իշխանության եկած երիտթուրքերը, որոնք աստվածապաշտ չէին, ևս հաստատեցին իրենց տիրապետող և գերակա ազգ լինելու *ցեղապաշտական սկզբունքը*:

Ցեղապաշտ և իսլամադավան օսմանցիների համար քաղաքակրթության քրիստոնեական մոդելը չէր կարող իրականում լինել ընդունելի, եթե չասենք մերժելի, ինչի մասին փաստում է նրանց իրական քաղաքականությունը՝ ուղղված քրիստոնյա քաղաքակրթության և հատկապես հայերի դեմ: Ուստի ինչպես ցույց տվեցին պատմական զարգացումները, օսմանցիները բացի սեփական ազգայնամոլական պատկերացումներից թշնամական տրամադրվածություն ունեին բոլոր քաղաքակրթությունների հանդեպ, ինչը դրսևորում էին ցանկացած հարմար առիթով:

Իսկ երիտթուրքերի և Աթաթուրքի օրոք Թուրքիայի որդեգրած աշխարհիկացումը Արևմուտքին հաճոյանալու, ազգային-ցեղապաշտական նկրտումները և ցեղասպան վարքագիծը բողարկելու քաղաքականություն էր, քանի որ, ըստ էության, Արդուլ Համիդից հետո Թուրքիայի ցեղասպան գործունեությանը վերջ չդրվեց. այն շարունակվեց ցանկացած հարմար առիթի դեպքում, իսկ այդ քաղաքականության կամ թուրքական հակամշակույթի սկզբունքները շատ հնարավոր է, որ այսօր էլ չեն վերացել և կարող են դրսևորվել աշխարհաքաղաքական քառսի կամ վերադասավորումների դեպքում: Վերջին շրջանում սիրիական պատերազմի, մասնավորապես՝ Քեսաբի դեպքերը կարելի է համարել որպես ասվածի վկայություն:

Օսմանցիների ցեղասպան գործունեությունը նաև նրանց հին ավանդույթներից է բխում, քանի որ թուրքերի մոտ ազգայնամոլական և ցեղապաշտական, այլ ազգերի նկատմամբ գերակայության կարծրատիպերը ձևավորվել են վաղուց և դարձել են թուրքերին բնորոշող արքետիպերից մեկը: Ամենին պատահական չէ «գորշ գայլ» խորհրդանիշը որպես թուրք ժողովրդի ծագման արքետիպ:

Թուրքը հնարավորության դեպքում մշտապես պայքարել է այլ քաղաքակրթական և մշակութային արժեքներ կրող ազգերի դեմ դրանք սեփականելու և իր «կենսատարածքը» ընդլայնելու նպատակով, ինչպես վայրի բնության մեջ վարվում են գայլերը: Եվ կարծես թե այսօր էլ այդ վարքագիծը չի փոխվել՝ բացառությամբ պայքարի մեթոդների և մեխանիզմների: Ասվածի վկայությունն է նաև աշխարհիկ Թուրքիայի կողմից բռնազավթված Կիպրոսի հյուսիսային հատվածը ավտոխտոն հույների զանգվային բնաջնջման միջոցով:

Օսմանական հակամշակութային սովորույթների արմատավորվածությունը, միանշանակ, նաև թուրքական քաղաքական կարգի անբաժան մասն է կազմում, իսկ տարբեր պատմական փուլերում առաջարկված բարեփոխումները չէին կարող դառնալ իրականություն, քանի որ ինչպես հիմնավորում է քաղաքական գիտությունը՝ այն հասարակություններում, որտեղ նոր ընդունվող նորմերը չեն համապատասխանում գործող վարքագծին՝ ավանդույթին, չեն կարող ունենալ գործնական կիրառություն:¹⁹³

Դադրյանը իրավացիորեն նշում է, որ թուրքական մշակույթը սպանդի մշակույթն է, քանի որ ինչպես ցույց է տալիս պատմական փաստերի վերլուծությունը, թուրքը կոնֆլիկտները լուծելու միջոցով իր նպատակներին հասնելու համար մշտապես դիմել է սպանդի:¹⁹⁴ Իսկ պատմության ընթացքում շարունակաբար և հաստատականորեն միննույն վարքագծի դրսևորումը

¹⁹³ **Huntington S.** Political Order in Changing Societies, New Haven and London, Yale University Press, 1968, 263 p.

¹⁹⁴ **Дадрян В.** История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007, с. 154.

փաստում է տվյալ երևույթի մշակութային հիմքի մասին, այս դեպքում թուրքական վարքագիծը կարելի է անվանել ոչ թե մշակույթ, այլ *հակամշակույթ*, որը հակառակ է քաղաքակիրթ աշխարհի կողմից ընդունված մշակույթի ընկալմանը: Այլ մշակույթների և քաղաքակրթությունների նկատմամբ թուրքական հակամշակութային վարքագծի մասին է վկայում նաև բրիտանացի ազգագրագետ Ուիլիյամ Ռամսեյի այն միտքը, որի համաձայն՝ թուրքական կառավարությունը հայերին, նաև հույներին (քրիստոնեական քաղաքակրթության կրողներին) համարում էր շներ կամ խոզեր, որոնց վրա թուրքը պետք է մաքրեր իր ոտքերի կեղտը: Դարեր շարունակ այն ինչ պատկանել է հայերին՝ սեփականություն, տուն, ինքնություն, ընտանիք և այլ, չեն եղել երաշխավորված բռնությունից:¹⁹⁵ Ուստի կարելի է միանշանակ պնդել, որ օսմանական կայսրության կողմից տարբեր շրջաններում հայերի դեմ իրականացված ցեղասպան քաղաքականությունը ոչ թե պայմանավորված էր քաղաքական վարչակարգով, այլ ազգայնամուլական գաղափարախոսությամբ և ավանդական հակամշակութային վարքագիծ-արքեստիպով:

Կոնֆլիկտային իրավիճակներում դաժանագույն բռնությունների դիմելու թուրքական ավանդական հակվածությունը համահունչ է նաև թուրքական ռազմական ավանդույթներին, որոնք թուրքական մշակույթի հիմնական տարրն են:¹⁹⁶ Այսինքն թուրքի մշակույթը, ըստ էության, ոչնչացնելու մշակույթ է:

Այն հանգամանքը, որ երկու տարբեր օսմանական և աշխարհիկ ռեժիմներ՝ Արդուլ Համիդի, երիտթուրքերի և Քեմալի օրոք իրականացրեցին միևնույն ցեղասպան քաղաքականությունը բարեփոխումներ պահանջող հայերի նկատմամբ խոսում է այն մասին, որ դա անփոփոխ թուրքական քաղաքական մոդելն էր:¹⁹⁷

Արդյո՞ք այսօր այդ քաղաքական մոդելը փոխվել է:

¹⁹⁵ **William R.** Impressions of Turkey During Twelve Years Wanderings, New York, 1897, pp. 206-207.

¹⁹⁶ **Дадрян В.** ..., с. 490.

¹⁹⁷ **Дадрян В.** ..., с. 489.

ЭМИЛЬ ОРДУХАНЯН (АРМЕНИЯ)

ОСМАНСКАЯ АНТИКУЛЬТУРА И ГЕНОЦИД АРМЯН

В годы существования Османской империи турецкая политика в значительной степени выделялась своей анти-цивилизационной и анти-культурной окраской. Это был период, который, однозначно, можно охарактеризовать как расистскую политику против гуманизма, цивилизации и всеобщих человеческих ценностей, от которой пострадали не только отдельные нации и в значительной степени армяне, но и развитая христианская цивилизация и культура.

Турки, при возможности, всегда боролись против наций, имеющих другие цивилизационные и культурные ценности, с целью присвоить их и расширить свое "жизненное пространство", как это делают дикие волки (*серый волк как архетип турок*). И кажется, что даже сегодня это поведение не изменилось, за исключением методов и механизмов борьбы. Доказательством этому - оккупированная северная часть Кипра со стороны светской Турции путем массового уничтожения коренных греков.

Тот факт, что при двух различных османских режимах (при Абдул-Гамиде и в период правления младотурок) и даже позже при Кемале осуществлялась одна и та же политика против армян, требующих реформ, свидетельствует о том, что все-таки в корнях это была неизменная турецкая политическая модель. Изменилась ли сегодня такая политическая модель?

EMIL ORDUKHANYAN (ARMENIA)

THE OTTOMAN ANTICULTURE AND ARMENIAN GENOCIDE

In the years of existence of the Ottoman Empire the Turkish policy was substantially allocated with the anti-civilization and anti-cultural coloring. It was the period which, unambiguously, can be characterized as racist policy against humanism, civilization and universal human values

from which suffered not only different nations and substantially Armenians, but also the advanced Christian civilization and culture.

Turks, at opportunity, always fought against the nations having other civilization and cultural values with the purpose to appropriate them and to expand their own "vital space" as it is done by wild wolves (*a gray wolf as an archetype of Turks*). Also it seems that even today this behavior didn't change, except for methods and mechanisms of fight. The proof to it is the occupied northern part of Cyprus by the secular Turkey which made a mass destruction of autochthon Greeks.

That fact that during two various Ottoman regimes (in the period of Abdul-Hamid and young Turks governance) and even later, in the period of Kemal governance a same policy against Armenians demanding reforms was carried out, testifies that after all this policy in roots was the invariable Turkish political model. Whether such political model changed today?

ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**«ՄԻՋԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՒՐԲԻԱՅԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ավարառության, ուրիշների հայրենիքների կողոպուտի և բռնազավթման բնագործ թուրքական ինքնության մի մասն է: Այսինքն՝ տարածքներ բռնազավթելու մոլուցքն ի սկզբանե եղել է ենթագիտակցության, արքետիպի մակարդակում: Սակայն եկավ ժամանակ, երբ անհրաժեշտություն առաջացավ թուրքական պետության տարածքների, սահմանների ճշգրտման հարցում դիմելու առավելապես մշակված ստրատեգիական հայեցակարգերին, քանի որ ավարառուի հակաքաղաքակրթական արքետիպային բնագործ այլևս չէր բավարարում ժամանակաշրջանի երկրաքաղաքական (գեոքաղաքական) իրադրությունների պայմաններում իրավիճակի ճիշտ գնահատմանը: Եվ հենց այստեղ է, որ թուրք ռազմաքաղաքական վերնախավը փորձում է գտնել կայ-

սերապաշտական մոտիվներով թուրքական պետության սահմանների ճշգրտման մեխանիզմներ:

Այս համատեքստում՝ անհրաժեշտ է պարզել, թե ինչ ռազմավարական հայեցակարգեր են ազդեցություն թողել թուրք ռազմաքաղաքական վերնախավի վրա: Մեր կարծիքով՝ նրանց վրա առավել մեծ ազդեցություն է ունեցել գերմանական գեոստրատեգիական միտքը:

Այս առումով բացառիկ նշանակություն ունի «Միջին Եվրոպայի» (Mitteleuropa) հայեցակարգի և նրա հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը թուրք ռազմաքաղաքական վերնախավի վրա: Ենթադրելի է, որ սա մեծ ազդեցություն է ունեցել նրանց մտածումների վրա և կարող էր ծառայել հայոց ցեղասպանության իրականացման համար որպես տեսական հիմք:

Ըստ էության՝ Mitteleuropa - ի հայեցակարգը տարածքների գավթման միջոցով ծավալման, կայսրություն ստեղծելու հայեցակարգ է: Միջին Եվրոպան պետք է ստեղծվի Գերմանիային Ավստրո-Հունգարիայի միավորման միջոցով:

Հարկ է նշել, որ ոչ միայն պետության, այլև ցանկացած միջպետական կազմավորման համար սկզբունքային և կարևորագույն հարցը սեփական տարածքների սահմանները որոշելն է¹⁹⁸: «Mitteleuropa»-ն երկրաքաղաքական հայեցակարգ է, որն արտահայտում է Գերմանիայի ձգտումը ճշգրտելու սեփական աշխարհագրական տարածքները՝ մյուս պետությունների հաշվին սեփական կենսատարածքը ընդլայնելու միջոցով:

Mitteleuropa-ն աշխարհագրական այն տարածությունն է, որը գերազանցելու է Գերմանիայի սահմանները և որտեղ գերմանացիները պետք է ունենան ռազմավարական գերիշխանություն¹⁹⁹: Ստյուարտ Էլդենը նշում է, որ այս գաղափարն իր փաստարկներով նման է «տարածք առանց ժողովրդի» մոտեցմանը,

¹⁹⁸ Яковлюк И. Идея срединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX–начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

¹⁹⁹ Elden St. Reading Schmitt geopolitically. *nomos, territory and Großraum*. Radical Philosophy, No 161, May/June 2010, p. 18-26.

որը պետք է լցվեր այնպիսի ժողովրդով, որը կամ չունի տարածք կամ ում տարածքը բավարար չէ²⁰⁰:

Միջին Եվրոպայի հայեցակարգը պետք է դիտարկել որպես Գերմանիայի համար կենսատարածքի ապահովման և գերտերության ստատուսի (կերպարի) պահպանման ուղիներից մեկը:

Այս հայեցակարգի ուսումնասիրությունը կարևոր է նաև այն պատճառով, որ, մեր կարծիքով, այդ գաղափարները կարող են նաև փոխանցված լինել այսօրվա թուրք ռազմաքաղաքական վերնախավին:

ԱՅԿ ՏՄԿԻԱՏՅԱՆ (ԱՐՄԵՆԻԱ)

КОНЦЕПЦИЯ “СРЕДИННОЙ ЕВРОПЫ” И АРМЯНСКАЯ ПОЛИТИКА ТУРЦИИ

Инстинкт хищения, грабежа и оккупации родины чужих народов является частью турецкой идентичности. Другими словами, одержимость стремлением узурпировать территории у турок была на подсознательном, архетипическом уровне. Тем не менее, пришло время, когда контрцивилизационный инстинкт хищника уже не отвечал геополитическим реалиям времени, и возникла необходимость по применению тщательно разработанных концепций для регулирования границ тюркского государства и для правильной оценки геополитических реалий. И вот тут-то тюркская политическая элита пытается найти механизмы регулирования границ тюркского государства по империалистическим мотивам. Здесь на помощь Турции пришла турецкая молодежь, которая была послана в Европу для получения образования. В этом контексте необходимо выяснить, какие именно стратегические концепции повлияли на турецкую военно-политическую элиту. На наш взгляд, на эту элиту имело большее влияние германское геостратегическое мышление, а именно концепция “Срединной Европы”.

²⁰⁰ Նույն տեղում:

THE CONCEPT OF "MIDDLE EUROPE" AND ARMENIAN POLICY OF TURKEY

The plunder instinct, robbery and occupation of others homeland is the part of Turkish identity. In other words, the obsession to usurp territories was on the subconscious, archetypical level of Turks. Nevertheless, a time has come when the countercivilization instinct of a predator didn't correspond to geopolitical realities of time, and there was a need to apply carefully developed concepts to adjust the borders of the Turkic state for correct evaluation of geopolitical realities. And here, the Turkic political elite tried to find mechanisms of its own state borders adjustment by imperialistic motives. Here, Turkish youth came to the rescue of Turkey which was sent to Europe for education. In this context it is necessary to find out, what strategic concepts affected the Turkish military-political elite. In our opinion, the German geostrategic thinking had a greater influence on Turkish elite, more specifically the concept of "Middle Europe".

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

НАТАЛЬЯ АБЛАЖЕЙ (РОССИЯ)

ТЕМА ОСМАНСКОЙ И СОВЕТСКОЙ ДЕПОРТАЦИЙ И ВОЗВРАЩЕНИЯ НА РОДИНУ В КОЛЛЕКТИВНОЙ ПАМЯТИ АРМЯН-РЕПАТРИАНТОВ

Доклад построен вокруг темы принудительных переселений (1915 г. и 1949 г.) и возвращения на родину из эмиграции/изгнания/ссылки (в 1946-1948 гг. и 1955-1956 гг.) в коллективной памяти послевоенных армян-репатриантов и их потомков.

Данный сюжет напрямую выходит на историю Геноцида армян в Османской империи; тему принудительных переселений депортационного типа и их последствий. На основе исторических источников (личные дела репатриантов и ссыльных; официальные письма, обращенные к власти) и биографических интервью в докладе анализируется тематика «несправедливости репрессий» и «возвращения на Родину». Для армян-репатриантов тема преодоления «исторической несправедливости» и «возвращения» стала консолидирующим лейтмотивом исторической памяти, стратегией поддержания этнической и групповой идентичности.

NATALYA ABLAZHEY (RUSSIA)

THE ISSUE OF OTTOMAN AND SOVIET DEPORTATIONS AND REPATRIATIONS IN THE COLLECTIVE MEMORY OF THE ARMENIAN REPATRIATES

The talk expands on the theme of the forced resettlements of 1915 and 1949 and repatriations (return from immigration/expatriation/exile) in 1946-1948 and 1955-1956 in the collective memory of both Armenian repatriates and their descendants. The issue is directly linked with the

history of the Armenian Genocide in the Ottoman Empire and the forced resettlements, particularly deportations and their aftermath. Based on historical sources (repatriates' personal files, official letters to the authorities) and biographical facts, the paper analyses the issues of the “injustice of repressions” and “repatriations.” For Armenian repatriates the issue of overcoming “historical injustice” has become a consolidating leitmotif for historical memory, a strategy for maintaining both ethnic and group identity.

ՆԱՏԱԼԻՍ ԱՐԼԱԺԵՅ (ՌՌԻՍԱՍՍԱՆ)

**ՕՍՄԱՆՅԱՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲՈՒՆԱՔՍՈՐՆԵՐԸ ԵՎ
ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒԹԵՄԱՆ ՀԱՅ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ
ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Զեկուցման մեջ քննարկվում են 1915 և 1949 թթ. բռնաքարտեռների, ինչպես նաև 1946-1948 և 1955-1956 թթ. տեղի ունեցած հայրենադարձության որոշ հարցեր, որոնք արմատացել են հետպատերազմյան շրջանի հայերենադարձ հայերի կոլեկտիվ հիշողության մեջ: Այս թեման ունի որոշ զուգահեռներ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության հետ: Պատմական աղբյուրների (հայրենադարձների և արքայազների անձնական գործեր, իշխանություններին ուղղված նամակներ), ինչպես նաև կենսագրական նյութերի հիման վրա, աշխատանքում վերլուծության է ենթարկվում «անարդար ռեպրեսիաների» և «հայրենադարձություն» թեմաները: Հայ հայրենադարձների համար «պատմական արդարություն» թեմայի հաղթահարումը դարձել է պատմական հիշողության համախմբող լեյտամոտիվը՝ էթնիկ և խմբային ինքնագիտակցության պահպանման միջոց:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼԱԽՈՂՈՒԹՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐՈՒՄ

ԽՍՀՄ քաղաքական բռնաճնշումների բարձրակետերից արյունոտ 1936-38 թթ. Հայաստանում սկսվեց 1936 թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում, իչպես հիմա արդեն պարզվել է՝ Լ. Բերիայի կողմից, Հայաստանի Կ(բ)Կ քարտուղար Ա. Խանջյանի սպանությամբ: Այդ սպանությունն անմիջապես պաշտոնապես ներկայացվեց որպես ինքնասպանություն, որն իբր նացիոնալիստական և հակահեղափոխական-տրոցկիստական տարրերի մերկացման գործում Ա. Խանջյանի թուլության և անկարողության հետևանք էր:

Խանջյանի սպանությունից տաս օր անց, «Заря Востока» թերթի հուլիսի 20-ին հրատարակված «Փոշիացնել սոցիալիզմի թշնամիներին» Բերիայի հոդվածով «ձևակերպվեց» Խանջյանի նացիոնալիզմը. «...1936 թ. նամակում նոր Սահմանադրության առիթով Չոպանյանը խորհուրդ է տվել Խանջյանին դնել սահմանների վերանայման և ընդարձակման հարցը: Նա գրում է, որ խոսքը ոչ միայն Թուրքիային տրված Անիի, Արարատի, Կարսի և Մուրմալուի մասին է, այլև Ախալաքալակի, Ղարաբաղի, Նախիջևանի, որոնք միշտ Հայաստանի մաս են եղել: Խանջյանը ոչ միայն այս կարգի նամակներ է ստացել, այլև հնարավոր է համարել դրանց պատասխանել և նույնիսկ հետևել այդ հակահեղափոխական խորհուրդներին... Խանջյանն ուղղակի հովանավորել է հայ մտավորականության, գրողների մի մասին կատաղի նացիոնալիստական տարրերին»: Բերիայի սույն հոդվածին հետևած հայաստանյան լրատվամիջոցների հոետորաբանությունը և 1936-38 թթ. քաղաքական դատավարությունների նյութերը վկայում են, որ այդ շրջանի քաղաքական գնահատականով «հայկական նացիոնալիզմը» Հայաստանի խորհրդայնացման շրջանում Թուրքիային և Ադրբեջանին անցած հայկական տարածքների վիճարկման հնարավորության հարցն էր, և Հայաստանում

հաստատված թուրքահայերի՝ հայրենիքը հիշելու, կարոտելու, հայրենիք վերադառնալու ցանկությունը կամ այդ ցանկության հնարավորությունը: Դրանք դիտարկվում էին որպես «հակախորհրդային», «հակահեղափոխական» երևույթներ, դրանց կողմնակիցները՝ «ժողովրդի թշամիներ»:

1936 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին «նացիոնալիստ» բառը զարդարում էր թերթերի առաջնորդողների վերնագրերը՝ առաջիկա երկու տարիներին դառնալով պարտադրված հասարակական քննարկումների (յուրաքանչյուր աշխատանքային կոլեկտիվ պարտավոր էր քննարկել և դատապարտել «նացիոնալիստ թափթփուկներին» և հավանություն տալ նրանց հետապնդումներին) և դատապարտող քաղաքական հոռետորաբանության հիմնական նյութը:²⁰¹ Բերիայի հողվածը դառնում է «նացիոնալիզմ» փնտրող գրողների և չեկիստների կողմնորոշիչը: «Հայկական նացիոնալիզմը» կորցրած հայրենիքի նկատմամբ կարոտն է, Խորհրդային Հայաստանի «լուսավոր ներկայով ու ապագայով» խանդավառ ուրախության փոխարեն՝ հայրենիք վերադառնալու թաքուն հույսերը կամ անցյալը լուսապսակով զարդարելու կասկածելի ձգտումը (ինչը մեկնաբանվում է որպես հոռետեսություն խորհրդային ապագայի նկատմամբ), թուրքերի կողմից հայերի ջարդելու հիշողությունները (ռասիզմ է և թշնամություն է սերմանում ժողովուրդների միջև, առաջարկվում էր հայկական ջարդերը դիտել դասակարգային պայքարի տեսանկյունից՝ որպես հարստահարված թուրք ժողովրդի բողոքի ձև): Չնայած հրապարակախոսական հոռետորաբանության մեղադրանքներում ամենից ավելի հնչում էր «տրոցկիստ-նացիոնալիստ» ձևակերպումը, թե՛ հրապարակախոսները, թե՛ քննչական մարմինները «տրոցկիզմ» չէին փնտրում, այլ հատուկ ման-

²⁰¹ «Խորհրդային գրականություն», 1936, թիվ 3-4; «Գրական սերունդ», 1936, թիվ 4, էջ 15-19: «Գրական սերունդ», 1936, թիվ 5-6, էջ 33-35: «Գրական թերթ», 1936, թիվ 19, 25 օգոստոսի: «Սովետական Հայաստան», 1936, 17 օգոստոսի: «Սովետական Հայաստան», 1936, 2 սեպտեմբերի: «Սովետական Հայաստան», 1936, 23 հուլիսի: «Սովետական Հայաստան», 1936, 4 սեպտեմբերի: «Սովետական Հայաստան», 1936, 29 սեպտեմբերի: «Սովետական Հայաստան», 1936, 6 հոկտեմբերի կլն:

րակրկիտությամբ շեշտը դրվում էր «նացիոնալիզմի» փնտր-տուքի վրա, հատկապես այն դեպքերում, երբ հետապնդման գո-հեքը թուրքահայեր էին: 1936-37 թթ. ձերբակալված համարյա բոլոր հայ գրողները «նացիոնալիստ» և միաժամանակ թուրքա-հայեր էին, կամ Հայաստանի՝ Թուրքիային անցած տարածքից (Չարենցն ու Վանանդեցին Կարսից էին, Թոթովենցը՝ Խարբեր-դից, Ալազանը, Եղիազար Գաբուզյանը, Մահարին, Վշտունին, Լեռ Կամսարը, Գրականության ինստիտուտի տնօրեն Հենրի Գաբրելյանը՝ Վանից, Զ. Եսայանը, Մ. Ջանանը, Է. Չոփուռյանը՝ Կոստանդնուպոլսից, Վաղարշակ Նորենցը՝ Սասունից), մեծ մա-սը՝ Ցեղասպանությունը վերապրած փախստականներ: Ձերբա-կալված գրողների բացարձակ մեծամասնությունը պատիժը ստացել է Մտալինի անձնական թույլտվությամբ և ստորագրու-թյամբ, այսպես կոչված «ստալինյան ցուցակներով»:²⁰²

Նյութերը վկայում են, որ Հայաստանում իրականացված քաղաքական բռնությունների բովանդակության, մասնավորա-պես «հայկական նացիոնալիզմի» ձևակերպման և այն ռեպրեսիվ նպատակով օգտագործելու խնդրում խոշոր ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի քսաներորդ դարի սկզբի մեծ ողբերգու-թյունը՝ Ցեղասպանությունը և դրան հաջորդած ռուս-թուրքական քաղաքական համաձայնությունները, մասնավորապես Մոսկ-վայի պայմանագրի 8-րդ հոդվածով ամրագրված կետերից մեկը (ամրագրվել է նաև Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածով), որի համաձայն *երկրները պարտավորվում են թույլ չտալ իրենց տա-րածքում, կամ դրա մի մասում մյուս երկրի նկատմամբ պայքա-րելու նպատակ ունեցող խմբերի ձևավորում կամ առկայություն:* Վերլուծությունը վկայում է, որ Խորհրդային Հայաստանում հաս-տատված թուրքահայերը և նրանց՝ Արևմտյան Հայաստանի հի-շողությունները կամ հայրենիք վերադառալու չմարող հույսերը դիտվում էին Թուրքիայի համար վտանգ ներկայացնող գործոն և ԽՍՀՄ քաղաքական բռնությունները օգտագործվեցին Հայաստա-նի բնակչության մեջ առհասարակ, թուրքահայերի մեջ՝ մասնա-

²⁰² Сталинские расстрельные списки, Республика Армения; <http://stalin.memo.ru/regions/regi3.htm>

վորապէս, Արևմտյան Հայաստանի մասին հիշողութիւնները ճնշելու նպատակով:

ГРАНУШ ХАРАТЯН (АРМЕНИЯ)

ПАМЯТЬ О ЗАПАДНОЙ АРМЕНИИ КАК ТРАКТОВКА АРМЯНСКОГО ПОЛИТИЧЕСКОГО ИНАКОМЫСЛИЯ В КОНТЕКСТЕ ПОЛИТИЧЕСКИХ РЕПРЕССИЙ СССР

Изучение материалов политических судов и риторики средств массовой информации 1936-38 гг. в Советской Армении свидетельствует, что в Армении наиболее осуждаемой формой политического инакомыслия тех лет был «армянский национализм». Согласно политической оценке того времени, под «армянским национализмом» подразумевалось обсуждение возможности пересмотра решения проблем, связанных с армянскими территориями, отошедшими к Турции и Азербайджану в процессе советизации Армении, что трактовалось как предъявление территориальных претензий. Воспоминания и тоска по утраченной родине, ностальгия и желание вернуться на родину обосновавшихся в Советской Армении армянбеженцев из Западной Армении и Турции также считались формой «армянского национализма». Подобные проявления взглядов и чувств трактовались как «антисоветское», «антиреволюционное» инакомыслие, а их носители осуждались судами нередко вплоть до расстрела. В докладе анализируются причины подобной политики и делается вывод, что это было обусловлено наличием одного из пунктов 8-ой статьи Московского договора от 16 марта 1921 г., по которому *стороны взаимно обязывались не допускать образования или пребывания на своей территории организаций или групп, имеющих враждебные цели по отношению к правительству другой договаривающейся стороны*. В СССР турецкие армяне рассматривались как возможные носители враждебных целей по отношению к Турции и во время политических репрессий составили отдельный сегмент преследуемых.

**THE MEMORY OF WESTERN ARMENIA AS AN
INTERPRETATION OF ARMENIAN POLITICAL
DISSENT IN THE CONTEXT OF POLITICAL
REPRESSIONS IN USSR**

The study of materials from political courts and media rhetoric of 1936-38 in Soviet Armenia reveals that the most denounced form of political dissent in Armenia at the time was “Armenian Nationalism.” According to the political estimate of the time “Armenian Nationalism” meant the discussion of the possibility of revisions of decisions related to Armenian territories that had gone to Turkey and Azerbaijan in the process of the establishment of Soviet rule in Armenia.

This was regarded as territorial claims. Memories and yearning for the lost homeland, nostalgia and the desire to return home among the Armenian refugees from Western Armenia and Turkey settled in Soviet Armenia were also considered as a form of “Armenian Nationalism.” Such manifestations of views and feelings were interpreted as “Anti-Soviet,” “Anti-Revolutionary” dissent and such people were condemned by courts, even executed. The report analyzes the reasons for such politics and concludes that this was conditioned by a clause in the 8th Article of the Moscow Treaty of March 16, 1921. According to that Clause, *the parties agreed to not allow formation or existence of organizations or groups on their respective territories that have hostile aims towards the government of the other signatory party.* Western Armenians were considered in USSR as potential carriers of hostility towards Turkey, and hence were a separate persecuted segment during political repressions.

**ՎԼԱՐԱ ԶԻԳՐԻՍ-ՇԻԼԹԻԻ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1915 թ. ապրիլի 26-ին Շվեյցարիայի Վերդենբերգ (Werdenberg) քաղաքում բուժքույր Կլարա Հիլթին (Clara Hilty, 1884-1988) ամուսնանում է Բեռլին-Բադդադ երկաթուղու շինարարության՝ Ադանա-Հալեպ հատվածի պատասխանատու ճարտարագետ Ֆրից Ջիգրիստի (Fritz Sigrist, 1881-1963) հետ: Հարսանիքի հաջորդ օրն իսկ նորապսակները գնացք են նստում և ուղևորվում հարավարևելյան Թուրքիա, որտեղ բնակություն են հաստատում պատմական Կիլիկիայում Քելլեր (այսօր Ֆևզիփաշա) կոչվող հանգուցային կայարանի մոտ: Նրանք այնտեղ երեք տարի շարունակ բնակվում են Ամանոսյան լեռների փեշերին գտնվող բարձրադիր մի տնակում:

Ջիգրիստների՝ Քելլերում հաստատվելուց կարճ ժամանակ անց սկսվում են հայերի տեղահանումները: Դեպի սիրիական անապատ տանող գլխավոր ճանապարհներից մեկն անցնում էր Քելլերով, և շվեյցարացի ամուսինները ամիսներով ակամա ականատեսն են դառնում իրենց տան մոտով անցնող տարագիր հայերի մահվան երթերի: Երեկոները նրանց աչքի առաջ Քելլերի հովտում ժամանակավոր ճամբարներ են կազմավորվում, որտեղ գիշերում են հյուժված հայ կանայք, երեխաներ ու տարիքով մարդիկ, հազվադեպ՝ տղամարդիկ, քանի որ նրանց արդեն ոչնչացրել էին: Մակայն Ջիգրիստների համար ամենամեծ մտահոգությունը Ֆրիցի մոտ՝ Բադդադի երկաթուղու շինարարության վրա աշխատող հայերի վտարումներն ու սպանություններն էր:

Այս բոլորի մասին տեղեկանում ենք Կլարա Ջիգրիստ-Հիլթիի օրագրություններից: Գոթերենով գրված 100 տարվա վաղեմություն ունեցող այդ հազվագյուտ ձեռագրերը տողերիս հեղինակը ձեռք է բերել շվեյցարական արխիվներից: Դրանք վերծանելուց հետո շվեյցարացի գույգի վկայությունների մասին գերմաներենով գիրք է պատրաստվում, որը 2016-ին կիրատարակվի Ավստրիայի հայտնի Kitab-Verlag հրատարակչության կողմից:

Պատրաստվում են նաև գերմաներեն գրքի հայերեն և անգլերեն տարբերակները:

Կլարա Զիգրիստ-Հիլթին իր օրագրությունների մեջ ակա-նատեսի իր վկայությունն է տալիս Ամանոսյան տարածքում հա-յոց ցեղասպանության ընթացքի մասին: Նա անպաճույճ լեզվով նկարագրում է.

1. Ամանոսյան լեռների խորշերով անցնող և դեպի անա-պատ քշվող հայ վտարանդիների մահվան երթերը.

2. Քելլերի, Կատմայի և Հալեպի ճամբարների ողբերգական վիճակը.

3. Բաղդադի երկաթգծի շինարարության վրա զբաղված հազարավոր հայ աշխատավորների շահագործումն ու հետևո-ղական ոչնչացումը:

Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագիրը միայն Հայոց ցեղասպա-նության մասին չէ: Հայերի գողգոթային նվիրված վավերագրում-ներն այդ օրագրում հանդես են գալիս նրա առօրեական մյուս իրադարձությունների՝ նոր երկրում իր տպավորությունների, զբաղմունքների ու ապրումների համատեքստում, որի շնորհիվ հայերին վերաբերող տեղեկություններն ամրագրվում են նրա կյանքի այդ հատվածի պատմության մեջ: Հետագայում նա որո-շում է հատուկ մի գրություն ամբողջովին նվիրել Հայոց ցեղա-սպանությանը՝ «Ամառ, 1915» խորագրով: Ահա այս երկու գրվածքները միասին են, որ հայ հետազոտողների համար ան-գնահատելի ավանդ և կարևոր սկզբնաղբյուր են Հայոց ցեղա-սպանության պատմության հարցում: Եվ անհա թե ինչու:

1. Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագրությունը դեպքերի, դեմ-քերի ու իրադարձությունների մասին ականատեսի կողմից օր-օրի վրա տրված և մեզ հասցված վավերագրություն է, որն ընդ-գրկում է Թուրքիայի հարավարևելքում իրագործվող Հայոց ցե-ղասպանության երեք տարիները (1915 թ. ապրիլ - 1918 թ. ապ-րիլ): Օրագրությունը կատարված է հնգամյա օգտագործման հա-մար նախատեսված օրացուցային կառուցվածքով տպագիր մի գրքույկի մեջ, որտեղ տարվա բոլոր օրերի համար տեղ է հատ-կացված, և որի մեջ նույնիսկ չլրացված հատվածներն իրենց ասե-լիքն ունեն:

2. Նյութի հավաստիության համար մեծ նշանակություն ունեն նաև օրագրության հեղինակի անձնական հատկանիշները: Կլարան ներկայանում է որպես խստաբարո, շրջահայաց ու լրջախոհ նկարագրի տեր 30-ամյա մի կին: Օրագրողը օտարերկրացի է, ծագումով ազնվական, մասնագիտությամբ բուժքույր, որը ոչ թե ի պաշտոնե, այլ պատահաբար և նույնիսկ իր համար անսպասելի կերպով է հայտնվել Թուրքիայում: Թեև լինելով բազմակողմանիորեն զարգացած մտավորական, նա նախապես ծանոթ չէր օսմանյան բազմազգ պետությանը, այսինքն՝ որևէ կանխակալ կարծիք չի ունեցել երկրում ազգային ու ցեղային այս կամ այն խմբերի կամ նրանց փոխհարաբերությունների մասին: Հեղինակը հանդես է գալիս որպես արդար դատավոր. նրա խոսքից հնչում է առողջ բանականության ձայնը:

3. Կլարա Զիգրիստ-Հիլթիի՝ օրացուցային կառուցվածք ունեցող օրագիրը ժամանակագրական ճշգրտությամբ փաստագրում է դեպքեր, դեմքեր ու իրադարձություններ, որոնց ճշմարտացիությունը հաստատվում է զգայական ընկալումներ արտահայտող «տեսնել», «լսել» և «նկատել» բայերի մշտական օգտագործմամբ: Նրա վկայությունները ոչ միայն համընկնում, այլև լրացնում են ցեղասպանական գրականության տվյալները: Օրագիրը, մասնավորաբար, լույս է սփռում Բաղդադի երկաթգծի շինարարության վրա աշխատող հայերի շահագործման և ոչնչացման պատմության վրա. մի բան, որ մինչև օրս բավարար չափով մշակված ու պարզաբանված չէ:

4. Դիտարկվող օրագրությունը կարևոր փաստաթուղթ է թուրքական բոլոր կառավարությունների պաշտոնական քաղաքականության դեմ, որոնք ջանում են ժխտել Հայոց ցեղասպանության փաստը: Կլարայի վկայությունները Ամանոսի տարածաշրջանի Բաղդադի երկաթուղում զբաղված հայ աշխատասեր և խաղաղ շինարարների նկատմամբ բռնությունների մասին ի չիք են դարձնում թուրքերի բոլոր «հիմնավորումները», ըստ որոնց՝ այդ բռնություններն իբր երկրի անվտանգության ապահովմանն ուղղված բնականոն միջոցառումներ էին պատերազմի ժամանակ և, մասնավորապես, պատասխանն էին ռուսների հետ համագործակցող հայ հեղափոխականների նախահարձակ գոր-

ծողությունների: Կլարա Զիգրիստ-Հիլթիի գրառումները ապացուցում են, որ Օսմանյան կայսրությունն իրականում օգտագործում էր Առաջին աշխարհամարտը, որպեսզի նրա ստվերում երկրում իրականացնի իր վերջնական՝ պանթոքրիզմի նպատակը: Ահա՛ Կլարայի դատողություններն այս մասին իր «Ամառ, 1915» գրվածքում. «Վաղուց ի վեր այս ազգը [հայերը - Դ. Ս.] հակակրեյի էր իսլամին: Իսկ այժմ սրանք նպաստավոր ժամանակներ են, քանի որ եվրոպական պետություններն զբաղված են իրենց սեփական ինդիքներով և կամ տվյալ պահիս չեն ցանկանում Թուրքիայի հետ իրենց հարաբերությունները փչացնել»:

ДОРА САКАЯН (КАНАДА)

РУКОПИСНЫЕ ОТЧЁТЫ КЛАРЫ ЗИГРИСТ-ХИЛТИ О ГЕНОЦИДЕ АРМЯН

В апреле 1915 г. в швейцарском городе Верденберг медсестра Клара Хилти (Clara Hilty, 1884-1988) обвенчалась с инженером-строителем Фрицем Зигристом (Fritz Sigrist, 1881-1963), который с 1910 года работал на строительстве багдадской железной дороги на участке Адана–Алеппо. Спустя день после свадьбы молодожены отправились в юго-восточную Турцию и устроились в деревне Келлер (Киликия), где был важный железнодорожный узел. Вскоре после их прибытия в Келлер началась депортация армян. Один из главных маршрутов, ведущих в сирийскую пустыню, проходил через Келлер, и супруги Зигрист стали невольными свидетелями Геноцида армян. Клара вела дневник, в который записывала всё увиденное и услышанное в течение трёх лет (1915–1918) в Османской империи. Впоследствии она изложила всё в специальном докладе «Лето 1915». Клара свидетельствует о маршах смерти, проходивших ежедневно мимо её дома; о нечеловеческих условиях в концлагерях Келлера, Катмы и Алеппо; об уничтожении тысяч армянских работников на строительстве багдадской железной дороги.

Рукописи Клары Зигрист-Хилти, написанные готическим шрифтом, автор получила из архивов Швейцарии и расшифровала их. В настоящее время автор пишет книгу на немецком языке, посвящённую этой швейцарской паре. Книга выйдет в 2016 г. в издательстве Kitab в Австрии. Готовятся также армянское и английское издания этой книги.

DORA SAKAYAN (CANADA)

CLARA SIGRIST-HILTY'S HANDWRITTEN REPORTS ON THE ARMENIAN GENOCIDE

Clara Hilty (1884-1988) was a Swiss nurse who in April 1915 married Fritz Sigrüst (1881-1963), an engineer on the construction of the Adana-Aleppo section of the Baghdad Railway since 1910. One day after their wedding in Werdenberg, Switzerland, the newlywed couple set off for South-Eastern Turkey and settled down near Keller, an important railway junction in the historical Cilicia. Soon after the couple's arrival, the Armenian deportations started. One of the main deportation routes leading to the Syrian deserts passed through Keller, and the Sigrüsts became the unwitting witnesses of Turkish atrocities. Clara recorded her painful experience in her journal (1915-1918) and in a special report "Sommer 1915". She provides an extensive eye-witness account on the death marches as they streamed by her house for months on end; on the inhuman conditions of the concentration camps in Keller, Katma, and Aleppo; on the annihilation of thousands of Armenian workers at the Baghdad railway construction.

The paper is based on Clara Sigrüst-Hilty's 100-year-old reports written in Gothic script. These rare documents have been obtained by Sakayan from Swiss archives and deciphered, analyzed and prepared for publication. A German book is planned to be published in 2016 at the Kitab Press in Austria. An Armenian and an English edition are also under way.

**ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽՐՆԿԱԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Վերջին ժամանակներս և հատկապես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ առավել կարևորվում է հայ-թուրքական հասարակական փոխադարձ ընկալումների, ժամանակակից հայերի և թուրքերի միջև հարաբերությունների ուսումնասիրություններն ու քննարկումները տարբեր գիտական և քաղաքական հարթակներում: Այս հարցի պատասխանը ստանալու համար անհրաժեշտ էր սոցիոլոգիական ուսումնասիրությունն անցկացնել Հայաստանում և Թուրքիայում: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում դա բավականին բարդ խնդիր է: Առաջին անգամ պատմության մեջ հայ և թուրք սոցիոլոգները նախաձեռնեցին նման ուսումնասիրության իրականացումը:

Հայաստանից քննարկումներին մասնակցում էին Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի մասնագետները, իսկ Թուրքիայի կողմից՝ Հետազոտական ու խորհրդատվական կենտրոնի (SAM) ղեկավար՝ դոկտոր Ֆերհատ Քենտելը և նրա աշխատակիցները: Թուրք և հայ հետազոտողների նախաձեռնությամբ հաջողվեց 2003-2005 թթ. իրականացնել այս հետախուզական նախագիծը:²⁰³

Թուրքիայում «ցեղասպանություն» բառը արտասանել նույնիսկ չէր կարելի, ցեղասպանության թեման փակ էր համարվում: Շատ ավելի ուշ թուրքական հասարակությունում և հատկապես մտավորականների շրջանում սկսեցին խոսել հայերի ցեղասպանության մասին: 2007 թ. Հրանտ Դինքի սպանությունից հետո թուրք հասարակության քաղաքական գիտակցության մեջ տեղի ունեցան լուրջ փոփոխություններ:

Հետազոտության արդյունքում Թուրքիայում ստացված հարցման պատասխանների վերլուծությունը վկայում է այն մա-

²⁰³ Ferhat Kentel, Gevorg Poghosyan. Armenian-Turkish Citizen's Mutual Perception and Dialogue, Yerevan, 2006, 65 p.

սին, որ թուրք հասարակությունը բավարար տեղեկացված չէ Հայաստանի մասին ու գիտելիքների շատ ցածր մակարդակ ունի: Ստացվում է, որ Թուրքիայի հարևան երկիրը՝ Հայաստանը, իրենց համար գրեթե անհայտ մի երկիր է: Օրինակ, հետազոտությունը պարզեց, որ թուրք հարցվածների մեջ քիչ չեն մարդիկ, ովքեր կարծում են, որ հայերը հուդայական են և Հայաստանում այսօր էլ՝ Խորհրդային Միության փլուզումից տասնյակ տարիներ անց, շարունակում է իշխել կոմունիստական կուսակցությունը: Ավելին, թուրք հարցվածների մի մասը հստակ պատկերացում չունի հարևան երկրի՝ Հայաստանի աշխարհագրական սահմանների մասին. նրանք իրենց պատասխաններում նշել են, որ Հայաստանը գտնվում է Մև, Կասպից ու Միջերկրական ծովերի փերին, իսկ երկրի բնակչությունը մոտավորապես կազմում է 8 միլիոն: Թուրք հասարակությունը սեփական պատմության մասին՝ հատկապես Առաջին աշխարհամարտի ու 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության մասին ունի շատ մոտավոր, թերի և հաճախ խեղաթյուրված տեղեկություններ: Թուրքիայի իշխանությունները, փաստորեն, անտեղյակության մեջ են պահել սեփական ժողովրդին:

Ինչ վերաբերում է հայ հարցվածներին, ապա նրանք ունեն շատ ավելի հստակ ու ճշգրիտ պատկերացումներ թե՛ Թուրքիայի և թե՛ թուրք ժողովրդի մասին: Հայերի ճշգրիտ գիտելիքները, այնուամենայնիվ, կրում են որոշակիորեն բացասական երանգավորում, սակայն դա, ըստ երևույթին, գալիս է նրանց պատմական փորձից ու ցեղասպանության հետևանքներից:

Ընդհանուր առմամբ, հայերի կողմից թուրքերին տրված գնահատականները կարելի է համարել «բացասական»: Իսկ թուրքերի կողմից հայերին տրված գնահատականները ավելի մոտ են «չեզոքին»: Թուրքերին տրված բնութագրերի 2/3 բացասական է, իսկ հայերին տրված բնութագրերի միայն 1/3 է բացասական: Թուրքերի դիրքորոշումները հայերի նկատմամբ առանձնանում են ավելի դրական ու չեզոք վերաբերմունքով: Բարձր կրթական մակարդակ ունեցող հատվածների վերաբերմունքը հայերի նկատմամբ ավելի դրական է: Թուրքերը պնդում են, որ հայերն ունեն ոչ բացասական վերաբերմունք իրենց նկատմամբ:

Մինչդեռ հայերը չեն կասկածում, որ թուրքերը հայերի նկատմամբ ունեն միանշանակ բացասական դիրքորոշում: Ստացվում է, որ թուրքերը չգիտեն հայերի բացասական վերաբերմունքի, իսկ հայերը չգիտեն թուրքերի համեմատաբար դրական վերաբերմունքի մասին: Այսպիսով՝ հայերի և թուրքերի դիրքորոշումների մեջ գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն: Դիրքորոշումների վրա մեծ ազդեցություն է գործում անձնական ծանոթության ու կապերի փորձը: Այն հայերը, ովքեր ունեն կամ ունեցել են ծանոթներ Թուրքիայում, ցուցաբերել են ավելի չեզոք դիրքորոշումներ: Իսկ այն թուրքերը, ովքեր ունեն հայ ծանոթներ, ընկերներ ցուցաբերել են ավելի դրական դիրքորոշումներ:

Երկու երկրների հասարակություններում էլ գոյություն ունեն որոշակի նախապաշարումներ, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրության և հաղորդակցման միտումներ: Այսպես օրինակ, թուրքերի համար «բուժվել հայ բժշկի մոտ» առաջարկությունը, որը վկայում է վստահության մակարդակի մասին, առանձնապես ոչ մի մտավախություններ չի առաջացնում: Նույնը, իհարկե, չի կարելի ասել հայերի մասին: Մյուս կողմից, հայ հարցվածները պատրաստ են գնել թուրքական ապրանքներ և մեկնել հանգստանալու Թուրքիայի ծովափնյա վայրեր: Հայերը նաև կողմ են արտահայտվել Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն:

Անկասկած, ամենակնճռոտը դա Հայոց ցեղասպանության հարցն էր: Հատկանշական է, որ Թուրքիայում հարցվածների 19%-ը այս խնդիրը շատ լավ գիտակցում է: Եթե Թուրքիայի իշխանությունները համարձակություն գտնեն դատապարտել կատարված ոճրագործությունը, դա, իհարկե, կլինի առաջին քայլը երկու երկրների ու ժողովուրդների միջև հարաբերությունների հաստատման ու զարգացման համար: Այս առումով թուրք հասարակությունը նույնիսկ ավելի լայնախոհ է ու առաջադիմական, քան քաղաքական իշխանությունները:

Տարիներ են անցել այս հետազոտության անցկացման ժամանակից, շատ բան է փոխվել հայ-թուրքական հարաբերություններում: Թուրք հասարակությունը վերջին 6-7 տարիների ընթացքում լուրջ փոփոխություններ կրեց: Հրանտ Դինքի սպանությունից

հետո թուրք հասարակությունը կարծես արթնացավ և, կարելի է ասել, առաջին անգամ պատմության մեջ թուրք ժողովուրդը իր ձայնը բարձրացրեց իշխանությունների դեմ: Այն, ինչի մասին նշում էին մեր հետազոտության ընթացքում թուրք մտավորականների փոքրաթիվ խմբի մասնակիցները, այսօր արդեն բարձրաձայնում են հարյուր հազարավոր ցուցարարներ Ստամբուլի հրապարակներում: Մասնավորապես, վերջերս Թուրքիայում իրականացրած սոցիոլոգիական հարցումներից մեկի արդյունքում պարզվել էր, որ ուսանողության 33%-ը տեղյակ է և ճանաչում է Հայոց ցեղասպանությունը²⁰⁴: Թուրքիայի երիտասարդ սերունդը դուրս է գալիս սահմանափակ քաղաքական «կլիշեներից», պաշտոնական քարոզչությունից, որ տասնամյակներ շարունակ պահում էին թուրք հասարակությանը չիմացության մեջ՝ սեփական պատմության նկատմամբ:

тает “механизм” преемственности культуры. История армянского народа отражена в созданной за тысячелетия его существования на определенной территории богатой материальной и духовной культуре. Приобретшая специфический культурно-исторический облик благодаря творческому потенциалу армянского народа, эта территория представляет собой среду обитания, в которой оказалось возможным формирование именно армянской национальной культуры.

Уничтожение турками (1915-1925 гг.) богатого цивилизационного наследия армянского народа преследовало цель стирания “следов” армянства на его исторической родине (“Родине” армянской национальной культуры).

RIMMA MIRUMYAN (ARMENIA)

THE ARMENIAN GENOCIDE AND THE DESTRUCTION OF “HOMELAND” OF ARMENIAN CULTURE

Armenian people carried the national cultural identity through all the difficulties of its historical fate. The “mechanism” of continuity of culture is quite clearly running in the Armenian national culture. The history of the Armenian people is reflected in the created in a particular area over the millennia of its existence rich material and spiritual culture. This area which acquired a particular cultural and historical appearance due to the creativity of the Armenian people is the habitat where was possible the formation of the Armenian national culture.

The destruction by Turks (1915-1925) of the rich civilizational heritage of the Armenian people was aimed at erasing “footprints” of the Armenians in its historic homeland (“Homeland” of the Armenian national culture).

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ
ԱՎԵՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐՍՏԵՂԾՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՋՈՒՂԱՅԻ ՆՈՐ ԽԱԶՔԱՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Նյութական մշակույթը գորավոր և ակնառու կապ է, որը միակցում է թե՛ անհատական, թե՛ կոլեկտիվ հիշողությունները: Այն հավասարապես կարևոր է մշակութային ցեղասպանության ենթատեքստում, ինչպես նաև ապահովում է օրինականության շոշափելի և խոսուն հիմք, որը կարող է օգտագործվել ապացուցելու տարածաշրջանի և հատկապես էթնիկ իսկության վերաբերյալ պատմական պնդումները²¹⁷: Այն, ինչ քիչ թե շատ անվնաս հայտարարություն է մի քաղաքական ենթատեքստում, կարող է լուրջ քաղաքական նշանակություն ձեռք բերել մեկ այլ ենթատեքստում կամ, երբ ենթատեքստը փոխվում է: Օրինակ «Նախիջևանի Ինքնավար Հանրապետության զարգացումը» հայտնի գիրքը (Գուլիև, 1984), խոսելով այդ տարածաշրջանի պատմության մասին սկսած նախապատմական ժամանակներից մինչև մեր օրերը, երբեք չի նշում հայերին՝ չնայելով այն հարյուրավոր մշակութային հուշարձաններին, որոնք լուր վկայում են իրենց իսկ հազարամյա ներկայության մասին այդ վայրերում (Նախիջևանում հայկական հուշարձանների վերաբերյալ գրառումների մասին տե՛ս Այվազյան 1990)²¹⁸: Այն դեպքում, երբ պաշտոնապես հուշարձանը խորհրդանշական կերպով ներկայացնում է հաղթողների պատմությունը, մինևույն ժամանակ այն այլաբանորեն աշխատում է որպես «հակապատմություն»՝ այսպիսով իշխանության հայտ ներկայացնելով²¹⁹: Օրինակ օկուպացված շրջաններ

²¹⁷ **Condappa P.**, Cultural Genocide in Bosnia-Herzegovina: Destroying Heritage, Destroying Identity, <http://traumwerk.stanford.edu:3455/culturesofcontact/admin/download.html?attachid=2628>, 23.05.13.

²¹⁸ **Philip L. Kohl**, Clare Fawcett, Nationalism, politics, and the practice of archaeology, Cambridge University Press, 1995, pp. 153-155.

²¹⁹ **Gispert J.**, The eagle of history, Notes on cultural memories of Armenians, http://www.derhuman.jus.gov.ar/conti/2010/10/mesa-20/gispert_mesa_20.pdf, 23.05.13.

րում մշակութային հուշարձանները իրենց ներկայությամբ վկայում են այդ վայրերում այլոց անցյալի մասին:

Առանձնացվում են այլոց ժառանգությունը ոչնչացնելու մի քանի պատճառներ. «ոչնչացնել այն, ինչ ամենահարազատն է, սրբել այլոց ցանկացած պատմական հետք, ջնջել ցավոտ կամ վիճահարույց անցյալի հիշեցումները, վերացնել որպես ճնշում ընկալվող խորհրդանիշները»²²⁰:

Ադրբեջանի կողմից Արցախի և Նախիջևանի հայկական մշակութային հուշարձանների բռնաչափացումը, ըստ Հ. Պետրոսյանի, իրականացվել է երկու հիմնական մեխանիզմներով. Քանի որ հայ-քրիստոնեական և թաթար-մուսուլմանական մշակույթների միջև հակասությունը առավել քան ակնհայտ է, ապա, որպես բռնաչափացման մեխանիզմ հանդիսացել է այդ մշակույթների «ընդհանուր ակունքների», «հարազատության», «նույնականության» վերհանումը: Հաջորդ մեխանիզմը միջանկյալ օղակի՝ «միջնորդավորված ուղու» ստեղծումն էր, որը նպատակ ուներ Արցախի (ինչպես նաև Նախիջևանի) մշակութային ժառանգությունը վերագրել աղվաններին, և նրանց միջոցով նաև ադրբեջանցիներին²²¹: Օրինակ՝ 1985 թ. Բաքվում կայացած համատվետական հնագիտական կոնգրեսի ժամանակ ազերի հնագետ Դ. Ախունդովը ներկայացնում է մի գեկույց, որում Ադրբեջանական ՄՍՀ տարածքի բոլոր խաչքարերը որակվում են որպես աղվանական²²²: Սակայն Արցախի ազգային-ազատագրական պայքարից հետո այս լծակները լիովին սպառեցին իրենց, ինչը նշանավորվեց հետխորհրդային Ադրբեջանի տարածքում հայկական մշակութային ժառանգության հանդեպ ընդգծված թշնամանքի դրսևորմամբ²²³: Մրա բարձրակետը եղավ Նախիջևանի շրջանի Ջուղա քաղաքի գերեզմանադաշտի հիմնահատակ ավե-

²²⁰ **Packard N.**, *Sociology of Memory: Papers from the Spectrum*, Cambridge Scholars Publishing, 12 Back Chapman Street, Newcastle upon Tyne, NE6 2XX, UK, 2009, p 16.

²²¹ **Պետրոսյան Հ.**, Մշակութային էթնոցիդն Արցախում (Մշակութային ժառանգության բռնաչափացման մեխանիզմը), Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Կաճառ 4 (47-58) 2010, էջ 137-148:

²²² **Philip L. Kohl**, Clare Fawcett, նշվ. աշխ., p. 154.

²²³ **Պետրոսյան Հ.**, նույն տեղում:

րումը: Վերջինս հայկական միջնադարյան խոշորագույն գերեզմանադաշտն էր: Օտարերկրյա ճանապարհորդների վկայությամբ այնտեղ 17-րդ դարի առաջին կեսին եղել է շուրջ 10000 խաչքար²²⁴: Այդ թիվը գրեթե անփոփոխ է մնացել մինչև 20-րդ դարի սկիզբը, երբ երկաթուղու անցկացումով խաչքարերի գրեթե հիսուն տոկոսը ավերվել է կամ օգտագործվել որպես շինանյութ²²⁵: Եվ ահա վերջին հարվածը հասցվեց 1998-2006 թթ., երբ ադրբեջանական զինված ուժերի կողմից պարբերաբար ավերումների ենթարկվելով, 2006 թ. դեկտեմբերին գերեզմանադաշտն ամբողջությամբ հողին հավասարեցվեց²²⁶:

Ձուղայի գերեզմանադաշտը իր խաչքարերի մշակման կատարելությամբ, ինքնատիպ պատկերագրությամբ և աննախադեպ քանակով հայկական միջնադարյան քանդակագործության զարմանահրաշ զրսևորումներից էր և ուներ բացառիկ կարևորություն ոչ միայն հայկական, այլև համաշխարհային մշակույթի համար: Ուստի գերեզմանատան ավերման փաստի շուրջ հայ և համաշխարհային գիտակից հասարակության բարձրացրած բողոքի ալիքը միանգամայն կանխատեսելի էր: Ավերման մասին հայ և միջազգային մամուլում բազմաթիվ հրապարակումներ եղան, կազմակերպվեցին խաչքարերի լուսանկարների ցուցահանդեսներ, նկարահանվեցին փաստավավերագրական ֆիլմեր²²⁷: Մա այն անմիջական արձագանքն էր, որի նպատակն էր իրազեկել հայ հանրությանը, միջազգային աստյաններին, դատապարտել կատարվածը:

Ձուղայի գերեզմանադաշտի վերջնական ավերումից մեկ տարի անց սկսվել և շարունակվում է խաչքարերի վերստեղծման լայնածավալ գործընթաց, որի նախադեպը չի եղել խաչքարագոր-

²²⁴ **Rhodes A.**, Divers voyages et missions du P. A. de Rhodes en la Chine et Autres Royaumes avec son Retour en Europe par la Perse et l'Armenie. Paris: Sebastian Cramoisy, 1653, p. 416.

²²⁵ **Այվազյան Ա.**, Ձուղայի կործանված խաչքարերի սիմֆոնիան, Երևան, 2007, էջ 5:

²²⁶ High-Resolution Satellite Imagery and the Destruction of Cultural Artifacts in Nakhchivan, Azerbaijan <http://shr.aaas.org/geotech/azerbaijan/azerbaijan.shtml> , 17.01.03.

²²⁷ Julfa - History of Armenians destruction by Azerbaijan, <https://www.youtube.com/watch?v=ispMSktZNYg> , 14.10.12, Azeris Destroying Armenian Cemetery In Julfa - Part 1/2 <https://www.youtube.com/watch?v=GSJB6K9pSH8> , 14.10.12.

ծության ոլորտում: Տարբեր մարզերում տարբեր վարպետների կողմից կերտվում և կանգնեցվում են Ջուղայի խաչքարերի բազմաթիվ կրկնօրինակներ: Պետք է նշել, որ դրանք չեն սահմանափակվում քարակերտ օրինակներով, թեև վերջիններս մեծամասնությունն են կազմում: Վարպետների կողմից ի գործ են դրվում տարբեր նյութեր՝ փայտ, մետաղ, մագաղաթ:

Խաչքարերի կերտման և տեղակայման աշխարհագրությունը բավականին ընդարձակ է և դուրս է գալիս անգամ ՀՀ սահմաններից: Վերակերտման գործընթացը պայմանականորեն բաժանում ենք երկու խմբի՝ ելնելով անհատական և պաշտոնական ներգրավվածության մակարդակներից և կանգնեցման նպատակից: Առաջին խումբն ընդգրկում է կործանումից անմիջապես հետո՝ մինչև 2013 թ. ընկած խաչքարերը, որոնք ավելին չեն քան անհատական, սպոնտան նախաձեռնությունների արդյունք: Մի քանի անհատներ, որոնց թվում՝ խաչքարագործ վարպետներ, պաշտոնյա, հոգևորական, փայտափորագրիչ, փորձել են ավերմանն արձագանքել կատարվածի հանդեպ սեփական պատկերացումների և նախապատվությունների շրջանակում: Եթե մեկի կողմից կարևորվել է գուտ վերստեղծելու գաղափարը՝ ի հակադրություն կործանման, մյուսի համար առանցքային է եղել պահպանել դպրոցի առանձնահատկությունները: Եթե մեկի առաջնայնություն է եղել իր կերտածով իրազեկել հայ և միջազգային հանրությանը, մեկ այլ վարպետ ինքն իրեն մարտահրավեր է նետել կերտման գործընթացի և կատարման մեջ հասնել նախնի վարպետի ու բնօրինակի հետ կատարյալ նույնության: Այս խմբի հուշարձանների մեջ ներկայացվում են Վանաձորի, Գյումրիի, Երևանի, Էջմիածնի օրինակները, ինչպես նաև փայտե և մագաղաթե օրինակները՝ դիտարկելով վարպետի, պատվիրատուի, տեղակայման և կատարման գործոնները:

Ջուղայի խաչքարերի կրկնօրինակման հանդեպ համընդհանուր ոգևորության մեջ հատուկ ուշադրության է արժանի այն, որ սկսած 2013 թ.-ից մի շարք կրկնօրինակներ իրենց հանգրվանն են գտնում ՀՀ սահմաններից դուրս՝ ծառայելով որպես Հայոց Ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված հուշակոթողներ: Մրանք կազմում են Ջուղայի նոր խաչքարերի երկրորդ խումբը՝

ներկայացնելով այս գործընթացի պաշտոնական արձագանքը: Այս խմբի մեջ են մտնում Ռուսաստանում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Վրաստանում, Իրաքում, ԱՄՆ-ում, Իտալիայում կանգնեցված խաչքարերը, ինչպես նաև Երևանում ցեղասպանության 100-րդ տարելիցին է նվիրված «Մշակութային եղեռն-խաչքարերի խորհուրդը» խորագրով բացօթյա ցուցահանդեսին ներկայացված Ջուղայի խաչքարերի 12 կրկնօրինակները: Այս շարքում առանձնակի կարևորվում է 2015թ. Իտալիայում Ջուղայի խաչքարերից մեկի կրկնօրինակի բացումը և օծումը: Այս իրադարձությունը, իր մասնակիցների կազմով, օժման արարողությամբ և գաղափարական հիմքով դարձավ Ջուղայի խաչքարերի կրկնօրինակման գործընթացի բարձրակետը՝ ամփոփելով և ամբողջացնելով այն տրամաբանությունն ու հոգեբարոյական դրդապատճառները, որոնք ընկած են Ջուղայի գերեզմանադաշտի ավերումից առ այսօր այդ ուղղությամբ կատարված բոլոր գործողությունների հիմքում:

Խաչքարերի վերստեղծման գործընթացում իր առանձնահատուկ դերակատարումն ունի «Ջուղայի խաչքարային դաշտի հայրենադարձությունը» միջազգային ծրագիրը, որի նպատակն է խաչքարերի եռաչափ վերականգնումը լազերային իմիտացիայի ճանապարհով:

MARIANNA HARUTYUNYAN (ARMENIA)

THE EXAMINATION OF THE PROCESS OF RECREATING DESTROYED MONUMENTS AFTER CULTURAL GENOCIDE ON EXAMPLE OF THE NEW KHACHKARS OF DJUGHA

In 1998-2006 the medieval graveyard of Djughha with its marvelous khachqars was completely destroyed. According to many international conventions on protection of cultural heritage these acts correspond with the term of cultural genocide. A year after the Djughha graveyard destruction there has been started and currently continues unprecedented process of carving new khachqars. In different regions various masters

have created and erected many khachqar replicas in Djughha style. The geography of restoration of khachkars is quite dispersed, hence not limited to the territory of Armenia (RA).

Recreation process is conditionally divided into two groups according to the personal and official involvement and erection purpose. The first group encompasses the khachkars created right after the end of destruction till 2013, which are no more than a result of personal and spontaneous initiatives. Starting from 2013 various examples find their refuges outside RA as memorials of Armenian genocide victims. These are the second group of Djughha new khachqars representing the official respond of recreation process. The whole process of recreation, and the new replicas serve as evidence supporting the idea that even the cultural genocide cannot hamper the survival of the monument unless that nation carries it on its personal and collective memory, and transmits to the generations.

МАРИАННА АРУТЮНЯН (АРМЕНИЯ)

ИЗУЧЕНИЕ ПРОЦЕССА ВОССОЗДАНИЯ РАЗРУШЕННЫХ ПАМЯТНИКОВ ПОСЛЕ КУЛЬТУРНОГО ГЕНОЦИДА НА ПРИМЕРЕ НОВЫХ ХАЧКАРОВ ДЖУГИ

В 1998-2006 было полностью разрушено средневековое кладбище в Джуге с его чудесными хачкарами. Согласно многим международным конвенциям по защите культурного наследия эти действия соответствуют термину “культурный геноцид”. Спустя год после разрушения кладбища был начат и в настоящее время продолжается беспрецедентный процесс создания новых хачкаров. В различных регионах разные мастера создают и устанавливают многочисленные копии в джугийском стиле. География восстановления хачкаров обширна и не ограничивается территорией Армении (РА).

Процесс восстановления условно разделен на две группы, согласно личному и официальному участию и целям монтажа. Первая группа охватывает хачкары, созданные до 2013г, сразу после

того, как они были разрушены; они являются результатом личных и непосредственных инициатив. Начиная с 2013 года различные копии находят свои гавани за пределами РА как мемориалы жертв Геноцида армян. Это вторая группа новых хачкаров Джуги, представляющие официальную часть процесса восстановления. Весь процесс восстановления и новые копии служат доказательствами, поддерживающими идею, что если народ несет памятник в своей личной и коллективной памяти и передает поколениям, даже культурный геноцид не может препятствовать его жизнеспособности.

ԱՆՈՒՇ ՏԵՐ – ՄԻՆԱՍՏԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՌ ՎԿԱՆ

Անի քաղաքը ոչ միայն Հայաստանի նշանավոր մայրաքաղաքն էր, երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնը, Առաջավոր Ասիայի ամենահայտնի քաղաքներից մեկը, այլև մի ամբողջ համակարգ՝ իրեն շրջապատող ամրոցներով և վանական համալիրներով:

Դրանցից մեկը Խցկոնքի վանական համալիրն էր, որի համբավը, ինչպես և Անիի, տարածված էր Հայաստանի սահմաններից դուրս՝ միջնադարյան աշխարհով: Այն կառուցված էր հայկական ճարտարապետության հիմնական հորինվածքային կանոններին համաձայն. Ներդաշնակությունը և միասնությունը հատուկ էին ոչ միայն համալիրի առանձին շինություններին, այլև ամբողջ կառուցվածքային խմբին, որը զարմանալի ամբողջական էր և համահունչ շրջակա միջավայրի հետ:

Համալիրը բաղկացած էր հինգ եկեղեցիներից՝ Սուրբ Աստվածածին, Սուրբ Կարապետ, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և Սուրբ Մարգիս՝ միակը, որն այսօր պահպանվել է վանքի գլխով անցած արհավիրքներից հետո: Սուրբ Աստվածածին, Սուրբ Կարապետ և Սուրբ Մարգիս եկեղեցիները կանգնած էին կողք կողքի, մի փոքր դեպի արևելք տեղադրված էր Սուրբ

Ստեփանոսը, իսկ Սուրբ Լուսավորիչը՝ նույն ուղղությամբ մոտ 300-350 մ հեռավորության վրա:

Տիպային տեսակետից բոլոր եկեղեցիներն էլ գմբեթավոր էին, սակայն Սուրբ Աստվածածինը, Սուրբ Ստեփանոսը և Սուրբ Լուսավորիչը պատկանում էին խաչագմբեթ տիպին, իսկ Սուրբ Կարապետը և Սուրբ Սարգիսը՝ քառախորան կենտրոնագմբեթ էին: Սակայն նույնիսկ միննույն տիպին և ենթատիպին պատկանելով, դրանք տարբեր էին իրենց մանրամասներով՝ թե՛ հատակագծային, թե՛ ծավալա-տարածական հորինվածքներում:

Չափերով, հարդարանքով ու հատուկ վեհ կերպարով ամբողջ հուշարձանախմբի մեջ հատուկ տեղ էր գրավում Սուրբ Սարգիս եկեղեցին: Դրա առաջին հարկաբաժնի բոլոր նիստերը միավորված են դեկորատիվ կամ արաշարերով, իսկ հովհարաձև վեղարը կրող տաս նիստանոց թմբուկի վրայի նույն կրկնակի որմնապյունները հենարան են հանդիսանում արդեն ճակտոնների համար: Իր երկհարկանի կերպարով այս եկեղեցին, ինչպես և չափերով զգալի փոքր Սուրբ Կարապետը, հիշեցնում են Զվարթնոցի տաճարը:

Ինչպես այլ վանական համալիրներում, Խցկոնքում էլ կային բարձր գեղարվեստական արժեք ունեցող ճարտարապետական փոքր ձևեր՝ խաչքարեր, ինչպես և տնտեսական նշանակության բազմաթիվ օժանդակ կառույցներ:

Խիստ ու հզոր ժայռերի շրջապատում կանգնած զարմանալի համալիրը իր եկեղեցիներով ու բոլոր շինություններով այնքան գորեղ էր իր մոնումենտալ զանգվածայնության և միաժամանակ՝ վեհ նրբին ոգեղենության մեջ, որ կարող էր օրինակ ծառայել բնական լանդշաֆտի և ճարտարապետության միասնության ու ներդաշնակության:

Հայ բնակչության տարհանումից հետո՝ 1920-ականներին, վանքի տարածքը թուրքական իշխանությունների կողմից հայտարարվեց ռազմական գոտի, և արդեն 1959 թվականին ճարտարապետական փայլուն համալիրից մնաց միայն Սուրբ Սարգիս եկեղեցին՝ այն էլ խիստ վնասված վիճակում: Մնացած բոլոր կառույցները՝ ըստ մոտակա գյուղերի բնակիչների վկայությունների, պայթեցվել են իշխանությունների կողմից:

Իսկ կլիսավեր Սուրբ Սարգիսը կանգնած է երբեմնի փառահեղ շինություններով զբաղեցված՝ այժմ դատարկ տարածքում, որպես մարդկային ոգու բարձրության և մարդկության ու մշակութային արժեքների դեմ կատարված ոճրագործության հուշարձան:

АНУШ ТЕР-МИНАСЯН (АРМЕНИЯ)

НЕМОЙ СВИДЕТЕЛЬ КУЛЬТУРНОГО ГЕНОЦИДА

Знаменитая средневековая столица Армении – город Ани, был не только политическим, экономическим и культурным центром страны и одним из крупнейших городов Передней Азии, но и целым комплексом с окружающими его замками и монастырскими комплексами.

Одним из «спутников» Ани был монастырский комплекс Хцконк, который был построен в соответствии с основными композиционными принципами средневековой Армении: гармоничность и единство как в отдельных строениях, так и во всей группе сооружений, а также удивительные органичность и единство всего комплекса с окружающим ландшафтом.

Комплекс состоял из пяти церквей, из которых одна – Святого Григора Просветителя, находилась чуть поодаль – на расстоянии 300-350 метров в том же направлении, что стояли остальные церкви.

Все церкви были купольными, однако их отличали как плановые, так и объёмно-пространственные и другие детали.

В 20-ых годах 20-го века вся территория была объявлена турецкими властями военной зоной, и уже к 1959-му году на месте блистательного монастырского комплекса осталась лишь одна церковь Св. Саргиса, и та в сильно разрушенном состоянии, как немой свидетель величия человеческого духа и преступления, совершённого против человечества и созданных им культурных ценностей.

SILENT WITNESS OF CULTURAL GENOCIDE.

The famous medieval capital of Armenia - Ani, was not only a political, economic and cultural center of the country and one of the largest cities in the Near East, but also a whole complex with the surrounding castles and monastery complexes.

One of the "satellites" of Ani was Khtskonq monastery complex, which was built in accordance with the basic compositional principles of medieval Armenia: the harmony and unity of all buildings and structures throughout the group, as well as organic unity of the whole complex with the surrounding landscape.

The complex consists of five churches, one of which - St. Gregory the Illuminator, was a bit further - at a distance of 300-350 meters in the same direction as the other churches.

All the churches were domed, but they are distinguished by plane and volume-spatial compositions and other details.

In the 20th years of the 20th century the whole area was declared a military zone by the Turkish authorities, and by 1959 on the place of the brilliant Monastery complex there was only one church of St. Sargis, and that in a very destroyed condition, as a silent witness to the greatness of the human spirit and the crimes, committed against humanity and the cultural values, created by it.

АРМЕН КАЗАРЯН (РОССИЯ)

АРМЯНСКАЯ РУИНА В КУЛЬТУРНОМ ЛАНДШАФТЕ ТУРЦИИ. СУДЬБА И БУДУЩЕЕ МРЕНСКОГО СОБОРА

Массовое уничтожение памятников материального культурного наследия армянского народа на территории турецкой части Армянского нагорья, в Киликии и Анатолии, осуществлявшееся, главным образом, в 1950-60-е годы, и геноцид армян 1915-21 годов – явления неодновременные, но имеющие причинно-следственную связь.

Геноцид армян в Османской империи и в прилегающих к ее восточным границам армянских областях осуществлялся с целью физического истребления этноса, сопровождался разграблением материального наследия и разрушением отдельных армянских церквей. Многочисленные монастырские ансамбли и отдельные храмы тогда не были тронуты, но, оказавшись без внимания, в абсолютном пренебрежении, ветшали и с трудом противостояли природной стихии. Посещение исторических армянских земель Турции с целью изучения архитектурного наследия было под запретом. Массовое разрушение армянских построек началось с середины 1950-х годов в большинстве вилайетов Турецкой республики под разными предлогами и при активном участии турецкой армии, особенно в Карсской области, вдоль границы с Армянской ССР. Глубинные причины этих акций «белого геноцида» или этноцида еще предстоит изучить, причем специалистам по праву, политике и психоанализу, а не только историкам архитектуры. Могу только усматривать в основе этого кощунственного явления все атрибуты вандализма и отражение состояния турецкого правительства и общества в десятилетия после Второй мировой войны.

Следует признать, что разрушения памятников в Восточной Турции имеют аналоги в истории XX века. Эти явления, и особенно турецкий пример вдохновляют вандалов XXI века – талибов Афганистана, правительство Азербайджана, лидеров так называемого Исламского государства – к массовому уничтожению культурного наследия.

Автор доклада является участником международных экспедиций, организованных с целью мониторинга состояния памятников в провинциях Карса и Муша и принятия мер по спасению аварийных построек, которые организуются Всемирным фондом памятников, международными и турецкими научными и общественными организациями с 2013 года; ранее, с 2008 года подобная работа и реставрационная деятельность были сосредоточены только в пределах Ани, средневековой столицы Армении. Многое нам было известно и до этих экспедиций благодаря многолетней работе западных и армянских коллег, в результате собственных командировок. Теперь

открывается полноценная картина утрат, устанавливается степень повреждений, причиненных чудом сохраняющимся памятником, выстраивается приоритетность в производстве срочных работ по их спасению.

Для представления панорамы разрушений и нынешнего состояния рассматриваемого архитектурного наследия на примере памятников правобережья пограничной реки Ахурян, а также провинций Вана и Муша, докладчик представляет аналитический комментарий фотографии средневековых монастырей и храмов или мест, где они располагались.

Главное внимание сосредоточено на состояний Мренского собора (639) – единственного чудом сохранившегося сооружения в провинции Карса, которое относится к 7 веку – «золотому веку» армянской архитектуры. Экспертным решением рабочей группы «Ани в контексте» (2013) выделены четыре памятника, спасение которых от полного разрушения признано первоочередной задачей Всемирного фонда памятников. Среди них – собор в Мрене, церковь Сурб Саргис Хцконка, жаматун монастыря Оромос, крепость Тигнис. В июне 2015 г. была организована специальная экспедиция в Мрен, позволившая ее участникам подробнее изучить проблему этого памятника.

Анализ Мренского собора в рамках настоящего доклада включает:

- выявление ценности собора, значение содержащейся в нем информации для изучения истории архитектуры, искусства рельефа и настенной живописи, эпиграфики разного времени, политических и экономических вопросов истории;

- результаты исследования состояния памятника. Умышленное ослабление конструкций храма, как первопричина разрушения южной стены и угроза полного обрушения памятника анализируются с особым вниманием. Дополнением и подтверждением этих фактов служат разрушения других средневековых памятников Мрена, известных в относительной сохранности еще в начале XX века;

- представление выводов экспертов, участвовавших в экспедиции, по состоянию памятника. Их предложения по срочному ук-

реплению конструкций. Предложения автора о характере возможной консервации/реставрации здания собора.

Доклад завершается размышлениями о роли руинированного армянского памятника в культурном ландшафте Восточной Турции.

Руины Ани, других городов и поселений, таких как Мрен и Багаран, руины древних монастырей и крепостей – это образы, вызывающие ностальгию и боль, переданные через поколения и потому особенно сильные; это также образы утраты былого возвышенного величия, то есть того, как античная руина воспринималась гуманистами эпохи Ренессанса. Для нас же совокупность этих памятников и каждый из них в отдельности тесно связаны с чувствами национального достоинства и гордости, и они одновременно являются символ пережитой катастрофы. Грустной ситуация была в последние несколько столетий, и армянская интеллигенция рубежа XIX-XX веков с особой болью в сердце высказывалась о состоянии средневекового наследия. С 1915 г. его состояние связывается с трагедией геноцида армян в Османской империи.

Однако значение этого наследия должно быть оценено и представителями турецкой интеллигенции, и часть ее уже осознает это наследие в качестве собственного. Ведь отчасти так оно и есть. Примечательно и то, что сегодня без памятников армянской архитектуры и без намека на их бывшее существование культурный ландшафт Восточной Турции обезличивается, превращается в интересный природный пейзаж, лишенный цивилизационной составляющей.

ARMEN KAZARYAN (RUSSIA)

ARMENIAN RUIN ON THE CULTURAL LANDSCAPE OF TURKEY. THE FATE AND THE FUTURE OF THE CATHEDRAL OF MREN

The large scale destruction of the monuments of Armenian cultural heritage in Turkish part of Armenian highland took place in 1950-60s, mean while that fact has its relation with the Armenian genocide of 1915-1920. In the report is shortly represented the loss of Armenian heritage as

well as the monitoring of the monuments of Ani, its surroundings and other districts of Turkey, started last years by the World Monuments Fund and other organization. The causes of partly collapse of the cathedral of Mren and the possibilities of its rescue are observed. The role of Armenian ruined monuments on the cultural landscape of Eastern Turkey, the question of importance of this heritage both for Armenians, Christian civilization, and for Turkish culture are discussed.

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ (ՌՌԻՍԱՍՍԱՆ)

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԵՐԱԿԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԲՆԱՊԱՏԿԵՐՈՒՄ: ՄՐԵՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵՎԵՂԵՑՈՒ
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

Հայկական լեռնաշխարհի թուրքական տարածքի հայկական նյութական մշակույթի հուշարձանների մասսայական ոչնչացումը իրականացվում էր հիմնականում 1950-60-ական թթ., սակայն այդ երևույթն իր կապն ունի 1915-21 թթ. Հայոց ցեղասպանության հետ: Հակիրճ ներկայացնելով հայկական ժառանգության կորուստները, զեկույցում ուշադրություն է դարձվում «Հուշարձանների համաշխարհային ֆոնդի» և այլ կազմակերպությունների կողմից սկսված Անիի և նրա մոտակայքում, Թուրքիայի այլ շրջաններում հայկական ճարտարապետական կառույցների վիճակի ստուգման աշխատանքներին: Ներկայացվում են Մրենի տաճարի ավիրվածությունների պատճառներն ու փրկման հնարավորությունները: Գնահատվում է ավիրված հայկական ճարտարապետության հուշարձանների դերը Արևելյան Թուրքիայի մշակութային բնապատկերում, այդ ժառանգության կարևորությունը ոչ միայն հայերի ու քրիստոնյա քաղաքակրթության, այլ նաև թուրքական մշակույթի համար:

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայոց ցեղասպանությունը հայ ժողովրդի չափացող վերքն է, որը պարտավորեցնում է կրած ցավը հիշելու հետ մեկտեղ պայքարել հանուն մեր ազգային արդար իրավունքների վերականգնման, հայ ժողովրդի կրած տարածքային, նյութական, բարոյական, հոգեբանական վնասների հատուցման, հանուն մեր ազգային անվտանգության ապահովման:

• 1991 թ. հայկական անկախ պետականության վերականգնումը և դրան հետևած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր ալիքը բավական էին հասկանալու, որ հայ ժողովրդի դեմ գործված ցեղասպանությունը ճանաչող պետությունների թվի ավելացումը որևէ կերպ չի կարող նպաստել մեր ազգային ոտնահարված իրավունքների վերականգնմանը, եթե այդ ճանաչումը զուրկ է գործած ոճրագործության համար թուրքական պետության միջազգային իրավական պատասխանատվության պահանջից և հատուցման պարտադրանքից:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման ներկա փուլի ամենակարևոր առանձնահատկությունը, թերևս, գիտակցումն է այն բանի, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները ցեղասպանությունը վերապրածների ու նրանց սերունդների անունից, նրանց միջոցով ու մասնակցությամբ պետք է բարձրացնեն պահանջատիրության հարցը միջազգային դատական աստիճաններում:

• Հայրենիքի կորուստը հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքն է, սակայն տուժած կողմի հատուցում ստանալու իրավունքի լիակատար բավարարումն անհնար է, քանի դեռ «հայրենագրվություն» հասկացությունը խորթ է միջազգային իրավունքին, իսկ ցեղասպանությունը դատապարտող և պատժելի համարող միջազգային կոնվենցիայում՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու

և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում²²⁸ շրջանցվում է տուժածի՝ հատուցում ստանալու իրավունքը: Մասնավորապես, Հայ Դատի, հայոց արդարացի պահանջատիրության բավարարման տեսանկյունից հարկավոր է կոնվենցիայում կատարել հետևյալ լրացումները.

1. Կոնվենցիան ցեղասպանության համար հանցավոր է համարում ոչ թե պետությանը, այլ առանձին անհատներին՝ պետական գործիչների, որոնք կազմակերպում և իրականացնում են ցեղասպանությունը: Նշված փաստաթուղթը սահմանափակվում է ցեղասպանության համար պետության պատասխանատվության առաջացման հնարավորության մասին դրույթով /թիվ 9 հոդված/²²⁹: Կոնվենցիայում պետության, իբրև ցեղասպանության սուբյեկտի, պատասխանատվության ու դրա բովանդակության հարցերը ենթակա են մանրամասն մշակման, չնայած, որ մի ողջ ժողովուրդ ոչնչացնելու համար պետության քաղաքական պատասխանատվության սկզբունքը և դրանից բխող նորմերը միջազգային իրավունքում ձևավորվել են նախքան վերոնշյալ կոնվենցիայի ընդունումը:

2. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան արդարության պահանջով հարկ է, որ լրացվի նաև բռնագաղթվածների և նրանց ժառանգների տարածքային, նյութական, բարոյական, հոգեբանական կորուստների հատուցման՝ նախևառաջ Հայրենիք վերադառնալու իրավունքն անկախ վաղեմությունից ճանաչելու մասին դրույթով:

3. Հարկ է նաև, որ կոնվենցիան պատիժ սահմանի այնպիսի գործողությունների համար, ինչպիսին են իր հայրենիքից բնակչությանը բնաջնջելու նպատակով բռնի տեղահանելը և ազգային-

²²⁸ Կոնվենցիայի ամբողջական բովանդակությունը տե՛ս Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него, էջ 19-26: Ինչպես նաև՝ Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключённых СССР с иностранными государствами. Выпуск XVI, Москва, 1957, էջ 66-71; Права человека. Сборник международных документов, М., 1998; The Crime of Genocide. A United Nations' Convention-is Aimed of Preventing Destruction of Groups and of Punishing those Responsible, N.Y., 1949.

²²⁹ Տե՛ս и Права человека. Сборник международных документов, էջ 86:

մշակութային ցեղասպանություն իրականացնելը:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների թերի լինելն ազդում է Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի վրա, հետևաբար, ներկա փուլում Հայաստանի Հանրապետությունը պետք է գործի նաև միջազգային իրավունքի այս թերությունների ու բացթողումների վրա միջազգային հանրության ուշադրությունը բևեռելու ու դրանց վերացմանը հասնելու ուղղությամբ:

Անհերքելի է, որ Հայերի ցեղասպանության ճանաչման և դատապարտման՝ 1991թ. հայոց անկախ պետականության վերականգնումից հետո թափ առած ալիքը միջազգային հանրության կողմից ոճրագործության փաստի ոչ թե ճանաչում, այլ կրկնակի ճանաչում է նշանակում: Վերջինս, սակայն, միջազգային հասարակական-քաղաքական շրջանակներում երբեմն թողնում է այն սխալ տպավորությունը, թե Հայոց ցեղասպանության փաստը, այդ ոճրի համար թուրքերի ու Թուրքիայի պատասխանատվությունը մինչ այդ ճանաչված չեն էլ եղել: Որպես նշված թյուրըմբռնման դեմ պայքարի լավագույն միջոց, ՀՀ-ն և Սփյուռքը հանուն արդարության համազգային պայքարում իրավացիորեն կարևորում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ մինչ այժմ կատարված հսկայածավալ աշխատանքի լուսաբանումն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակներում, հայ ժողովրդին վշտակցող ու սատարող պետությունների նկատմամբ երախտագիտության արտահայտումն իբրև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և ոճրագործության հետևանքների վերացման ուղղությամբ հայ ազգային-պետական քաղաքականության կարևոր բաղադրատարրերից մեկը:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հարցում որոշիչ նշանակություն ունի ժամանակի գործոնը: Պատմական արդարությունը, մեր ազգային և պետական անվտանգության շահերը պահանջում են ողջ ուշադրությունն անհետաձգելիորեն կենտրոնացնել հայոց պետականության ամրապնդման, արտագաղթի կանխման ու դրա փոխարեն մայր հայրենիքում ազգահավաքման, Հայոց ցեղասպանության հետևանք-

ների վերացման ու Ղարաբաղի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ՝ միջազգային ասպարեզում գործելով՝ վճռականորեն և նախաձեռնողական, հարձակողական դիրքից:

ЛИЛИТ ОГАНЕСЯН (АРМЕНИЯ)

ИСТОРИКО-ПРАВОВЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОЙ ФАЗЫ УСТРАНЕНИЯ ПОСЛЕДСТВИЙ ГЕНОЦИДА АРМЯН

Суть современной фазы устранения последствий Геноцида армян заключается в привлечении турецкого государства к международной политической ответственности за содеянное им преступление против человечества – за лишение армянского народа своей родины, за причинение ему моральных, психологических, материальных, финансовых потерь. Реализация ответственности за Геноцид армян на объективной основе международного права соответствует интересам не только армянского народа и всего международного сообщества, но и интересам самой Турции.

LILIT HOVHANNISYAN (ARMENIA)

THE HISTORICAL-JURIDICAL PECULIARITIES OF CONTEMPORARY PHASE OF THE REMOVAL OF CONSEQUENCES OF THE ARMENIAN GENOCIDE

The essence of contemporary phase of the removal of consequences of the Armenian Genocide is that the turkish state must be call to account, avoiding international-juridical responsibility, and must indemnify armenians for the loss of their native land and for moral, psychological, material, financial losses. The realization of the responsibility for a Genocide of the armenians on the objective basis of international law corresponds to the interests not only the armenian people and all international society, but also of Turkey.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐԿԵՍՏՈՒՄ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԹԵՄԱՆ ՀԱՅ ԱՐԴԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հայ արվեստագետներին Մեծ Եղեռնի թեման հուզել է տարիներ ի վեր: Անմասն չեն մնացել նաև հայ արդի կոմպոզիտորները, որոնց մի շարք կամերային, խմբերգային, սիմֆոնիկ և երաժշտաբեմական երկերում մարմնավորվել և իրենց արժանի գեղարվեստական արտահայտությունն է ստացել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

Եղեռնին նվիրված հայ կոմպոզիտորների երկերի շարքում նախևառաջ պետք է նշել Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» փալետը (1969), որտեղ Կոմիտաս-անտունու կերպարը խորհրդանշել է Եղեռնի զոհ դարձած արվեստագետների ընդհանրացված ճակատագիրը:

1970-ականներից սկսած ցեղասպանության թեման առավել մեծ հնչեղություն է ստանում հայ կոմպոզիտորների ստեղծագործության մեջ: Այդ տարիներին գրված երկերի շարքում առաջին հերթին հիշատակելի է Էդուարդ Հայրապետյանի (ծնվ. 1949թ.) «1915» մեծածավալ օրատորիան՝ ասմունքողի, մեցցոսոպրանոյի, բասի, խառը երգչախմբի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար, որը կոմպոզիտորը հեղինակել է 1977 թվականին, հիմնվելով Եղեռնի ականատեսների և վերապրողների հուշագրությունների վրա: Օգտագործված պուանտիլիստական տեխնիկան, բազմաթիվ cluster-ների և divisi-ների հնչողությունը, collage-ի ձևով ներմուծված «Ամեն. Հայր Սուրբ» և «Սուրբ, սուրբ» երգասացությունները հայոց Պատարագից բնորոշում են այդ տպավորիչ գործի նկարագիրը: Ստեղծագործության կիզակետա-

յին պահերին նվագախմբին միանում է երգեհոնի հզոր հնչողությունը, որը ծավալային հավելյալ խորք է ստեղծում, տոգորելով երկը ապոկալիպտիկ երանգներով:

Եղենի թեման կարևոր տեղ է գրավել Հարություն Դելլայանի (1937-1990) ստեղծագործության մեջ: Նրա «Նվիրում Կոմիտասին» դաշնամուրային Սոնատը (1982) կոմպոզիտորի լավագույն գործերից է: Այն այսօր էլ եզակի է հայ դաշնամուրային երաժշտության մեջ իր ինքնատիպ մտահղացքով, վառ արտահայտված ազգային երաժշտալեզվով և խիստ արդիական բնույթով:

Մեծ Եղենի թեմային նվիրված մի քանի մեծակտավ երկերի հեղինակ է Երվանդ Երկանյանը (ծնվ. 1951թ.), ում 3-րդ, 4-րդ և 5-րդ սիմֆոնիաներում արտահայտվել է ցեղասպանության հետ կապված հեղինակի մտորումների լայն շրջանակը:

3-րդ՝ «Ձայն նահատակաց» սիմֆոնիա-օրատորիան՝ մանկական ձայնի, խառը երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1984) գրվել է Դանիել Վարուժանի երեք բանաստեղծությունների հիման վրա: Սիմֆոնիան մեծակերտ վոկալ-սիմֆոնիկ մի եռագրություն է, որտեղ կոմպոզիտորը անդրադարձել է այդ համահայկական, նաև՝ համամարդկային հնչեղություն ունեցող թեմային, օժտելով սիմֆոնիայի ֆինալը լավատեսական, օրհնաբանական վերջաբանով:

Այլ է Երկանյանի թիվ 4 (1986) «Nemesis» սիմֆոնիայի մտահղացումը: Նրա երաժշտական կերտվածքը զուտ գործիքային է: Սիմֆոնիայում երաժշտական կերպարները կրում են ավելի ընդհանրացված, բայց ոչ վերացական բնույթ, թեև ստեղծագործությունը ծրագրային չէ ավանդական իմաստով: Ակնհայտ է, որ այն ներշնչված է այսօր արդեն հանրաճանաչ «Nemesis» գործողությունը իրականացրած խմբի գաղափարներով:

Ե.Երկանյանի 5-րդ՝ «Խաչված երազներ» սիմֆոնիան (2011) ոգեշնչված է սիմվոլիստ բանաստեղծ Հրանտ Նազարյանցի պոեզիայով: Սիմֆոնիան որոշակի իմաստով ծրագրային է: Նրա ցայտունորեն արտահայտված քնարախոհական բնույթը հատկանշվում է բազմաթիվ դրամատիկ շեշտադրումներով, երբեմն չարագուշակ և ողբերգական էպիզոդներով: Նեոռոմանտիզմի

ավանդույթները, հիրավի մալերյան ծավալն ու շունչը ներդաշնակորեն միահյուսվել են Սիմֆոնիայում Երկանյանի անհատական ռճին:

Եղենի 90-ամյա տարելիցին էր նվիրված Ռուբեն Սարգրայանի (1945-2013) «Դեր-Չոր վերապրածի խոստովանանքը» ստեղծագործությունը (2005) ֆլեյտայի, լարայինների և հարվածայինների համար: Կործանման ոգու և կենսահաստատ սկզբի հակադրությունը կազմում են այդ երկի մտահղացման առանցքը: Հայ ժողովրդի ապրելու և կերտելու աննկուն ձգտումը մարմնավորված է զուտ ֆուլկլորային երաժշտական կերպարի մեջ, որն օժտված է ցայտուն պարային ռիթմերով և ելևէջներով:

2004 թվականին իր ավարտին հասավ Վահրամ Բաբայանի (ծնվ. 1948թ.) «Մուսա Լեռան 40 օրը» երեք գործողությամբ օպերայի ստեղծումը (ըստ Ֆրանց Վերֆելի համանուն վեպի): Օպերան գրված է հեղինակի համար բնորոշ էքսպրեսիոնիզմին և նեոռոմանտիզմին հասուկ ռճական սկզբունքներով ու արտահայտչամիջոցներով: Երաժշտության մեջ գերիշխում է միջանցիկ զարգացումը, թեպետ առկա են նաև ավարտուն արիաներ, անսամբլներ, տեսարաններ և առանձին սիմֆոնիկ հատվածներ:

Մեծ Եղենի զոհերի հիշատակին է նվիրված Տիգրան Մանսուրյանի (ծնվ. 1939թ.) վերջին նշանակալի ստեղծագործությունը՝ Ռեքվիեմը խառը երգչախմբի և լարային նվագախմբի համար (2008-2011): Ստեղծագործության մեջ կոմպոզիտորը զուգորդել է հայ միջնադարյան հոգևոր երգասացությունների ելևէջներից սերող երաժշտալեզուն լատինական հոգեհանգստյան մեսսայի կանոնական տեքստի հետ: Տվյալ ստեղծագործության գերխնդիրն է՝ լատիներենի միջոցով, կարծես այն «հայացնելով», դուրս բերել նեղ ազգային շրջանակներից, ներկայացնել աշխարհին հայ հինավուրց մոնոդիան իր գեղեցկությամբ և համաշխարհային, համաքրիստոնեական նշանակությամբ, ինչը լուծված է կոմպոզիտորին հասուկ վարպետությամբ, մեծ դրամատիզմով և փիլիսոփայական ընդհանրացումների հակումով հատկանշվող նրա անհատական ռճի հունի մեջ:

Ուշագրավ է, որ զեկուցման մեջ արծարծված գործերի հեղինակները պատկանում են 20-րդ դարի 60-70-ական թվական-

ներին ասպարեզ իջած այն սերնդին, որն իր ծանրակշիռ խոսքն ասաց հայ արդի երաժշտության բոլոր ժանրերում, միշտ մնալով «պատնեշին վրայ» և մեծ ներդրում կատարելով հայ կոմպոզիտորական դպրոցի նվաճումների համանվագի մեջ: Նրանք էին դարձյալ, որ գեղարվեստական բարձր մակարդակով իրենց ստեղծագործության մեջ արտացոլեցին Եղեռնի բարդ, պատասխանատու և համայն հայությանը հուզող այդ ցավոտ և նվիրական թեման:

АННА АРЕВШАТЯН (АРМЕНИЯ)

ТЕМА ГЕНОЦИДА В ТВОРЧЕСТВЕ АРМЯНСКИХ КОМПОЗИТОРОВ

Тема Геноцида давно волнует армянских писателей, художников, режиссеров и композиторов. В творчестве армянских композиторов ей посвящены многие камерные, хоровые, симфонические и музыкально-сценические произведения.

Первым наиболее значительным произведением в этом ряду является балет Э. Оганесяна «Антуни» (1969), в котором образ Комитаса олицетворяет собирательный образ и судьбу всех погибших вследствие Геноцида западноармянских деятелей искусства.

В докладе рассматриваются произведения армянских композиторов поколения 1960-70-ых гг., представители которого сказали свое веское слово во всех жанрах современной армянской музыки. Это оратория «1915» Э. Айрапетяна (1977), Соната для фортепиано «Посвящение Комитасу» (1982) и хоровая поэма «Минута молчания» (1986) А. Деллалаяна, «Исповедь пережившего Дер Зор» для камерного оркестра (2005) Р. Саргсяна, симфонии N 3 «Голоса погибших» (1984), N 4 Nemesis (1986), N 5 «Распятыe мечты» (2011) Е. Еркяняна, опера «40 дней Мусадага» (2004) В. Бабаяна, а также Реквием (2011) Т. Мансурияна.

THE THEME OF GENOCIDE IN THE WORKS OF ARMENIAN COMPOSERS

The theme of Genocide has long been a topic of mind for Armenian writers, artists, filmmakers and composers. Many chamber, choral, symphonic and stage music works of Armenian composers are devoted to that subject.

The first and one of the most significant ones among these works is E. Hovhannisyanyan's "Antuni" ballet (1969), in which the Komitas character embodies the collective image and the destiny of all Armenian artists from Western Armenia who perished because of Genocide.

The paper covers the works of Armenian composers of the 1960-70's generation, who have made a genuine contribution to all genres of contemporary Armenian music. These are E. Hayrapetyan's Oratorio "1915" (1977), Piano Sonata "Homage to Komitas" (1982) and Choral Poem "The Minute of Silence" (1986) by H. Delalyan, "Confession of a Survivor from Der Zor" for chamber orchestra (2005) by R. Sargsyan, Y. Yerkanyan's Third Symphony "The Voices of the Perished" (1984), Fourth Symphony "Nemesis" (1986), and Fifth Symphony "Crucified dreams" (2011); V. Babayan's opera "The Forty Days of Musa Dagh" (2004), and Requiem (2011) by T. Mansuryan.

ԻՎԵԹ ԹԱՋԱՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԿՈ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մարկոն մեղավոր չէր, որ ճակատագրի բերումով ծնվել ու ապրել է հայրենիքից հեռու: Նա չկարողացավ համակերպվել այդ փաստի հետ: Հայրենիքից հեռու լինելը, օտարության մեջ իրեն գտնելը մի ցավ է եղել, որ նա երբևէ չկարողացավ հաղթահարել: Թերևս դա է պատճառը, որ արվեստագետի ստեղծագործություն-

ներում հայկական թեմատիկան այլաբանական տեսքով է հանդես եկել:

Մարկո Գրիգորյանը ծագումով Բարձր Հայքի Կարս քաղաքից էր՝ ծնված Ռուսաստանում, հասակ առած Իրանում: Կրթությունը ստացել է Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում: Ապրել և ստեղծագործել է Իրանում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, իսկ կյանքի վերջին տարիներին՝ Հայաստանում:

1950-1954 թթ. ուսանելով Հռոմում՝ նա հաղորդակցվել է Ռոբերտո Մելիի, Ռենատո Գուտուզոյի և Ալդո Նաթիլիի արվեստի հետ: Այդ տարիներից մնացել են հետաքրքիր արձագանքներ Մարկոյի արվեստի մասին և իտալական մամուլում, և՛ երիտասարդ նկարչի մեծանուն ուսուցիչների գնահատականներում: Շուտով Մարկոն դառնում է Հռոմի նկարիչների միության անդամ, մասնակցում Վենետիկի միջազգային բիենալեին, իսկ 1958-ին հիմնադրում ու կազմակերպում է Թեհրան-Վենետիկ առաջին բիենալեն: Այդ տարիներին արվեստագետը կերպարվեստին զուգահեռ զբաղվել է նաև գորգանկարչությամբ և գորգագործությամբ, ուսումնասիրել է թե՛ պարսկական, թե՛ հայկական գորգագործության պատմությունը: Խորապես ներշնչվել է հայկական մշակույթից և հորինել նոր էսքիզներ՝ ապագա նոր ուղիներ մատնանշելով:

Գեղանկարչության մեջ Մարկոյի ոճը դրսևորվում է վրձնի բուռն հարվածներով: Նա լավատեղյակ էր ավանդույթին, որ օգտագործում էր արվեստի առաջընթացի համար: Ուշադրությունն ավանդույթի նկատմամբ եւ դրա կիրառումը ենթադրում են արվեստում նոր տեսակետներ ու հորիզոններ նախանշելը, որոնք առաջ ընթանալու նպատակ ունեն: Նրա գեղանկարչությունը թե՛ իր գույներով, թե՛ ձևապատկերային լուծումներով ռեալիզմից աստիճանաբար վերածվում է էքսպրեսիոնիզմի և ապա հարում հետպատերազմյան Իտալիայում լայն տարածում գտած նեո-ռեալիզմին:

Մարկոյի ստեղծագործական կարևոր փուլերից մեկը 1960 թվականն էր, երբ նա ստեղծում է մեծածավալ կտավներ: Խոսքն իրար լրացնող 13 նկարներից բաղկացած «Օսվենցիմի դարպասը» շարքի մասին է, որոնցից յուրաքանչյուրն ունի 3 մետր

երկարություն: Դրանք Երկրորդ համաշխարհային պատերազմի ազդեցությամբ են ստեղծվել և խորհրդանշում են ողջակիզման վառարանները: Տասներեք կտավներն իրենց ողբերգական երթով ունեն սկիզբ և վերջ: Վերջին 13-րդ կտավում մոխիրը վերափոխվում է հողի. այդպիսով ազդարարվում է կյանքի շարունակությունը: Դա ասես սթափեցնելու մի ձև է: Արվեստագետը կարծես ամեն կերպ փորձում է մարդկությանը հետ պահել ենթադրյալ ողբերգություններից:

Չհաղթահարելով հայրենիքից հեռու լինելու և օտար ավերում ստեղծագործելու փաստը՝ նա իր գեղանկարներում անդրադարձել է ոչ թե հայոց ցեղասպանությանը, այլ հրեական հոլոքոստին: Փորձել է վեր հանել առհասարակ ցեղասպանության հարցը՝ լինի դա հայկական կամ հրեական: Գաղտնիք չէ, որ Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած հայոց եղեռնից հետո հրեական հոլոքոստն է համարվում քսաներորդ դարի ցեղասպանության առավել հայտնի օրինակներից մեկը:

1960-ական թվականներին, իբրև նկարելու միջոց, Մարկոն սկսեց օգտագործել հողը, դարմանը և կավը: Հենց հողարվեստն էլ դարձավ արվեստագետի ստեղծագործության այցեքարտը:

Մարկոն սովորական հողը վերածեց գեղարվեստական արժեքի: Կարելի է ենթադրել, որ հայի հոգեկան աշխարհում նկարիչը փորձում է առաջացնել ապահովության զգացում՝ ձգտելով հողին կյանք ու ճակատագիր տալ: Մնում է կռահել, թե ինչպիսի ներքին ուժեր են Մարկոյին մղել արարելու հողարվեստը: Դա պայմանավորված էր հայրենի հողն օտարի ոտքի տակ տեսելու, օտար հողի վրա ստիպված ապրելու, ստեղծագործելու պարագաներով:

ИВЕТ ТАДЖАРЯН (АРМЕНИЯ)

ГЕНОЦИД АРМЯН И ТВОРЧЕСТВО МАРКО ГРИГОРЯНА

Марко не виноват, что волей судьбы родился и рос вдали от родины.

Жизнь вдалеке от родины, поиск себя на чужбине, были для

него такой болью, которую он так и не смог одолеть. Пожалуй, в этом и скрывается причина того, что в творчестве художника армянская тематика проявляется в аллегорической форме. Можно только догадываться, какие внутренние силы побуждали Марко создавать «земляное искусство». Это было обусловлено тем, что его родная земля была под чужими ногами, а сам автор жил и творил на чужой земле. Не смирившись с самим фактом проживания и творчества вдали от родины, на чужой земле, он в своих работах поднимал вопрос о геноциде вообще – будь то резня армян или еврейский холокост.

YVETTE TAJARIAN (ARMENIA)

ARMENIAN GENOCIDE AND MARCO GRIGORYAN'S CREATION

Marco was not to blame, since he was born and lived abroad by the destiny.

Being away from the homeland, finding himself abroad in a foreign country ache was a pain that he was unable to cope with.

Perhaps this is why, that the artist's creations seems to be the allegorical appearance of Armenian theme.

One can see the inner strength that has led Marco towards creation of land art. It is conditioned by his homeland being under the rule of foreigners, as well as the author himself living and creating on a foreign land.

The fact of failure to overcome of living abroad and the creativity away from the homeland, he referred in his creations the Jewish Holocaust instead of the Armenian Genocide.

In general he tried to highlight the fact of genocide whether it is Armenian or Jewish.

ԵՂԵՌՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՎԵՐԱՊՐՈՒՄՆԵՐԸ ԱԼԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հայոց Մեծ Եղեռնը հայ ինքնության հարացույցին նոր նշույթներ հավելեց, որոնցով սահմանազատվում են ժողովրդի տարբեր հատվածների՝ արևելահայերի, արևմտահայերի, սփյուռքահայերի պատմական հիշողության մեջ ձևավորված էթնոմշակութային ընկալումները: Ավելի քան խոսքը, երաժշտությունը բանալի դարձավ սփյուռքահայ արվեստագետների երկատված ինքնության բարդ որոնումներում:

Ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի «օտար» ձայնի հիմքերը 20-րդ դարի երաժշտարվեստում առնչվում են նրա հայ-շոտլանդական ծագման, հայ-արևելյան ինքնության և իր երաժշտական աշխարհում տեղ գտած զանազան արևելյան մշակույթների՝ հնդկական, ճապոնական, կորեական և բազում այլ գեղարվեստական ավանդույթների ինքնատիպ մեկնաբանությունների խնդիրներին:

Հայկական ինքնության հայտնությամբ է պայմանավորված կոմպոզիտորի շրջադարձը դեպի Արևելք և այդ ինքնության դրսևորումներն առկա են հեղինակի զանազան «արևելյան» գործերում: Հայկականությունը տարեթվերով պարփակված փուլ չէ Ալան Հովհաննեսի ստեղծագործական տարեգրության մեջ, այլ սեփական ես-ի բացահայտում, ինքնարնկալման տարածք և ելակետ՝ հաղորդակցվելու հին արևելյան քաղաքակրթությունների տարբեր ոլորտներին:

Զեկուցման մեջ քննարկվում են Ալան Հովհաննեսի մեծածավալ ժառանգության մեջ անդրադարձ գտած հայոց պատմության ողբերգական էջերը, մասնավորապես «Exile» («Աքսոր») սիմֆոնիան (N 1, 1939 թ.), նվիրված Եղեռնի զոհերին: Այս ստեղծագործությունը Հովհաննեսի նոր ինքնության հաստատման «առաջին հրապարակային խոստովանությունն» է, որը հստակեցրել է նրա «հոգևոր լարվածքը» և կանխորոշել ստեղծագործական և հոգեբանական ճգնաժամից դուրս գալու ուղիները:

Դրան հաջորդող հայկական կոչվող փուլում են ստեղծվել կոմպոզիտորի հանրահայտ հայկական ստեղծագործությունները՝ «Լուսածագ», Հայկական երեք Ռապսոդիաներ, Մուրբ Վարդան սիմֆոնիա և այլն:

«Աքսոր» սիմֆոնիայում չկան ազգային երաժշտական մեջբերումներ, որը հեղինակի երաժշտական մտածողության բնութագրական արտահայտություններից է: Գեղանկարչական պատկերի հետ մտազուգորդվող եռամաս սիմֆոնիկ կտավի հուզական-գաղափարական ուղղվածությունն արտացոլող «Lament», «Conflict» և «Triumph» ենթավերնագրերը, ինչպես նաև առանձին մասերում օգտագործված ժանրային ձևերը՝ խորալ, պար, ֆուգա, դիսկրետ հույզերի և ապրումների քառտիկ փոփոխությունների խոսքային ու երաժշտական նշանակիրներն են: Սիմֆոնիայի ոճական-կառուցվածքային առանձնահատկությունները՝ օստինատ ռիթմական հյուսվածքները, ծավալուն մեղեդիական դարձվածքների ու պարային ռիթմերի համադրումները, ալեատորիկ դրվագների ու պոլիֆոնիկ ձևերի մեջընդմիջումը հանդիպում են հեղինակի գրեթե բոլոր հայկական և արևելյան գործերում:

Ալան Հովհաննեսի «Աքսոր» սիմֆոնիայի երաժշտական տեքստը՝ մելիզմատիկ ոճի մեղեդիական մտածողության գերակշռությամբ տարբերվում է թե՛ 20-րդ դարի ողբերգությունները մարմնավորող էքսպրեսիոնիստական և ավանգարդային արտահայտչամիջոցներով հագեցած արևմտաեվրոպական կոմպոզիտորների երկերից և թե՛ ժամանակակից հայ կոմպոզիտորների «Եղեռնի խորանին» մատուցած երաժշտական ընծայաբերումներից, որտեղ մարդկային խոսքին առանձնահատուկ գործառույթ է տրվում:

Նախնիների հիշատակը հավերժացնող Ալան Հովհաննեսի խորհրդանշական նվիրաբերումը իրարամերժ գնահատականների է արժանացել ամերիկյան երաժշտական հանրության տարբեր շրջաններում:

«Եղեռնին նվիրված», «Եղեռնի զոհերի հիշատակին» սրբազան խորագրերը կրող ստեղծագործությունները՝ անկախ իրենց մարմնավորումներից և դրանց համարժեք կամ տարաբժեք գե-

դարվեստական ընկալումներից, միավորված են մի թեմատիկ ժանրում, որի էթիկական, հոգեբանական ու բարոյաքաղաքական ենթատեքստը հնարավոր չէ անտեսել: Բոլոր դեպքերում օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գնահատականներով չի ավարտվում նման գործերի կարևորությունն ու կատարման անհրաժեշտությունը:

Ժողովրդի հավաքական հիշողության համալիրում ողբերգության թեման իր տարբեր ժանրային մարմնավորումներով՝ Գենոցիդի ազգային հուշապատման ինստիտուցիոնալ կառույցի մասն է և՛ հայրենիքում, և՛ սփյուռքում. դրանք իրենց «հիշեցնող ու մեղադրող» ներկայությամբ արժևորվում են «Post-Genocide» արվեստի դիսկուրսում:

ЛИЛИТ ЕРНДЖАКЯН (АРМЕНИЯ)

МУЗЫКАЛЬНЫЕ РЕФЛЕКСИИ ГЕНОЦИДА В ТВОРЧЕСТВЕ АЛАНА ОВАННЕСА

Основы инакости музыкального мышления американского композитора Алана Ованнеса в контексте музыки 20-го века прослеживаются в его армяно-шотландском происхождении, армяно-восточной идентичности и в самобытных интерпретациях художественных традиций различных восточных культур – индийской, японской, корейской и т. д.

В обширном творческом наследии Алана Ованнеса нашли отражение трагические страницы армянской истории. В докладе, в частности, обсуждается симфония “Изгнание” (№ 1, 1939), посвященная Геноциду армян. Данное сочинение стало своеобразным катарсисом в поисках музыкальной идентичности автора, предопределив пути выхода из творческого и психологического кризиса. Симфония “Изгнание” – символическая дань армянской идентичности композитора жертвам Геноцида, увековечение их памяти в звуковом пространстве индивидуализированных восприятий “космического сознания”.

MUSICAL REFLECTIONS OF ARMENIAN GENOCIDE IN ALAN HOVHANNES' WORKS

The American Armenian composer Alan Hovhanness' "otherness" in the context of the 20th century musical discourse can be explained by his Armenian-Scottish origins, Armenian oriental musical identity and his unique interpretation of different artistic traditions of eastern musical cultures - Indian, Japanese, Korean etc., available in his works.

The tragic pages of Armenian history are reflected in Alan Hovhanness' huge heritage; this article particularly tackles the "Exile" symphony (No.1, 1939), dedicated to the Armenian Genocide. The "Exile" is a kind of catharsis in the long run of Hovhanness' pursuit of national spirit and musical identity to achieve solution to his psychological and creative crisis. The symphony became a symbolic self-acknowledgement of the composer's Armenian identity, and an offering in commemoration of the victims of the Genocide in the realm of the musical space of the composer's individual perceptions.

ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈՒԽՅԱՆ. "LA PLAINTÉ DE L'ARMÉNIE"

Զեկուցումը նվիրված է 20-րդ դարի հայ ծովանկարիչ Վարդան Արիստակեսի Մախոխյանի²³⁰ (1869-1937) "La Plainte de l'Arménie" («Հայաստանի ողբը») երաժշտական ստեղծագործությանը: Հովհաննես Այվազովսկու տաղանդավոր հետնորդներից մեկը՝ Վ.Մախոխյանը, 20-րդ դարի առաջին տասնամյակների Եվրոպայի ամենաճանաչված և լավագույն ծովանկարիչներից էր, ով արժանացել էր Ֆրանսիայի և Գերմանիայի կառավարու-

²³⁰ Վ. Մախոխյանի ստեղծագործությունն ուսումնասիրելիս հիմնվել ենք հետևյալ ուսումնասիրության վրա. **Հակոբյան Ա.**, Ծովանկարիչ Վարդան Մախոխյան, Երևան, «Զանգակ» հրատ., 2004, 132 էջ:

թյունների ու մշակութային հաստատությունների ամենաբարձր տիտղոսներին:

Օսմանյան կայսրության կողմից իրականացված 20-րդ դարի ամենասարսափելի և արյունալի ոճրի՝ 1.500.000-ից ավելի հայերի՝ այդ թվում նաև իր հարազատների տեղահանությունն ու ցեղասպանությունը անտարբեր չէր կարող թողել նաև մեծ հայրենասերին, ով հայ ժողովրդի պատմության ողբալի էջերի իրադարձություններին արձագանքել է 1915-1917թթ. ընթացքում գրված յուրօրինակ երաժշտական կտավում և նվիրել այն հայրենիքին՝ Հայաստանին: Ստեղծագործությունն, ըստ Վ. Մախոխյանի, հայրենակիցների տառապանքների արձագանքն է և համաշխարհային արդարության կոչ: Հավանաբար, այն հայոց ցեղասպանության ողբերգությունն արտացոլող առաջին երաժշտական կտավն է, որը մինչ այժմ չէր արժանացել երաժշտագետ-հետազոտողների և երաժիշտ-կատարողների ուշադրությանը: “La Plainte de l’Arménie”-ն գրվել է ջութակի համար նվագախմբի կամ դաշնամուրի նվագակցությամբ:

Ամեննին պատահական չէ, որ ցեղասպանության արձագանքն արտահայտվել է Վ.Մախոխյանի երաժշտական ստեղծագործության մեջ: Ինչպես հայտնի է, Կարնո Մանասարյան վարժարանում ուսանելու տարիներին Վ.Մախոխյանը ստացել է նաև պրոֆեսիոնալ երաժշտական կրթություն որպես ջութակահար և երկվտել հետագա ուսումնառությունը շարունակել որպես երաժիշտ, թե՛ նկարիչ: Այնուամենայնիվ ընտրելով նկարչությունը՝ ինքն իրեն համարել է երաժիշտ, որը միաժամանակ զբաղվում է նկարչությամբ: Տաղանդաշատ ծովանկարիչը որպես ջութակահար բազմաթիվ համերգներով հանդես է եկել ծննդավայրում՝ Տրապիզոնում, իսկ նրա կատարողական բարձր վարպետության մասին փաստել է մամուլը: Եվրոպայում ուսանելու տարիներին տաղանդավոր արվեստագետը, հավանաբար, ինքնակրթությամբ զարգացրել է իր երաժշտական տեսական և կատարողական գիտելիքները:

“La Plainte de l’Arménie” պիեսը, ըստ էության, Վ.Մախոխյանի և հայ ժողովրդի տրամադրության և վիճակի խորհրդա-

նշական պատկերն է: Մեղեդին ներիկայացնում է բանաստեղծական և, միննույն ժամանակ, վշտագին կերպար:

1919թ. հունվարի 13-ին Մոնտե Կառլոյի «Ժամանակակից համերգներ» համերգաշարի շրջանակներում կայացել է ստեղծագործության համաշխարհային առաջին համերգային ունկնդրումը՝ Մոնտե Կառլոյի օպերային թատրոնի նվագախմբի, Բելգիայի թագավորական օպերային թատրոնի և Մոնտե Կառլոյի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր Ժորժ Լովերինի և Մոնտե Կառլոյի օպերային թատրոնի առաջին ջութակահար, «Մոնակոյի արքայազնի մենակատար» տիտղոսակիր, ջութակահար Անրի Վաժմանի կատարմամբ, որն արժանացել է հանդիսականների ջերմ ընդունելությանը և բազմաթիվ բիսերի: Ինչպես համերգաշարի կազմակերպիչ Ժ.Լովերինն, այնպես էլ Ա.Վաժմանն, իրենց հիացմունքի խոսքերն արտահայտելով, պիեսն իրենց հետագա համերգային ծրագրերում ներառելու թույլտվություն են խնդրել հեղինակից: Հայրենասիրական մեծ պոռթկումով գրված պիեսը խորապես հուզել է ներկաներին և բարձր գնահատականի արժանացել ինչպես եվրոպական մամուլի, այնպես էլ երաժշտագետների կողմից: Պահպանվել է ստեղծագործության կլավիրը:

“La Plainte de l’Arménie”-ի հայաստանյան պրեմիերան տեղի կունենա «Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում» միջազգային գիտաժողովի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կազմակերպած համերգի ընթացքում, տողերիս հեղինակի կատարմամբ: Օսմանյան կայսրության կողմից իրականացված ոճիրը դեռ չի արժանացել համաշխարհային ճանաչման: Այս առումով հատկանշական է, որ ստեղծագործությունը վերածնվում է 100 տարի անց, փաստորեն, այն իր առաքելությունը դեռ չի ավարտել: Մախոխյանական հնչյունները անընդմեջ հիշեցնելու են 100 տարի առաջ իրականացված և դեռ չդատապարտված ոճիրը՝ մինչ արդարության վերականգնումը: Այս խոր զգացմունքային երաժշտական շարադրանքը ձոն է և պատգամ. այլևս՝ երբեք...

ВАРДАН МАХОХЯН: “LA PLAINTÉ DE L’ARMÉNIÉ”

В докладе рассматривается музыкальное произведение “La plainte de l’Arménie” (“Плач Армении”), написанное армянским маринистом Варданом Махохяном (1869-1937) в 1915-1917 гг. и посвященное родине – Армении. Согласно В. Махохяну, это произведение – отзвук страданий соотечественников и воззвание к всемирной справедливости. По всей вероятности, это первое музыкальное сочинение, отражающее трагедию Геноцида армян. “La plainte de l’Arménie” – произведение для скрипки в сопровождении оркестра или фортепиано. Вовсе не случайно то, что В. Махохян отреагировал на Геноцид музыкальным произведением: в годы учебы в училище Санасарян в Эрзуруме он параллельно получил и профессиональное музыкальное образование по классу скрипки и фактически встал перед выбором – продолжить ли карьеру музыканта или стать художником. Сделав выбор в пользу живописи, он, тем не менее, считал себя музыкантом, занимающимся изобразительным искусством.

Премьера рассматриваемого произведения состоялась 13-го января 1919 года в Монте-Карло в исполнении Анри Важмана и оркестра Оперы Монте-Карло под управлением дирижера Джорджа Ловерина. Сохранился клави́р произведения.

Впервые в Армении “Плач Армении” будет исполнен автором этих строк на концерте, организованного Институтом искусств НАН РА в рамках международного научного симпозиума “Геноцид армян – 100: от признания к реституции”.

VARDAN MAKHOKHYAN: “LA PLAINTÉ DE L’ARMÉNIÉ”

The paper analyzes the musical composition “La plainte de l’Arménie” (“Lamentation of Armenia”), written by the Armenian marine

artist Vardan Makhokhyan (1869-1937) in 1915-1917 and dedicated to his Fatherland – Armenia. As V. Makhokhyan put it – the composition is an echo of the torments of his compatriots and a call for the world justice. “La plainte de l’Arménie” – a piece for violin accompanied by orchestra or piano – is most likely the first to reflect the tragedy of the Armenian Genocide. It is not surprising that V. Makhokhyan reacted to the Genocide with a musical composition: in the years of study at the Sanasarian College in Erzurum, he concurrently took classes of violin and, in fact, had had to choose between the careers as a musician and a painter. Having made a choice in favor of painting, he, however, considered himself a musician engaged in fine arts.

The premiere of the work under review took place on 13 January 1919 in Monte-Carlo. Henri Vazhman performed it with the Orchestra of the Monte-Carlo Opera; conductor – George Lovering. The clavier of the work has survived.

In Armenia, “La plainte de l’Arménie” was first performed by the author of these lines at the concert within the framework of the international symposium “The Genocide of Armenians – 100: from Recognition to Restitution”, organized by NAS RA Institute of Arts.

ԼԻԼԻԹ ՊԻՊՈՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՍՈՒՐԵՆ ՊԻՊՈՅԱՆԻ «ԳԱՂԹ» ԳԵՂԱՆԿԱՐԸ

Հայաստանի վաստակավոր նկարիչ Սուրեն Պիպոյանի «Գաղթ» մոնումենտալ կտավը արվեստաբանների կողմից չի լուսաբանվել:

Նկարչի գեղարվեստական ժառանգության մեջ զգալի տեղ են զբաղում մեծածավալ կոմպոզիցիոն գեղանկարչական աշխատանքները, որոնցից առանձնանում է հայոց Մեծ եղեռնին նվիրված «Գաղթ» աշխատանքը, որը դարձավ նկարչի կյանքի առանցքային ստեղծագործությունը:

15 տարի շարունակ այս թեման զբաղեցնում էր նկարչի միտքը: 1964 թվականի դեկտեմբերից նա սկսում է աշխատել

առաջին կտավի վրա: Իր օրագրում նա գրում է. «Կարդում և ուսումնասիրում եմ հայկական կոտորածներից տեղեկություններ, գարնանը ցուցահանդես է լինելու»: Մեկ այլ տեղ. «Այսպես, ուրեմն - «Գաղթ» կոմպոզիցիոն կտավի վրա աշխատեցի 25 օր – ստեղծագործական բուռն շրջան էր, խիստ լարված էի աշխատում... Կոմպոզիցիան բաղկացած է 100 ֆիգուրներից, բոլորը մեկ առ մեկ նկարել էր հարկավոր: Աշխատանքը կատարեցի չափազանց խիստ ոճով, պայմանական միջավայրում և սիմվոլիկ: Ցուցահանդեսում աշխատանքը միահամուռ հավանության արժանացավ, ոմանց վրա ցնցող տպավորություն թողեց»:

Կտավի չափսերն են 122 x 140 սմ: Այս առաջին օրինակը կատարված է նկարչի տվյալ շրջանին բնորոշ գրեթե մոնոխրոմ, գուսպ և մուգ դարչնականատավուն ներկայանակով, նկարչին հատուկ կուրիատական–էքսպրեսիոնիստական ոճով, լերկ, դաժան անապատի թեք մակերեսով (գուցե՝ լեռներով) ընթացող մարդկային անծայր շարասյուների պատկերմամբ: Թեև նրանք գնում են մթնից դեպի լույս, սակայն նկարի ընդհանուր տրամադրությունը ողբերգական է, ցավալի: Հեռվում նշմարվում է Ս. Հռիփսիմե վանքի ուրվագիծը: Նկարը անվանվեց «Փրկության ճանապարհ»: 1967 թվականին Մուրեն Պիպոյանը կատարեց նկարի հեղինակային կրկնօրինակը, քիչ ավելի մեծ չափսերի. 160 x 200 սմ: Այս օրինակը կոչվեց «Դեպի նոր Հայաստան», Խորհրդային Հայաստանի գաղափարախոսությանը համահունչ:

1979 թվականին Մուրեն Պիպոյանը կրկին անդրադառնում է այս թեմային, սակայն հիմնականում պահպանելով նույն հորինվածքը, դրան բոլորովին նոր ոճական և կատարողական մեկնաբանություն է տալիս: Նախ և առաջ որոշվեցին չափսերը՝ նախորդներից շատ ավելի խոշոր. 300 x 375 սմ: Փոխվեց գունային լուծումը, մուգ դարչնագույնից դեպի ոսկեգույնը, սպիտակը, երկնագույն–մոխրագույնը: Ավելացավ մի կարևոր դետալ. Գաղթականներին ընդունում են հրեշտակները: Կտավի ստեղծման ընթացքում ուսումնասիրվել են հայկական ազգային տարազները:

Տունուտեղ լքած, բռնի տեղահանված հայությունը գնում է դեղին անապատով, փրկելով թանկագին մասունքները՝ գիրք, սրբապատկեր, խաչքար, գրկած տանում են մանուկներին, հի-

վանդ հարազատներին: Նրանց շարքերում կարելի է նկատել Կոմիտասի ֆիգուրը: Հողմը կարծես քշում է մարդկանց: Մի կերպ դիմադրելով՝ նրանք շարժվում են առաջ: Թռչունները աղաղակում են: Գաղթականները հրեշտակներին ընդառաջ, դեպի երկինք են գնում կամ՝ դեպի նոր Հայաստան: Հեռվում Ս. Հռիփսիմե եկեղեցու ուրվագիծն է: Կտավը միևնույն ժամանակ և ողբերգական է, և կենսահաստատ՝ շնորհիվ ոսկեգույն կոլորիտի և կոմպոզիցիոն դինամիկ դիթամի: Այն հագեցած է օդով, ինչն առհասարակ բնորոշ է Պիպոյանի կտավներին²³¹: Մա այն հազվագյուտ նկարներից է հայոց ցեղասպանության թեմայով, որը ողբերգականության հետ մեկտեղ հաստատում է հայ ժողովրդի մարդկային բարձր արժանիքները՝ որպես սեփական մշակույթին հավատարիմ և ապրելու հսկայական կամք ու կենսուժ ունեցող ժողովրդի:

1980 թվականին աշխատանքը ցուցադրվեց Հայաստանի նկարիչների միությունում և արժանացավ «Տարվա լավագույն գեղանկարչական աշխատանք» մրցանակին: Հետագայում ցուցադրվել է Հայոց ցեղասպանության պետական թանգարանի կոնֆերենց-սրահում: 2005-ից հետո չի ցուցադրվել: 2015 թվականի մայիս-հունիս ամիսներին, Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ անցկացվող միջոցառումների շրջանակներում, Գաֆեաճեան արվեստի կենտրոնը որոշեց այն ժամանակավոր ցուցադրության դնել:

ЛИЛИТ ПИПОЯН (АРМЕНИЯ)

КАРТИНА «ИСХОД» СУРЕНА ПИПОЯНА

Заслуженный художник Армении Сурен Пипоян работал в различных жанрах, но среди его работ особое место занимают крупные сюжетные композиции. Одной из них является монументальная картина «Исход», которую можно назвать центральной в его

²³¹ Ինչպես գրում է Վահան Հարությունյանը, «Պիպոյանը լավ գիտի, ինչ է օդի շերտը, քիչ չի երփնագրել օդով առատ, նույնիսկ գերառատ գործեր»: – Սուրեն Պիպոյան, ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 1982, առանց էջակարգման:

творческой биографии. В 1965 году на республиканской выставке, посвященной 50-летию армянского геноцида, была представлена картина «Дорога спасения» (холст, масло, 122 x 140), через 2 года художник выполнил авторскую копию большего размера, назвав ее «К новой Армении» (холст, масло, 160 x 200), а в 1980 году был завершен окончательный вариант данной композиции под названием «Исход» (холст, масло, 300 x 375). Первые работы были выполнены в жесткой, несколько суровой, чуть кубистической манере и почти монохромной коричнево-серо-белой цветовой гамме. Изображены толпы согбенных людей, бредущих по пустынной каменистой земле, а вдалеке – свет. Последняя, основная версия работы в основном сохраняет прежнюю композицию, но кардинально изменился цвет и манера письма. Здесь преобладает золотисто-желтый в сочетании с серым и несколькими черными пятнами, полотно одновременно и трагично и жизнеутверждающе. Изображенные здесь люди спасают не только себя, они спасают и национальные реликвии – художественные и культурные ценности армянского народа.

LILIT PIPOYAN (ARMENIA)

THE “EXODUS” OF SUREN PIPOYAN

Suren Pipoyan has been working in different genres, but the monumental compositions occupy a special place among his works. The “Exodus” is one of them, which can be called as the central work in his artistic biography. In 1965 the first version of it, called “The road of salvation”, (c.,o., 122*140 sm) was presented for the republic art exhibition dedicated to the 50-th anniversary of Armenian genocide. In two years’ time the artist executed the copy of larger size (c.,o., 160 * 200sm), calling it as “Road to New Armenia”. In 1980 the final version of this composition was fulfilled (c.,o., 300*375sm). The first copies of it were made in rather tough, a little bit somber, cubistic manner and almost monochrome, in grey-brown colors. The columns of bent down people, going through the desert, stone ground towards the light in a distance. The last, basic version of this work keeps the composition almost the

same, but the color and the manner of painting have been changed dramatically. Here, the yellow-gold color in combination with grey and some black spots are the priority. The canvas is tragic and life-asserting at the same time. People are carrying the cultural relics upon themselves.

ՍԱԹԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ԵՂԻՇԵ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ ԿԱՐՄԻՐ «ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԸ»

Այս տարի լրանում է հայ գեղանկարչության ականավոր վարպետներից մեկի՝ իմպրեսիոնիզմի ուղղության հետևորդ Եղիշե Թաղևոսյանի (1870-1936) ծննդյան 145-ամյակը: Մեր գեկուցումը նվիրված է Ե. Թաղևոսյանի մեկ կտավի ուսումնասիրությանը, որը ժամանակին գտնվել է Շոդակաթ եկեղեցում, իսկ այսօր հանգրվանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նոր վեհարանում: «Խաչելություն» խորագիրը կրող այս նկարը բացահայտում է նկարչի արվեստի չուսումնասիրված էջերից մեկը՝ 1915-1918 թվականների եղերական իրադարձությունների պատկերավոր արտահայտությունը²³²:

Ե. Թաղևոսյանի կյանքն ու գործունեությունը միահյուսվել էր իր հայրենակիցների ճակատագրի ողբերգական էջերին. նա Վաղարշապատում ականատես է լինում եղեռնապուրծ հայության տառապանքներին: Թուրք բարբարոսների կողմից հայության անլուր հոշոտումները ցնցում են հայ մտավորականներին՝

²³² Ե. Թաղևոսյանի արվեստի ուսումնասիրողները հիշատակել են սույն աշխատանքի անունը միայն: Տե՛ս. **Հովսեփյան Գ.** «Նկարիչ Եղիշե Թաղևոսյան» // **Գարեգին Հովսեփյան**, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Ա, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983, էջ 156, **Драмлян Р. Г.** Егеше Татевосян, Москва, «Искусство», 1957, с. 98, **Մարտիկյան Ե.** Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Գ, Երևան, «Սովետական գրող», 1983, էջ 131, **Աղասյան Ա.** Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, էջ 39:

Մարտիրոս Մարյանին ու Վահան Տերյանին, Եղիշե Թադևոսյանին ու Եղիշե Չարենցին: Ահա թե ինչ է գրում վերջինս հայացունց այդ դեպքերի մասին.

Նայեցեք – նայեցեք, դուք ինձ չե՞ք ճանաչում.
Ես սիրել եմ աշխարհը այնքան...
Բայց հիվանդ օրերի թունավոր կանչում
Ես բացել եմ թևերս արնաքամ:

Եվ բնավ պատահական չէ, որ ծնվում է Ե. Թադևոսյանի «Խաչելությունը» (1918, կտավ, յուղաներկ, 96 x 61): Յուրաքանչյուր մարդու այս աշխատանքը կթվա անսովոր՝ իր արնավառ գույներով պարուրված խորքով: Սակայն հոգեբանական հատուկ դասեր չեն պահանջվի հասկանալու համար, որ ստեղծագործության հեղինակը գտնվել է անհանգիստ, բորբոքված հոգեվիճակում: Կյանքի ու պայքարի կարմիր գույնը պարուրել է տիեզերքն այնպես, կարծես խառնվել է արյան, ողբերգության գույնին՝ տեղ-տեղ ընդունելով գորշ երանգներ: Չոհաբերվող Հիսուսի այս պատկերում ներկա իրականության մեջ նորից կրկնվող ստոր վճիռն է և մարդկային անսփոփ ողբերգությունը: 1914-1918 թվականներին գրած նամակներում արվեստագետն արտահայտել է իր վրդովմունքը, ցավը, տառապանքը:

Ե. Թադևոսյանը եղել է բնության ու մարդու ներդաշնակության, գեղեցիկի ակնթարթը և հավերժությունը զգացող երգիչ և երբեք չի հարել մոդեռնիզմի որևէ ուղղության հավատարիմ մնալով պլեներային գեղանկարչությանը: «Խաչելություն» կտավը Հայաստանում տիրող հասարակական-քաղաքական ծանր կյանքի և մտավորականների հոգևոր երկատվածության ու ընկճվածության մթնոլորտի պատկերավոր արձագանքն էր: Բնական է, որ այս նկարում ի հայտ եկան արտահայտչական այն միջոցները, որոնք հատուկ էին էքսպրեսիոնիզմին. սոցիալական քննադատության պաթոսը, ինքնաարտահայտման գերզգայունությունը, մարդու հոգևոր աշխարհի սուբյեկտիվ պատկերումը, զգացմունքների հիվանդագին լարվածությունը, շրջապատող աշխարհի դեֆորմացիան: Առաջին համաշխարհային պատերազմից հե-

տո էքսպրեսիոնիստների և նրանց հարողների թիվն ավելանում էր: Նրանց ստեղծագործության հիմնական գիծը շարունակում էր մնալ ծայրահեղ հռեռետետությունը: Պատահական չեն նաև Եղիշե Չարենցի՝ այդ տարիներին գրած բանաստեղծություններն ու պոեմները, հատկապես «Ողջակիզվող կրակ» շարքը.

Ինչպես երկիրս անափովի, ինչպես երկիրս բախտագուրկ,
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ -
Մխում է սիրտս հիմա որք, մխում է սիրտս բախտագուրկ
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...

Արվեստի պատկերավոր ընկալումը և՛ պոեզիայում, և՛ կերպարվեստում տվյալ դեպքում արտահայտում է միևնույն տեսիլքը:

Զեկուցման մեջ հիշատակվում է ֆրանսիական սիմվոլիզմի ամենացայտուն ներկայացուցիչներից մեկի՝ նկարիչ Մորիս Դենիի «Խաչելությունը» (1890), որն իր հորինվածքով, գույներով՝ կարմիր երկինք, մուգ ուրվագծային մարմիններ առաջին պլանում, ինչ-որ չափով հիշեցնում է Ե. Թադևոսյանի կտավը: Մակայն ֆրանսիացի մեծ վարպետի աշխատանքը, ի տարբերություն Ե. Թադևոսյանի համանուն կտավի, դեկորատիվ լուծում է ստացել և կրում է սիմվոլիզմին հատուկ երևակայական բնույթ:

Ե. Թադևոսյանի նկարում պատկերված տեսարանն ամբողջությամբ թափանցված է ողբերգության խորհրդավորությամբ: Այդ առումով այն զուգորդվում է XVI-XVII դարերի իսպանացի, ազգությամբ հույն մեծ նկարիչ Էլ Գրեկոյի արվեստի հետ՝ դրան բնորոշ «նյարդային, դողահար» մթնոլորտով:

Եղիշե Թադևոսյանի «Խաչելությունը» թե՛ իր ընդհանուր պատկերագրությամբ, թե՛ կարմիր գույնի խորհրդաբանությամբ տարբերվում է ոչ միայն միջնադարում, այլև նոր և նորագույն ժամանակներում հայ նկարիչների վրձնած խաչելության տեսարաններից:

КРАСНОЕ «РАСПЯТИЕ» ЕГИШЕ ТАТЕВОСЯНА

В музее первопрестольного Эчмиадзина хранится полотно выдающегося армянского художника, мастера импрессионистической живописи Егише Татевосяна (1870-1936) «Распятие» (1918, холст, масло, 96x61). Будучи живым свидетелем, художник остро переживает последствия жесточайшей резни армян 1915-1918 годов. Как результат - рождается картина, не совсем свойственная его творчеству в целом. Раскаленно-красное «Распятие» Е. Татевосяна отличается экспрессионистической трактовкой: субъективным выражением внутренних переживаний, болезненным напряжением чувств, деформацией объектов. В те же годы в поэзии великого армянского поэта Егише Чаренца рождается серия стихов и поэм, где автор также ассоциирует события геноцида со вселенной, окрашенной в красный цвет с примесью крови как бы заново распятого Христа. До сих пор недостаточно исследованная картина Е. Татевосяна сегодня предстает в новом свете.

SATENIK VARDANYAN (ARMENIA)

RED «CRUCIFIXION» OF YEGHISHE TADEVOSYAN

The canvas of the outstanding Armenian artist, a master of impressionist painting Yeghishe Tadevosyan (1870-1936) «The Crucifixion» (1918, oil on canvas, 96 x 61) is stored in the Museum of Mother See of Holy Etchmiadzin. As a witness, the artist stung the consequences of severe massacre of Armenians in 1915-1918. As a result, the picture was born which was not characteristic to his work. Tadevosyan's red-hot-red «Crucifixion» is distinguished by its expressionist interpretation: subjective expression of inner experiences, sickly emotional strains, deformation of objects. In those same years, in the poetry of great Armenian poet Yeghishe Charents was born a series of verses and poems where the author also associated the events of the genocide with the universe,

shrouded in red with blood, to reiterate the infamous sentence in the image of the crucified Christ. Still unexplored picture of Yeghishe Tadevosyan appears in a new light now.

АРСЕН АМБАРЦУМОВ (АРМЕНИЯ)

ТЕМА ГЕНОЦИДА В ФИЛЬМЕ ГЕНРИКА МАЛЯНА “НААПЕТ”

Геноцид армян 1915 года в Османской Турции является одной из трагических страниц в нашей истории. Более полутора миллионов наших соотечественников - как простых граждан, так и представителей интеллигенции, были истреблены по одной причине: они были армянами. Будучи нацией, проживающей на своей исконной территории, мы превратились в людей второго сорта, в людей, которые были лишены многих гражданских прав.

К этой трагической странице в истории нашего народа обращались и в советское время. Тема геноцида нашла свое отражение в искусстве, в том числе и в искусстве кино. В этой статье мы будем говорить о фильме “Наапет”, который был снят в 1977 году режиссером Г. Маляном по одноименной повести Р. Кочара.

Тема геноцида выражена в образе главного действующего лица – Наапета. В начале фильма зритель видит человека, идущего по дороге. Общие и средние планы, сменяя друг друга, представляют зрителю путника, ищущего пристанища. Спустя некоторое время, зритель узнает, что это Наапет. Во время геноцида, устроенного турками, он потерял свою семью и вынужден был перебраться в Восточную Армению, в село, где живет его сестра. Путь героя во временной последовательности занимает целую сцену. При этом новая сцена начинается кадрами, где мы видим Наапета в иной обстановке – в доме, зажигающим свечу.

Монотонный ритм, статичные кадры еще больше акцентируют внимание на главном действующем лице фильма и трагедии 1915 года. Сюжетная линия фильма несколько сужена. Акцентиро-

ван переход Наапета на новое место жительства, его знакомство с Нубар и рождение ребенка. Это еще больше выделяет образ Наапета, которого на экране воплощает Сос Саркисян. Игра актера спокойна и сосредоточена. Мы видим человека, который очень сильно переживает смерть родных ему людей. Малян использует в фильме интересный режиссерский прием. Он противопоставляет образ главного героя остальным жителям деревни, придавая ему драматические черты. Наапет или не вступает в диалог с жителями деревни, или общается с ними крайне редко. В этих сценах режиссер и оператор (С. Израелян) используют межкадровый монтаж, показывая действующих лиц отдельными кадрами (это, например, кадры с детьми, которые смотрят на Наапета и т.д.). С помощью межкадрового монтажа представлены также воспоминания героя: сцены убийства жены и детей Наапета. Воспоминания здесь составляют одну из сюжетных линий фильма и несут важную смысловую нагрузку.

Развивая действие, режиссер соединяет вместе двух людей: Наапета и Нубар, что символизирует начало новой жизни.

Нубар (Софик Саркисян) также потеряла семью. По совету сестры Наапета Антарам (Галя Новенц) и ее мужа Апро (Мгер Мкртчян) двое одиноких людей решают создать семью. Та часть фильма, где Наапет и Нубар показаны вместе, выдержана в несколько сдержанных тонах. Супруги ведут обыкновенный, размеренный образ жизни, свойственный людям, живущим в деревне. Но жизнь преобразуется после рождения ребенка. Она приобретает новые, яркие краски. В фильме интересно использован и образ дерева, которое сажает Наапет. Дерево, дающее плоды, является символом новой жизни. “Наапет – это, по сути, тот характер, от которого ведет дорога к национальному характеру нашего современника”²³³

“Наапет” Генрика Маляна занял видное место в истории национального кино. Само по себе воплощение на экране трагедии 1915 года было правильным и необходимым решением.

²³³ Калантар Карен, Верный божеству искусства (О Генрике Маляне), Ереван, Мива-пресс, 2000, с. 44.

Главным действующим лицом здесь стал человек со своими горестями и радостями - человек, который, несмотря ни на что, смог создать семью и снова вернуться к жизни.

ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՈՎ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՀԵՆՐԻԿ ՄԱԼՅԱՆԻ
«ՆԱՀԱՊԵՏ» ՖԻԼՄՈՒՄ**

1915 թ. ցեղասպանությունը իսկ 1,5 միլիոն անմեղ մարդկանց կյանք: Այս թեման ընկած է Հենրիկ Մալյանի “Նահապետ” ֆիլմի հիմքում, որը նկարահանվել է Հրաչյա Քոչարի համանուն պատմվածքի հիման վրա: 1915 թ. ողբերգությունն արտացոլված է գլխավոր հերոսի՝ Նահապետի կերպարում, ով, կորցնելով իրեն հարազատ մարդկանց, ստիպված բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում, ընտանիք կազմել, շարունակել իր ցեղը: Ֆիլմի սյուժեի զարգացումը փոքր-ինչ սեղմ է: Միջկադրային մոնտաժը, անշարժ կադրերը, գործողության միապաղաղ ռիթմն է՛լ ավելի են առանձնացնում գլխավոր հերոսի կերպարը և իր վերապրած ողբերգությունը:

“Նահապետը” ստեղծված է մալյանական կինեմատոգրաֆի լավագույն ավանդույթների շրջանակներում, որտեղ լիրիկական տարրն առաջնային տեղ է զբաղեցնում:

ARSEN HAMBARDZUMOV (ARMENIA)

**GENOCIDE THEME IN HENRIK MALYAN’S
FILM “NAHAPET”**

The genocide of 1915 took 1,5 million of innocent lives. This theme is the essential component of Henrik Malyan’s film “Nahapet” shot on the basis of H. Kochar’s story of the same name. The 1915 tragedy is reflected in the character of main hero Nahapet who after losing his close relatives was obliged to move to Eastern Armenia, create a family and continue his gender. The subject development of the film is

a little compressed. The interframe mounting, static shots, a bit monotone rhythm even more singles out the main hero's character and the tragedy he suffered.

“Nahapet” is composed within the best traditions of Malyan's cinematography in which the lyrical component occupies its leading place.

ԳԱՅԱՆԵ ԱՄԻՐԱՂՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՈՐՈՇ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ
ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայ երաժշտական քանահյուսության առանձնահատուկ շերտն են կազմում 1915-23 թթ. Օսմանյան Թուրքիայի իրագործած Հայոց ցեղասպանության թեմային նվիրված երգերը: Սույն աշխատանքում ուսումնասիրության նյութ են հանդիսացել Մեծ եղեռնի թեմայով ստեղծված ժողովրդական երգերի 22 նոտագրված նմուշները, որոնք առանձին բաժնով ներառված են Վերժինե Սվազյանի «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» սովորաբար աշխատության մեջ²³⁴: Դիտարկվող երգերի կրողները ցեղասպանության ականատեսներն են և նրանց հաջորդ սերունդները, որոնք ներկայացնում են Արևմտյան Հայաստանի տարբեր ազգագրական գոտիները: Երգերի քանաստեղծական տեքստերը հավաստի կերպով արտացոլում են ցեղասպանության տարաբնույթ իրողու-

234 Սվազյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 638-660: Վերոհիշյալ երգերի մասին հողված է հեղինակել երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Անահիտ Բաղդասարյանը՝ հիմք ունենալով Վ. Սվազյանի նույն աշխատության՝ 2000 թ. Հրատարակությունը: Տե՛ս Բաղդասարյան Ա., Հայոց ցեղասպանության մասին ժողովրդական երգերը՝ երաժշտաբանաստեղծական հատկանիշների տեսանկյունով, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական աշխատությունների հանդես, Երևան, 2002, թիվ 6, էջ 94-104:

թյունները (գորահավաք և զինահավաք, տեղահանություն, կոտորած, հայրենիքի կորուստ և որբություն, արտագաղթ, հայրենասիրություն և հերոսամարտ, բողոք և պահանջատիրություն), ինչպես նաև այդ երգերը ստեղծողների և կրողների հուզաշխարհը, խոհերն ու տրամադրությունները:

Թեմատիկայի տեսանկյունից ցեղասպանությանը նվիրված երգերի վերոհիշյալ 22 նմուշները վերաբերում են պատմական երգերի ժանրին: Վերջինս իր հերթին ունի տարբեր ոճական դրսևորումներ՝ կապված մի կողմից՝ հայ գեղջկական երգի տարբեր ենթատեսակների, մյուս կողմից՝ քաղաքային երգի հետ: Մեր դիտարկած երգերի գերակշռող մասը ոճականորեն հարազատ է գեղջկական երգին և որոշակի առնչություններ ունի քնարական երգերի, լացերի, օրորոցայինների և պանդխտության երգերի հետ: Սակավաթիվ նմուշներ ոճական առումով մոտ են հայկական քաղաքային երգին:

Վ. Սվազյանի բնորոշմամբ «պատմականությամբ հագեցած և հավաստի վավերագրերի արժեք ունեցող»²³⁵ այս երգերը միևնույն ժամանակ հայ ազգային երգաստեղծության ինքնօրինակ, բարձր գեղարվեստականությամբ օժտված դրսևորումներից են, հայ ժողովրդի աննկուն հոգևոր ուժի և ստեղծագործական հանճարի ցայտուն վկայությունները:

ГАЯНЕ АМИРАГЯН (АРМЕНИЯ)

НЕКОТОРЫЕ ЖАНРОВЫЕ И СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ НАРОДНЫХ ПЕСЕН, ПОСВЯЩЕННЫХ ТЕМЕ ГЕНОЦИДА АРМЯН

Особую часть армянского музыкального фольклора представляют народные песни, посвященные теме Геноцида армян, который был осуществлен властями Османской Турции в 1915-23 гг. Материалом для данного исследования послужили 22 образца нотированных народных песен, которые опубликованы в масштабном труде Вержине Свазян «Геноцид армян: свидетельства очевидцев» (Ере-

²³⁵ Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 18:

ван, 2011, с. 638-660). С точки зрения тематики исследуемые образцы относятся к жанру исторических песен. Данный жанр характеризуется разными стилистическими проявлениями, которые связаны, с одной стороны, с различными жанрами армянской крестьянской песни, а с другой – с армянской городской песней. Большинство рассмотренных нами песен стилистически близки крестьянской песне и обладают конкретными связями с лирическими и скитальческими песнями, песнями-плачами, колыбельными. Некоторые образцы по своим стилистическим особенностям относятся к жанру армянской городской песни.

GAYANE AMIRAGHYAN (ARMENIA)

CERTAIN GENRE AND STYLISTIC PECULIARITIES OF THE FOLK SONGS DEDICATED TO THE ARMENIAN GENOCIDE

The songs dedicated to the Armenian Genocide perpetrated by the Ottoman Empire in 1915-23-ies form a specific layer of the Armenian folk music. The present Article studies 22 models of folk songs recorded with notes, which were included in a separate section of the voluminous book «The Armenian Genocide: Testimonies of the eyewitness survivors» by Verzhine Svazlyan (Yerevan-2011, pp. 638-660). According to their topic, the examined models refer to the genre of historic song. The latter, in turn, is manifested in different styles, depending on different genres of the rural Armenian song on the one hand and the urban song on the other hand. The major part of the songs that we considered has stylistic affinities with the rural Armenian song and certain points of reference with lyric songs, clamors, lullabies and wanders songs. Few models have stylistic correlations with the urban Armenian song.

**ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ԱՐԶԱԳԱՆՔԸ
ԼԵՎՈՆ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Զեկուցման մեջ վերլուծված են ֆրանսահայ արվեստագետ Լևոն Թուրունջյանի 1930-60-ական թթ. ընթացքում իրականացված տասնյակ սյուրռեալիստական աշխատանքներ: Եղեռնից փրկված և 1923-ից Փարիզում հաստատված հանճարեղ նկարչի արվեստը բազում ոճային փոփոխություններ ունեցավ, որոնցից առանձնանում են խորհրդանիշներով հագեցած նրա սյուրռեալիստական ոճի աշխատանքները: Դրանք հավասարազոր են սյուրռեալիստ մեծագույն նկարիչների ստեղծագործություններին և բացարձակ ինքնատիպ լինելով՝ ի ցույց է դնում Թուրունջյանի ստեղծագործության գեղագիտական և բովանդակային ողջ խորությունը: Թուրունջյանի սյուրռեալիստական կտավներում տեսնում ենք արմատների, չորացած ծառերի, պտուղների, քարե բեկորների, կախաղանի պարանների, պատուհանների, շախմատաձև սալահատակի, կտրած ձեռքերի, գլուխների պատկերում: Առաջին հայացքից չհամադրվող այդ առարկաները Թուրունջյանի արվեստում ներդաշնակորեն համադրվում են և խորը իմաստ ձեռք բերում՝ վերածվելով մի ինքնատիպ բառարանի արվեստագետի վիշտն արտահայտելու համար:

Զեկուցման մեջ վերլուծած նկարների կոմպոզիցիոն լուծումները և դետալները վկայում են նկարչի արտահայտչալեզվի ինքնատիպության մասին, պարզաբանում են սյուրռեալիստական ոճի միջոցով եղեռնից մնացած հիշատակների արտահայտման պատճառները:

Փարիզի արվեստագետների բովում ստեղծագործած, Պիկասոյի, Դալիի, Միրոյի, Մագրիտի, Ջակոմետիի և Ժամանակվա այլ մեծանուն արվեստագետներին հավասար ցուցադրված արվեստագետի սյուրռեալիստական ստեղծագործությունը մի առանձին աշխարհ է, որում միահյուսվել է հիշողությունը, վիշտը, գերբնականն ու իրականը: Զեկուցման մեջ ներկայացված նկարները չեն պարունակում մահվան կամ ջարդի անմիջական պատկերում, սակայն դրանք դիտելիս թվում է, թե տեսնում ենք

նկարչի հիշողության և տեսիլքի պրիզմայի միջով անցած մի տանջալից հիշատակ, ցավի հառաչ: Կարծես թե մի պատմություն ընթերցենք, որը լուռ պատմում է տեղի ունեցած արհավիրքի մասին: Եղեռն, որից անցել է արդեն ուղիղ մի դար, և որը, սակայն, այնքա՛ն մոտ է թվում: Հիշատակ, որ ապրում ենք մեր արյան մեջ: Հիշատակ, որի փայլուն արտահայտումն է հայրենիքի կարոտով ապրած մեծատաղանդ հայորդի Լևոն Թուրունջյանի վրձինը:

ИРИНА ГАРАСЕФЕРЯН (АРМЕНИЯ)

ЭХО АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ТВОРЧЕСТВЕ ЛЕОНА ТЮТЮНДЖЯНА

В данном докладе рассмотрены десятки сюрреалистических работ 1930-60-х гг. французского художника армянского происхождения Леона Тютюнджяна. Творчество уцелевшего во время геноцида и обосновавшегося в Париже в 1923 г. художника претерпело много стиливых изменений, и все же наибольший интерес представляют его сюрреалистические работы. Композиционные решения и детали этих картин свидетельствуют о самобытности стиля автора, объясняют причины того, почему Тютюнджян предпочитает выражать свои впечатления и воспоминания о геноциде армян в сюрреалистических формах.

Представленные картины не содержат сцен смерти или убийств, однако, глядя на них, кажется, что сквозь призму памяти художника мы видим болезненное воспоминание, мучающее память автора и целого народа. Память, выражением которой стала кисть блестящего художника Леона Тютюнджяна.

IRINA GARASEFERYAN (ARMENIA)

THE ECHO OF ARMENIAN GENOCIDE IN THE ART OF LEON TUTUNDJIAN

This article analyzes surreal paintings of 1930-60's by the French artist with Armenian origins Leon Tutundjian. Surviving the Armenian genocide and settling in Paris in 1923 this painter worked in many

different styles, but the most outstanding of them are his surrealist creations. Analysis of their compositions and details show the original style of the author, explain the reasons why he transferred the memories of genocide by surrealism.

Pictures presented in the article do not contain scenes of death or murder, but looking at them it seems that through the light of vision and memory of the artist we see the painful memory of the whole nation. Memory, expressed by the brilliant brush of Leon Tutundjian.

ՆԱԻՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՀԱՅՍՍՏԱՆ)

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌԸ ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Հայոց պատմության ամենաողբերգական էջերից է Մեծ եղեռնը, որը կազմակերպվել և իրագործվել է նախորդ դարի սկզբին Օսմանյան կայսրության իշխանության դեկին կանգնած երիտթուրքական կուսակցության կողմից:

Այս տարի լրացավ Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցը, և ոչ միայն ողջ աշխարհով մեկ սփռված հայությունը, այլև շատ երկրներ խորը ցավով նշում են մարդկության պատմության սուսկալի էջերից մեկը:

Հայ մտավորականներն ու արվեստագետները բազմիցս անդրադարձել են 1915 թվականի ապրիլյան իրադարձություններին:

Մերօրյա տաղանդաշատ կոմպոզիտոր Վարդան Ալեքսանդրի Աճեմյանը, ով ղեկավարում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ամբիոնը, իր ուսանողների և առհասարակ հայ երիտասարդների համար հայրենասեր մարդու, հմուտ մանկավարժի, հիանալի և ճանաչված ստեղծագործողի, կիրթ անձնավորության վառ օրինակ է:

Փոքրուց շրջապատված լինելով տաղանդավոր արվեստագետներով (պապիկը՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, Մոցիալիստական աշխատանքի հերոս, Պետական մրցանակ-

ների դափնեկիր, ռեժիսոր Վարդան Աճեմյանը, տատիկը՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, դերասանուհի Արուս Ասրյանը, հայրը՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, Պետական մրցանակների դափնեկիր, կոմպոզիտոր Ալեքսանդր Աճեմյանը, մայրը՝ դաշնակահարուհի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Նաթելլա Աճեմյանը)՝ Վարդան Աճեմյանը մեծացել է ազգային հենքի վրա խարսխված համամարդկային բարձր արժեհամակարգի մթնոլորտում:

Մեկ անգամ չէ, որ Վարդան Աճեմյանն անդրադարձել է Հայոց եղեռնին, իսկ 100-ամյակի առիթը, պարզապես, չէր կարող դուրս մնալ կոմպոզիտորի ուշադրությունից: Սա ուներ իր բացատրությունը: Անձնական զրույցում կոմպոզիտորը նշում է. «Պապիկս Վանից էր, և Հայոց եղեռնի թեման ինձ միշտ հուզել է. ես մեծացել եմ այդ տրամադրության մեջ, ինձ այդպես են դաստիարակել: Պապիկս հաճախ հուզմունքով պատմում էր, թե ինչպես են մազապուրծ փախել Վանից»:

Տարիներ շարունակ կոմպոզիտորի հոգում կուտակված այս թեման ի վերջո լույս աշխարհ դուրս եկավ երաժշտության միջոցով, որը մնայուն արժեք է սերունդների համար:

Առաջին ստեղծագործությունը՝ Կոնցերտը սուպրանոյի, մեցցո-սուպրանոյի և կամերային նվագախմբի համար, լույս աշխարհ եկավ 1981 թվականին: Ուղիղ երեսուն տարի անց, 2011 թվականին ստեղծվում է «1915»-ը՝ պոեմ խառը երգչախմբի համար: Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցը խթան հանդիսացավ Չորրորդ սիմֆոնիայի լույս աշխարհ գալու համար:

Այսպես, հայերի ցեղասպանությանը նվիրված առաջին ստեղծագործությունը Կոնցերտն էր սուպրանոյի, մեցցո-սուպրանոյի և կամերային նվագախմբի համար՝ ընդլայնված կազմով: Այն առաջին անգամ կատարվեց 1982 թվականի մայիսի 20-ին Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը: Կատարողներն էին Ռեբեկա Օջախյանը (սուպրանո), Մարիետա Շահվերդյանը (մեցցո-սուպրանո) և Կամերային նվագախումբը՝ դիրիժոր Յուրի Պողոսյանի ղեկավարությամբ:

Վարդան Աճեմյանի հաջորդ անդրադարձը Եղեռնի թեմային «1915» վոկալիզն է, գրված խառը երգչախմբի համար a

cappella: Բնչպես կոնցերտում, այստեղ ևս կոմպոզիտորը հրա-
ժարվում է բառերից՝ իր ասելիքը կենտրոնացնելով մարդկային
ձայնի՝ վոկալիզի վրա:

«1915»-ը առաջին անգամ կատարեց «Հովեր» պետական
կամերային երգչախումբը 2011 թվականին: Երգչախմբի հիմնա-
դիր-ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի Կո-
միտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ Սոնա
Հովհաննիսյանը անձնական գրույցում նշում է. «Ըստ իս, «1915»-ը
հայրենիքի հանդեպ կոմպոզիտորի տաճած սիրո արտահայ-
տումն է, այն ամբողջովին, կարծես, էլեգիա լինի: Ստեղծագոր-
ծությունը շատ ջերմ է, նուրբ, քնարական»:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին բազմաթիվ
հայ արվեստագետներ արձագանքեցին զանազան ստեղծագոր-
ծություններով: Նրանց շարքում էր նաև Վարդան Աճեմյանը, ով
իր ազգանվեր գործը կատարեց՝ գրելով Չորրորդ սիմֆոնիան:

Կառուցվածքով այն տարբերվում է դասական քառամաս
սիմֆոնիաներից և կազմված է երեք մասից:

Վարդան Աճեմյանը այսպես է բնորոշում իր ստեղծագոր-
ծությունը. «Հայաստան աշխարհ: Ահա այն գաղափարը, որ նկա-
տի եմ ունեցել Միմֆոնիան գրելիս: Ոչ մի լաց ու կոծ, այլ Հա-
յաստան-Դրախտավայր, սեր մեր երկրի հանդեպ»:

Միմֆոնիայի պրեմիերան դեռ չի կայացել, սակայն նախա-
պատրաստական աշխատանքները սկսված են և նախատեսվում
է, որ այն կհնչի սույն թվականի աշնանը՝ Կառնասում, Կոնս-
տանտին Օրբելյանի ղեկավարությամբ, այնուհետև Երևանում:

НАИРА ГРИГОРЯН (АРМЕНИЯ)

ГЕНОЦИД АРМЯН В МУЗЫКЕ ВАРДАНА АДЖЕМЯНА

Одной из трагических страниц армянской истории является
Геноцид армян 1915 года в Османской Турции. В этом году испол-
нилось 100-летие этого кровавого события, что послужило поводом
для создания многих произведений искусства, среди которых нельзя
обойти вниманием произведение видного современного армянского

композитора Вардана Аджемяна - руководителя кафедры композиции Ереванской государственной консерватории имени Комитаса.

Впервые В. Аджемян обратился к теме Геноцида армян еще в 1981 году, написав Концерт для сопрано, меццо-сопрано и камерного оркестра.

В 2011 году появилось следующее произведение В. Аджемяна на ту же тему под названием “1915” для смешанного хора а cappella.

Наконец, в 2015 году В. Аджемян создал Симфонию N 4, которая явилась отражением непоколебимого духа армянского народа, любви к родине и неиссякаемой жажды жизни армян.

NAIRA GRIGORYAN (ARMENIA)

THE REFLECTION OF ARMENIAN GENOCIDE IN VARDAN ADJEMYAN’S MUSIC

One of the most tragic issues of Armenian history is Armenian genocide of 1915 in the territory of Ottoman Empire.

This year we commemorate a centennial of the great massacre, which gave birth to many works of art dedicated to those events.

Among these art works we can distinguish the compositions of one of the most prominent Armenian composers Vardan Adjemyan, head of Composers’ Department of Yerevan State Conservatory after Komitas.

Before the centennial commemoration, Adjemyan not only once attended the theme of Genocide composing the concert for soprano, mezzo-soprano and chamber orchestra in 1981.

In 2011 V.Adjemyan released the composition of “1915” for Capella choir devoted to the tragic history events.

At last in 2015 Adjemyan composed the Symphony N4, which symbolizes the unbreakable spirit of Armenian nation, its patriotism and never-fading love for life.

**ԵՂԵՌՆԻՑ ՓՐԿՎԱԾ ԵՐԱԺԻՇՏԸ.
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԵՐՊԵՐՅԱՆ
(ՆՎԻՐՎՈՒՄ Է ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻՆ)**

2015թ. մայիսի 25-ին լրացավ սփյուռքահայ կոմպոզիտոր, իմբավար, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Համբարձում Պերպերյանի ծննդյան 110-ամյա հոբելյանը²³⁶: Դժվար է ասել, թե ինչպես կդասավորվեր Հ.Պերպերյանի ստեղծագործական ճակատագիրը, եթե այն դաժանաբար «չարբագրեր» Հայոց մեծ եղեռնը:

Հազիվ տասը տարեկան էր 1905թ. Ադանայում ծնված Հ.Պերպերյանը, երբ «մի օր եկան, 72 հարազատների կոները պարաններով միմյանց կապեցին ու սվինների տակ քայլեցրին դեպի անապատ:

- Համբարձում, դու քիչ մը կողքով, ինձի կպած քալե, Համբարձում, կծկվե, գուցե գնդակը քեզի չդիպչի,- կրկնում էր մեծ եղբայրը լալահառաչ ձայնով:

- Ինչպե՞ս, մի թե պիտի գնդակահարեն»²³⁷:

Հոգնատանջ քայլերով առաջ գնացող մանչուկը չէր կարող պատկերացնել, թե ինչ է սպասում իրեն: «Հեռվում երևաց Եփրատը. ջրերը հեռում էին, կոհակները զարնվում ու զարնվում... Ու զարնվեցին Եփրատի ափին անմեղ մեղավորները: Անշնչացած մարդկանց թուլացած շղթան գետին տապալվեց... Մանուկն էլ ընկավ: «Զարկվեցինք,- մտածում էր նա:- Բայց ինչո՞ւ չեմ մեռ-

²³⁶ Հ.Պերպերյանի մասին տե՛ս Համբարձում Պերպերյան, կենսագրական գիծեր, ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 21: **Բրուտյան Ցիցիլիա**, Սփյուռքի հայ երաժիշտները, Երևան, 1968, էջ 498-509: **Բրուտյան Ցիցիլիա**, Սփյուռքահայ երաժիշտական մշակույթը, Երևան, 1982, էջ 43-45: **Բրուտեան Ցիցիլիա**, Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիռ ընձիղները, Երևան, 1996, էջ 130-131: **Մուրադյան Սաթևոս**, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբին, Երևան, 1970, էջ 564-565:

²³⁷ **Բրուտյան Ցիցիլիա**, Սփյուռքի հայ երաժիշտները, էջ 498-499:

նում, ինչո՞ւ զգում եմ, հա, երևի դեռ տաք եմ, հիմի պիտի մեռնիմ»²³⁸:

Նահատակների կողքով անցնում են դահիճները՝ սվինները մխրճելով անշնչացած մարմինների մեջ, ստուգելու արդյոք բուլորին են սպանել: Փոքրիկ Համբարձումն զգում է սվինի քերձվածքը ոտքի վրա...

Որոշ ժամանակ անց մանչուկը գիտակցում է, որ չի սպանվել, հրաշքով ողջ է մնացել: Փորձում է բարձրանալ, բայց թևերը կապկպված էին. նա կրծում է պարանոները, քանդում կապանքները և ծունկի ելնելով՝ սողում: Մանչուկը հայտնվում է Հալեպի ամերիկյան որբանոցում: Շուտով որբերին տանում են Թուրքիա ազգուրաց դարձնելու: Այս անգամ էլ Համբարձումը խուսափում է. նա սրընթաց գնացքից նետվում է անապատ...

1930-ին Հ.Պերպերյանն ավարտում է Աթենքի պետական կոնսերվատորիան որպես ջութակահար, խմբավար և կոմպոզիտոր, այնուհետև պրոֆեսիոնալ երաժշտական կրթությունը շարունակում Փարիզում:

1933-1963թթ. Հ.Պերպերյանը բազմակողմանի երաժշտական-հասարակական գործունեություն է ծավալում Բեյրութում. հիմնում է երգչախումբ, մանկական երգեցիկ խումբ և պարի անսամբլ՝ երկար տարիներ ղեկավարելով դրանք: Նա էր բոլոր երաժշտական հանդեսների կազմակերպիչն ու ղեկավարը: Լիբանանում առաջին անգամ նա ներկայացրել է Արմեն Տիգրանյանի «Անուշ» և Տիգրան Չուխաճյանի «Կարինե» օպերաները, ինչպես նաև իր «Արեգնագան» և «Մանուկը բնության մեջ» օպերաները:

1963-ին Հ.Պերպերյանը տեղափոխվում է ԱՄՆ, դառնում ԱՄՆ և Կանադայի հայ գաղթավայրերի ՀԲԸՄ-ի ընդհանուր երաժշտական ղեկավարն ու տնօրենը: Տիգրան Չուխաճյանի «Կարինե» ներկայացրել է նաև Բոստոնում և Լոս Անջելեսում²³⁹:

Անհոգ մանկությունից ու պատանեկությունից նենգաբար զրկված, որբ մեծացած Համբարձումը հետագայում իր ողջ ստեղ-

²³⁸ Նույն տեղում:

²³⁹ Տե՛ս Համբարձում Պերպերեան, կենսագրական գիծեր, ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 21

ծագործական կյանքում մի անշեղ ջերմություն պահպանեց մանուկների հանդեպ: Մեծ է նրա ծառայությունը հատկապես մանկական երգչախմբերի ստեղծման, հայ մանուկներին երաժշտական արվեստին հաղորդակից դարձնելու գործում: Հեղինակ է մանուկների համար գրված բազմաթիվ մանկական երգերի: Մանուկների համար է 1934-ին գրել իր առաջին օպերան՝ «Թիթեռ» կամ «Մանուկն ու բնությունը» մանկական օպերա-բալետը (լիբրետոն՝ Բ.Ժիրայրի), որը բեմադրվել է Բեյրութում և Ֆիլադելֆիայում:

Ընդամենը տասը տարեկանում հայրենագրված Հ.Պերպերյանն ամբողջ կյանքում մի առանձին վերաբերմունք ուներ հայրենիքի հանդեպ, ինչը դրսևորվեց նաև ստեղծագործության մեջ: Այս առումով հատկանշական են հատկապես նրա վոկալ սիմֆոնիկ գործերից «Եկեղեցին հայկական» օրատորիան (ութձայն խմբերգ դաշնամուրի կամ երգեհոնի ընկերակցությամբ), «Խորհուրդ Վարդանանց» կանտատը (քառաձայն խմբերգ՝ դաշնամուրի ընկերակցությամբ), «Նաիրյան խմբերգեր» շարքը՝ բաղկացած չորս խմբերգերից («Հայաստանի գովքը», «Խոսք իմ որդուն», «Հայոց համբարձումը», «Գութաներգ»)...

«Պերպերյանի գործունեությանը ոգի ու կորով ներշնչողը եղել է ու կա իր մայր հայրենիքը, իր ժողովուրդը: Նրա տարիների փայփայած երազն էր օր մը հայրենի երդիկին տակ հնչեցնել իր հայրենակարոտ երկերը: Ու երազն այդ իրականություն էր դառնում... Սպասումների ու երջանկության, երազանքների ու բաղձանքների, անհուն կարոտի ու հրճվանքի հույզերը ալեկոծվում, փոթորկվում էին նրա կրծքի տակ... Աչքերը մշուշվեցին, կոպերը ծանրացան.. շուրթերից մի ան պոկվեց, երկու տաք շիթ գլորվեցին այտերի վրայով... Նա տեսավ մայր երկիրը, նա իջավ հայրենի հողի վրա... համբուրեց հողը, հետո ողջագուրվեց դիմավորողների հետ»²⁴⁰:

1961-ից հետո Հ.Պերպերյանը հեղինակային համերգներով Հայաստան այցելեց նաև 1978-ին և 1982-ին:

Մեծ եղեռնի 60-ամյա տարելիցի կապակցությամբ կոմպոզիտորը 1972-ին գրել է «Requiem Aeternam»-ը (Կոմիտասի հիշա-

²⁴⁰ Բրուսյան Ցիցիլիա, Մփյուռքի հայ երաժիշտները, էջ 502:

տակին՝ Չարենցի համանուն ստեղծագործության հիման վրա (տեքստը՝ հայերեն և անգլերեն), որը 1975-ին կատարվել է Դետրոյտում, ամերիկյան պրոֆեսիոնալ երգչախմբի կատարմամբ և արժանացել ջերմ ընդունելության: «Requiem»-ը հնչել է նաև Երևանում, հեղինակի ղեկավարությամբ: Ի դեպ սա առաջին ռեքվիեմն է աշխարհիկ տեքստով²⁴¹: «Նրա «Requiem Aeternam»-ը 1980-1981 համերգաշրջանում ամերիկեան եւ անգլիական երգչախմբերով ու նուագախմբով կատարուել է ԱՄՆ-ում ու Անգլիայում: Վաստակաշատ կոմպոզիտորին, խմբավարին ու երաժշտական-հասարակական գործչին առաջինը շնորհեց Հայաստանի կոմպոզիտորների միութեան «Կոմիտաս» մրցանակը՝ 1981 թուականին: Այդ առիթու նա Երեւանում ղեկավարեց իր «Requiem Aeternam»-ը»²⁴²:

АННА АСАТРЯН (АРМЕНИЯ)

АМБАРЦУМ ПЕРПЕРЯН: МУЗЫКАНТ, СПАСШИЙСЯ ОТ ГЕНОЦИДА (К 110-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ)

Доклад посвящается жизни и деятельности композитора, хормейстера и педагога Амбарцума Перперяна. А. Перперян родился в 1905 г. в Адане, чудом спасся от смерти во время Геноцида 1915 года. В 1930-м окончил афинскую консерваторию по классу скрипки, хорового дирижирования и композиции.

В 1933-1963 гг. А. Перперян развернул в Бейруте многогранную музыкально-общественную деятельность: впервые в художественной жизни ливанских армян им были поставлены оперы “Ануш” Армена Тиграняна и “Карине” Тиграна Чухаджяна, а также оперы “Арегназан” и “Дитя на лоне природы” собственного сочинения. С 1963 года он жил и творил в США, был музыкальным руководителем и директором Армянского общего благотворительного союза армянских общин США и Канады. Оперу Тиграна Чухаджяна

²⁴¹ Տե՛ս Բրուտյան Ցիցիլիա, Մփյուռքահայ երաժշտական մշակույթը, էջ 43:

²⁴² Բրուտեան Ցիցիլիա, Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները, էջ 130-131:

“Карине” А. Перперян представил слушателям Бостона и Лос-Анджелеса, а “Дитя на лоне природы” исполнил в Филадельфии.

В 1961-м, 1978-м и 1982-м гг. А. Перперян гастролировал в Армении с концертами; в 1981-м был удостоен Премии имени Комитаса Союза композиторов Армении за заслуги в области музыки.

К 60-летней годовщине Геноцида армян композитор написал “Requiem Aeternam” (Памяти Комитаса) на основе одноименного произведения Егише Чаренца. Первое исполнение “Requiem Aeternam” американским профессиональным хором в 1975 г. удостоился теплого приема слушателей в Детройте. “Requiem” звучал и в Ереване, под управлением автора.

Основательного исследования творчества А. Перперяна до сего дня не проводилось – и это при том, что архив композитора находится в Ереване, в Музее литературы и искусства им Е. Чаренца.

ANNA ASATRYAN (ARMENIA)

HAMPARTZOU M BERBERIAN: THE GENOCIDE SURVIVOR MUSICIAN (TO THE 110TH ANNIVERSARY OF BIRTH)

The paper is dedicated to the life and career of the Diasporan Armenian composer, choirmaster and pedagogue Hampartzoum Berberian. Born in 1905 in Adana, H. Berberian narrowly escaped death in the 1915 Genocide. In 1930, he graduated from the Athens Conservatory as a violinist, choir conductor and composer.

In 1933-1963 H. Berberian had developed a multifaceted musical and social activity in Beirut: for the first time in the artistic life of the Lebanese Armenian community, he staged Armen Tigranyan’s “Anush” and Dikran Tchouhadjian’s “Karineh”, as well as his own operas – “Aregnazan” and “A Child in the Countryside”. From the year 1963 H. Berberian lived and worked in the USA, acted as music director for the Armenian General Benevolent Union of the US and Canada’s Armenian communities. With Dikran Tchouhadjian’s “Karineh” he toured in Boston

and Los-Angeles, while his own “A Child in the Countryside” he performed for the Philadelphian audience.

In 1961, 1978 and 1982 H. Berberian visited Armenia with concerts; in 1981 he was awarded the Komitas Prize of Armenia Union of Composers for his merits in the field of music.

To the 60th Anniversary of the Armenian Genocide, the composer wrote “Requiem Aeternam” (in the memory of Komitas), based on Yeghishe Charents’ work of the same name. The first performance of “Requiem Aeternam” by a professional American choir in 1975 in Detroit was welcomed warmly by the spectators. “Requiem” sounded in Yerevan too, conducted by the composer.

To date, H. Berberian’s oeuvre has not been studied, and this despite the fact that the composer’s archive is in Yerevan, in the Ye. Charents Museum of Literature and Arts.

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԱՀԱՅ
ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ**

Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերն սկսվել են դեռևս XIX դարի վերջերից իրենց զագաթնակետին հասնելով և ցեղասպանության վերածվելով 1915-1923-ին: Մեծ եղեռնի արդյունքում հայրենիքից բռնագաղթված հայերը սփռվեցին աշխարհով մեկ: Այլոց մեջ “իր գեղարվեստական գործունեության արդյունքներով առավել նշանակալի օղակը ֆրանսահայ համայնք էր”²⁴³:

1905-ին համիդյան բռնությունների պատճառով Փարիզում հանգրվանած նկարիչ, արվեստաբան Հրանտ Այյանաքը մի ամբողջ շարք է նվիրել հայ գաղթականներին՝ ներկայացնելով Օսմանյան կայսրության զոհերի՝ հոգնատանջ, սովալլուկ իր վերապրած հայրենակիցների, դառը ճակատագիրը: Ֆրանսահայ

²⁴³ Աղապյան Արարատ, Հայաստան-Ֆրանսիա. գեղարվեստական կապերը XX դարում // Սովետական արվեստ, Երևան, 1991, համար 4, էջ 17-18:

արվեստագետ Լևոն Քյուրքչյանը 1910-ականներին գաղտնի նկարել է Դեր-Էլ-Ձորի ճանապարհին հայտնված հայ գաղթականներին: Հայ գաղթականների թեման առանցքային տեղ է գրավել եղերական իրադարձությունների ընթացքում մորն ու եղբորը կորցրած Մարգիս Խաչատուրյանի ստեղծագործության վաղ փուլում: “Հայ ժողովրդի վշտի երգիչը” ստեղծել է նաև “դրամատիզմով լի, գեղարվեստական էքսպրեսիվ լեզվով արտահայտված գործեր (“Հուսահատություն”, “Տանջանք”, “Հայ որբերն անապատում” ևն)”²⁴⁴: Ֆրանսահայ անվանի նկարիչ, Ֆրանսիայի “Պատվո լեգեոն”-ի շքանշանակիր Էդգար Շահինը հազվադեպ է անդրադարձել Հայոց ցեղասպանության թեմային: Սակայն առօրյա հացի կարոտ հասարակ ժողովրդի պատկերաշարում “...տառապանքի բոլոր ձևերուն ծանոթ իր ցեղին հոգին էր, որ հզոր մղումով մը անոր ձգտումին մեջ կհայտնվեր” (Արշակ Չոպանյան)²⁴⁵:

Հայոց ցեղասպանության թեման զգալի տեղ է զբաղեցրել Մելքոն Քեպապճյանի արվեստում: “Հայուն արյան ճամփան”, “Հայ մայրերի սուգը”, “Վարդին հոգեվարքը”, “Ավերակներու մեջ հայ ուրվականներ” և այլ նկարները խորհրդապաշտորեն արտահայտում են դրանց հեղինակի հոգու խռովքը, նրա “խորունկ վիշտերը”:

Ֆրանսիայի “Պատվո լեգեոն”-ի շքանշանակիր, անվանի ծովանկարիչ Վարդան Մախոխյանի ստեղծագործության մեջ հաճախ հանդիպող փոթորկոտ, ալեկոծ ծովն է դարձել հայրենի ժողովրդի վշտի խորհուրդը: “Ծովի երգերով Մախոխյանը դարձավ իր ժողովրդի հույզերի երգիչը”²⁴⁶: 1919-ին նա ստեղծեց “Հայաստանի բողոքը” երաժշտական պիեսը, որն իր հայրենակիցների տառապանքի արձագանքն էր և արդարության կոչ համաշխարհային հանրությանը:

²⁴⁴ Աղասյան Արարատ, Մարգիս Խաչատուրյանի արվեստը Արևելք-Արևմուտք խաչմերուկում // Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Զեկուցումների ժողովածու, Երևան, 2004, էջ 408:

²⁴⁵ Տե՛ս. Խաչատրյան Շահեն, Ֆրանսահայ կերպարվեստ, Երևան, 1991, էջ 44:

²⁴⁶ Խաչատրյան Շահեն, Ֆրանսահայ կերպարվեստ, էջ 20:

Իր ստեղծագործության ուշ շրջանում Մեծ եղեռնի թեմային և սեփական դառը մանկության վերհուշին է անդրադարձել Արմենակ Միսիրյանը (Արմիս): Թուրքիայում՝ Ամասիայում ծնված, 1915-ին որբացած Լևոն Թութունջյանը “սյուրռեալիզմի առավել պեսիմիստ նկարիչներից է”²⁴⁷: Խոսուն են նրա ստեղծագործության մեջ հաճախ հանդիպող կերպարները՝ անմարդաբնակ բնապատկերները, կիսավեր սյուները, չորացած, սաղարթագուրկ ծառերը, անդամահատված ձեռքերը, ճեղքված դեմքերը և այլն: 1915-ի դեպքերից հետո տասնմեկ հոգանոց ընտանիքի միակ վերապրողը Ջարեհ Մութաֆյանը, հաստատվել է Ֆրանսիայում: Անվանի նկարիչ-արվեստաբանը չի ուրացել իր անցյալը. “Ջարդը”, “Մահ և կյանք”, “Հայ մամիկը”, “Դիակներ” և նման այլ կտավները միջազգային հանրությանը հիշեցնում են XX դարի առաջին ցեղասպանության մասին:

Ֆրանսիայի “Պատվո լեգեոն” շքանշանի ասպետ, Ֆրանսիայի Գեղարվեստի ակադեմիայի անդամ, բազմաթիվ մրցանակների դափնեկիր Ժան Գառզուին ողջ կյանքի ընթացքում հետապնդել են ավերակ քաղաքների, քաղաք-ուրվականների մտապատկերները: Հայոց ցեղասպանության թեմային ուղղակի անդրադարձ նկարիչն արեց միայն 1991-ին Մանուկ քաղաքի մատուռի Ապոկալիպսիսին նվիրված որմնանկարներում, այն ներկայացնելով XX դարում մարդկության դեմ ուղղված մեծագույն ռճրագործությունների շարքում: Գառզուի արվեստանոցը հաճախած, Փարիզի գեղարվեստի բարձրագույն դպրոցում ուսանած Շարթի ստեղծագործության մշտական թեմաներից էր Մեծ եղեռնի ողբերգությունը: “Ես կարող էի... պատկերել միայն ծաղիկներ և հաճելի տեսարաններ, բայց մանկությունից կուտակված բոլոր տեսարանները կալել են մաշկիս...”, - խոստովանել է նկարիչը²⁴⁸:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ֆրանսիայի “Պատվո լեգեոն”-ի, ՀՀ “Մեսրոպ Մաշտոց”-ի շքանշանակիր, ֆրանսահայ անվանի նկարիչ Ժանսեմը 2001-ին Հայաստանի Ցեղասպանու-

²⁴⁷ Տե՛ս. Աղայան Արարատ, Լևոն Թութունջյանի երրորդ “վերադարձը” // Հայ-Ֆրանսիական պատմամշակութային առնչություններ, Երևան, 1997, էջ 19:

²⁴⁸ Տե՛ս. Zahar Marcel, Shart avec une biographie, une bibliographie et une documentation complete sur le peintre et son oeuvre, Genève, 1969, p. 20.

թյան թանգարան-ինստիտուտին է նվիրել իր վրձնած “Ցեղասպանություն” պատկերաշարի 34 կտավները: Եղեռնից փրկված, Կ.Պոլսի մանկատանն ապրած Վահե Հեփիմյանն իր ժողովրդի և սեփական վիշտն արտահայտել է վերացական և կիսավերացական պատկերների դրամատիկ երանգներով:

Հայոց ցեղասպանության թեման հետաքրքիր լուծում է ստացել Ռիշար Ժերանյանի՝ “գույնի մոզականությունը և գծանկարի կատարելությունը միավորող նկարչի”²⁴⁹ ստեղծագործություններում: “Քրիստոսի մուտքն Անի” հնարածին պատկերաշարը սիմվոլիկ իմաստ ունի: Ժամանակի լարվածությունը, անորոշությունը, պատերազմի սարսափները յուրովի են արտահայտել Ասատուր Պզտիկյանի վրձնած՝ ավերված շենքերի բեկորները, երկրաչափական ձևերով կանացի մարմիններն ու դիմանկարները²⁵⁰: Հայոց ցեղասպանությանը նվիրված մի քանի կտավների հեղինակ է վերապրածների ընտանիքում ծնված Փափազը: Ֆրանսահայ մեկ այլ նկարիչ՝ Մորիս Տեր-Մարգարյանը Հայոց ցեղասպանությունը նույնպես “տեսել է” իր ծնողի աչքերով: Արտահայտիչ և հուզիչ է նկարչի հոր դիմանկարների շարքը: “Իր պատկերածն այլևս իր հոր դիմանկարը չէ, այլ ամբողջ մարդկության անհանգստության, ցավի և սիրո մարմնավորումը”²⁵¹: 1963-ից մինչև 2000 թվականը Ֆրանսիայում բնակված Ժան Գազանջյանն անտարբեր չէր աքսորյալ հայության ճակատագրի հանդեպ, ինչի մասին են վկայում նրա “Ցեղասպանություն”, “Որսորդը”, “Միգրանտներ”, “Միգրանտներ. Մումգայիթ” կտավները:

Ֆրանսահայ նկարիչներին միավորողը հայի տարագիր բախտն է և աստվածաշնորհ տաղանդը: Հաղթահարելով օտար միջավայրի խրթին պայմանները՝ նրանք պահպանեցին ազգային ինքնագիտակցությունն ու արժանապատվությունը:

Այսօր, ինչպես և 100 տարի առաջ, նրանց ստեղծագործություններն արտահայտում են անարտահայտելին, խոսում են ան-

²⁴⁹ Տե՛ս. Richard Jeranian (Album). Paris, 1983 (sans pagination).

²⁵⁰ Տե՛ս. Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, Երևան, 2007, հատոր 2, էջ 337:

²⁵¹ Clavel Bernard. Der Markarian. Portraits de son père. Paris, 1979 (sans pagination).

ձայն և դողանջում են լուր՝ մարդկանց սրտերում արթնացնելով կարեկցանք, մարդասիրություն և արդարամտություն:

МАРГАРИТА КАМАЛЯН (АРМЕНИЯ)

АРМЯНСКИЙ ГЕНОЦИД ГЛАЗАМИ ФРАНЦУЗСКИХ ХУДОЖНИКОВ АРМЯНСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

В результате организованных властями Османской империи массовых убийств армянского народа, начиная с погромов 1890-ых годов и кончая геноцидом 1915-1923 годов, в разных странах мира была сформирована армянская диаспора. По результатам своей художественной деятельности одной из наиболее значимых среди этих общин является армянская диаспора во Франции. В докладе рассмотрены работы армянских художников-эмигрантов во Франции, посвященные теме армянского геноцида и отражающие их трагические переживания. В их числе – известные, талантливые мастера С. Хачатурян, Ж. Гарзу, Жансем, Шарт, М. Кепапчян, Л. Тютюнджян, Э. Шаин, В. Махохян и другие. Сегодня, как и сто лет назад, их произведения, выражают то, что невозможно выразить словами, и звучат как безмолвное напоминание о первом геноциде XX века.

MARGARITA KAMALIAN (ARMENIA)

ARMENIAN GENOCIDE AS SEEN BY FRENCH-ARMENIAN PAINTERS

As a result of the massacres of the Armenians organized by the Ottoman Empire at the end of the 19th century and the Armenian Genocide taken place at the beginning of the 20th century, Armenian diaspora was formed in many countries of the world. The Armenian diaspora of France is eminent regarding the cultural and artistic results. In the report are presented the works of French-Armenian painters, dedicated to the theme of Armenian Genocide and reflecting the cry of their wounded souls. Among them are talented and famous painters S. Khachadourian, J.

Carzou, Jansem, Shart, E. Chahine, M. Kebabjian, L. Tutundjian, and others. Today, as 100 years ago, their works are silent witnesses of the first genocide of the 20th century.

НАЗЕНИК САРГСЯН (АРМЕНИЯ)

БАЛЕТ АННЫ ДЖАНБАЗЯН «КОМИТАС. ЖУРАВЛЬ БЕЗДОМНЫЙ»

1. На протяжении ста лет, прошедших со времени Геноцида армян в Турции, армянские балетмейстеры редко обращались к теме геноцида. Первый балет – «Антуни», созданный в 1969 г. в сотрудничестве композитора Эдгара Оганесяна и хореографа Максима Мартиросяна. Второй – малоизвестный в Армении балет «Комитас. Журавль бездомный» в постановке Анны Джанбазян.

2. Анна Джанбазян родилась в Тегеране (Иран) в семье армянина и персиянки. Азам балета обучалась с трех лет у отца – известного балетмейстера, педагога, танцовщика Саркиса Джанбазяна. В пятилетнем возрасте выступала в Фархад-Холле. В 1968-1971 гг. обучалась в Ереванском хореографическом училище.

По возвращении в Тегеран в 1972 г. она возобновила деятельность хореографической школы Саркиса Джанбазяна (прекратившейся в связи с его кончиной) и около 12 лет осуществляла в ней деятельность в качестве продюсера, исполнительницы, хореографа и педагога-репетитора.

В 1984 г. эмигрировала в США. Обучалась в Калифорнийском университете Лос-Анджелеса (UCLA), где получила степень магистра искусствования в области хореографии.

С 1988 г. по сей день - художественный руководитель и главный балетмейстер “DjanbazianDanceAcademy” (Лос-Анджелес). В 1992 г. в Лос-Анджелесе основала танцевальную труппу “Djanbazian Dance Company”. За годы работы осуществила постановки более чем 150-и хореографических произведений – как миниатюр, так и спектаклей.

Среди балетов, поставленных ею в Лос-Анджелесе: «Комитас. Журавль бездомный» (2004), «Руми. Дорога к свету» (2006), «Зал и Рудабе», основанный на фрагменте «Шахнаме» Фирдуси» (2009), «Сокровища Души» (2014), «Говорящие камни» (2015). В 2003, 2007 и 2015 гг. гастролировала в Ереване.

Анна Джанбазян, как хореограф, свободно оперирует многими танцевальными системами Запада и Востока. Смело прибегает к использованию в своих постановках национальных инструментов, к пению и декламации, как дополнительных составляющих танцевального представления. В ее балетах посредством хореографии передаются тонкие психологические переживания, философские рассуждения.

3. Балет «Комитас. Журавль бездомный» создан в 1982г. в Тегеране, а в 2004 году возобновлен в Лос-Анджелесе. Он полностью скомпонован из: а) комитасовских обработок крестьянских песен, песенплясок, танцев, собранных композитором; б) оригинальных сочинений Комитаса; в) обработок вышеназванных произведений другими композиторами в различных жанрах – монодических, хоровых, инструментальных, вокально-инструментальных.

Из четырех типов сценариев, которые присущи балетному жанру: имманентно-хореографического, образно-эмоционального, обобщенно-философского, конкретно-сюжетно последовательного, в балете А. Джанбазян можно отметить все четыре. Однако, как и в других постановках, созданных хореографом, здесь превалирует обобщенно-философский тип. Лишь формально можно отметить наличие конкретных событий из жизни Комитаса – созидательная, насыщенная богатой творческой деятельностью первая часть, и вторая – трагическая, связанная с геноцидом и депортацией армян из Турции, последующим безумием Комитаса, свидетеля и непосредственного участника этих событий. Но балет и его образы можно интерпретировать двояко – это и внутренняя духовная жизнь Комитаса, и, вместе с тем, герой балета и другие действующие лица могут интерпретироваться символически, как собирательный образ духовной жизни армянского народа, его созидание, мечты, а затем – над-

ломленность, спровоцированная ужасной трагедией, и последующее возрождение к новой жизни.

Сцены геноцида и депортации представлены иносказательно. На сцене нет конкретных персонажей, осуществивших чудовищное преступление. Лишь на заднике сцены проходят документальные кадры, запечатлевшие сцены геноцида и депортации.

Таким образом, в балете «Комитас. Журавль бездомный» можно выделить главные черты, присущие творческому хореографическому почерку Анны Джанбазян. Это наличие знаков-символов на нескольких уровнях – на уровне движений, композиций, образов, иносказательная, метафорическая интерпретация событий.

Своеобразие хореографического языка балета – это сочетание нескольких хореографических систем Запада и Востока в виде народно-сценического танца, классического танца и пластики, обогащенных армянскими и, в целом, присущими восточной танцевальной культуре танцевальными элементами, а также пластическое преобразование обиходных жестов и движений.

ՆԱԶԵՆԻՎ ՄԱՐԳՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ԱՆՆԱ ՋԱՆԲԱԶՅԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍ.
ԿՈՌՈՒՆՎ ԲՆԱՎԵՐ» ԲԱԼԵՏԸ**

Ամերիկահայ (ծագումով պարսկահայ) հայտնի բալետմայստեր և պարուսույց Աննա Ջանբազյանի «Կոմիտաս. Կռունկ բնավեր» բալետը բեմադրված է 2004 թ.: Բալետի բովանդակությանը կարելի է երկակի մեկնաբանություն տալ: Սա Կոմիտասի հոգևոր կենսագրությունն է: Սակայն թե՛ բալետի հերոսին և թե՛ բալետի այլ գործող անձանց կարելի է մեկնաբանել որպես հայ ժողովրդի հոգևոր կյանքի և ներքին ապրումների հավաքական կերպար: Հայ ժողովրդի ստեղծարար կյանքը, ցեղասպանության և տեղահանության հետ կապված ընկճվածություն և հոգեկան անկման պահեր, իսկ այնուհետև՝ վերածնունդ: Այս է ներկայացման բուն բովանդակությունը և իմաստը: Ջանբազյանին՝ որպես բալետմայստերի, հատուկ են արևելյան և արևմտյան

պարային համակարգերի յուրօրինակ և բազմատարբերակ միակցություններ, սիմվոլիկ նշանների, շարժումների, կերպարների առկայությունը, դեպքերի այլաբանական մատուցումը: Նշված առանձնահատկություններն ամբողջապես իրենց արտահայտությունն են գտել «Կոմիտաս. Կռունկ բնավեր» փալետում:

NAZENIK SARGSYAN (ARMENIA)

“KOMITAS: KROONG BNAVER”, BALLETT BY ANNA DJANBAZIAN

“Komitas: Kroong Bnaver” is a ballet by Anna Djanbazian, renowned American choreographer of Persian Armenian ancestry. Created in 2004, this piece can be interpreted in two different ways: on the one hand, it is the spiritual biography of Komitas, on the other, it is a story where the hero and the other personages generalize the life and the feelings of the Armenian nation, its creativity, its sorrowful page of genocide, and, finally, its revival. This is the general concept of the ballet. The style of Djanbazian, as a choreographer, is characterized by unique mixture of western and oriental dance systems and use of characters, symbols and metaphors. All this can be seen in her “Komitas: Kroong Bnaver” ballet.

ՄԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՎԵՆԵՏԻԿԻ 56-րդ ԲԻԵՆԱԼԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐԸ

Հեռավոր 1895թ. սկիզբ առնող, 120 տարվա պատմության ընթացքում մեծապես ընդլայնված և այժմ մի քանի բաժիններից բաղկացած Վենետիկի բիենալեն, ինչպես իր կենսագրության ողջ ընթացքում, այնպես էլ մեր օրերում շարունակում է մնալ ժամանակակից արվեստի ամենահինչեղ հարթակներից: Համաշխարհային նշանակություն ունեցող այս ցուցահանդեսին Հայաստանը ներկայանում է 1995 թվականից ի վեր, սակայն Վենետիկի 56-րդ

բիենալեին մեր երկրի մասնակցությունն առանձնանում էր թե՛ թեմատիկ ընտրությամբ, թե՛ մասնակիցների կազմով:

«Armenity/Հայություն» խորագրով հայաստանյան տաղավարը տեղակայված էր Վենետիկի Մբ. Ղազար կղզում՝ Մխիթարյան միաբանության տարածքում: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված տաղավարը ներկայացնող արդի արվեստագետները ոչ թե Հայաստանի Հանրապետությունից էին, այլ սփյուռքից՝ եղեռնը վերապրած հայորդիների զավակներ: Ինչպես և պարզ է դառնում խորագրից՝ գաղափարային առումով տաղավարը նպատակ ուներ բացահայտելու «հայություն երևույթը», ակներև դարձնելու այս հասկացության ազդեցությունն անհատի ինքնագիտակցության ձևավորման վրա, ինչպես նաև ի ցույց դնելու սերնդից սերունդ հիշողության փոխանցման խնդիրները: Այս տեսակետից էր բխում նաև ցուցադրության վայրի ընտրությունը. Վենետիկի Մխիթարյան միաբանությունն ինքնին «հայության» դարավոր կրողն է²⁵²: Տաղավարի համադրող (կուրատոր) շվեյցարահայ Ադելինա Կյուբերյան ֆոն Ֆյուրսթենբերգը ժամանակակից արվեստն այգիներում, հրապարակներում, հասարակական շենքերում, վանական համալիրներում համադրելու բազմամյա փորձ ունի: Ցուցադրությունը սփռված էր միաբանության ողջ տարածքում, օգտագործված էին ցուցասրահները, գրադարանը, այգին, որոնց հետ կապը ստեղծված էր անթերի հմտությամբ. ցուցանմուշները երբեմն «սերտաճում» էին տարածքին:

Տարբեր երկրներից տարբեր սերունդների տասնութ հայազգի արվեստագետների ստեղծագործությունները «հայության» յուրովի մեկնություններն էին: Երբեմն դա դրսևորվում էր որպես վերհուշ (Մխիթար Կարապետյան, «Աղեկ», «Ցանկ. Իմ նախնիների պատմությունը», Ռոսանա Պալազյան, «...Պատմություն, որ երբեք չեմ մոռանա...»), երբեմն որպես ձոն հայ էթնոսին, մշակույթին կամ լեզվին (Հերա Բույուկթաշշիյան, «Տառեր Կորուսյալ դրախտից», «Պահպանողները», Միքայել Օհանջանյան, «Տասներկու»), երբեմն էլ ճանապարհ էր բացում ազգայինից դեպի հա-

²⁵² Armenity/Հայություն, edited by Adelina Cüberyán v. Fürstenberg, Exhibition Catalogue, Milan, Skira, 2015, p. 24.

մամարդկայինը (Մարգիս, «Ada Ewe Vierge», «Atlas de Mammuthus Intermedius»): Կարմիր թելի նման անցնող հայության թեմային զուգահեռ, ցուցադրվող աշխատանքները տարբեր էին մտահղացմամբ և կատարմամբ, յուրաքանչյուրն օժտված իր ասե-լիքով:

Ցեղասպանության թեման առավելապես կերպավորված էր վերապրումի (Մխիթար Կարապետյան, «Անվերնագիր. Դանիել Վարուժան», Նիկոլ Բեզջյան, «Վկաներ», Երվանդ Ջանիկյան, Անջելա Ռիչի Լուկի, «Վերադարձ Խոտորջուր. Հայկական օրագիր»), կյանքի ու ինքնության վերաիմաստավորման (Հրայր Մարկիսյան, «Ծպտյալները», Նինա Խաչատուրյան, «Խոսելիսձևի հաղթահարում»), եղելության պատճառների փնտրտուքի (Ռոսանա Պալազյան, «Ինչու և մոլախոտ» շարք) և, վերջապես, հավատի (Մխիթար Կարապետյան, «Անվերնագիր. Գուրգեն Մահարի») ու վերածննդի (Հայկ Այվազյան, «Ես տկար եմ, բայց ողջ եմ») ընդհանրական գաղափարներում:

Որպես ազգային լավագույն տաղավար «Ոսկե առյուծին» արժանացած «Armenity/Հայություն» ցուցադրությունը Վենետիկի 56-րդ բիենալեի այցելուների, ինչպես նաև միջազգային զանգվածային լրատվական միջոցների ուշադրության կենտրոնում էր, ինչը ևս մեկ կարևոր քայլ էր Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում:

МАНЭ МКРТЧЯН (АРМЕНИЯ)

НАЦИОНАЛЬНЫЙ ПАВИЛЬОН АРМЕНИИ НА 56-й ВЕНЕЦИАНСКОЙ БИЕННАЛЕ

Национальный павильон Армении на 56-й Венецианской биеннале был посвящен 100-летию геноцида армян. Павильон под названием *Armenity (Армянство)* был своеобразной платформой для переосмысления этого понятия, его влияния на формирование личности, а также проблем передачи воспоминаний из поколения в поколение. Куратор выставки – Аделина Кюберян фон Фюрстенберг. Выставка проходила на острове Святого Лазаря, где находятся

община и монастырь конгрегации армянских мхитаристов. Выставка была мастерски интегрирована в монастырский комплекс. 18 художников армянской диаспоры разного поколения и из разных стран представили свое уникальное видение понятия Армянства. Иногда это воспоминания, иногда – посвящение армянской культуре и языку. Порой национальное начало прокладывает путь к универсальному. Тема геноцида на выставке трансформировалась в историю выживания, возрождения и переосмысления.

Павильон Армении был удостоен главного приза Венецианской биеннале – “Золотого льва” – и находился в центре внимания как посетителей, так и международных средств массовой информации.

MANE MKRTCHYAN (ARMENIA)

THE NATIONAL PAVILION OF THE REPUBLIC OF ARMENIA AT THE 56th VENICE BIENNALE

The National Pavilion of the Republic of Armenia at the 56th Venice Biennale was dedicated to the 100th commemoration of the Armenian Genocide. The pavilion was entitled *Armenity* and served as a unique platform to rethink the notion of Armenianness, its impact on shaping one’s identity, as well as the problem of transmitting memory from one generation to another. The curator was Adelina Cüberyan von Fürstenberg, Swiss citizen of Armenian origin. The exhibition was held in Island of San Lazzaro where the Mekhitarist Monastery is located. The exhibits were fully integrated into the monastery complex. Eighteen artists from Armenian diaspora, representing different generation and different countries, each brought his/her own vision of *Armenity*. We witnessed remembrance and nostalgia, as well as dedications to Armenian culture and language. Sometimes national put way to universal values. The theme of the genocide was presented as a statement of survival, rebirth and reconsideration.

Armenian pavilion wins *Golden Lion* for best national pavilion at Venice Biennale.

ДОКУМЕНТАЦИЯ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ТРИБУНАЛЬНОЙ ДРАМЕ ПЕРЧА ЗЕЙТУНЦЯНА «ВСТАТЬ, СУД ИДЕТ!»

1. Трибунальная драма, одно из направлений документального театра, зародилась как рефлексия на тему Холокоста в 60-е гг. прошлого столетия, когда вершился суд над функционерами Освенцима и протоколы судебных заседаний легли в основу пьесы Питера Вайса «Дознание». В наши дни документальный театр, несмотря на пережитую трансформацию, продолжает обращаться к социально и политически актуальным темам, среди которых не последнее место занимают войны, ксенофобия и межнациональные конфликты.

2. Спустя два десятилетия после написания «Дознания», в 1980-е гг., драматург Перч Зейтунцян обратился к теме Армянского геноцида в документально-художественной пьесе «Встать, суд идет!».

3. Привычные роли палача и жертвы в драме радикально переосмотрены: так, переживший геноцид Согомон Тейлерян выступает здесь и жертвой, и палачом, и своего рода вершителем правосудия. Эти мотивы скрыты в глубинных пластах произведения.

4. Несмотря на ее формальное сходство с трибунальной драмой, пьесу «Встать, суд идет!» все же трудно классифицировать как документальную, поскольку факт и вымысел в ней тесно переплетаются. Помимо того, в пьесе использованы элементы греческой драмы, что уводит «Встать, суд идет!» далеко от театральности документалистики XX века.

5. В пьесе отчетливо звучат традиционные для документального театра мотивы памяти и травмы, экзекуции и истерзанности. Повествование в ней ведется от лица очевидцев трагических событий и, как того требует канон документального театра, некоторые диалоги и монологи построены на реальных высказываниях прототипов – исторических лиц. Это, в первую очередь, касается сцен суда.

6. Техника написания пьесы довольно сложная: в ней очевиден синтез документальных и конвенциональных элементов. Помимо стилистического и художественного выбора, это было вынужденным шагом со стороны Зейтунцяна: у советских драматургов зачастую был ограниченный доступ к архивным материалам, поэтому они вынуждены были дописывать сцены, что в ортодоксальной документальной драматургии недопустимо.

ՍԱՌԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ ՊԵՐՃ
ԶԵՅԹՈՒՆՅՅԱՆԻ ՈՏՔԻ՛, ԴԱՏԱՐԱՆՆ Է ԳԱԼԻՍ»
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՅՈՒՄ**

Վավերագրական թատրոնի դրսևորումներից մեկը, դատավարական դրաման, ծնունդ է առել XX դարի 60-ական թթ.՝ որպես Հոլոքոստի անմիջական արձագանք: Այդ շրջանում անցկացվեցին Աուշվիցի կատարածունների դատավարությունները, և Գերմանիայի դրամատուրգներն ու ռեժիսորները սկսեցին մոնտաժել դատական արձանագրությունները վերածելով դրանք պիեսների: Առաջին ամենահայտնի դատավարական դրաման Փիթեր Վայսի «Հետաքննությունն» էր: Քսան տարի անց, 1980-ականներին, հայ թատերագիր Պերճ Զեյթունցյանը դիմեց Հայոց ցեղասպանության թեմային իր «Ոտքի, դատարանն է գալիս» պիեսում: Ունենալով արտաքին նմանություն գերմանական և բրիտանական դատավարական դրամատուրգիայի հետ, այս ստեղծագործությունը, այնուամենայնիվ, չի կարող հավակնել մաքուր վավերագրական պիես լինելուն, քանզի նրանում փաստն ու հորինվածքը միահյուսված են:

**DOCUMENTING ARMENIAN GENOCIDE IN PERCH
ZEITUNZKYAN'S «THE TRIAL BEGINS!»
TRIBUNAL DRAMA**

One of the forms of documentary theatre, the so called Tribunal Drama, was launched in 1960s, when series of trials on Auschwitz executors were held. Soon some German playwrights composed theatre plays by editing the trial records. The most famous of them is Peter Weiss's "The Investigation". Twenty years later, in 1980s, Perch Zeitunzkyan undertook an attempt to reflect on Armenian Genocide in his play "The Trial Begins!". Notwithstanding the formal affinities tricycle plays, "The Trial Begins!" can be merely classified as a documentary drama, since fact and fiction are freely mixed there.

ՏԱԹԵՎԻԿ ՇԱԽԿՈՒԼՅԱՆ (ՀԱՅՍՍՍՍՆ)

«ԹՈՒՐՔԱԿԱՆ» ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԻ ԱՌԵՂԾՎԱԾ

Հայոց Մեծ Եղեռնից հետո հայ իրականության մեծագույն կորուստներից մեկը եղավ Կոմիտասի գործունեությունը: Մույն աշխատանքում մեր ուշադրության կենտրոնում է մի առեղծվածային հանգամանք, որը պարզաբանված չէ, ավելին՝ պարզաբանման ճանապարհները խիստ խրթին են: Խնդրին անդրադարձել է Լիլիթ Երնջակյանը²⁵³, որի հետազոտությունը մեզ համար այս առնչությամբ էական խթան է հանդիսացել:

Հայտնի է, որ Թուրքիայի կառավարությունը նպատակ ուներ հիմնելու ազգային կոնսերվատորիա, որին Կոմիտասի նշանակալից մասնակցությունն էր նախատեսված²⁵⁴: Հայտնի է

²⁵³ Երնջակյան Լ, Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնությունների համատեքստում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 159-164:

²⁵⁴ Տես, օրինակ, Մեսրոպյան Ա., Կոմիտասի երգչախումբն ու համերգները, Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, Հայպետհրատ, 1960, էջ 245-246:

նան, որ Թուրքիայում Կոմիտասը որպես երաժիշտ և որպես մանկավարժ բարձր գնահատական ուներ:

1935 թ.-ի հոկտեմբերին վախճանվում է Կոմիտասը²⁵⁵: Ընդամենը մի քանի ամիս անց Թուրքիա են հրավիրում հունգարացի կոմպոզիտոր և երաժշտագետ Բելա Բարտոկին՝ ճիշտ նույն նպատակով, ինչի համար մինչ այդ նախատեսում էին Կոմիտասին: Արդյոք ք պատահական էր անմիջապես Կոմիտասի մահվանից հետո Բարտոկին Թուրքիա հրավիրելը:

Ըստ Բարտոկի, երբ իրեն հրավիրեցին Թուրքիա. «նրանք (թուրք պաշտոնյաները-Տ.Շ.) չունեին խորհրդատու, քանի որ Թուրքական ազգային երաժշտությունը պետք էր զարգացնել թուրքական ժողովրդական երաժշտությունից: Նրանք չունեին որևէ մեկին, ով կարող էր ցուցումներ տալ ժողովրդական երգերի իրական հավաքագրման համար»²⁵⁶: Փաստորեն, Թուրքիայում Բարտոկին ոչ մի խոսք չեն ասել Կոմիտասի գործունեության մասին և այն մասին, որ իրականում կրթական ծրագիր տարիներ ի վեր նախատեսված եղել է:

Բարտոկին ցույց են տվել շուրջ 130 երգերի ձայնագրություններ, սակայն ոչ մի հավելյալ տեղեկություն չեն տրամադրել այդ երգերի մասին: Հարց է առաջանում. եթե մինչ նա Թուրքիայում չկար մեկը, ով թուրքական երգերի հավաքագրումով կզբաղվեր, ապա որտեղից հայտնվեցին այդ երգերի ձայնագրությունները:

Թուրքերը չեն կարողացել հասկանալ երգերի բառերը: Երբ Բարտոկը որոշակի զարմանք է արտահայտել, նրան պատասխանել են. «Մի անհանգստացեք, շատ հեշտ է դա կատարել ցանկացած ժամանակ, մենք թուրքեր ենք և հասկանում ենք ձայնագրված տեքստերը»²⁵⁷: Բարտոկը մի ժողովրդական երգի ձայնագրություն է միացրել նվագարկիչով և թուրքերից մեկին խնդրել է գրել տեքստը, իսկ ինքն սկսել է նոտագրել երաժշտու-

²⁵⁵ Գյոդակյան Գ., Կոմիտաս, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2000, էջ 36:

²⁵⁶ Bartók B., Folk Song Collection in Turkey, Essays, University of Nebraska Press, 1993, p. 137.

²⁵⁷ Նույն տեղում, էջ 138:

թունը: Թուրքն ուշադրությամբ լսել է ձայնագրությունը, սակայն այդպես էլ չի կարողացել հասկանալ տեքստը:

Հարց է առաջանում. ի՞նչ լեզվով են եղել բառերը և ինչո՞ւ թուրքերը չեն կարողացել հասկանալ գոնե, թե ինչ լեզու է եղել: Արդյո՞ք թուրքերն այստեղ ինչ-որ բան թաքցնելու շահագրգռվածություն չունեին: Հասկանալի է, որ եթե անգամ նրանք իմանային, որ դրանք հայերեն են, երբեք չէին բարձրաձայնի:

Մեծ հավանականությամբ ենթադրելի է, որ Բարտոկին ներկայացված ազգագրական – երաժշտական նյութերն իրականում հայերեն կարող էին լինել: Ենթադրելի է նաև, որ դրանք Կոմիտասի կատարած ձայնագրությունները պիտի լինեին: Այս հարցի իրական պատասխանը կարելի է ստանալ միայն այդ ձայնագրությունները հետազոտելուց հետո: Մեր կասկածանքը թեև հիմնավոր, սակայն՝ վարկածային է: Իսկ հետազոտությունների դրական նիշով արդյունքը բոլորովին նոր փաստեր, իրողություններ ու դիտանկյուններ պիտի բացի:

ТАТЕВИК ШАХКУЛЯН (АРМЕНИЯ)

ЗАГАДКА “ТУРЕЦКОЙ” МУЗЫКИ

В начале 20-го века турецкое правительство пригласило Комитаса с целью организации музыковедческой и образовательной работы в Турции. Во время Геноцида армян Комитас был отправлен в ссылку, но позже был возвращен обратно благодаря посредничеству американского посла Генри Моргентау. После своего возвращения Комитас перестал творить в результате сильного стресса, пережитого им в ссылке. Комитас скончался в 1935 году. После смерти Комитаса турецкое правительство пригласило венгерского композитора и музыковеда Белу Бартока с той же целью. Бартоку сказали, что до него никто не занимался турецкой музыкой. Ему предоставили записи этнографических песен, однако не сообщили откуда взялись эти песни и как они оказались в их архивах. Когда Барток попросил перевести тексты, никто не смог сделать этого, так как песни были на другом, незнакомом языке. Нам кажется, что

тексты этих песен, вероятнее всего, были написаны на армянском языке. Более того, они могли быть записаны Комитасом, так как до этого именно он занимался собиранием и записью народных песен в Турции. Однако, чтобы подтвердить или опровергнуть нашу гипотезу, необходимо тщательно исследовать эти записи.

TATEVIK SHAKHKULYAN (ARMENIA)

A PUZZLE OF “TURKISH” MUSIC

In the beginning of the 20th century Komitas was invited by the Turkish government to establish a conservatory and to realize educational-musicological work in Turkey. During the Armenian Genocide, Komitas was sent to exile and later he was returned according to mediation of Henry Morgentau, the USA Ambassador in Turkey by that time. After returning, however, Komitas stopped working in the result of the stress resulted from Genocide. Later, till his death in 1935, he was living in hospitals mostly in Paris. Short after his death, in 1936, the Hungarian composer Bela Bartok was invited to Turkey for the same function. He was told that before him nobody studied Turkish music. Bartok was presented recordings of ethnic songs, but he was not told where those songs were from or how they appeared in Turkey. When Bartok asked the officials to translate the texts of the songs, nobody was able to do that, because they were in unfamiliar language. Our hypothesis is that those songs could be Armenian, since the language was unknown, and they could be recorded by Komitas, because it was Komitas to work in Turkey in that field. Further exploration of those recordings is necessary to assert or reject our hypothesis.

**ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ
(ՇԻՐԱԿՈՒՄ ԳՐԱՌՎԱԾ ԵՐԳԱՅԻՆ ՆՍՈՒՇՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ցեղասպանությունը սուկ էթնոսի ֆիզիկական բնաջնջումը չէ, այլ նաև նրա մշակութային ժառանգության ոչնչացումը: Ինչպես հայ մշակույթը, այնպես էլ հայ ժողովրդական երաժշտությունը կիսել է մեր ժողովրդի տարաբախտ ճակատագիրը, անցել հազարամյակների բովով և հանդիսացել լուռ վկան այլազան իրադարձությունների, անշուշտ՝ նաև Մեծ եղեռնի:

Հայ ժողովրդի բազմադարյա մշակույթի հոգևոր հենասյուններից մեկը ժողովրդական երաժշտությունն է, որը ծնվել է հայերենի հնչյունական, լեզվաարտահայտչական առանձնահատկություններից և այդ պատճառով իր մեջ կրում է ազգային ոգեղեն անբացատրելի ներուժ: Եվ քանի որ հայոց լեզուն Հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղերից մեկն է, հետևաբար, հայ երգը, իրեն ծնող ժողովրդի նման անցնելով դարերի հոլովույթով, ենթարկվել է բազմաթիվ փորձությունների, սակայն կենսունակության շնորհիվ առայսօր շարունակում է մնալ որպես հոգևոր մնայուն արժեք և ազգային ինքնության վառ խորհրդանիշ:

Հայկական ժողովրդական երաժշտական ստեղծագործության հիմնաշերտերն ամփոփված են գեղջկական երգերում: Սոնողիկ կերտվածքով այս ստեղծագործությունների միաձայն-մեղեդային շարադրանքում ընդգրկված են բոլոր գեղարվեստական, երաժշտալեզվական արտահայտչամիջոցները՝ այդ մեղեդիները դարձնելով ինքնաբավ հորինվածքներ: Որպես բանավոր ավանդույթի գեղարվեստական ստեղծագործություններ, դրանք դարերի ընթացքում իրենց մեջ խտացրել են ազգային երաժշտական մտածողության տիպական ձևեր, արտահայտչական միջոցների

ուրույն համակարգ, որտեղ էլ մշակվել է ձայնակարգային և ինտոնացիոն յուրօրինակ ազգային շտեմարան:

«Ի՞նչ է երաժշտությունը, - գրել է Կոմիտասը, - ի՞նչ է նյութ տալիս ազգային ժողովրդական երգերին, արդյոք ք նրա հպարտ լեռները, խոր ձորերը, բազմազան կլիման, արդյոք ք պատմական հազար ու մի դեպքերն ու անցքերը, ժողովրդի ներքին ու արտաքին կյանքը: Այո՛, այս բոլորը, բոլորը նյութ են կազմում ազգային երաժշտության, մի խոսքով, այն ամենը, ինչ ազդում է ազգի զգայարանների ու մտքի վրա»:²⁵⁸

Աշխարհաքաղաքական բարդ խմորումները հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսին արեւմտահայության հայրենագրկման պատճառ դարձան: Գործընթացի կիզակետն էր Մեծ եղեռնը՝ բազմաթիվ զոհերով ու կորուստներով: Իրենց պատմական հայրենիքը լքեցին հազարավոր հայեր, որոնց մի զգալի հատվածը վերաբնակեցվեց Շիրակի տարածաշրջանում: Բասենից, Մուշից, Ալաշկերտից, Կարսից, Էրզրումից, Բայազետից եկած հայերն այստեղ ձեւավորեցին մի նոր հայկական ինքնատիպ մշակութային կյանք՝ կայուն ավանդույթներով: Աստիճանաբար ինքնահաստատվեց երգ-երաժշտության բազմաժանր մի համակարգ՝ 20-րդ դարասկզբում ձեռք բերելով երաժշտաոճային տեղային հատկանիշներ:

Համադրելով ժողովրդական երգերի 20-րդ դարասկզբի եւ մերօրյա գրառումները, փորձել ենք նախ վերլուծել պատմական հայրենիքում կամ բնօրրանում ծնունդ առած երգային ժառանգության նմուշների (Ա.Բրուտյան, Մպ.Մելիքյան) ժանրային, երաժշտաոճական առանձնահատկությունները: Ավելի քան մեկ-դարյա ժամանակահատվածից հետո կատարված գրառումների վերլուծությամբ բացահայտել ենք առավել կենսունակ ժանրերի (պարերգեր, ծիսական երգեր, օրորներ, ողբեր) գոյատևման նախադրյալներն ու որոշակի փոխակերպումները:

Մեր դիտարկումների կիզակետում էին հատկապես *պարերգերը* (մանի, թաղալո, խանա, խաղիկ), որոնցից առավել կենսունակ են գտնվել Բասենի տարածաշրջանի նմուշները: Մեծա-

²⁵⁸ Կոմիտաս, Հոդվածներ եւ ուսումնասիրություններ, Երեւան, 1941, էջ 54:

պէս տարածվելով որպէս «պարի խաղեր», դրանք կատարվել են հասուկ եղանակներով ու չափերով:²⁵⁹

Եթէ խաղիկները կամ պարերգերը (այդ թվում նաև ծիսական նմուշները) զարմացնում են հատկապէս մեղեդային բաղադրիչի կայուն պահպանվածությամբ, ապա առավել ուշագրավ է օրորոցային երգերի և ողբերգերի ազատ ստեղծագործական, ինչպէս նաև հանկարծաստեղծ հորինվածքների երաժշտաբանաստեղծական մտածողության տիպական ձևերի ու ժանրային բնորոշիչների կայուն և հաստատուն գոյակցությունը արդի կենցաղում:

Այսպիսով, ժողովրդական երաժշտական ստեղծագործությունն այսօր էլ մնում է որպէս պատմական հայրենիքից ժառանգված եւ ազգային ինքնության անխաթար կենսական ներուժ պարունակող փրկված մշակույթ:

АСМИК АРУТЮНЯН (АРМЕНИЯ)

ПАТРИОЦИД И ПРОЯВЛЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В АРМЯНСКОМ НАРОДНОМ МУЗЫКАЛЬНОМ ТВОРЧЕСТВЕ (НА ПРИМЕРЕ ОБРАЗЦОВ, ЗАПИСАННЫХ В ШИРАКЕ)

Вследствие известных геополитических событий второй половины 19-го века и особенно после Геноцида 1915 года тысячи западных армян пережили патриоцид и обосновались в ширакском регионе. Беженцы из Басена, Муша, Алашкерта, Карса, Эрзерума, Баязета сформировали здесь уникальную армянскую культурную среду, где были сформированы принципы дальнейшего существования и развития национальной музыкальной традиции.

Сопоставляя фольклорный материал, собранный в конце 19-го и начале 20-го веков с современными записями образцов музыкального фольклора Ширака, мы констатировали, что музыкальная традиция сохранила свою жизнеспособность в современном быту благодаря тем живучим традициям и принципам песнетворчества,

259 Գ. Հակոբյան, Հայրենի եզերք. Բասենի պարերգերը, Երևան, 1978, էջ 20:

которые являются константами национальной идентичности западных армян.

HASMIK HARUTYUNYAN (ARMENIA)

**PATRIOCID AND DISPLAYS OF NATIONAL IDENTITY
IN ARMENIAN FOLK PIECE OF MUSIC
(ON THE EXAMPLE OF STANDARDS WRITTEN IN
SHIRAK)**

Afterwards well-known geopolitical events of the second half of 19th century and especially after Genocide of 1915 year outlived thousand western Armenians and settled in a Shirak's region. Refugees from Basen, Mush, Alashkert, Kars, Erzurum, Bayazet here formed the unique Armenian cultural environment, where principles of further existence and development of national musical tradition were formed.

Comparing folklore material collected at the end of 19th and began 20th century with the modern records of standards of musical folklore of Shirak, we established that musical tradition had saved the viability in modern life due to those of great vitality traditions and principles of western Armenians.

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ԿԱՆԱԴԱՅՈՒՄ. ԽԵՂՎԱԾ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

2009-ի մարտի 15-ին ՀՅԴ կուսակցության հովանու ներքո գործող Համազգային հայ կրթական և մշակութային միության Նյու Ջերսիի մանկապատանեկան թատերախումբը Տորոնտոյի Հայ երիտասարդական կենտրոնի «Համազգային» թատերասրահում ներկայացրել է «Ջորջթաունի տղաները» երկլեզու երաժշտախառն թատերախաղը, որի հեղինակն ու բեմադրիչն էր ամերիկահայ թատերագիր, ռեժիսոր, բանաստեղծ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Մարգարյանը:

Այդ նախաձեռնությունը կազմակերպել և իրականացրել է Համազգային հայ կրթական և մշակութային միության Տորոնտոյի «Գլաձոր» մասնաճյուղի թատերական հանձնախումբը՝ ՀՅԴ «Սողոմոն Թեկլերյան» կոմիտեի հովանավորությամբ:

Իսկ ովքե՞ր էին «Ձորջրաունի տղաները» և ի՞նչ առնչություն ունեին նրանք տորոնտահայության հետ: Մեր մամուլում շատ կցկտուր, երբեմն ոչ ճշգրիտ, տեղեկություններ կան այդ մասին: Սույն զեկուցման մեջ, հետադարձ հայացք զցելով Հայոց ցեղասպանության հարյուրամյա պատմությանը, մենք, օգտվելով հիմնականում սկզբնաղբյուրներից՝ հանգամանորեն կանդադառնանք այդ հարցերին, որոնք էլ հիմք են ծառայել վերոհիշյալ թատերախաղի ստեղծմանը:

Հայոց Մեծ եղեռնին հաջորդած տարիներին, երբ եղեռնից հրաշքով փրկված հայերը սփռվեցին աշխարհի տարբեր անկյուններում, սակավաթիվ վերապրողների հաջողվեց ներգաղթել Կանադա, քանի որ Կանադայի կառավարությունը հայերին համարում էր ասիացիներ և տարբեր պատճառներով սահմանափակել էր նրանց մուտքը Կանադա: Բացառություն է կազմել միայն Կանադայի կառավարության հատուկ արտոնությամբ 1923-1924-ին 8-12 տարեկան 90 հայ որբերի մուտքը Կանադա, որոնք տեղափոխվել են Հունաստանի Քորֆու կղզու որբանոցից՝ մի խումբ կանադացի բարերարների կազմակերպած Կանադայի «Հայերի օգնության միության» ջանքերով:

Այդ միությունը, որին իրենց գործուն մասնակցությունն են բերել կանադացի շատ մեծահարուստներ, հիմնադրվել է 1916-ին Կանադայի առևտրական կյանքում փայլուն դիրք գրաված, կանադահայ հայտնի գորգավաճառ և անվանի հասարակական գործիչ Լևոն Պապայանի գործադրած ջանքերի ու նախաձեռնության շնորհիվ: 1915-ի Մեծ Եղեռնից, ինչպես նաև հույն-թուրքական պատերազմից (1921-1922) հետո, շատ հայ որբեր տարվեցին Քորֆու (Հունաստան), որտեղ նրանց հանդեպ ինամբ տարվեց բարեգործական ընկերությունների, ինչպես օրինակ՝ Լոնդոնի «Լորդ Մեյերի հիմնադրամի» (“Lord Mayor’s Fund – LMF”) կողմից: Կանադայի «Հայերի օգնության միությունը», իր կազմավորումից անմիջապես հետո, կարողացավ կանադական

իշխանություններից թույլտվություն ստանալ՝ հայ որբերին Քորֆուից Կանադա տեղափոխելու: Որբերի առաջին խումբը՝ 8-12 տարեկան հիսուն տղա, 1923-ին Լ. Պապայանի նախաձեռնությամբ բերվեց Տորոնտո: Հետագայում՝ նույն թվականին, այդ որբերը տեղավորվեցին Տորոնտոյից ոչ հեռու գտնվող Ջորջթաուն գյուղաքաղաքում՝ “Հայերի օգնության միության” կողմից 23000 դոլարով գնված ագարակում: Այնուհետև Ջորջթաուն բերվեց ևս 59 որբ (1924-ին՝ 40, նույն Քորֆուի որբանոցից, իսկ 1926-ին՝ 10 և 1927-ին՝ 9, Շեմլոնից (Լիբանան)՝ օրիորդ Ֆրեդսանի որբանոցից), և որբերի ընդհանուր թվաքանակը կազմեց 109 հոգի: Ջորջթաունի որբերի ինամքը 3-4 տարի իրականացրել է «Հայերի օգնության միությունը»՝ գթասիրտ կանադացիների նվիրատվությունների միջոցով: Վերոհիշյալ ագարակն այդ տարիներին հայտնի էր որպես «Հայ տղաների ագարակ», իսկ տղաներին շուտով անվանեցին «Ջորջթաունի տղաներ»: Վերջիններիս հայկական կրթություն ստանալուն զգալիորեն նպաստել և օժանդակել են Պապայան ամուսինները:

Լ. Պապայանը Վճռական և ազդեցիկ դեր է խաղացել 100 հայ որբ տղաների Կանադա բերելու գործում: Երբ 1922-ին «Հայերի օգնության միությունը» կազմեց իր այդ ծրագիրը, նա հասարակական կարգով նշանակվեց այդ կազմակերպության պատվավոր քարտուղար: Հետագայում նա ցանկություն հայտնեց ավելի մոտիկից աշխատելու տղաների հետ, ընտրվեց Ջորջթաունի հայ տղաների տան և ագարակի կոմիտեի անդամ, որի պարտականություններն անմիջականորեն առնչվում էին հայ մանչուկների հոգսերին ու բարօրությանը: Ինչպես հայտնի է, Լ. Պապայանը միակ հայն էր վերոհիշյալ կազմակերպությունների մեջ²⁶⁰, և միմիայն նրան ենք պարտական, որ Ջորջթաունի տղաները հնարավորություն ստացան հայերեն սովորելու: Այդ կազմակերպությունների հիմնական նպատակը և սկզբունքը ի սկզբանե հայ տղաներին կանադացի դարձնելն էր, սակայն Լ. Պապայանի գործադրած մեծ ջանքերի շնորհիվ, բազմաթիվ վիճաբանություններից, փաստարկներից ու պնդումներից, անհրա-

²⁶⁰ J. Apramian, Levon Babayan and the Georgetown Boys, “Nor Serount”, Toronto, 1976, № 1, p. 22.

Ժեշտ դասագրքեր ձեռք բերելուց հետո, հնարավոր եղավ հասնել այն բանին, որ տղաները սովորեն իրենց մայրենի լեզուն: Դա, իհարկե՛, հայերին օգնող կազմակերպությունների կողմից մեծ զիջում էր և առաջին հերթին վկայում է Լ. Պապայանի հաստատակամության, հայրենասիրության, դիվանագիտական հմտության ու հնարավորությունների մասին: Լ. Պապայանը դարձավ «Ջորջթաունի տղաների» մշտական այցելուն ու մեծահոգի պաշտպանը: Նա նրանց հետ խոսում էր միայն հայերեն և անընդհատ հիշեցնում իրենց ազգի սրբություն սրբոցի՝ լեզվի, գրականության, մշակույթի, հոգևոր ժառանգության մասին, որոնց համար նրանց ծնողները վճարել էին կյանքի գնով:

1926-ին «Ջորջթաունի տղաները», որպես իրենց երախտագիտության արտահայտություն, սկսեցին հրատարակել Կանադայում առաջին հայկական հանդեսը՝ «Արարատ» ամսագիրը (հայերեն և անգլերեն), որը ծառայում էր իբրև հաղորդակցության միջոց ավագ սերնդի և «տղաների», ինչպես նաև Օնտարիոյի ուրիշ հայկական համայնքների միջև: Լևոն Պապայանը դարձավ այդ ազգաշունչ ծրագրի իրագործման ամենաեռանդուն, ամենաջերմ և, որ շատ կարևոր է, առաջին պաշտպանը՝ քաջալերելով այդ մտահղացումը, ամեն կերպ աջակցելով, ցույց տալով բարոյական ու նյութական օգնություն: Ընդհանրապես, Ջորջթաունի որբերի վերաբերյալ բոլոր բանակցություններում և որոշումների ընդունման գործում Լ. Պապայանը հայության խիղճն էր, որը ներկայացնում էր ոչ միայն սեփական հայացքներն ու Կանադայի հայկական համայնքների ձգտումները, այլև փշուրփշուր եղած ազգի հույսը: Նման վարքագիծը հաճախ բախվում էր Ջորջթաունի հայ տղաների տան և կոմիտեի օտարազգի անդամների տարամետ տեսակետներին, բայց հենվելով իր ճկուն հայացքների տրամաբանական ու համոզիչ հիմքի վրա՝ Լ. Պապայանը կարողանում էր քաղաքական տարաձայնությունները պահել հանդուրժելի մակարդակի սահմաններում: Շնորհիվ Լ. Պապայանի գործադրած ջանքերի՝ Ջորջթաունի հայորդիներն իրոք որ մեծանում էին իբրև իսկական հայեր: Իմիջիայլոց, հայ որբերին Կանադա տեղափոխելու ծրագիրը Կանադայի պատմու-

թյան մեջ առաջին համաշխարհային մարդասիրական նախա-
ձեռնությունն է:

Վերադառնալով «Ջորջթաունի տղաները» ներկայացմանը՝
նշենք, որ այն ունեցել է մեծ հաջողություն, բոլոր դերակատար-
ները կարողացել են հաջողությամբ մարմնավորել Ջորջթաունի
տղաների կերպարները:

АНАИТ БЕКАРЯН (АРМЕНИЯ)

АРМЯНСКИЕ СИРОТЫ В КАНАДЕ: ОТНЯТОЕ ДЕТСТВО

15-го марта 2009 г. Детско-юношеской труппой “Общенациональной армянской ассоциации образования и культуры” г. Нью Джерси (действовавшей под эгидой партии АРФ Дашнакцутюн) в театральном зале Армянского молодежного центра Торонто был представлен музыкальный спектакль “Джорджтаунские ребята”, который шел на двух языках. Автором и постановщиком спектакля был армяно-американский драматург, режиссер и поэт, доктор химических наук, профессор Грант Маргарян. Спектакль рассказывал о судьбе ста армянских сирот, которые в 1923-24 гг. при содействии “Ассоциации помощи армян Канады” были перевезены из детского приюта с о. Корфу (Греция) в Джорджтаун (близ Торонто), где их должны были обучить земледелию для работы на канадских фермах. Инициатором их переезда был известный армяно-канадский предприниматель и общественный деятель Левон Папаян, благодаря которому армянские сироты изучали родной язык и культуру. По свидетельству очевидцев, спектакль имел огромный успех.

ANAHIT BEKARIAN (ARMENIA)

THE ARMENIAN ORPHANS IN CANADA: DEPRIVED OF CHILDHOOD

On Sunday 15 March, in 2009, the group of New Jersey Youth Theater Hamazkain presented *The Georgetown Boys*, a bilingual

musical, in the hall of the Armenian Youth centre in Toronto. The musical was written and staged by Herand Markarian, an American of Armenian descent, a playwright, producer, poet and Doctor of Chemistry. For Canadian Armenians, this performance stirred unforgettable memories of the Armenian genocide, the story of about 100 Armenian orphans who were brought to Georgetown, Canada by Armenian Relief Association in 1923-24 and trained as farmers, bringing a new life into the New World. Levon Papayan, a famous rug dealer and statesman of Armenian descent, had a great contribution to bringing the orphans to Canada and having them educated. The musical *The Georgetown Boys* was a great success, the cast best portrayed their characters.

ՎԻՊԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ. ԿԱՐՈՏԱԽՏ ԵՎ ԱՐՎԵՍ

Արշիլ Գորկին միակ նկարիչը չէր, որի արվեստը հասցրեց զուտ ամերիկյան համարվող արստրակտ էքսպրեսիոնիզմին կամ «գործողության նկարչությանը», թեև ամերիկյան և մասամբ եվրոպական արվեստագիտության մեջ նա է համարվում այդ ուղղության ռահվիրան՝ Ջեքսոն Փոլլոքի և Վիլլեմ դե Քունինգի կողքին, որոնցից առաջինը նրանից կրտսեր էր, երկրորդը՝ նրա աշակերտներից: Անշուշտ, մինչև Գորկին էլ ԱՄՆ-ում կային արստրակտ արվեստի հող ստեղծող վարպետներ – Թոբին, Սոթերվելը, Հոֆմանը և ուրիշներ: 1930-ական թթ. Եվրոպայի տարբեր երկրներից ԱՄՆ տեղափոխվեցին արստրակտ և սյուրռեալիստական վարպետներից ու գաղափարախոսներից շատերը, քանզի նրանց արվեստը «ղեզեներատ» էր համարվում ֆաշիստների կողմից: Արշիլ Գորկու «մոզական» արվեստն առաջինը գնահատած հեղինակություններից էին Դավիթ Բուրյուլյը (որը ժամանակին Մայակովսկու տաղանդի առաջին գնահատողն էր), սյուրռեալիզմի հիմնադիր Անդրե Բրետոնը եվ հեղափոխական Լև Տրոցկին, որոնք կախարդված էին նրա արվեստում առկա բարձր վարպետությամբ և մոզական ուժով:

Գորկին համարվել է «բնածին» նկարիչ: Նյու-Յորքի նշանա-

վոր Ժամանակակից արվեստի թանգարանի Արշիլ Գորկու սրահում նրա գործերը ներկայացված էին իր վրա ազդած արդի արվեստի մեծ վարպետների՝ ինչպես սյուրռեալիստ Անդրե Մատնի և սյուրռեալիստ-աբստրակցիոնիստ Ռոբերտո Մատտայի, այնպես էլ իրենից ազդված կամ իրեն աշակերտած Վիլլեմ դե Զունինգի, Մարկ Ռոթկոյի, Սեմ Ֆրենսիսի նկարների հետ: Դա հատուկ վերաբերմունք է, որին արժանացել է Գորկին:

Գորկին օժտված էր մի քանի հատկանիշներով, որոնցով տարբերվել է ամերիկյան մեծ նկարիչներից .

ա) կերպարվեստի պատմության և տեխնիկայի վիթխարի գիտելիքներ,

բ) ուսանողական տարիներից ունեցել է բազմաթիվ աշակերտ-աշակերտուհիներ, որոնցից մի քանիսի դերը որոշիչ է ամերիկյան նորագույն արվեստում,

գ) ակադեմիական գծանկարի բացառիկ հմտություն,

դ) իրեն նախորդած վարպետներին (Էնգր, Սեզան, Մատիս, Լեժե, նույնիսկ Մատտա, որն իրենից երիտասարդ էր և կենարար ազդեցություն ունեցավ նրա ոճի վերջնական ձևավորման մեջ) ընդօրինակելու արտասովոր ձիրք,

ե) իր «հրաշապատում» մանկությունը գեղարվեստորեն իդեալականացնելու մեծ տաղանդ, ինչը հատկապես հատուկ է բանաստեղծներին:

Այս հատկանիշները նրան տարբերում են մյուս մեծ վարպետներից, որոնք նախորդել կամ հաջորդել են նրան ԱՄՆ-ում:

Գորկին իր կրթվածությամբ ամերիկյան 1940-ական թթ. նկարիչներից թերևս ամենանեվրոպականն էր, որ հորիզոններ բացեց ամերիկյան նորագույն արվեստի համար՝ այն դուրս բերելով տեղայնությունից:

ВИГЕН КАЗАРЯН (АРМЕНИЯ)

АРШИЛ ГОРКИ. НОСТАЛЬГИЯ И ИСКУССТВО

Аршил Горки не был единственным из художников в качестве предвестника абстракционизма в США, как иногда утверждает американская и европейская художественная критика. Однако некото-

рые из его учеников и последователей сыграли определенную роль в становлении абстрактного экспрессионизма в США.

Искусство Горки отличается некоторыми особенностями:

1. Обширные познания в области истории и техники изобразительного искусства.

2. Некоторые из его учеников и последователей (Виллем де Кунинг, Марк Ротко, Сэм Фрэнсис) вместе с Джексоном Поллоком стали основателями этого направления.

3. Горки был наделен редким умением имитировать великих мастеров (Сезанн, Матисс, Пикассо, Леже, Миро, Матта).

4. Он был наделен также особым талантом вдохновляться воспоминаниями своего “волшебного” детства.

VIGEN GHAZARIAN (ARMENIA)

ARSHILE GORKY: NOSTALGIA AND ART

Arshile Gorky was one of the forerunners of abstract expressionism in the USA. Some of Gorky's pupils and disciples were in the van of this current.

The art of Arshile Gorky has some peculiarities:

1. Extensive knowledge in history and technique of painting and drawing.

2. Some of his disciples, as de Kooning, Rothko, Sam Francis, were the pioneers of abstract expressionism.

3. Gorky had special talent to imitate the paintings of great masters (Cezanne, Picasso, Leger, Miro, Matta).

4. He was inspired by magic memories of his childhood in Khorkom and Van (Western Armenia).

ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնասկավառակի հատուկ թողարկմամբ դաշնակահար և կոմպոզիտոր, միջազգային մրցույթների դափնեկիր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանը իր հարգանքի տուրքն է մատուցում Օսմանյան կայսրության կողմից իրագործված հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, որոնց դառնամաղձ իրողության 100-ամյակը լրացավ 2015-ին:

Դաշնակահարի կողմից ընտրված ստեղծագործությունների ծրագիրն ընդգրկում է առաջին հերթին հայ երաժշտության դասականի՝ Կոմիտասի երկու շարքերը: Ինչպես հայտնի է, բախտի անողորմ բերումով կոմպոզիտորը դարձավ սպանդի ականատեսը, որի հետևանքով երկարատև կորցրեց հոգեկան հավասարակշռությունը և կյանքի վերջին քսան տարիներն անցկացրեց Փարիզի հոգեբուժարանում:

Սկզբում ներկայացված Վեց պարերն անմիջապես արտացոլում են Կոմիտասի ինքնատիպ ստեղծագործական մտածողությունը: Օժտված լինելով վարակիչ և կրակոտ պարելու ունակությամբ (ըստ ականատեսների հիշողությունների)՝ Կոմիտասը միննույն ժամանակ պարերի մեջ ընդգծում է անակնկալ շեշտադրումներ, յուրատեսակ դոփյուններ, որոնք արտասովոր կերպով հարստացնում են պիեսների հնչյունային արտասանությունը (արտիկուլյացիան):

Պարերին հաջորդող Կոմիտասի դաշնամուրային յոթ երգերում արտացոլված է գլխավոր ընդհանրացված, կարոտով ներշնչված սիրային-քնարական թեմատիկան: Պահպանված է կոմպոզիտորին բնորոշ թափանցիկ ֆակտուրան, որում կրկին առկա են պոլիֆոնիկ գրելաձևի իմիտացիոն և հակադրական տարրերը: Առանձին հնչյունների և հեղինակի կողմից հատուկ շեշտադրված փոքր մոտիվների միջոցով, ցրված գործիքի չորս-հինգ ռեգիստրների միջև ընկած տարածության մեջ, կոմպոզիտորը կարծես գրավում է ունկնդրի ուշադրությունը դրանց տեմբրային, սո-

նորային հնչողությամբ՝ դրանով իսկ կանխատեսելով հետագայում 20-րդ դարի երկրորդ կեսի երաժշտության մեջ այդ ուղղության ծնունդը:

Մի փոքր այլ լույսով է հանդես գալիս Կոմիտասը «Գարուն աս» պիեսում, որը փայլուն դաշնակահար, կոմպոզիտոր Ռոբերտ Անդրիասյանի մշակումն է: Ստեղծագործության գլխավոր իմաստը կայանում է երգի հենց առաջին տողերի մեջ, այսինքն, երբ գարնանը սպասված տաքության և լույսի փոխարեն տեղում է ձյունը: Սակայն Անդրիասյանը ավելի շուտ արտաբերում է հենց Կոմիտասի վերջին տարիների բոլորից ծածկված ներաշխարհը՝ խոռվահույզ, անհանգիստ, հոգետանջ հարցերի անպատասխան վիճակով:

Առաջին ստեղծագործություններին հաջորդիվ հնչում է Էդուարդ Մադոյանի սոնատը՝ նվիրված 20-րդ դարի ամերիկացի հանրաճանաչ նկարիչ-աբստրակցիոնիստ, սյուրռեալիզմի հիմնադիրներից մեկին՝ Արշիլ Գորկուն: Ծնունդով հայ Գորկին դեռ մանկուց հասկացել է թրքական կոտորածից փախուստի ողջ դառնալի հետևանքները: Եվ չնայած նրան, որ արդյունքում Ամերիկայում նա ճանաչվել է որպես տաղանդավոր նկարիչ, սեփական կյանքի հետագա, հավելյալ ողբերգական իրադարձությունները նրան հասցրեցին ինքնասպանություն՝ չարագույժ կերպով արձագանքելով թրքական մանկությունից բխող ամեն կերպ իր կողմից խուսափվող սարսափին: Մադոյանի սոնատը, կարծես, լիովին հագեցած է նկարչի կյանքի ներքին և արտաքին պայքարի երկյուղով: Չնայած Ա.Գորկու կյանքի ողբերգական ավարտին, Մադոյանն այնուամենայնիվ ավարտում է սոնատը կարծես ուժի ցնծությամբ, կենսակայունությամբ, հիմք վերցնելով հենց իր՝ Արշիլ Գորկու կողմից արտահայտած և որպես ստեղծագործության ենթավերնագիր առաջադրված գաղափարը. «Ես իմ վրձնով կվերակենդանացնեմ Հայաստանն ամբողջ աշխարհի համար»:

Այժմ արդեն ԱՄՆ-ում բնակվող կոմպոզիտոր Տաթև Ամիրյանը իր «Սպասելով լուսաբացին» ստեղծագործությունը նույնպես նվիրել է ցեղասպանության իրադարձություններին, սակայն այն հույսով և ցանկությամբ, որ հայերի կյանքում երբևէ անխու-

սափելիորեն կբողբոջի լուսաբացը: Դա կոմպոզիտորն աշխատել է արտահայտել երաժշտության միջոցով:

Չայնասկավառակը եզրափակում է Հայկ Մելիքյանի «Բագինին արձագանքներ» տրիադան՝ ոգեշնչված Դանիել Վարուժանի՝ ճանաչված արևմտահայ բանաստեղծի գրչից: Ստեղծագործությունն առաջին անգամ կատարվել է 2013 թ. մարտի 29-ին Բեռլինում, դաշնակահարուհի Կարինե Գիլանյանի հետ միասին (չորս ձեռք ձևաչափով), որի ձայնագրությունն էլ կազմում է սովյալ սկավառակի մեջ ներառված ստեղծագործությունների բաղկացուցիչ մասը: Բանաստեղծի տողերից առանձին հատվածներ հանդես են գալիս որպես յուրաքանչյուր պիեսի համառոտ նախաբան, որը նկարագրում է 19-րդ դարի վերջին սուլթանական Թուրքիայի դաժանագույն ռեժիմի կողմից հրահանգված կոտորածը: Բանաստեղծը չգիտեր, որ ճակատագրի բերումով ինքը նույնպես համալրվելու է այս անգամ արդեն 20-րդ դարասկզբի ցեղասպանության զոհերի շարքում: Առաջին կարճ մասում (որտեղ ստեղներին ուղեկցում է նվազը նաև լարերի վրա) անապատային մեղայլ լռության համատեքստում (*pianissimo*) մեկ այստեղ, մեկ այնտեղ հայտնվում են ընդգծված պուանտիլիստական առանձին հնչյուններ՝ որպես մահացածների արձագանքներ, տառապյալ հոգիներ: Երկրորդ մասն արդեն կարծես արտացոլում է բուն դաժան իրադարձության պատկերը, սակայն ստեղծագործության հեղինակի զգացմունքների միջոցով՝ մերթ շփոթված, իլացված, տրտմագին հարցական, մերթ ցատումնալից մերկացուցիչ, տանջագին հուզված: Երաժշտության մեջ երբեմն հնչում են հայ ժողովրդական երգի՝ «Կռունկի» սկզբնային, սեկունդային ռիթմաինտոնացիաները: Ավարտական մասն արտահայտում է սարսափն ամփոփող զարհուրելի լռությունը, որտեղ միայն լսելի են մեղմ զեփյուռի շրշյունն ու թափված արյան հոտը: Եվ նաև չեն կարող լռել վերջին անողորք տրեյների օդափարված հարցական երանգները (չորս *piano* հնչողությամբ):

Հայկ Մելիքյանի կողմից ներկայացված ամեն մի ստեղծագործության մեջ, այդ թվում և հայ ժամանակակից կոմպոզիտորների, որտեղ նա լիարժեք իր հատկադերում է, դաշնակահարը փորձել է հնարավորինս ճշգրիտ կերպով արտահայտել հեղի-

նակների հիմնական մտահղացումները: Գիտակցելով հայ ժողովրդի այդ ժամանակաշրջանի ողջ ողբերգական, մութ կողմերը, հաճախ նաև պատկերայնորեն ուրվագծելով ժողովրդի տառապանքը, Հայկ Մելիքյանը՝ կարծես համախմբելով ինչպես արդեն վախճանված, այնպես էլ կենդանի կոմպոզիտորներին, կոչ է անում առ առավել ցասումնալից ճողփյունի և արարչագործ կյանքի բաղձանքի՝ հանուն լեցուն լույսի և արդարության հաղթանակի:

КАРИНЕ ДЖАГАЦПАНЯН (АРМЕНИЯ)

АРМЯНСКАЯ ФОРТЕПИАННАЯ МУЗЫКА ПАМЯТИ ГЕНОЦИДА АРМЯН

Выпуском специального компакт-диска пианист и композитор, лауреат международных конкурсов, заслуженный артист РА Айк Меликян отдает дань уважения памяти жертв Геноцида армян в Османской империи, 100-летие жестоких событий которых исполнилось в 2015 г.

В программу отобранных пианистом сочинений вошли прежде всего фортепианные циклы пьес классика армянской музыки Комитаса - композитора, который волею злой судьбы оказался очевидцем резни, вследствие чего потерял душевное равновесие и последние 20 лет провел в больнице для душевнобольных в Париже. В несколько ином свете предстает Комитас в пьесе «Гарун а» в обработке блестящего пианиста, композитора и педагога Р. Андриасяна, который скорее передает сокрытый от всех в последние годы жизни внутренний мир самого Комитаса - мятежного, не знающего покоя, не находящего ответа на мучительные вопросы.

Этой печальной дате (прямо или косвенно) посвящены также сочинения современных армянских композиторов - Э. Садоояна, Т. Амирян и самого А. Меликяна.

Осознавая все трагические стороны истории армян, порою даже картинно передавая в музыке мучения народа, А. Меликян вместе с отобранными им именами умерших и ныне живущих ком-

позиторов как бы призывает к еще более энергичному всплеску и стремлению к созидательной жизни, полной веры в торжество справедливости.

KARINE JAGHATSPANYAN (ARMENIA)

ARMENIAN PIANO MUSIC DEVOTED TO THE COMMEMORATION OF THE ARMENIAN GENOCIDE

Issuing a special compact disc, pianist and conductor, laureate of international contests, honoured artist Hayk Melikyan credits a mark of respect to the victims of the Genocide of Armenians in Ottoman empire, centennial of commemoration of which is observed in 2015.

Into the programme of works selected by the pianist first of all cycles of piano works by the classic of Armenian music – Komitas – are included, works of the composer who was meanly destined to be the eye-witness of the massacre and as a consequence lost his mental health and spent the last 20 years of his life at an insane hospital in Paris. In a somewhat different light Komitas is presented in his piece “Garun a” paraphrased by the brilliant pianist, composer and teacher R. Andriasyan who rather transmits the latent inner world of Komitas himself of the last years – troubled, with no peace of mind, never finding answers to tormenting questions.

To this sorrowful date, directly or by implication, works of contemporary Armenian composers – E. Sadoyan, T. Amiryan and of H. Melikyan himself – are dedicated.

Realizing all the tragic sides of the history of Armenians, and sometimes even presenting tortures of the nation through dramatic portrayal, H. Melikyan with the names of deceased and living composers, chosen by him, sort of appeals to more mighty upswing and will to creative life, full of faith towards inevitability of triumph of righteousness.

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**«ՀԱՅԱ-ԳԵՐՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ»
ԵՎ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ**

Տակավին, 1914, մայիսի 31-ին Բեռլինից Մոսկվայում բնակվող անվանի բանաստեղծ Ալեքսանդր Օտտոբյանին ուղղված նամակում Իսահակյանը հանգամանալից պատմում է Հայագերմանական ընկերության ստեղծման և նրա ծրագրերի մասին: «Հայկական հարցի վերազարթումի օրից Բեռլինում հիմնվեց մի հայկական կոմիտե, որ, շնորհիվ Գերմանիայում ունեցած իր նշանավոր անձանց կապերի, կարող եղավ գերման դիվանագիտության հակառակությունը ռուսական հայանպաստ ձեռնարկների դեմ՝ այնքան մեղմել, որ վերջ ի վերջո հաջողվեց ռեֆորմների շուրջը համաձայնություն ստեղծել Հայաստանով շահագրգռված այդ երկու պետությունների միջև:

Այժմ այդ կոմիտեն մեր ազգի շահերը Գերմանիայում ավելի լավ պաշտպանելու ամենանպատակահարմար միջոցը համարեց Հայ-գերմանական ընկերությունը, որն ունենալով հայ և գերման անդամներ, կարող պիտի լինի գերման հասարակության ամենալայն խավերը մոտեցնել և հետաքրքրել մեր ազգի վիճակով:

... ընկերությանս ձեռնարկներից մեկն է հրատարակել նաև մի օրգան հայերեն և գերմաներեն բաժիններով՝ երկու ազգերը իրար ծանոթացնելու համար:

Ավելորդ չլինի ասելը, որ թե՛ ընկերությունս և թե՛ թերթը կուսակցականապես և քաղաքականապես չեզոք հողի վրա են կանգնած, և Բեռլինի ռուս դեսպանի հաճությունը ընդունած:

Հայ-գերման ընկերության կողմից պատիվ ունի խնդրելու Ձեզ, սիրելի բարեկամ, որ բարեհաճեք Ձեր շրջանում մեր գործին համակիրներ գտնել՝ անդամագրելով նրանց/ (VI, :151-152):

Իր ժամանակի վավերագրերի շարքում Իսահակյանի նա-

մակը լավագույն սկզբնաղբյուրներից մեկն է, որ լույս է սփռում ընկերության գործունեության վրա և մեզ հասանելի դարձնում այդ կազմակերպության ստեղծման նպատակներին:

Նամակը գրելուց մի քանի օր անց, 1914 թվի հունիսին կայանում է վերոհիշյալ ընկերության առաջին նիստը, նկատի ունենալով այն մեծ գործունեությունը, որ ծավալել էր հայ և գերմանացի ժողովուրդների մերձեցման խնդրում՝ Յոհաննես Լեփսիուսը, նա ընտրվում է ընկերության նախագահ, տեղակալներ Պատվ Ռորբախը և Ջեյմս Գրինֆիլդը, գործադիր մարմնի պատասխանատուներ Է. Շտիրը և Ավետիք Իսահակյանը: Բանաստեղծը ընտրվում է նաև ընկերության միակ պարբերական՝ «Մեսրոպ» հանդեսի խմբագիր: Ընկերությունը ուներ ավելի շատ պատմամշակութային ուղղվածություն և նրա առաջնային խնդիրներից էր գերման ժողովրդին ծանոթացնել Հայաստանի բազմադարյան պատմությունն, արվեստն ու գրականությունը: Հաստատել բազմակողմանի կապեր, ամրապնդել մշակութային փոխհարաբերություններ և թարգմանել գրական հայտնի կոթողներ:

Հարկ է ասել ընկերության պարբերական «Մեսրոպ» հանդեսը իրերի բերումով ունենում է միայն մեկ տպագիր համար (Ա տարի, Բեռլին, 1914 թ.), ուր ի թիվս մի շարք գեղարվեստական երկերի տպագրվում է նաև Ավետիք Իսահակյանի «Ուռիների տակ մտորում եմ լուռ...» բանաստեղծությունը:

Իր հերթին Պ. Ռորբախը այսպես է բնութագրել ընկերության հիմնական նպատակներից մեկը. «Հայերի մեջ գերմանական մշակութային ազդեցության վերաբերյալ հոգատարությանն է ծառայել սույն ընկերությունը»: Հարկ է հիշել, որ ընկերության ստեղծումից դեռ մեկ տարի առաջ, Գերմանիան, առաջին անգամ, ակտիվորեն հանդես էր եկել հոգուտ «Հայկական բարենորոգումների»: Բայց շուտով ի դերն ելան «Հայա-գերման ընկերության» ակնկալած հույսերը, հայ և գերման մշակույթների մերձեցման փորձերը, վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմը տակնուվրա արեց բանաստեղծի ծրագրերն ու սպասումները: Պատերազմը հատկապես կործանարար եղավ Արևմտյան Հայաստանի համար: Թուրքիան, չեղյալ հայտարարելով Ռուսաստանի հետ 1914 թ. հունվարին կնքած պայմանագիրը, ներգրավ-

վեց աշխարհամարտի մեջ, որպես գերմանական կայսրության դաշնակից և օգտվելով ռազմական իրավիճակից, անցավ իր դարավոր երազանքի իրագործմանը՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի իսպառ բնաջնջմանը: Գերմանիան իր հերթին, հրահրում էր Թուրքիայի հայաջինջ ծրագրերը համարելով հայերին Ռուսաստանի «բնական դաշնակիցը» և Միջին Արևելքում գերմանաթուրքական առաջընթացը խոչընդոտող ուժ: Հայագերման ընկերության ղեկավարների, մասնավորապես Յ. Լեփսիուսի տարած բանակցությունները չհասան իրենց նպատակին: Գերմանիան վճռորոշ կերպով բոլոր հարցերում Թուրքիայի կողմնակիցն էր և դաշնակիցը:

Իսահակյանը, ընտրվելով «Մեսրոպ» հանդեսի խմբագիր, ակտիվ գործունեություն է ծավալում, որ հնարավորինս չափով շատ անվանի մարդիկ մասնակցեն հանդեսի աշխատանքներին: Բերենք մի ուշագրավ հատված 1914 թ. ապրիլի 21-ին Բեռլինից բանաստեղծ Միամանթոյին, որն այդ շրջանում գտնվում էր ժնևում. Իսահակյանի գրած նամակից. «Ամենից առաջ, խնդրում եմ, քանի այդտեղ ես, մի բանաստեղծություն ուղարկիր, ոչ այս համարի համար, այլ երկրորդ համարի, որ լույս պիտի տեսնի հունիսին²⁶¹: Առաջին թվի համար չէ, քանի որ գերմաներեն առաջին թվի մեջ թարգմանորեն դնելու ենք քո «Հայրենի աղբյուրը»: Ուրեմն, ժամանակ ունես գրելու: ...Ուղարկիր նույնպես Ռ. Սևակի հասցեն (Ռ. Չիլինգարյան, Լոզան, դոկտոր), նույժ եմ խնդրելու, նույնպես» ((VI, 148):

Նույն շրջանում Իսահակյանը գրում է և իր մտերմագույն ընկերոջը՝ «Գեղարվեստի» խմբագիր Գարեգին Լևոնյանին (1914, մայիսի 3): «Այստեղ եմ ապրելու, արդեն մի տարով բնակարան եմ վարձել, այստեղ եկել եմ մի գործով, այսինքն հայ-գերմանական ընկերության գործերը վարելու և հրատարակվելիք ամսագիրը խմբագրելու, մի փոքր ռոճիկ ունեմ, որ թեև քիչ է աշխատանքից գնահատման համար, բայց էլի չեղած տեղից լավ է» (VI, 130): Թերևս առաջին անգամ տարագրության շրջանում Իսահակյանը ստանձնեց բավական պատվավոր և պատասխանատու աշխատանք: Նա բերեց նաև իր ամենագործուն մասնակ-

²⁶¹ Ցավոք «Մեսրոպ»-ի երկրորդ համարը այդպես էլ լույս չտեսավ:

ցությունը Բեռլինում հայա-գերման ընկերության և Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջև ընթացող բանակցություններին, ուր գերմանական կառավարության անունից հանդես էր գալիս ԱԳ պետքարտուղարի օգնական Ցիմերմանը:

Եթե մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Իսահակյանը հույսեր ուներ, որ Գերմանիան կարող է խոչընդոտ հանդիսանալ Թուրքիայի համար սկսելու Արևմտահայաստանում հայ բնակչության ջարդերը, սակայն պատերազմը փոխեց ամեն ինչ, երբ Թուրքիան հանդես եկավ որպես Գերմանիայի ռազմական դաշնակից և հենց Գերմանիայից հավանություն ստացավ իրագործելու հարյուր հազարավոր հայության սպանդը:

Որերորդ անգամ Գերմանիան նենգորեն խաբեց հայ ժողովրդին՝ թողնելով մենակ Արևմտահայաստանի խաղաղ բնակչությանը թուրքական արյունատենչ յաթաղանի առաջ:

Պատմական իրադարձությունների բերումով, շատ կարճ տևեց հայա-գերման ընկերության խաղաղ գոյակցությանը: Բանաստեղծի համար հստակորեն պարզ էր, որ եվրոպական մեծ տերությունների համար ամենակարևորը տնտեսական շահն էր:

1915 թվականի օգոստոսին, Իսահակյանը, ստիպված էր թողնել Գերմանիան (հակառակ դեպքում որպես ռուսահպատակ նա կազատագրկվեր), և ընտանիքով տեղափոխվել բնակության ժնև (Շվեյցարիա): Այս հարցում Իսահակյանին մեծապես օգնեց Բեռլինում Պարսկաստանի դեսպան Հովհաննես խան Մասեխյանը, տալով բանաստեղծին պարսկահպատակի անձնագիր Ավետիս Բայազետ անվամբ, ինչը հնարավորություն տվեց Իսահակյանին մեկնել Բեռլինից ժնև:

Այնպես որ երկար տևականություն չունեցավ Իսահակյանի աշխատանքը Բեռլինում հայա-գերման ընկերությունում՝ մեկ տարի և մի քանի ամիս: Սակայն ժնևից Իսահակյանը շարունակում էր ակտիվ մասնակցություն բերել Գերմանիայի հետ տարվող գաղտնի բանակցություններին, որոնք տեղի էին ունենում ժնևում և Բեռլինում: Բանաստեղծի նպատակն էր անել ամեն բան, որ եվրոպական գորեղ պետությունները սատար կանգնեն Հայաստանի Հանրապետությանը:

Իր հերթին նա մշտապես պահպանում էր կապերը Յ. Լեփ-սիուսի, Պ. Ռորբախի և Ջ. Գրինֆիլդի հետ և նա մնում էր հայա-գերման ընկերության անդամ: Իսահակյանն այս շրջանում հավաքեց նաև մեծաթիվ փաստաթղթեր, վավերագրեր, ժամանակակիցների վկայություններ կապված Մեծ եղեռնի հետ և այդ վավերագրերը նա հրատարակում էր գերմանական մամուլում և իր հերթին նրանց հիման վրա շարադրում ցեղասպանության վերաբերյալ իր «Մայիտակ գիրքը»: Իսահակյանը որոշակի ծառայություն ունի հայ ժողովրդի թշնամի Թալեաթի հայտնաբերման, և նրա ոչնչացման գործում:

Ճիշտ է գերման իշխանությունները Եղեռնի շրջանում բացեիքաց պրո-թուրքական դիրք գրավեցին, սակայն Գերմանիայի լավագույն զավակներ Արմին Վեգները, Ֆրանց Վերֆելը, Յ. Լեփսիուսը, Պ. Ռորբախը, Ջեյմս Գրինֆիլդը, Է. Շտիրը և ուրիշներ շարունակում էին իրենց հայանպաստ գործունեությունը: Պատմությունը դեռ կտա իր գնահատականը 1914-1939 թթ. գործած հայա-գերման ընկերության վերաբերյալ, մեզ մնում է փաստել, որ մի շարք վճռորոշ պատմական իրադարձություններ՝ Առաջին համաշխարհային պատերազմը, Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում և Երկրորդ համաշխարհային պատերազմը խոչընդոտեցին հայա-գերմանական հարաբերության բարելավմանը: Ներկայումս կան բազմաթիվ վկայություններ Հայաստանի հանդեպ գերմանական տարբեր շրջանների հետաքրքրության մասին: Թերևս արժեք հիշատակել Հալլե-Վիտենբերգ քաղաքում՝ Հալլեի համալսարանին կից գործող հայկական մշակութային կենտրոնը, որը կրում է ի հիշատակ հայա-գերման ընկերության պարբերական ամսագրի «Մեսրոպ» անունը:

АВЕТИК ИСААКЯН (АРМЕНИЯ)

“АРМЯНО-ГЕРМАНСКОЕ ТОВАРИЩЕСТВО” И ДЕЯТЕЛЬНОСТЬ АВЕТИКА ИСААКЯНА (1914-1919 ГГ.)

В июне 1914 года, с целью взаимосближения культур двух народов, усилиями ряда немецких и армянских деятелей науки и культуры в Берлине было создано “Армяно-германское товари-

щество”. На первом заседании профессор Иоаннес Лепсиус был избран председателем Товарищества, а членами правления – П. Рорбах, Дж. Гринфильд, Эд. Штир и Ав. Исаакян. Поэт был назначен также главным редактором печатного органа Товарищества, “Месроп”. Однако, начавшаяся Первая мировая война расстроила все планы Товарищества относительно улучшения отношений между двумя народами. С первых же дней войны Германия в лице Турции имела союзника, готового во всем подчиняться приказаниям Берлина. Во всех международных переговорах относительно Армянского вопроса Германия неукоснительно стояла на стороне Турции. Аветик Исаакян успел издать только первый номер журнала “Месроп”. Он был вынужден покинуть страну как гражданин Российской империи и, получив с помощью посла Персии в Германии, Ованнеса Хана Масеяна паспорт персидского подданного, на имя Аветиса Баязеда, выехал из Берлина и обосновался в Женеве. Тем самым работа Исаакяна в Товариществе была прервана, но он продолжал поддерживать с ним связь, неоднократно ездил в Берлин, принимал участие в немецко-армянских переговорах. Исаакян способствовал выявлению скрывающегося в Берлине турецкого палача Талеата, и внес свою лепту в акт возмездия по его уничтожению в 1921 г.

AVETIK ISAHAKYAN (ARMENIA)

“THE ARMENIAN-GERMAN PARTNERSHIP” AND THE ACTIVITIES BY AVETIK ISAHAKYAN (1914 - 1919)

In June 1914, with a purpose to draw together the cultures of two peoples, an “Armenian-German Partnership” was created in Berlin with the help of both German and Armenian scientific and cultural circles. On the opening session, Prof. J. Lepsius was elected the first head of the Partnership, while P. Rohrbach, G. Greenfield, E. Stier and A. Isahakyan became the members of the board. The latter was also assigned as a head editor of the periodical called “Mesrop”. However, the First World War distorted the plans of the Partnership regarding any possible improvement of relationship between two peoples. Right from the beginning of the

Great War, Germany had been supporting Turkey in regard of any international negotiations discussing the so-called Armenian Question. Avetik Isahakyan could publish only the first issue of “Mesrop”. While being a holder of Russian citizenship, he had to leave the country as quick as possible. With the help of Hovhannes Khan Maseyan, a Persian ambassador in Germany, Isahakyan acquired a Persian citizenship receiving a new name Avetik Bayazed. This allowed him to leave Berlin for Geneve. In fact, the activity of Isahakyan in the Partnership was somewhat interrupted, though he was able to maintain his contacts with the organization and participated frequently in German-Armenian consultations in Berlin. Isahakyan did much for both revealing the Turkish odious Talaat and his subsequent extermination in Berlin in 1921.

ՆԱԴԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ
ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՏՈՄ ՅԱՐՃԱՆՅԱՆԻ
ՊՈՆԶԻԱՅՈՒՄ**

20-րդ դարասկզբին արևմտահայ իրականության մեջ հեթանոսական գաղափարաբանության նկատելի շրջադարձը դառնում է հստակ գեղագիտական ուղղվածություն, որի հետևորդներից էր Ատոմ Յարճանյանը: Քրիստոնեության սխալ ըմբռնված գաղափարները, մասնավորապես հնազանդությունը առաքինություն համարելը, դարերով քարոզվելով, ժողովրդի մեջ գրեթե սպանել էին պայքարի և ընդվզումի ճշմարտությունը: Քրիստոսի պես անդիմադիր նահատակվող, քրիստոսավող ժողովրդի կրավորական հոգեբանությունը փոխելուն միտված հեթանոսական-արիական գաղափարաբանությունը ռազմաքաղաքական տվյալ պայմաններում արմատապես կարող էր բեկել ազգային գոյաբանության ամբողջ ընթացքը: Առանց զենքի ու կռվի պարտվող հայորդին շատ բան կարող էր փոխել ազգային ճակատագրում: Բանաստեղծն ընդվզում է ցեղի պատմական ընթացքն առաջնորդող գաղափարաբանության դեմ, որ անընդմեջ ողբերգություն-

ների ու կոտորածների մեջ սպառել է իրեն՝ հոչակելով արիական գաղափարաբանությունը կամ ուժապաշտությունը: «Անարժեք է գրականությունը, եթե դա ցեղի ոգու ինքնարտահայտությունը չէ, եթե նրա մեջ ցեղի ոգին չի ճառագայթում: Ցույց տվեք ժողովրդին իր ցեղի արև-դեմքը, որ նա ինքնատեսությամբ բարձրացնե իր խոնարհ ճակատը»²⁶², - գրականության նույն խնդիրն է գաղափարանշում Նժդեհը՝ ցեղակրոնության գաղափարակիրն ու ուխտավորը: Դարավերջի արևմտահայ գաղափարագեղագիտական այս ուղղվածության առաջնորդ դեմքը Դ. Վարուժանն է, որն իր ստեղծագործական ծրագրով կենսականորեն անհրաժեշտ գեղարվեստական նոր մտածողության վերելք նշանավորեց:

Յարճանյանի ստեղծագործ հանճարը նույնքան փառահեղ կարող էր լինել խաղաղության արշալույսների օրհներգության մեջ: Ազատության մեջ երբեմն ծաղկող կյանքի ստեղծագործ ոգևորությունը որքան էլ այցի գնար նրա բանաստեղծական հզոր տարերքին, հայրենիքի արյան շառագույնը վերստին խուժելով՝ տիրական պիտի դառնար նրա պոեզիայում: Կյանքի բանաստեղծական ընկալումն հոգում՝ Յարճանյանն իր հանճարն ընծայաբերեց ազատության պայքարի գաղափարին՝ իրեն ներհատուկ գեղապաշտության տեղ բերելով ռազմի դյուցազնահեղ ոգին, ազատության համար կյանքով սխրագործելու, ազգային պարտադրվող մահն հերոսացումով հաղթահարելու գաղափարն ու կամքը՝ արարելով բանաստեղծության արժանավայել մի տեսակ՝ ռազմի պոեզիա կամ ռազմերգություն:

Բախտը Միամանթոյին օժել էր բանաստեղծական հանճարով, ճակատագիրն սահմանել էր լինել կոտորածի և մաքառումի բանաստեղծ: Կյանքի փթթուն զգայություններն անթեղած ազգային ճակատագրի ողբերգությունը դարձավ Միամանթոյի ռազմերգության ներքին առանցքը, ջարդերի տեսիլները՝ ներհոգեկան շղթան, ազգային գոյաբանության խնդիրը՝ գերնպատակը: Բանաստեղծի առաջին գիրքը՝ «Դյուցազնորեն»-ը, ահազանգում էր արիանալու, մաքառելու կամ անգեն, կրավորական նահատակվելու հարցադրումը: Անընդմեջ կոտորածները, պետական

²⁶² Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 320:

նության բացակայությունը, թուրք բռնակալության դարավոր լուծը ազգային հոգեկառուցվածքում պատմականորեն ձևավորել էին պարսվորական-կրավորական հոգեբանություն, և Յարձանյանի «Դյուցազնորեն»-ը հերոսացումի ռազմականչ էր, որ բերում էր սխրագործելու ազգային գիտակցության գաղափարը, կայծի պես բռնկվող հերոսացումներն ու ցեղի դիմադրողականության ներուժը ժողովրդականացնելու հոգեբանությունը, հոգևոր ստրկության փոխարեն դյուցազնորեն կռվելու կորովը:

Յարձանյանը ցեղի ուժի և ցեղի արժանապատվության քերթոդ է. «Արդարությունը ստեղծել պետք էր և ազատությունը մոլեգնաբար հափշտակել»: Իր պոեզիայով բանաստեղծը հոչակում է սեփական ուժը չճանաչող ժողովրդի ցեղական կորովը, բարոյական անխոցելի ամբությունը՝ մաքառումի վստահությամբ հեղափոխելով անկախություն չունեցող կրավորական նահատակի հոգեբանությունը: «Ինչ արժե հանճարը, ... երբ իր ցեղի ճակատագրի գերզգացողությունը չունի, և չի սնուցաներ իր ցեղի հավիտենականության ձգտումը: Միևնույն չէ, կա թե չկա նմանը, երբ իր շրթունքներին ցեղի խոսքը չէ, և չգիտե վերադաստիարակել, արիացնել ու վարել զանգվածները...»²⁶³:

Եվ պաղատանքի, աղոթքի, լաց ու կոծի և ողբի այն

մատյաններուն մեջ,

Ուր դար առ դար իմ սերունդներս իրենց արյունը և տառապանքն են լացեր,

Մեկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենե ստրկացում

և աղաչանքե արցունք չերթալու համար....

«Երևակայությունը - Միամանթոյի տաղանդին ամենեն տիրական գիծն է... Երևակայության միացած գաղափարականը՝ հռետորությունը կը ծնի. երևակայության միացած զգացումը կը ծնի վսեմը: Յարձանյանի արվեստը արդյունք է այս երկու զուգավորություններուն»²⁶⁴: Հզոր երևակայությամբ բանաստեղծելով պայքարի ահեղ ընթացքը՝ Միամանթոն աստվածացնում է ազգի փառահեղ հերոսներին, որոնք, մահն արհամարհելով, գերմարդկային տառապանքների մեջ՝ կախադանների վրա, արքայա-

²⁶³ Գ. Նժդեհ, Հատընտիր, Ե., 2001, էջ 141:

²⁶⁴ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 1987, էջ 159:

վայրերի շղթաներում, հերոսամարտերում, օրհնում են իրենց գաղափարն ու գործը՝ ազգի պատմության և ճակատագրի վրա դրոշմելով իրենց փառահեղ կենսագրությունը. «Միամանթո իր կենդանության նկատված է արևմտահայ գրականության ամենեն սիրված և հռչակված բանաստեղծը, որուն երգը, բացարձակորեն ոչ անձնական, քրմական ու հանդիսավոր՝ եղավ թարգմանն ու խորհրդանիշը ցեղին տառապանքին, վիրավորված արժանապատվության և հպարտ ծառացումին»²⁶⁵:

Ասպետի կերպարը Յարճանյանի պոեզիայում հոգեբանական գաղափարատիպ է՝ օժտված իր ցեղի նախնական հոգեգծերով: Բանաստեղծի սքանչացումն առ հայորդու բացարձակ նվիրվածությունը, սրբազնագույն ցավն ու աստվածարժան սրխրանքը նույնացնում է նրան ասպետի կերպարին: «Հին դյուցազները աշխարհակալներ էին կամ ասպետներ. նորերը, Յարճանյանի հերոսները, հեղափոխականներ են կամ առաքյալներ»²⁶⁶: Դարերի ստրկության մեջ իր նախաստեղծ դիմագիծը կորցնելու չափ խեղճացած ժողովրդի հոգեբանությանը Յարճանյանի հայորդին վերադարձրեց ցեղական կորովը, գերհզոր կամքն ու անկարելիության աստիճանի ներքին զորությունը: «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» բանաստեղծության մեջ քերթողն ու ռազմիկը խորհրդանշում են գաղափարն ու կամքը, ոգին և ուժը: Խորհրդապաշտության սահմանին հասնող հիացմունքը, բարձր բարոյականը, խռովահույզ ապրումների գիշերվա մեջ հայտնված ռազմիկի կիսաստվածային կերպարանքը հաստատում են կյանքի դյուցազնորենը. «Յարճանյան քնար չունի: Իր երգը կոփյուն մըն է՝ զօր մեր նախնիքը Նավասարդի Տոներուն կը հնչեցնեին՝ իրենց աշտեն զարնելով վահաններու ոսկեցու կումբին»²⁶⁷:

«Ազատագրության հույսը փայփայելուց հետո Յարճանյանի համար հեշտ չէր ներկայացնել սեփական ժողովրդի հերթական ողբերգությունը, - նկատում է Դ. Գասպարյանը, - բայց նրա հայրենավիրական ու քաղաքացիական ջիղն այնքան ուժեղ էր, որ դիմում է այդ դժոխքը բանաստեղծության վերածելու քայ-

²⁶⁵ Միամանթո, Բանաստեղծություններ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1993, էջ 5:

²⁶⁶ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 159:

²⁶⁷ Նույն տեղում, էջ 164:

լին»²⁶⁸: Կոտորածների շառագույնը, ծավալվելով «Հոգեվարքի և հույսի ջահեր» գրքում, ասիականում է Յարճանյանի հաջորդ՝ «Կարմիր լուրեր բարեկամես» գրքում: Կարմիրը գույնից վերածվում է մտահայեցումի. մղձավանջի մեջ տեսանում են մեռելներին գիշատող ագռավների բազմությունները, դիակների ծանրության տակ ճոնչացող սայլերը, դիակույտերի մեջ մնացած կիսամեռելների հոգեվարքը: Ողբերգական սարսափը վերածվում է հոգեկան երևույթի. «Մահվան տեսիլք» բանաստեղծությունը եղերական պատկերների մտասևեռումն է. «Փողոցների մեջ մորթված սերունդներ կը տեսնեմ, // Եւ ամբոխներ անպատմելի սրածումներե դարձող... // Արևադարձային տաքություն մը կը բարձրանա // Հրդեհի տրված ազնվական քաղաքներեն...»: «Մտասևեռումը, այսինքն՝ չափազանց ուժեղ կենտրոնացումն ու շիկացումը,- նկատում է Հ. Թամրազյանը,- Միամանթոյի տաղանդի հիմնական հատկանիշներից մեկն է»²⁶⁹:

«Կարմիր լուրեր...» շարքի բանաստեղծությունները՝ գրված կիլիկյան ջարդերի անմիջական տպավորությամբ, ականատեսների վկայություններ են, որ վերահաստատվում են գերմանական արխիվներում պահված ցեղասպանության վավերաթղթերով: Դրվագ առ դրվագ տեսանում է թուրք «արյունկգակ» խուժանի եղեռնագործությունների համապատկերը: «Մոխիրներու և մահերու դանթեական ճանապարհին» որպես ողբերգության առանձին տեսիլներ պատկերանում են «Մուգը», «Պարը», «Լոզանքը», «Դաշույնը», «Քավություն», «Խաչը», «Զավակը», «Կույրը», «Թթենին», «Խեղդամահ» և այլն:

Գեղարվեստական մտածողության որոշակի հատկանիշներ, գերազանցապես մտապատկերների առկայությունը, պատկերների հյուսքը, վերացական ոգին նկատի ունենալով՝ քննադատությունը Միամանթոյին դասել է խորհրդապաշտների շարքին. «Վեռլենի, Բողլերի, Մալարմեի հայրենիքում նա չի կարող չենթարկվել այս սիմվոլիստ-դեկադենտների ազդեցությանը»²⁷⁰, - նկատում է Վ. Նալբանդյանը՝ ստեղծագործական

²⁶⁸ «Հայոց լեզու և գրականություն», 2010, թիվ 4, էջ 17-18:

²⁶⁹ Հ. Թամրազյան, Միամանթո, Ե., 1964, էջ 67:

²⁷⁰ «Մշակ», 1901, N291:

ակունքների հետ մատնանշելով Միամանթոյի արվեստի խորհրդապաշտական ոգին: Խորհրդապաշտական հայեցողության ազդեցությամբ հանդերձ՝ խորհրդապաշտությունը Միամանթոյի պոեզիայում գեղագիտական աշխարհայացք չդարձավ: «Անխառնորեն ռոմանթիկ է,- նկատում է Ա. Չոպանյանը,- իրմե ավելի ռոմանթիկ բանաստեղծ չենք ունեցած, նույն իսկ անոնց մեջ, որ պատմականորեն «ռոմանթիկ» կոչված շրջանի մեջ ապրած են»²⁷¹:

Մաքառումի և անկշռելի ցավի մատյան է Միամանթոյի քերթությունը: Հզոր երևակայությունը, բանաստեղծական անսանձ տարերքը, խոսքի գաղափարաբանական ներքին կշիռը բանաստեղծության աշխարհում հաստատեցին պոետական նոր դիմագիծ: «Վրեժի մարտագոռ շեփորող և տառապանքի խելահեղ բանդագուշոդ»²⁷², - այս տարերքի հակակշիռ ուժի մեջ է Միամանթոյի արվեստի հզորությունը:

НАРИНЕ ОГАННИСЯН (АРМЕНИЯ)

ВОПРОС ГЕНОЦИДА И НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В ПОЭЗИИ АТОМА ЯРДЖАНЯНА

Данная статья рассматривает нравственные аспекты военной поэзии Атома Ярджаняна в одном ряду с литературой о Геноциде. В начале 20 века в западноармянской действительности языческая идеология становится одним из источников развития культуры и литературы, в том числе и в творчестве Сиаманто. Языческо-арийская идеология, направленная на изменение христианских ценностей народа, ставшего впоследствии, подобно Христу, невинной жертвой, в создавшихся политических условиях была протестом против пассивности народа.

Поэт вместе со своим братом, пострадавшим в вооруженных стычках, считая, что идеология, ведущая к резне и национальной трагедии, себя исчерпала, призывает к возврату к арийским идеалам.

²⁷¹ «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 3-5, էջ 89:

²⁷² Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 208:

Мощное воображение поэта, необузданная страсть его поэзии, внутренняя сила поэтического слова подтверждают новые черты поэтического образа.

NARINE HOVHANNISYAN (ARMENIA)

GENOCIDE AND NATIONAL ONTOLOGY IN THE POETRY OF ATOM YARTCHANYAN

The article reviews the moral aspect of Atom Yartchanyan's military poems and his contemplations upon genocide reflected in his literary pieces. Paganism in Western Armenian reality, evolving at the beginning of the 20th century, marked a turning point in ideology and establishing itself as a distinct aesthetic tendency. It was ardently supported by Siamanto. This pagan and Arian ideology was tended to change the ideology of a nation, unresistingly sacrificing itself, just as Christ. This ideology might have radically altered the whole course of national ontology in the given military and political situation. The poet and his brother-warrior propagate Arian ideology or the worship of power and thus revolt against the ideology which had led the nation throughout the history and which had exhausted itself in tragedies and massacres. Siamanto's creation is a book of struggle and immeasurable pain. Siamanto's strong imagination, his passionate poetic talent, ideological underlying of his discourse have established a new image in the world of poetry.

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ. «ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ ՈՒ ԻՐ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ»

Արամ Հայկազը (Չեքեմյան, 1900-1986) ծննդավայրի^a Շապին Գարահիսարի հերոսամարտին երկու ծավալուն գիրք է նվիրել՝ առաջինը՝ «The Fall of the Aerie» («Արծվաբույնի անկումը», 1935) անգլերեն, երկրորդը՝ «Շապին Գարահիսար ու իր հե-

րոսամարտը» (1957) բացառիկ ուսումնասիրությունը: Նա ամեն տարի հունիսի առաջին օրերին ծննդավայրի, հերոսամարտի մասին հոդվածներ է հրատարակել, հավաքել ու ամբողջացրել է համաքաղաքացիների ցուցակը: Գրողը հպարտությամբ, երկյուղած բժախնդրությամբ հիշել ու հիշեցրել է հայրենակցի Զորավար Անդրանիկի հիշատակի օրերը:

Արամ Հայկազը հրատարակել է պատմվածքների մի քանի ժողովածուներ՝ «Ցեղին ձայնը» Ա և Բ հատորներ (1949, 1954), «Չորս աշխարհ» (1962), «Պանդոկ» (1967), «Կարօտ» (1971), «Ապրել ք, երեխե՛ք» (1973), «Երջանկութիւն» (1978): Գրական առաջին փորձերից սկսած՝ նրա ստեղծագործության հիմնական նյութը բնօրանն ու ապրած կյանքն են, որ ժողովածուներից մեկի վերնագրով ձևակերպել է «Չորս աշխարհ» Շապին Գարահիսար, Քյուրդիստան, Պոլիս ու Ամերիկա: 1969 թ. սեպտեմբերի 6-27-ը գրողը Խորհրդային Հայաստանում էր, և նրա գրականության մեջ նոր թեմա սկսվեց: Գրողի դուստրը Այրիս Չեքենյանը, 2010 թ. հոր ծննդյան 110 ամյակի առիթով վերահրատարակեց «Արծվաբույնի անկումը» գիրքը, իսկ 2015-ին իր թարգմանությամբ հրատարակեց Արամ Հայկազի «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» անգլերեն հատորը:

«Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» պատմական, ազգագրական վավերագիր-մատյանը կազմված է չորս գլխից՝ «Ընդհանուր ծանօթություններ», «Հերոսամարտը», «Կենսագրականներ» և «Պատմական նամակներ»: Ինչպես վկայում են հոդվածները, արխիվային նյութերը, Գրականության և արվեստի Եղիշե Չարենցի անվան թանգարանում պահվող ու մեր հրատարակած նամակները, գրողը երկար տարիներ հավաքչական գործ է արել՝ դիմելով Եղեռնից մազապուրծ մի քանի համաքաղաքացիների օգնությանը, ճշտել է անուններն ու փաստերը, համաքաղաքացիների ճակատագիրը կոտորածից հետո: Նա պատմում է ծննդավայրի՝ Տիգրան Մեծի, Միհրդատի ու Պոմպեոսի օրերից սկսված հերոսական պատմությունը, որ կարող էր ջնջվել թուրքական թնդանոթների համազարկերի տակ:

Ամեննին չթերագնահատելով «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտ» գրքի մյուս գլուխների գրապատմական արժեքը

ներկայացնում ենք Ք մասը, որն սկսվում է Արամ Հայկազի ուսուցիչ Գուրգեն Մխիթարյանի «Հերոսական Շապին Գարահիսարը» հոդվածով:

Սկսվեց առաջին աշխարհամարտը: «Հայրենիքը վտանգի մեջ է, ի գե՛ն»,– կոչ էր անում թուրքական պետությունը: Հայրենիքը... Կարդում ես ու մտածում՝ ո՞ւմ հայրենիքի՝ հայի՝ Բնօրրանի, թե՛ վաչկատուն ցեղի գրաված տարածքների, որոնք հարյուրավոր տարիներ անց էլ նրա համար հայրենիք չեն դառնա... Հայերը պատրաստ էին պաշտպանել իրենց պապերի բնօրրանը, բայց թուրքական բանակում հայ զինվորն անհավատարիմ տարր էր ճանաչվել, իսկ թուրքական իշխանությունների ծանր լուծը գործում էր ն բանակում, ն՝ թիկունքում: Թուրքական բանակում ծառայելուց փրկագին վճարելու անկարող հայ զինվորներից մի քանիսը փախան ծառայություն կոչվող դժոխքից ու տագնապալից լուրեր հասցրին քաղաք: Նրանց դիմադրությամբ սկսվեց հերոսական ինքնապաշտպանությունը: Արամը 15 տարեկան էր, երբ 1915ի հունիսի 3-ի առավոտյան քաղաքում իրարանցում սկսվեց, ու հնչեց Հմայակ Կարագյոզյանի կոչ-հրամանը՝ Բե՛րդը...

Արամ Հայկազը պնդում է՝ մենք չենք ճանաչել ու չենք ճանաչում հարևան վաչկատուն ցեղերին. 1915ի գարնանն էլ թվաց պետական հրահանգով հերթական թալանն է սկսվել, որ շուտով պետական հրահանգով կդադարեցվի: Այնինչ կատարվում էր ամենասարսափելիին քաղաքակիրթ մարդու երեւակայությունից դուրս մի երևույթ, որ տասնամյակներ անց միայն պիտի բնութագրվեր «Ցեղասպանություն» բառով...

Թուրքերը զինաթափեցին Շապին Գարահիսարի բնակիչներին, որոնք ինքնապաշտպանության հնարավորություն ունեին, իսկ անպաշտպան գյուղերի բնակիչներին անխնա կոտորեցին: Շապինգարահիսարցիները զենք գնում էին հենց թուրք ծախու զինվորականներից, իսկ քաղաքի փողոցներում տոնական տրամադրությամբ շրջող ու օրեցօր շատացող թուրք թափթփուկների՝ այսպես կոչված կամավորների ամբոխը ոռնում էր թրքությունը ծագե ծագ տարածելու մասին:

Ամբոխի առաջին զոհերից էին Նազարթեթ աղա Հյուսիսյանը՝ Վահան Հյուսիսյանի հայրը, հոգևոր առաջնորդ Վաղինակ ծայրագույն վարդապետը, որին խոշտանգող թուրքը (Արամ Հայկազը հիշատակում է այս բորենու անունը) ամիսներ անց հաճույքով պատմում էր թիկունքից սպանված Հայր սուրբի մահվան ու նրա անթաղ դիակից մնացած հետքի մասին...

Գրողը չի թաքցնում, որ զգաստության կոչեր հնչեցնող հայեր էլ կային...

Շապինգարահիսարցիներից անբաժան են հոգևոր հայրերը՝ ժամկոչից մինչև հոգևոր առաջնորդ: Բերդ բարձրանալու առաջին օրվանից քահանան ու ժամկոչ Աղաջանը կիսափուլ շենքի անկյունում պատարագ են մատուցում, որ քիչ հետո հրացանը ձեռքն առնեն. Վարդապետին զենքով պաշտպանող Պետրոսի օրինակով իրենց հոտն են պաշտպանում գայլերից...

Գրքի Գ մասում ներկայացված է շապինգարահիսարցիներից 43-ի կենսագրությունը՝ համառոտ կամ ծավալուն շարադրանքով: Դրանցից երկուսի անունները հանրահռչակ են՝ Զորավար Անդրանիկ ու Ճարտարապետ Թորոս Թորամանյան: Հավելենք՝ Արամ Հայկազը հիշատակում է հայրենակիցների կյանքի՝ իրեն կամ մյուսներին հայտնի բոլոր մանրամասները՝ աշխատելով սերունդներին թողնել նրանց մարդկային նկարագիրը: Ինքնապաշտպանության դեկավարների՝ Հմայակ Կարագյոզյանի, Ղուկաս Դեովլեթյանի (Ղուկաս Աղբար), Վահան Հյուսիսյանի եւ մյուսների կողքին գրողը մանրամասն նկարագրում է անվանի ու անանուն հերոսների սխրանքները անկախ սեռից ու տարիքից:

Շապին Գարահիսարի հերոսամարտի ակունքներում կանգնած են հոգևոր գործիչներ, որոնք տարիներ, տասնամյակներ շարունակ Լուսի ու Հուսի իրենց քարոզներում չեն մոռացել նաև զինվելու, թուրքին դիմադրելու պատրաստ լինելու հրամայականը, Հիսուսի Խաչի հետ նաև զենք են գործածել: Հետաքրքիր մի հանգամանք՝ համաքաղաքացիների կենսագրությունների շարքում առաջին տասնմեկը հոգևոր գործիչներ են՝ Վռամշապուհ արքեպիսկոպոս Քիպարյան, Սմբատ եպիսկոպոս Սաատեթյան, վարդապետներ Վաղինակ Թորիկյան, Շավարշ

Մահակյան, Գեղամ Թևեքեյան, քահանաներ Մկրտիչ Մարգրյան, Գուրգեն Ղազարյան, Սուրեն Տյուրիկյան, Մկրտիչ Գալիոնճյան, Նաթան Տատյան, Ստեփանոս Կարինյան, ինչպես նաև ՀՅԴ նշանավոր դեմքերից բժիշկ Երվանդ Խաթանասյան, Գուրգեն Մխիթարյան, Միրիճան (Մերուժան) Օզանյան և այլք:

Անգամ ամենահուսահատ վիճակում հայր պիտի անխաթար պահի ազգային, մարդկային նկարագիրը ու չնմանվի թուրքին: Թուրքերը, հայերեն խոսելով, համոզում են Բերդի պաշտպան պատանիներից մի քանիսին, թե Բյուրքից օգնության եկած հայեր են, ու Բերդ մտնում: Խաբեությունը շուտով բացահայտվում է, թուրքերին Բերդից դուրս են շարտում: Հայ պատանիները գտնում են թաքնված երկու թուրքի ու սպանում: Նրանց հարցաքննող Ղուկաս Աղբարը պատրաստ է պատժել տղաներին՝ գերիներին կապած ձեռքերով սպանելու համար: Տղաներն անխուսափելի պատժից փրկվում է քահանան... «Ոճի՞ր էր», - գրքի այս գլխի վերնագրով հարցնում է Արամ Հայկազր: Համոզված ենք՝ Ղուկաս Աղբարի ու նրա պես անձնվեր հայրենասերների համար ոճիր էր ու ոճիր է նաև այսօր:

Գարահիսարում մեծանում էր անվախ ու ինքնագոհ երիտասարդություն. գրքում հերոսության բազմաթիվ դեպքեր են ներկայացված, բայց 14 տարեկան Հմայակ Թևեքեյանի սխրանքն անօրինակ է («Պզտիկ հերոսը»)...

Այն, ինչ չկարողացան անել թուրքական բանակը եւ խուժանը, արեցին ջրի ու սննդի պակասը, հիվանդությունները, դրսից օգնություն ստանալու անհնարինությունը. Բերդի պաշտպաններն անձնատվության սպիտակ դրոշ բարձրացրին... Արամ Հայկազր վկայում է թուրքերը, չէին հավատում խիզախ հայերի անձնատվությանն ու շարունակում էին կրակել թիրախ ունենալով սպիտակ դրոշը, որն ընկալում էին որպես իրենց ուղղված ծաղր: Ժամեր անց միայն թուրքերն սկսեցին Բերդ բարձրանալ...

МАРГАРИТА ХАЧАТРЯН (АРМЕНИЯ)

АРАМ АЙКАЗ. “ШАПИНГАРАИСАР И ЕГО ГЕРОИЧЕСКАЯ БИТВА”

Арам Айказ (Чекемян 1900-1986) посвятил две объемистые книги героической битве при Шапин-Гарайсаре, своей родине: первая - “Падение орлиного гнезда” (1935 г.) на английском языке и вторая - историческая, этнографическая документальная книга - “Шапин-Гарансар и его героическая битва” (1957г.) на армянском языке.

Араму было 15 лет, когда утром 3 июня 1915 года в городе начался переполох, и прозвучал клич Амаяка Карагезяна: “Все в крепость !”.

Арам Айказ утверждает: “Мы не принимали и не принимаем в расчёт соседствующие с нами кочевые племена и весной 1915 нам казалось, что начался очередной грабёж по инициативе государства, который вскоре по государственной же инициативе и будет прекращен. Однако произошло чудовищное, что-то, находящееся за пределами представления цивилизованного человека, то, что только десятилетия спустя будет классифицировано как “Геноцид”.

В Гарайсаре росла бесстрашная и самоотверженная молодежь. В книге приведены многочисленные примеры героизма.

Нехватка воды и продовольствия, болезни, гибель детей и женщин, невозможность получения помощи извне заставили защитников крепости выбросить белый флаг.

MARGARITA KHACHATRYAN (ARMENIA)

ARAM HAYKAZ. “SHAPINGARAI SAR AND HIS HEROIC BATTLE”

Aram Haykaz (Chekhimyan 1900-1986) dedicated two large books to the heroic battle at the ShapinGaraisar, his Motherland: the first- “The

fall of the Aerie”, 1935 in English and the second- historical, ethnographical and documentary -“ShapinGaraisar and his heroic battle” in Armenian.

Aram was only 15 years old when in the morning of June 3, 1915 the town was in a state of commotion and HamayakKaragezyan issued an appeal :” Everyone to the citadel!”.

According to the statement of Aram Haykaz:” we did not and do not take into consideration the nomadic tribes sharing the borders and in the spring of 1915 we kept imagining just another armed robbery, initiated by the state authorities was launched, whose cessation would soon take place under the order of the same state authorities”.

However, the abominable crime being beyond the capacity of a civilized human being to percept occurred, the crime that only several decades after would be classified as “The Genocide”.

The youth in Garaisar was brought up in the spirit of self-sacrifice and dauntless. The book offers multiply examples of heroism.

A lack of water and foodstuffs supply as well as a break out of diseases, death of women and children, a failure to have an access to the external assistance- all these made the citadel defendants to unfurl a white flag .

ԻՆԳՍ ԱՎԱԳՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ԱՂԱՍԻ ԱԼԵՔՍԱՆԻ ՄԱԿԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԸ՝
«ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՊԱՀԵՐԻՑ»**

*Առավոտվա ժամը վեցին
Մեզի գյուղիցը հանեցին,
Տարա՞ն, Հազազը մորթեցին,
Մայրի՞կ, զուլում է, զուլում է:
Երբ որ հասանք մենք Հազազը,
Կտրավ մեր սրտի մուրազը,
Մեզի մորթին ինչպես դազը,*

*Մայրի՛ց, գուլում է, գուլում է:
Թուրքը ելավ Հաջա սարը,
Ձեն տվավ Հաջազի քարը,
Հարս ու աղջիկ փախան սարը,
Մայրի՛ց, գուլում է, գուլում է:*

Այս երգի բառերը գրառել ենք պատահամամբ. 2012թ. Գյումրի եկած մի խումբ ցեղասպանագետների խնդրանքով այցելեցինք Գյումրու Սևերսկի որբանոցի տարածք, հանկարծ մի տաք սի կանգնեց, և վարորդը Մերուժան Սարիբեկի Սարոյանը՝ ծնունդով Մալիտակի Լուսաղբյուր գյուղից, ով տարիքով բավականին ջահել էր՝ մոտ վաթսուն տարեկան, լսելով մեր խոսակցությունը՝ ցանկություն հայտնեց երգել և պատմեց «Ջարդի ձորի» կոտորածների մասին: Մերուժան Սարիբեկի Սարոյանը վերապրածների ընտանիքից է, նա անմիջականորեն չի տեսել և չի եղել ցեղասպանության ականատես-վկա, սակայն այս ամենը նա ընկալել է՝ լսելով գյուղում և ընտանիքում ապրող ավագ սերնդի ներկայացուցիչներին, ովքեր վերապրել են Մեծ եղեռնը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի հայ իրականության մեջ Հայոց Մեծ եղեռնի ողբերգական շարունակությունն համարվող 1918, 1920 թթ. հայ-թուրքական պատերազմների ժամանակ տեղի ունեցած ջարդերը: Այս առումով անգնահատելի տեղեկություններ է հաղորդում եղեռն վերապրած Աղասի Ալեքսանի Մակարյանը՝ իր «Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից» հուշապատումում: Աղասի Մակարյանի հուշապատումը գրվել է 1915 թ. Մեծ եղեռնից 61 տարի անց՝ 1976 թ.: Հուշապատումն ամբողջական է, բաղկացած է 69 մեքենագիր էջերից: Աղասին ծնվել է 1904 թթ. Շիրակի Ջաջուռ գյուղում, որն ինը կմ. է հեռու Գյումրի քաղաքից: Ականատես-վկան 1918 թ. Կոտորածների ժամանակ եղել է 14 տարեկան պատանի: Վերապրածը հիշում է նաև դեպքերը և փաստերը, որոնք վերաբերում են 1920թ., Մուստաֆա Քեմալի արշավանքին և հայ-թուրքական պատերազմին, Ալեքսանդրապոլի գավառի հայերի կոտորածներին Հեզգեզի ձորում՝ ժողովրդի լեզվով «Ջարդի ձոր» կոչվող ձորակում: Այս ջարդերը նա որակավորում է ոչ միայն որպես իր գերդաստանի ողբերգական ճակատագիր, այլև որպես հայոց

պատմության ողբերգական էջ և պատմության խոշոր ոճրագործություն: Ուշագրավ է վերապրածի դիմելաձևը մեզ. «Այս փոքրիկ աշխատանքը գրում եմ մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից որպես հիշողություն, որը իմ կարծիքով, օգտակար և հետաքրքիր կլինի սերունդներին՝ մասնավորապես երիտասարդության համար, մանավանդ, որ այն առնչված է իմ ժամանակի քաղաքական ու հասարակական անցուդարձի հետ»: Ուշագրավ է վերապրածի Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի և Կարսի մարզի մի շարք գյուղերին, Կարս քաղաքին վերաբերող պատմական, աշխարհագրական և ազգագրական բնույթի տվյալներով ու տեղեկություններով հիշողությունները համալրելու և հարստացնելու փորձը:

Աշխատանքի արժանիքն այն է, որ իր հուշերում ներգրավել է նաև իր ընկերների, ազգականների, մերձավորների, հարևանների, անգամ թուրքերի երկխոսությունները և հուշերի փոքրիկ պատառիկներ, որոնք անգին տեղեկություններ են պարունակում պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգագրական և կրթական առումով: Վերապրածը իր առաջ խնդիր է դնում ներկայացնել իր տոհմի տոհմաձառը և խոր ցավ ապրում թուրքերի ջարդերի գոհը դարձած տոհմակիցների ճակատագիրը ներկայացնելիս: Հիշողություններում կարևոր տեղեկություններ կան Կարսի ամերիկյան որբանոցի, Արգինեի կիրճում կազմակերպված զանգվածային կոտորածների, Ալեքսանդրապոլի Սև դուլի, թուրքերի կողմից Ալեքսանդրապոլը լքելու ժամանակ Սև դուլի տարածքում ցարական Ռուսաստանի գույքը թալանելու, «Ջարդի ձոր» տարված խաղաղ բնակչության շարքերում գտնվող թուրքերի կողմից գերի տարված տղամարդկանց քանակի մասին: Նա գրում է. «Օսմանյան դահիճները 1920 թ. Ադրուլաղ գյուղի ամբողջ բնակչությանը՝ կանանց ու երեխաներին, այս թվում գյուղում եղած զաղթականությանը գյուղից խաբելով դուրս են բերում, թե տանում են Ալեքսանդրապոլ, իբր այնտեղ նրանց կերակրելու նպատակով: Այսպես Ադրուլաղ-Ալեքսանդրապոլ տանող խճուղով բնակչությանը հասցնում են մինչև Ջաջուռի լեռնանցքը, ամբողջ ժողովրդին նստեցնում են Մկո քաղոն կոչվող սարի ստորոտում: Խաբում են, թե նստեք հանգստանալու:

Դահիճների կողմից նախօրոք նախապատրաստված է եղել նրանց սպանության հարցը: Օսմանյան զորքերը գնդացիների և հրացանների կրակոցով կոտորում են անմեղ բնակչությանը: Աղբուլաղ գյուղի և նրանց հետ եղած նահատակները թաղված են Գեղյուկի եղբայրական գերեզմանում»:

ИНГА АВАГЯН (АРМЕНИЯ)

**“ИЗ ИСТОРИИ НАШЕЙ СЕМЬИ”
(ВОСПОМИНАНИЯ АГАСИ АЛЕКСАНДРОВИЧА
МАКАРЯНА)**

В статье представлен очередной том из серии “Пережившие Великий геноцид” в котором к юбилею 100-летия Геноцида будут изданы воспоминания Агаси Александровича Макаряна „Из истории нашей семьи”. Воспоминания состоят из 69 печатных страниц и содержат важные сведения и факты об исторических событиях 1918-20 гг. и представляют масштабы этой страшной трагедии. Во время армяно-турецкой войны 1918г. Агаси Александровичу Макаряну было 14 лет. Едва избегнув смерти от голода, холода и резни 1920г. в городе Карсе, его семья обосновалась в селе Джаджур, неподалеку от города Гюмри. Мемуары были написаны в 1976 г. На протяжении всей жизни Агаси Александрович Макарян пытается психологически преодолеть ужасы прошлого, но сделать это не только ему, но и другим пережившим Великий геноцид практически не удается.

INGA AVAGYAN (ARMENIA)

**“FROM THE HISTORY OF OUR FAMILY” (MEMORIES
OF AGHASI A. MAKARYAN)**

The article presents one of series of “Those who have survived Great Genocide” where the memories of Aghas A. Makaryan’s “From the history of our family” will be published for the 100th anniversary of Genocide. The memories consist of 69 printed pages and contain impor-

tant information and facts about historical events of 1918-20 and presents the scales of that drastic tragedy. During the Armenian- Turkish war of 1918 Aghasi A. Makaryan was 14 years old. Barely escaping from hunger and cold of death of 1920, his family moved from Kars to Jajur and settled there /which is near Gyumri/. The memoirs were written in 1976. Throughout his life Aghasi Makaryan has psychologically tried to overcome the horrors of the past, but it is not only for him , it is for the survivors of the Genocide as well, but unfortunately it is practically impossible.

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Արաբերէն լեզուով հայոց ցեղասպանութեան թեմային նուիրուած հարուստ գրականութիւն մշակուած է: Խօսքը բնականաբար գեղարուեստական գրականութեան մասին է, որովհետեւ որքան ալ զարմանալի ըլլայ, բայց եւ այնպէս անհերքելի իրողութիւն է, որ շատ քիչ են ուղղակիօրէն կոտորածներուն առնչուող արաբ ականատեսներու յուշագրութիւն-վկայութիւնները, հակառակ անոր որ հայոց ցեղասպանութեան երկրորդ փուլը տեղի ունեցաւ նոյնի՛նքն արաբական հողատարածքին վրայ, սուրիական անապատին մէջ, տեղացի արաբներու աչքին առջեւ: Որպէս դէպքերու ականատես-վկայ, ունի՛նք Ֆայէզ Ալ Ղուսէյնի յուշագրական գրքոյկը եւ քանի մը փոքրիկ այլ վկայութիւններ միայն, մինչդէռ ականկալելի էր որ կոտորածներուն նուիրուած արաբ յուշագիրներու թիւը անհամեմատ ըլլար աւելի մեծ եւ բովանդակութիւնը առաւել բազմազան:

Մակայն կարելի է ըսել, որ այս բացը մասամբ մը գոցած են գեղարուեստական գրականութիւն մշակող արաբ գրողները, որոնք յաճախ անդրադարձած են հայասպանութեան թեմային եւ իրենց արձակ ու չափածոյ գործերով ու թատերգութիւններով տուած են նկարագրութիւնը կոտորածներուն: Զարմանալի չէ

անշուշտ այս երևույթը, որովհետև հայկական ցեղասպանության նուիրուած բազմաթիւ մնայուն գործերու հեղինակ Իպրահիմ Ալ Խալիլի իսկ վկայութեամբ, «Հայկական ցեղասպանութիւնը շրջանի բնակչութեան ենթագիտակցութեան մէջ տեղ գտած է գիրքերու եւ թերթերու մէջ գոյութիւն ունենալէ առաջ»: Արաբ գրողներէն մեծ հատուածի մը մօտ, հայոց ցեղասպանութեան թեման գիրքերէ փոխանցուած անձանօթ թեմա չէ եղած երբեք, այլ իրենց հայրերէն իրենց փոխանցուած իսկական եղելութիւններ, որոնց գեղարուեստականօրէն մշակողներն ու ներկայացնողները եղած են իրենք միայն:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ժամանակագրականօրէն հայոց ցեղասպանութեան թեմանով գրուած արաբերէն առաջին գործերը եղած են չափածոյ ստեղծագործութիւններ եւ այս անոր համար, որ գեղարուեստական արձակը արաբական գրականութեան մէջ ծնունդ առած է բաւական ուշ՝ 19-րդ դարու երկրորդ կիսուն եւ մասսայականացած է 20-րդ դարու առաջին քառորդին, եւ իր վերելքն ու զարթօնքը ապրած է 20-րդ դարու երկրորդ կէսին միայն:

Մեզի ծանօթ է համիտեան կոտորածներու անմիջական ազդեցութեան տակ գրուած արաբերէն ընդամէնը մէկ բանաստեղծութիւն, 1909-ի կիլիկեան կոտորածներուն առիթով գրուած մօտաւորապէս 15 բանաստեղծութիւն, մինչ Մեծ Եղեռնին նուիրուած բանաստեղծութիւններուն թիւը կը հասնի քանի մը տասնեակի:

Այս բոլորին մէջ ուշագրաւ են կիլիկեան կոտորածներուն առիթով ստեղծուած արաբերէն մօտ 15 բանաստեղծութիւնները, որոնց հեղինակները ժամանակի արաբական գրականութեան լաւագոյն ներկայացուցիչներն են եւ կու գան աշխարհագրական բաւական լայն շրջանակէ մը՝ Իրաք, Սուրիա, Լիբանան, Եգիպտոս եւ Միացեալ Նահանգներ: Այդ գործերը գրուած են խոր ընդվզումով ու ցասումով, ուր Սուլթանը տեղ մը նմանեցուած է Հռոմը այրած ու իր այդ արարքով զուարճացող Ներոն Կայսրին, իսկ այլ տեղ, արաբ բանաստեղծը ներողութիւն խնդրած է այրիացեալ հայ կնոջմէն՝ իր կրօնակիցներուն գործած արարքնե-

րուն համար. մինչ ուրիշ մը, հալէպցի քրիստոնեայ, գովքը հիւսած է իր համաքաղաքացի արաբ-իսլամներուն, անոր համար որ անոնք, ի տարբերութիւն Հալէպէն ոչ մեծ հեռաւորութեան վրայ գտնուող Անտիոքի թուրքերուն, տէր կանգնած են իրենց մէջ ապրող քրիստոնեաներուն եւ թոյլ չեն տուած, որ անոնք կոտորուին:

Կիլիկեան կոտորածներուն նուիրուած այս բանաստեղծութիւնները եթէ համեմատենք նոյն դէպքերուն առիթով գրուած հայերէն բանաստեղծութիւններուն հետ, պիտի նկատենք որ արաբերէնները իրենց քանակով ու թերեւս նաեւ իրենց գեղեցկութեամբ եւ բանաստեղծականութեամբ երբեք չեն զիջիր հայերէններուն:

Աւելի ետք, արաբ բանաստեղծներ գրած են նաեւ այլ գործեր՝ նուիրուած հայկական ցեղասպանութեան, Կոմիտաս Վարդապետին եւ յարակից այլ նիւթերու:

ԱՐՁԱԿ՝ ՎԷՊ ԵՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ

Արձակ ստեղծագործութիւնները հարուստ են թեմային հետ առնչուող թէ՛ ընդարձակածաւալ եւ թէ՛ փոքրածաւալ գործերով: Կան պատմուածքներ ու վէպեր, որոնք ամբողջութեամբ նուիրուած են հայոց ցեղասպանութեան, ինչպէս՝ սուրիացի վիպագիրներ Իպրահիմ Ալ Խալիլի, Ֆայսալ Խուրդոշի եւ այլոց գործերը, իսկ ուրիշներու պարագային, հայասպանութիւնը ստեղծագործութեան մը գլխաւոր առանցքը չըլլալով հանդերձ, ուղղակի թէ անուղղակիօրէն անդրադարձ կատարուած են այդ թեմային:

Արագ հաշուարկումով կարելի է թուարկել նմանատիպ տասնեակ վէպեր, պատմուածքներ ու շատ կարճ պատմուածքներ, որոնց մէջ հայասպանութեան թեման արծարծուած է յիշեալ ստեղծագործութեանց մէջ: Առաջին Աշխարհամարտի տարիներուն մասին խօսող արաբերէն բազմաթիւ վէպեր, մանաւանդ եթէ անոնք որպէս աշխարհագրական տարածք ընտրած են Սուրիան կամ անոր շրջակայ երկիրները, ապա անպայման անդրադարձած են հայ գաղթականներու դէպի Սուրիա հոսքին եւ անպատի խուլ անկլիններուն մէջ իրագործուած կոտորածներուն:

Հայկական ցեղասպանության թեմայով արձակ գործեր մշակող արարական արձակյի տասնեակ ծանօթ անուններն կարելի է յիշել՝ Ապտուլ Ռահման Մունիֆը, Իպրահիմ Ալ Խալիլը, Նապիլ Մուլեյմանը, Ֆայսալ Խուրդոշը, Նիհատ Սիրեւը, Իլիաս Ֆարքուհը եւ շատ ուրիշներ:

ԹԱՏՐՈՆ

Հայոց ցեղասպանության թեմայով առկայ են արաբերենով գրուած ընդամէնը քանի մը թատերգութիւններ, որոնցմէ կարելի է առանձնացնել՝ Լուայ Այյատէի մէկ եւ Մամտուհ Ատուանի երկու գործերը, որոնց դէպքերը տեղի ունեցած են Առաջին Աշխարհամարտի օրերուն՝ սուրիական անապատին մէջ:

Եզրափակելով ըսենք, որ հայոց ցեղասպանության թեմայով ստեղծուած արաբերէն գործերը տպաւորիչ են թէ՛ իրենց ծաւալով եւ թէ՛ որակով: Երեւի ժամանակն է այլեւս զանոնք խոր ու համակողմանի ուսումնասիրութեան մը ենթարկելու եւ հայ ու օտար ընթերցող զանգուածներուն աւելի համապարփակ կերպով ծանօթացնելու:

MIHRAN MINASSIAN (ARMENIA)

THE THEME OF THE ARMENIAN GENOCIDE IN THE ARAB LITERATURE

There are extensive literary works in Arabic language about the Armenian Genocide.

Arab writers had reflected in their works on issues of the Armenian massacres and they offered descriptions of them.

Poems.- There is only one Arab poem about the anti-Armenian massacres committed during the reign of Sultan Abdülhamid II. On the other hand, we find 15 poems written about the Cilician massacres of 1909. Finally, there are a couple of dozen poems on the Genocide.

Short stories and novels.- There are extensive voluminous and minor prose creations on this theme. Some of the short stories or the novels are entirely related to the Armenian Genocide. In some other

works, although the Armenian massacres does not constitute the main axis, nevertheless the same theme is reflected directly or indirectly.

Theatres.- There are a couple of plays in Arabic language on the theme of the Armenian Genocide. Their actions are taking place during the First World War in the Syrian desert.

МИГРАН МИНАСЯН (АРМЕНИЯ)

ТЕМА АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В АРАБСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Существует достаточно большое количество работ на арабском языке повествующих об армянском геноциде. Многие арабские писатели отобразили в своих трудах тему арабских погромов.

Поэмы. – Имеется лишь одна арабская поэма об анти-армянских погромах, осуществленных в период правления Абдул Хамида II. С другой стороны, нам удалось обнаружить пятнадцать поэм, повествующих о погромах в Киликии в 1919 г. Наконец, существует более двадцати поэм отдельно посвященных теме геноцида.

Повести и новеллы. – Существует также несколько работ в прозе, в частности повести и новеллы, посвященные теме армянского геноцида. Даже если в некоторых повествованиях тема геноцида не является основой произведения, однако о нем говорится различных местах повествования косвенно.

Театры. – Известно несколько театральных постановок на арабском языке, посвященных армянскому геноциду. Они отображают события, имевшие место в сирийской пустыне во время Первой мировой войны.

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ CAZE-STUDY ՄԵԹՈԴԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ (ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ)**

1. Օսմանյան կայսրությունում XIX-րդ դարի վերջում և ապա XX-րդի սկզբում երիտթուրքերի կողմից կազմակերպված ու իրականացված հայերի զանգվածային սպանությունները ցեղասպանության և հայոց տարրի բնաջնջման դիտավորությամբ ու կատարմամբ, մարդկության դեմ առաջին առավել դաժան և արյունալի ռճրագործություններն են, որոնց անպատժալիությունն իր անջնջելի դրոշմը թողեց ոչ միայն դրանում ուղղակիորեն ընդգրկված հայ ազգի հետագա պատմական զարգացման վրա, այլև բարոյական հիմնավորում հանդիսացան XX-րդ դարի նման այլ պատմական նշանակալի դեպքերի համար:

2. 1885-1915 թթ. Թուրքիայի հայերի կազմակերպվածությունը. տնտեսական կապիտալի նախնական կուտակման ժամանակաշրջանում թուրքական տնտեսության արտադրական կապիտալի 25%-ը, իսկ առևտրականի 60-80%-ը գտնվում էին հայերի ձեռքերում, քաղաքական՝ Հնչակյան, Արմենակյան, Դաշնակցության կուսակցությունների առկայությունը, ինչպես նաև դրանց անդամների մասնակցությունը օսմանյան խորհրդարանում և կառավարությունում, մշակութային՝ մտավորականությունը իր ստեղծագործական ներուժով, ազգային թատրոնները, պարբերականները, դպրոցները, եկեղեցիները, անհանգստության պատճառ էր հանդիսանում երիտթուրքերի շովինիստական քաղաքականության և պանթուրքական պլանների համար:

3. Հայ քաղաքական մտավորականության անուրջները բարեփոխումների միջոցով Օսմանյան կայսրությունից քաղաքակիրթ, օրինապահ պետության ստեղծման վերաբերյալ, ի դեմս երիտթուրքերի վարչակարգի շատ կարճ ժամանակում հօդս ցնդեցին, իսկ առաջին համաշխարհային պատերազմը պարզապես առիթ դարձավ հայաթափության և ցեղասպանության քաղաքականության իրականացման համար:

4. 1915 թ. ցեղասպանության հետևանքներն իրենից ներկայացնում են բազմատեսակ կորուստների համալիր, որոնցից ամենակարևորը և անվերականգնելին մարդկանց կորուստն է: Գրականության մեջ քննարկվում է նաև այլ կորուստների տեսակներ՝ աշխարհաքաղաքական բնույթի՝ հայաբնակ տարածքների անդառնալի կորուստ ու հենց հայրենագրկություն, տնտեսական՝ արտադրական, առևտրային, ֆինանսական կապիտալի ունեցրկում, ազգային ինքնության բռնի մահմեղականացում, մշակութային՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի պատմական հուշարձանների, եկեղեցիների ու մշակութային կենտրոնների ոչնչացում, էկզիստենցիալ-հոգեբանական՝ ուղղակիորեն հոգևոր ու ֆիզիկական գոյության վախ, ազգի գոյատևման ու զարգացման նկատմամբ անվստահություն, որի հետևանքով «ազգային ինքնությունից» հրաժարում ու ասսիմիլացում ²⁷³:

5. Նորագույն հայոց պատմությունում ցեղասպանությունը հանդիսանում է մի կողմից՝ միջազգային քաղաքականության մեջ նշանակալի հիմնահարց, մյուս կողմից՝ ազգային ինքնության կայացման նշանակալի բաղադրատարր: Հայագիտական տարբեր ոլորտներում իրականացվել են բազմաթիվ պատմական, իրավական, քաղաքական հետազոտություններ ցեղասպանության պատճառների, կորուստների և հետևանքների ուսումնասիրության ասպարեզում:

6. Հայկական սփյուռքի կայացման հարցում ցեղասպանությունից մահապուրծ եղած հայերի արդեն 4 սերունդների գոյության՝ ադապտացման, ասսիմիլյացիայի, ազգային ինքնության պահպանման սկզբունքային ու նպատակաբանական անհրաժեշտ ու նախընտրելի և դրա հետ մեկտեղ՝ նաև գոյութենական ու երբեմն՝ արտաքին իրողությունների ընթացքին տրված կամայածին իմպուլսիվությամբ՝ դեռ միայն «սիմվոլիկ» առանձնահատկությունները քննարկելիս նկատելի է որոշակի օրինաչափություն

• ցեղասպանությունը վերապրած չափահասների մի կողմից՝ լրությունը, որի հիմնավորումը հանդիսանում է փաստացի

²⁷³ Տե՛ս **Айвазян А.**, Стратегические последствия геноцида армян, Византийское наследство (информационно-аналитический журнал), Եր. 2002, N 3, էջ 15-17:

հիշողությունների սակավությունը, ի համեմատ 1941-1945 թթ. հրեաների Հոլոկոստը ապացուցող փաստագրական նյութերին, մյուս կողմից՝ եկեղեցիների, դպրոցների, մշակութային և քաղաքական կազմակերպությունների ստեղծում,

- երկրորդ սերնդի ներկայացուցիչների ձգտումը մի կողմից՝ լիարժեք ընդգրկվել նոր հայրենիքի սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և սոցիալ-մշակութային միջավայրում, մյուս կողմից՝ մեղքի և պատասխանատվության զգացումի պահպանումը զոհված նախնիների նկատմամբ,

- երրորդ սերնդի ներկայացուցիչների ազգային պատկանելիությունը արդեն կրում է ընտրողաբար բնույթ՝ ազգային արժեքների, հայ քրիստոնեական կենսակերպի, ազգային և ընտանեկան ավանդույթների նկատմամբ կամայական վերաբերմունք,

- չորրորդ սերնդի ներկայացուցիչների կապը պատմական հայրենիքի հետ՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության, ակտիվանում է ոչ այնքան ռեպատրիացիայի, պատմական հայրենիք մշտական բնակության հաստատելու միտումով, այլ՝ տնտեսական ու ֆինանսական աջակցության, համատեղ հայագիտական ուսումնասիրությունների իրականացման և այլ ոլորտներում:

Արևելյան Հայաստանում բնակվող և ցեղասպանությունը վերապրած բնակչությունը և նրանց սերունդները, կարծես, ավելի բարենպաստ միջավայր են ունեցել ազգային ինքնությունը՝ լեզուն, մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները, հոգեկերտվածքում միմյանց ու օտարների, ներաշխարհի ու արտաշխարհի, մշակույթի նկատմամբ ողջ գործունեությունում՝ վերաբերմունքում, հարաբերությունում ու գործողությունում, հոգևոր-քաղաքակրթական ու բարոյական հիմնորոշ սրբություններն ու առաջնային, գերակա սկզբունքներն ու կողմնորոշումները պահպանելու համար: Թեև հոգեբանական հետևանքների²⁷⁴ ու նաև բարոյականության՝ մարդկային կյանքին հոգեկեցույց ու կենարար կարգավորության, տեսակետներից արդարաբանորեն

²⁷⁴ St' u Сукиасян С. Г., Погосян В. В., Худоян С. С., Чаликян А. Н., Шавердян Г. М., Жмурин И. Е. Отношение современных поколений армян к геноциду 1915 года: данные поискового исследования (этнопсихологический аспект), Вестник МГОУ, 2012, N4, էջ 90-99

նկատվում է պատմական անարդարությունն իրականացրած ազգի ներկայացուցիչների հանդեպ դրացիական հարաբերություններում ընդհանուր քաղաքակրթական-սոցիալական-մշակութային կենսաշխարհ ունեցող, երկկողմանի անմիջական շփմամբ համակեցության ժխտում ու անհնարիության հաստատում վերբալ ու ոչ-գործնական մակարդակում, սակայն երբ քննարկվում է առկա աշխարհակարգում միջազգային իրավունքների երաշխիքով ամրագրված՝ դիստանցավորված հանրակեցության պայմաններում համատեղ տնտեսական ու առևտրական գործունեության իրականացման հարցը ազգային պատկանելիությունն այլևս նշանակալի չի համարվում:

Ցեղասպանություն վերապրած հայերի և նրանց սերունդները, կապված բնակության և սոցիալականացման վայրից, դեռևս չեն հաղթահարել այդ եղեռնագործության սոցիալ-հոգեբանական հետևանքները՝ սոցիալական կարգավիճակի, ազգային ընդհանուր ապագայի, նահատակվածների նկատմամբ ողջ մնացածների ներաշխարհում մեղքի զգացումի...:

Այլևս ոչ զուտ հայրենագրկության, հոգևոր-մշակութային կենտրոնների կորուստի, ունեզրկության..., այլև սրբադասված նահատակների հետ հոգևոր միասնության, որում նաև բարեխոսության ու ըստ ամենայնի աջակցության նկատմամբ վստահությունը և դրա հետ մեկտեղ մշակութային, հոգևոր-քաղաքակրթական՝ իր բոլոր չափումներով հանդերձ, հոգեկեցույց ու կենարար ստեղծարար գործունեությունն արդեն իր բազմաբովանդակ արդյունավետությամբ կայացման ներկա ու հեռանկարային ընթացքում է ժամանակակից հայոց հասարակությունում:

АНАИТ ДЖИДЖЯН (АРМЕНИЯ)

НЕРСЕС КОЧАРЯН (АРМЕНИЯ)

РАСКРЫТИЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ПОСЛЕДСТВИЙ ГЕНОЦИДА АРМЯН МЕТОДОМ CASE-STUDY

Геноцид армян является первым массовым преступлением против человечества, и его непризнанность и безнаказанность ввос-

ледствии привели к повторению подобного злодеяния по отношению к другим нациям и народам. Для полноценного развития любого государства и народа необходимо эффективное осознание значимых исторических событий, воздействие которых на личностном, семейном, этническом уровне по сей день представляет не только теоретико-исследовательский, но и практический интерес. Метод case-study дает возможность на примере генограммы и социогаммы семьи проследить социальные и психологические потери и последствия, а также некоторые механизмы их преодоления.

*ANAHIT JIJYAN (ARMEIA)
NERSES KOCHARYAN (ARMENIA)*

**REVEALING BY THE METHOD OF CASE-STUDY THE
SOCIAL-PSYCHOLOGICAL CONSEQUENCES OF THE
ARMENIAN GENOCIDE**

The Armenian genocide is the first mass crime against humanity, and that this crime was not recognized and punished later on brought to its repetition in regard of other nations and peoples. For the full development of any state and people it is necessary the effective awareness of significant historical events, the impact of which on the personal, family and ethnic level to this day is a matter of interest not only for theory and research, but also practically. The method of case-study gives an opportunity by the example of family genogramm and sociogram to trace the social and psychological damages and consequences of the genocide, as well as to reveal some mechanisms to overcome them.

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ**

1. Ֆրանսիացի ժողովուրդը, հատկապես գրողներն ու մտավորականներն անմիջապես արձագանքեցին Օսմանյան թուր-

քիայում կատարվող իրադարձություններին, իրենց ձայնը բարձրացրին ի պաշտպանություն հայության, որը գոհ էր դառնում սուլթան Նամիդի կազմակերպած ջարդերին: Իրենց հրապարակային ելույթներում և հոդվածներում Անատոլ Ֆրանսը, Ֆրանսիս դը Պրեսանսենը, Պիեռ Քիյարը, Ալբեր Վանդալը, Վիկտոր Բերարը և ուրիշներ դիմում են Եվրոպայի հասարակությանը՝ կոչ անելով հանդես գալ ընդդեմ հայերի գործադրվող բիրտ ուժի և կամայականությունների:

Հիշարժան են հետևյալ ֆրանսացի գրողների պոեմները՝ Դեկադրի Անայիս Քամելի «Անսփոփ ձայներ» (1897), Էմիլ Պինոյի «Ինչո՞ւ եմ ես սիրում Հայաստանը», «Վերածնունդից առաջ», «Հայաստան» (1916), Մաքս Ժակոբի «Դաշնակիցները Հայաստանում» (1915), Անդրե Լանգրանի «Անվերջ դրամա», «Հուրը սրտում» (1918), Ժան Էգարի «Հայաստան», «Հառաջք հայկական» (1917), «Նահատակ ժողովուրդ», «Փառաբանված Հայաստան», «Անմահ Հայաստան» (1919), Էլեն Բաբինոյի «Արյունոտ Հայաստան» (1917), Սեն Ժորժ դը Բուելիեի «Վերածնվածները» (1919), Մարկ դը Ֆոնտենելիի «Կոտորած Հայաստանում» (1919):

2. 20-րդ դարի 20-ական թվականներին, երբ եղեռնից փրկված արևմտահայությունը ցրվեց աշխարհով մեկ, հայկական գաղթօջախները համալրվեցին և բազմաթիվ նորերն առաջացան: Հայության մեծ զանգվածներ հավաքվեցին նաև Անդրկովկասում, Կովկասի ու Ռուսաստանի տարբեր բնակավայրերում, Մերձավոր Արևելքի երկրներում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Անգլիայում, Ֆրանսիայում և այլուր:

Միյուռքահայ գրականության գլխավոր թեման եղավ ու մնաց հայության ճակատագրի քննությունը, նրա անցած ու ներկա կյանքի պատմությունը՝ հայրենի հողի վրա, հայրենի օջախում նրա երջանիկ և հոգաաշատ օրերից մինչև ջարդ ու աքսորի տաժանելի օրերը, թափառումները երկրեերկիր, մի կտոր հացի որոնումներն օտար ափերում, ամենօրյա հոգեկան ու ազգային կորուստները: Միյուռքահայ գրողի գլխավոր նպատակը եղավ օգնել հայրենիքը կորցրած տարագիր հայությանը՝ օտար ափերում գոյատևելու, ձուլման վտանգին դիմակայելու նրա ամենօրյա ծանր ու դժվարին պայքարի ընթացքում:

3. Դեռ 19-րդ դարի վերջերից Ֆրանսիայում հաստատվել էին հայ գրողներ: Մեծ էր Արշակ Չոպանյանի դերը ֆրանսահայ գրական կյանքի կազմակերպման գործում: Փարիզում նա հրատարակում էր «Անահիտ» պարբերականը: Չոպանյանի՝ հայրենասեր մտավորականի, ինչպես Արամ Հայկազն է բնութագրել «բազմապիսի ընդունակություններով Մեծ հայի» ամբողջ կյանքն ու գործը սևեռուն մի նպատակ ուներ՝ նպաստել իր ժողովրդի ազգային, քաղաքական, մշակութային կյանքի զարթոնքին, հայ դատի արդարացի լուծմանը: Նա սովորեցնում էր նորերին, ինչպես պահպանել հայրենական ավանդույթները: Չոպանյանի ֆրանսերեն թարգմանությունների կապակցությամբ Էմիլ Վերհարնն ասել է. «Ձեր սիրտը, սիրելի բանաստեղծ, տրոփում է ոչ թե ձեր հայրենիքի կողքին, այլ հենց այդ սրտի մեջ»: Նա սովորեցնում էր սթափ հայացքով նայել իրականությանը, չընկճվել, հավատալ ցեղի ու մարդկության ապագային: Նա մեծապես նպաստեց հետագա նահատակ գրողների՝ Դանիել Վարուժանի, Միամանթյոյի, Ռուբեն Սևակի և այլոց գրական կայացմանը:

4. Հայոց ցեղասպանությունն արտացոլվել է նաև այլ գրողների չափածո և արձակ երկերում: Հիշատակենք՝ Նիկողոս Մարաֆյանի «Անջրպետի մը գրավումը» (1928), «14» խորագրով քնարական պոեմը (1933), «Իշխանուհին» վիպակը (1934), «Տեղատվություն և մակընթացություն» (1939), «Միջնաբերդ» (1946) և «Միջերկրական» (1971): «Անդաստան» հանդեսի խմբագիր Բյուզանդ Թոփալյանը հանդես եկավ «Այգահանդես» (1930), «Արևազայ» (1937), «Հրախաղություն» (1952), Հարութ Կոստանդյանը «Օրերի իմաստությունը» (1935), «Բանաստեղծութեամբ...» (1974), Սեման (Գեղամ Աթմաճյան)՝ «Զրահատր գարուն» (1936), Միսաք Մանուշյանը՝ «Իմ երգը» ժողովածուն լույս է տեսել (հետմահու, 1946) ստեղծագործություններով:

5. Ֆրանսահայ գրական ավանդույթները հայոց եղեռնի պատկերման գործում նորագույն շրջանում շարունակեցին Զուլալ Գազանճյանը, Կարիկ Պասմաճյանը, Հիլդա Գալֆայան-Փանոսյանը, Գրիգոր Պըլտյանը, Վահե Պերպերյանը, Մովսես Պչաքճյանը:

Ավելորդ չենք համարում նշել, որ Հայոց եղեռնն արտա-

ցովել է նաև ֆրանսագիր գրողների երկերում: Հիշատակենք՝ Անրի Վեռնոյի «Մայրիկ», Վահե Քաչայի «Մի դաշույն այս պարտեզի մեջ» վեպերը, Ռուբեն Մելիքի «Քարե պահակ» պոեմը, Արմեն Լյուրենի (Շահան Շահնուր) ֆրանսերեն բանաստեղծությունները, Վիկտոր Գարդոնի (Վահրամ Կարապյան) «Զմրուխտավառ ասպետը» վեպը և այլն:

ЛИЛИТ ГРИГОРЯН (АРМЕНИЯ)

ОТБРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ПРОИЗВЕДЕНИЯХ ФРАНЦУЗСКИХ ПИСАТЕЛЕЙ АРМЯНСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

Доклад посвящен отображению геноцида армян в произведениях французских писателей армянского происхождения. Обзорно представлены произведения Аршака Чопаняна, Шахана Шахнура, Вазгена Шушаняна, Никогоса Сарафяна, Бюзанда Топаляна, Арута Костандяна. Есть обзор также французских писателей армянского происхождения, пишущих на французском языке – Анри Верно, Ваге Кача, Рубена Мелика, Виктора Гардона (Ваграм Какавян).

LILIT GRIGORYAN (ARMENIA)

THE REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE WORKS OF FRENCH WRITERS OF ARMENIAN ORIGIN

The report is devoted to the reflection of the Armenian Genocide in the works of French writers of Armenian origin. There are generally represented those works of the French writers of Armenian origin, such as Arshak Chopanyan, Shahan Shahnur, Vazgen Shushanyan, Nikighos Sarafyan, Bjuzand Topalyan, Harut Kostanyan, where the Armenian Genocide is reflected. There is a review as well to the Armenian writers who wrote in French, such as Anri Verno, Vahe Kacha, Ruben Melik, Viktor Gardon (Vahram Kaqavyan).

**ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿՅԱՆԻ «ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄԸ»՝
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ**

1924 թ. Բոստոնում լույս տեսավ հայտնի գիտնական, բանասեր, պատմաբան, մանկավարժ եղեռնը վերապրած Կարապետ Գաբիկյանի ստվարածավալ «Եղեռնապատում Փոքուն Հայոց և նորին մեծի մայրաքաղաքի Սեբաստիոյ» գիրքը:

Հայոց ցեղասպանության կամ Մեծ Եղեռնի աղբյուրների մեջ Կ. Գաբիկյանի գիրքը պատկանում է առաջին արժեքավոր ստուգապատում վկայությունների շարքին:

Հեղինակը ընդգրկել է Արևմտյան Հայաստանի պատմական Փոքր Հայքի և Սեբաստիայի 350 000 հայության տեղահանման պատմությունը: Դրանով նա վեր է հանել թուրքական պետության կողմից գործած Ցեղասպանության ընդգրկման չափերը:

Գաբիկյանը դուրս է եկել Սեբաստիայի և Փոքր Հայքի շրջանակից և անդրադարձել նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջանների տեղահանության պատմությանը:

Հեղինակի կողմից գրքի վերնագրում «պատում» օգտագործված բառը, բացի «պատմություն» նշանակությունից, ունի նաև «համայնապատկեր» իմաստը: Նա պատկերում է գաղթականության տաժանակիր «կյանք»-ը «սկզբից մինչև վերջ», մինչև Արևմտյան Հայաստանի ժողովրդի սպառումը, և ամենօրյա, համակողմանի, մանրամասն նկարագրություններով ստեղծում նրա «սարսռազդու» ողբերգության համայնապատկերը: Գաբիկյանի պատումը կոնկրետացնում և լրացնում է ողջ Արևմտյան Հայաստանի հայ գաղթականության, ժողովրդի տարբեր շերտերի պատկերումը, նա չի մոռանում հիշատակել տեղահանվողների քանակը, անդրադառնալ վայրերին, նրանց քարավանների հստակ որոշված ճանապարհներին, մեծ հանգրվաններին, ինչպես նաև սպանդանոցներին:

Գաբիկյանը ցույց է տալիս, որ ընդհանուր տեղահանությունից շատ ավելի վաղ Հայոց ցեղասպանությունը նախապատրաստված էր և կար մշակված ստույգ ծրագիր հայության ամբողջական վերացման մասին, նրա հոգևոր և նյութական արժեքներով հանդերձ: Ի տարբերություն Համիդյան կոտորածների /1895-1896 թթ/, այս ծրագրով որոշված էր քողարկել թուրքերի բուն նպատակը. ողջ ժողովրդին սրի քաշել աննկատ, հետզհետե ոչնչացնել:

Հեղինակը անդրադառնում է ժողովրդի կարող մասի՝ տղամարդկանց վերացման հարցին և այն համարում թուրք բռնակալների հայասպան ծրագրի կարևոր շարժիչ ուժը: «Տղամարդկանց որսը» սկսվում է Սեբաստիայի 5 000 բանտարկություններով և սպանություններով, այն ստանում է շարունակական բնույթ գաղթականության «Արյան ճանապարհի» վրա:

Գաբիկյանը շատ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Սեբաստիայի և շրջակա գյուղերի, հայ բնակչության տեղահանման մասին, և գալիս այն եզրակացության, որ Սեբաստիան ուներ 5 800 տուն հայ բնակչություն, մոտավորապես 34- 36 000 անձ: Ըստ թաղերի կազմվեց 14 քարավան, յուրաքանչյուրը 400-550 անձից: Սեբաստիան տեղահան եղավ 15 օրում՝ հունիսի 22- հուլիսի 5-ը: Բռնագաղթի մասին հայտարարությունը արվեց հունիսի 18-ին:

Գաբիկյանի տեղեկությունները առաջին քարավանների մասին «շատ անկատար են», թեև նա գիտի, որ առաջին 7-8 քարավանները գրեթե ամբողջությամբ բնաջնջվել են:

Հեղինակի անցած ամբողջ «Արյան ճանապարհը» գալիս է հաստատելու թուրքերի կողմից տարագրյալների համար ծրագրված անաղմուկ աննկատ մահը. հարթ հարմար ճանապարհները փոխարինված էին մահաբեր հորդառատ բուռն գետերով, անմատչելի հսկա լեռներով, վայրենի քուրդ ցեղերով և այլն:

Գրքում մեծ տեղ է հատկացված գաղթականների գլխավոր հանգրվաններ– բնակավայրերին նվիրված գլուխներին՝ Ֆըրընջլար, Սուրուճ, Ռագգա: Սուրուճում Գաբիկյանը մնացել է մի քանի ամիս, իսկ Ռագգայում– երկու տարի: Նրան բոլորից շատ հետաքրքրել է այստեղ եկած գաղթականների վիճակը: Գաբիկ-

յանին հաջողվել է թափանցել այնտեղի հիվանդանոցները և մանկապարտեզները, այսպես կոչված Բախչեսիները, Բախչեսի չոջուխլարանոցները և պարզել, որ դրանք իրականում, դիարաններ էին, ուր իրենց վերջին շունչն էին փչում հյուծված մարդիկ, որոնք անկարող էին ճանապարհը շարունակել դեպի Տեր-Ձոր և այլ մահաստաններ: Հիվանդների, մահացողների քանակը խիստ հաշվարկվում էր և հեռագրով ամեն օր Պոլիս տեղեկացվում:

Գաբիկյանը իր գիրքը հարստացրել է նաև վերապրողների պատմածներով և ուրիշ վայրերի առանձին գաղթականների պատմածներով և օրագրերով: Այդ տեսակետից շատ արժեքավոր են Նշան Սաթոսյանի Գաբիկյանին փոխանցած գրառումները:

Գրքի վերջին երեք-չորս գլուխներում հանրագումարի են բերվում թուրքերի իրագործած ցեղասպանության կործանարար արդյունքները Սեբաստիայի և Փոքր Հայքի համար: 48-րդ գլխում, որն ունի «Սեբաստիա յետ բռնագաղթի» վերտառությունը, ուր մեկ առ մեկ հիշատակվում են սեբաստահայերի կողմից սիրված և կորստի մատնված՝ հողին հավասարեցված վանքերն ու եկեղեցիները իրենց հարստությամբ: 50-րդ գլխում Գաբիկյանը տալիս է ընդհանուր բանտարկությամբ նահատակվածների ցանկը՝ կազմած Հայկազուն Տելի-Ղազարյանի կողմից և իր կողմից լրացված: Նաև թվարկվում են թուրքերի կողմից բռնագրաված բոլոր խանութները և նրանց բանտարկված և սպանված տերերի և աշխատակիցների անունները, ապա դրան հետևում է բանտարկված ուսուցիչների, պաշտոնյաների, վաճառականների, գինեվաճառների, դեղագործների և այլ շատ մասնագետների և արհեստավորների անունները և նրանց խանութները: 51-րդ գլխում տրված են դահճապետների և դահիճների անունները; 52-րդ գլխում նա արձանագրում է, որ Եղեռնից հետո Սեբաստիայի 36 800 հոգի բնակչությունից մնացել էր 157 հոգի, իսկ ողջ վիլայեթի 350.284 հոգուց՝ 1800-2000:

КНАРИК ТЕР-ДАВТЯН_АРЕВШАТЯН (АРМЕНИЯ)

**«ИСТОРИЯ УНИЧТОЖЕНИЯ МАЛОЙ СЕБАСТИИ И ЕЕ
ВЕЛИКОЙ СТОЛИЦЫ СЕБАСТИИ» КАРАПЕТА
ГАБИКЯНА КАК ВАЖНЕЙШИЙ ПЕРВОИСТОЧНИК
ПО ИСТОРИИ ГЕНОЦИДА**

«История уничтожения Малой Армении и ее великой столицы Себастии» Карапета Габикяна является одним из первых особо важных первоисточников по Геноциду Западной Армении. Автор представляет малознакомую до него Историю депортации и уничтожения 350-тысячного армянства исторической Малой Армении с ее столицей Себастией. Этим он свидетельствует о совершенном турками преступлении и делает неопровержимым факт имевшего место Геноцида армян в Османской империи.

KNARIK TER-DAVTYAN-AREVSHATYAN (ARMENIA)

**THE HISTORY OF ANNIHILATION OF MINOR
SEBASTIA AND ITS GREAT CAPITAL SEBASTIA" BY
KARAPET GABIKIAN AS AN IMPORTANT SOURCE OF
GENOCIDE' HISTORY**

“Story of genocide: an account of the deportations and massacres of the Armenians of Sebastia and Lesser Armenia” by Garabed Kapikian is one of the first most important primary sources on the Armenian Genocide in Western Armenia. The author presents story of deportation and extermination of 350,000 Armenians in the historical Lesser Armenia and its capital, Sebastia that was little known before that publication. Thus, he presents the evidence of the crime committed by Turks, proving that the Armenian Genocide in the Ottoman Empire is an irrefutable fact.

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՆ
ԱՐԱՄԱՅԻՍ ԱՂԱՄԱԼՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ**

Արամայիս Աղամայյանը (1910-1985), անցնելով ստեղծագործական բարդ ճանապարհ ինչպես Իրանի հայ թատրոնում, այնպես էլ կինոյում, հաղթահարելով սփյուռքի բեմարվեստում հաստատված կարծրատիպերը, կարողացավ ոչ միայն նորովի ներկայացնել պատմական ստեղծագործությունները, այլև առաջիններից մեկն էր արտաշխարհում, որը դիմեց ցեղասպանության թեմային:

1950-ականներին, «Թեհրանահայերի երիտասարդ արվեստասիրաց թատերախմբում» (ԹԵԱԹ) բեմադրելով տարբեր ժանրերի գործեր, հիմնականում հոգեբանական դրամաներ (անհայտ հեղինակների գործեր «Կույրը», «Վերջալույսի շողերը») Աղամայյանը Լևոն Շանթի «Հին աստվածներից» հետո (1953), հանգեց Մուրացանի «Գևորգ Մարգպետունի», Րաֆֆու «Մամվել» և այլ պատմական գործերի բեմադրությանը:

1960-ականներին, հրապուրվելով երկրում խրախուսվող և հեռանկարային արվեստի մեկ այլ բնագավառով՝ կինոյով, Աղամայյանն այստեղ ևս, գրեթե նույնությամբ կրկնելով թատրոնում անցած ճանապարհը, դրամատիկական ժանրի մի շարք գործերից հետո («Մեր թաղի տղաները», «Մարդիկ», «Թափառաշրջիկ աղջիկը»), բեմադրեց «Գոլ Աղա» (1968) պատմական ժապավենը: Վերարտադրելով Իրանի անցյալից մի դրվագ, ռեժիսորը կարողացավ անուղղակիորեն ներկայացնել իր ժողովրդի ոչ վաղ անցյալի իրադարձություններն էկրանից: Բացի այդ, դիմելով հայ նշանավոր նկարիչների գործերին, Աղամայյանը գույների միջոցով նույնպես ազգային երանգ հաղորդեց իր ժապավենին: Այսպիսով, Արամայիս Աղամայյանը, նաև որպես պրոֆեսիոնալ նկարիչ, առաջիններից մեկն էր երկրում, որը գույնն օգտագործեց որպես կինեմատոգրաֆիական արտահայտչամիջոց:

Ստեղծագործական այս նվաճումները, այնուհանդերձ, բա-

վարար չէին 1970-ականներին, Մեծ եղեռնի 60-րդ տարելիցի նախօրեին, ամբողջ հայությանը համակած ազգային ինքնագիտակցության վերելքի և լավատեսական տրամադրություններն արտահայտելու համար: Մինչդեռ միայն թատրոնում ռեժիսորը հնարավորություն կստանար լիարժեք կերպով ներկայացնելու իր ժողովրդի անցյալի դեպքերը: Եվ միայն պատմական բեմադրություններն էին, որոնք, սփյուռքի տրոհված համայնքները համախմբելուց բացի, կարող էին հաղթահարել նաև հայ ժողովրդի երկու հատվածների գաղափարական պատնեշները, շփման եզրեր գտնելով արտաշխարհի և հայրենի թատերական կառույցների միջև: Սրանք, երկրում հասունացող քաղաքական իրադարձությունների կողքին, այն դրդապատճառներն էին, որոնք Ադամայանին ստիպեցին վերադառնալ թատրոն: Նա ստանձնեց «Արարատ» կազմակերպության թատերախմբի, փաստորեն, նաև ամբողջ համայնքի գրեթե ամլության մատնված բեմական կյանքի ղեկավարությունը: Ռեժիսորը, հայ արվեստագետներից շատերի նման, անդրադարձավ հայոց ցեղասպանության թեմային: 1974-ին, բեմադրելով Վիլյամ Մարոյանի «Իմ սիրտը լեռներում է» քնարական դրաման, Արամայիս Ադամայանը, արձանագրելով խոշոր առաջընթաց համայնքի բեմարվեստում, իրանահայ թատրոնին վերադարձրեց իր նախկին՝ առաջատարներից մեկի դիրքերն սփյուռքում:

Ռեժիսորի հաջորդ երկու՝ «Մեռնիլը որքա՞ն դժվար է» (հեղինակ՝ Մուշեղ Իշխան) և «Ոտքի՛, դատարանն է գալիս» (հեղինակ՝ Պերճ Զեյթունցյան) բեմադրությունները, իրենց արձագանքը գտնելով հայրենի թատերական կյանքում, դուրս գալով մշակութային իրադարձության սահմաններից, միաձուլվեցին այդ տարիներին Հայաստանում ծավալված ժողովրդական հույզերին:

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի բեմականացումը (1979), նախորդ աշխատանքների տրամաբանական շարունակությունը լինելուց բացի, դարձավ նաև երկրում և համայնքում ծավալվող իրադարձությունների արձագանքը թատրոնում: Իրանի իսլամական հեղափոխության (1978-1979) հետ միասին, հասարակական կարգերից բացի, վերանայվեցին նաև հոգևոր և մշակութային շատ արժեքներ: Կրթության նախա-

րարությունը հակասական օրենքներ էր մշակում հայկական դպրոցները փակելու վերաբերյալ: Համայնքում, ի պաշտպանություն դպրոցների, ծավալվեց աննախադեպ մի շարժում՝ ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ առաջնորդների ղեկավարությամբ: Աղամայանի բեմադրությունը միացավ համաժողովրդական բողոքին: Չկար մեկը, որ ներկայացմանը եկած չլիներ: Իսկ պատանիները, բեմից տեսնելով, թե ինչպես էր իրենց հասակակիցը, սեփական կյանքից առաջ, փրկում հայերեն գրքերը, մարտում էլ կոպում մեծերին չզիջող արիությամբ, համակվում էին հայրենասիրության նույն զգացմունքներով և գաղափարներով:

Ինքը՝ ռեժիսորը, կարծում էր, որ միայն հայեցի կրթությունը, ի հակակշիռ ցեղասպանության, ազգային նկարագիրը պահպանելուց բացի, կարող էր ապահովել նաև սփյուռքի գոյությունն արտերկրում, ընդհանրապես: Աղամայանը, ի վերջո, աճող սերնդի դաստիարակությունը համարում էր Մուսա լեռան հերոսամարտից ոչ պակաս կարևոր: Մա արտաշխարհի համայն մտավորականության դիրքորոշումն էր: Այս հարցի վերաբերյալ էլ, դեռևս անցյալ դարասկզբին, հասարակական, արվեստի և գրականության գործիչներից շատերը համախմբվեցին «Հայ կրթական և հրատարակչական համագային միության» (Համագային, Կահիրե-Բեյրութ, 1928) շուրջ: Համագայինի ծրագրի առաջին կետերից մեկն էլ արտահայտում է միության հիմնական նպատակը. «Հայ ժողովրդի կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզվով և հայ ոգիով»:

Այսպիսով, Արամայիս Աղամայանը, բեմադրելով Համագայինի հիմնադիրներից մեկի՝ Լևոն Շանթի, նրա գաղափարակից – աշակերտ Մուշեղ Իշխանի և այլ հեղինակների գործերը, նրանց գեղագիտական ըմբռնումներին հետևելուց բացի, միացավ նաև Համագայինի հիմնական՝ ազգապահպանման առաքելությանը, իր ավանդն ունենալով հայ ժողովրդի զույգ հատվածների մշակութային ժառանգության պահպանման և զարգացման գործում:

ТЕМЫ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА И ИСТОРИИ В ТВОРЧЕСТВЕ АРАМАИСА АГАМАЛЯНА

Арамаис Агамалян (1910-1985), проделав сложный творческий путь как в армянском театре, так и в кино Ирана, сумел не только по-новому отобразить исторические произведения, но и был одним из первых в армянской диаспоре, кто обратился к теме геноцида.

В 1950-х годах, будучи одним из основателей “Труппы молодых армянских любителей искусства Тегерана” (ТЕАТ), Агамалян, вслед за “Старыми богами” Левона Шанта (1953), пришел к постановкам “Геворка Марзпетуни” Мурацана, “Самуэла” Раффи, “Мое сердце в горах” Уильяма Сарояна, “Как трудно умереть” Мушега Ишхана и других работ, отражающих историю армянского народа как давних, так и новейших времен.

В 1970-е годы, в преддверии 60-й годовщины армянского геноцида, произведения именно такого рода способствовали укреплению национального самосознания и нашли пути не только для сближения разрозненных армянских общин, но и, преодолевая идеологические разногласия, способствовали укреплению культурных связей между диаспорой и Арменией в целом.

Инсценировка по роману Франца Верфеля “Сорок дней Муса-Дага” (1979), будучи логическим продолжением предыдущих работ, одновременно стала отражением тех беспрецедентных волнений, которые, вслед за Исламской революцией Ирана (1978-1979), охватили всю общину. Различные слои населения, во главе как духовных, так и светских лидеров, встали за защиту армянских школ от нападков новых властей.

Арамаис Агамалян, как и большинство деятелей искусства и литературы, придерживался мнения, что благодаря образованию армянский народ, вопреки геноциду, смог бы сохранить не только свой национальный облик, но и само существование за пределами Родины. В этом смысле воспитание молодого поколения Агамалян ставил наравне с битвой за Муса-Даг. Именно это сознание спло-

тило многих видных общественных деятелей, а также деятелей культуры и литературы в рядах “Общенационального союза образования и издательского дела” (Амазгаин, Каир-Бейрут, 1928). Осуществляя постановки произведений одного из основателей союза Амазгаин Левона Шанта, его ученика и последователя Мушега Ишхана и других, Арамаис Агамальян, разделяя их эстетические взгляды, присоединился также к основной - патриотической миссии Амазгаина, внося свою лепту в дело сохранения и развития культурного наследия обеих частей армянского народа.

ANAHIT CHTIAN (ARMENIA)

THE THEMES OF ARMENIAN GENOCIDE AND HISTORY IN THE CREATION OF ARAMAYIS AGHAMALIAN

Aramayis Aghamalian (1910-1985), passing a complicated way in the Armenian theatre and cinema art of Iran, came to the staging of historical plays with new interpretations in tune with contemporary issues. He was also one of the first artists in Diaspora, who appealed to the theme of genocide.

In 1950s, being one of the founders of the “Troupe of Tehran’s Young Devotees of Art” (TEAT), Aghamalian, after the “Old Gods” by Levon Shant (1953), staged “Gevorg Marzpetunie” by Mouracan, “Samuel” by Raphie, “My Heart’s in the Highlands” by William Saroyan, “It’s So Hard to Die” by Moushegh Ishkhan and other works, reflecting the Armenian history both of the old, and resent times. In 1970s, on the eve of the 60th anniversary of the Armenian Genocide, these were just the works, which generated a strong feeling and sense of national awareness and gave a further spiritual twist to the separate parts of the Armenian Diaspora. At the same time, overcoming some ideological disagreements, they promoted the contacts of the cultural life between the both parts of the Armenian people.

The production of “The Mousa-Dag’s Fourty Days” (1979, by France Werfel), besides of being the logical continuation of Aghamalian’s previous works, was also the reflection of the unrest, which took

place after the Islamic revolution of Iran (1978-1979). All the layers of the community population at the head of both the spiritual and world leaders, rose in revolt the Armenian schools from the new government assaults. Aramays Aghamalian, as well as the majority of the art and literatureworkers, was convinced, that the education, in opposition to genocide, besides the national appearance, could also retain the very existence of the Armenian people abroad. The importance of youth education Aramays Aghamalian considered equal to the Mousa-Dag’s battle. This is the opinion which united many of prominent Armenian intellectuals round the “Nation-Wide Union of Education and Publishing Affairs” (Hamazgayin, Cairo-Beirut, 1928). Producing the plays of Levon Shant, who was one of Hamazgayin’s founders, ofone of Shant’s followers -Moushegh Ishkhan, Aramays Aghamalian, shareing their aesthetic views, joined to the main, patriotic mission of Hamazgayin, having his own investment in surviving and development of both the parts of the native culture.

ՀԱՄԱՅԻՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**«ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ
ՐԻՎԻՆԻ ՀԱԿԱԴԱՐՁ ՄԵԹՈԴՈՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ**

Սույն զեկուցման մեջ ներկայացված է «Հայոց մեծ եղեռնը» թեմայի դասավանդման նմուշ-օրինակ: Վերլուծված և ներկայացված են՝

1. «Հայոց մեծ եղեռնը» թեմայի ուսուցման նպատակներն ու խնդիրները հանրակրթական ավագ դպրոցում

2. «Հայոց մեծ եղեռնը» թեմայի ընդգրկվածությունը հանրակրթական ավագ դպրոցի Հայոց պատմության չափորոշիչներում և ծրագրերում

2.1 Պարտադիր բովանդակային միջուկ

2.2 Ծրագրեր

2.3 Չափորոշիչներ

2.4 «Հայոց մեծ եղեռնը» թեմային հատկացվող ժամաքանակը

3. «Հայոց մեծ եղեռնը» թեման հանրակրթական ավագ դպրոցի դասագրքերում

3.1 Հումանիտար հոսքի 11-րդ դասարանի դասագիրք

3.2 Ընդհանուր եվ բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի դասագիրք

4. «Հայոց մեծ եղեռնը» թեմայի ուսուցման համար առաջարկվող անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաները

4.1 Տեխնիկական միջոցներ

4.2 ուսումնադիտողական նյութեր

5. Ներառարկայական և միջառարկայական կապերը թեմայի հետ

5.1 Հայոց պատմություն, 8-րդ դասարան

5.2 Համաշխարհային պատմություն, 8-րդ դասարան

5.3 Համաշխարհային պատմություն: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարան

5.4 Հայոց եկեղեցու պատմություն, 9 - րդ դասարան

5.5 Հայ գրականություն, 11 - րդ դասարան

6. «Հայոց մեծ եղեռնը» թեմայի դասավանդման համար երաշխավորվող տեխնոլոգիաները, մեթոդները, մեթոդական հնարները,

7. «Հայոց մեծ եղեռնը» թեմայի արդյունավետ ուսուցման իրականացումը Բիվինի հակադարձ մեթոդով

7.1 Բիվինի հակադարձ մեթոդի կիրառումը դասախոսության յուրացման ժամանակ: Մեթոդի կիրառման առանձնահատկությունները

7.2 Ուսուցչի գործողությունները.

Ենթաթեմաների առանձնացումը

ա/ Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական քաղաքականություն

բ/ Ցեղասպանության իրագործման փուլերը

գ/ Հայերի հերոսական ինքնապաշտպանությունը 1915 թվականին

դ/ Մեծ տերությունների և համաշխարհային հանրության վերաբերմունքը 1915-1922թթ.

ե/ Մեծ եղեռնի հետևանքները

զ/ «Ցեղասպանություն» հասկացությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը

- Վերնագրերով արտահայտված պլանի կազմումը

- Ցուցադրում - դասախոսություն

- Հաշվառման աղյուսակի պատրաստում

7.3 Յուրացման գործընթացը

Ենթաթեմաների յուրացումը փոփոխական կազմով զույգերով

- Աշխատանքի կազմակերպումը փոքր ենթախմբերում

8. Սովորողների աշխատանքի համակարգումը և վերահսկումը

9. Ստուգում և գնահատում

АСМИК МАРГАРЯН (АРМЕНИЯ)

ПРЕПОДОВАНИЕ ТЕМЫ “ВЕЛИКОЕ ЗЛОДЕЯНИЕ” ПО “ОБРАТНОЙ МЕТОДИКЕ РИВИНА ”ВСТАРШЕЙВОБЩЕ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ

В данном сообщении мы представили пример урока введения темы “Великое злодеяние” (Геноцид Армян) в старшей общеобразовательной школе.

Сформулированы цели и задачи обучения темы, представлен охват материала в стандартах, программах и учебниках дисциплины “История Армении” старшей общеобразовательной школы. Уделено внимание внутрипредметным и межпредметным связям, относящимся к теме. Для более успешного введения материала предложены учебно-дидактические средства. Детально представлен ход урока по “Обратной методике Ривина”.

**TEACHING THE THEME “ARMENIAN GENOCIDE” AT
HIGH SCHOOL OF GENERAL EDUCATION BY RIVIN
REFLECTIVE METHOD**

We represented an effective teaching sample dealing with the theme “The Armenian Genocide” which is taught in high school of General Education.

There are formulated the aims and objectives of teaching the theme “The Armenian Genocide”, given the inclusion of the theme in the standards, programmes and textbooks of the subject “The Armenian History” of the high school of General Education, there is done a reflection towards the insubject and intersubject connections, suggested educational visual aids for the effective teaching of the theme. There is represented the detailed course of the lesson carried out by Rivin Reflective Method.

ԱՆԻ ԱՎԵՏԻՄՅԱՆ (ՀԱՅՍՍԱՍՆ)

**ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐՍԸ ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔԻ
«ՁՅՈՒՆ» ՎԵՊՈՒՄ**

Հոդվածագիրը իր խոսքի շրջանակում փորձում է ներկայացնել թուրք գրող Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուքի «Ձյուն» վեպը: Հակիրճ անդրադարձ է կատարվում վեպի գրականագիտական արժեքին, նրա շուրջ բարձրաձայնած՝ ընթերցողների և գրականագետների գնահատականներին:

Պարզաբանվում են վեպում տեղ գտած որոշ հարցադրումներ: Ինչու է սյուժեի առանցք ընտրվել ընթացող իրադարձությունների կենտրոն Կարս քաղաքը, ինչպե՞ս է վեպում ներկայացված Կարսը, ինչու և քաղաքն իր պատմական անցյալով եւ ներկայով: Ո՞րն է Փամուքի իրական Կարսը... Հիշողություն արթնացնող փողոցներ, լքված, անբնակիչ մնացած կամ նոր տե-

րերով բնակեցված շինություններ, ո՞ր են այդ փողոցներով նախկինում քայլող, այդ հողի վրա ապրող և կենցաղ կիսողները, ինչո՞ւ անհետացան նրանք...

Հարցադրումներ և դիտարկումներ, որոնց պատասխանը գտնելու հնարավորություն է տալիս նաև իր ընթերցողին Օրհան Փամուքը...

Հոդվածագիրը ենթադրում է՝ 2002 թ. հրատարակված «Ձյուն» վեպի ստեղծագործական ընթացքի պատմական ճշմարիտ հետևության խտացումն է Օրհան Փամուքի 2005 թ. Հնչեցրած ձևակերպումը՝ «Թուրքիայում երեսուն հազար քուրդ և մեկ միլիոն հայ է սպանվել...» :

ANI AVETISYAN (Armenia)

THE HISTORICAL KARS IN ORHAN PAMUK'S “SNOW” NOVEL

The author of the paper will present the Modern Turkish writer, the winner of the Nobel Prize in Literature Orhan Pamuk's (Ferit Orhan Pamuk) “Snow “ novel and will shortly introduce the literary value of the novel, as well as evaluations of readers and critics.

Furthermore, the author will clarify some questions raised in the novel: Why the Kars has been chosen as the centre of events? How was the Kars represented in the novel, with its historical past and present? Which is Pamuk's real Kars...? Memory awakening streets, abandoned, inhabited buildings, even with new owners: Where are the people who were walking across the street, living on this land...? Where did they disappear? Why did they disappear? Where are the people who share their lives with foreign neighbours?

A lot of questions and reviews: Orhan Pamuk gives the opportunity to his readers to find out the true answer.

Finally, the author of the paper assumes that the words of Orhan Pamuk (2005): “One million Armenians and thirty thousand Kurds were killed in Turkey. And almost nobody dares to mention that. So I do...” were the result of the creative process of the novel “Snow” published in 2002.

**ИСТОРИЧЕСКИЙ КАРС В РОМАНЕ “СНЕГ”
ОРХАНА ПАМУКА**

Автор в своей речи представит роман "Снег" лауреата Нобелевской премии, турецкого писателя Орхана Памука, литературные ценности романа, оценки читателей и литераторов.

Автор попытается разъяснить некоторые вопросы поднятые в романе: Почему центр событий выбран город Карс? Как представлен город Карс? Почему город представлен вместе с историческим прошлым? Как выглядит реальный Карс Памука ...?

